# ԽՈՍՔԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ

## ճշմարտությունը Եհովայի Վկաների մասին



ԽՈՍՔԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Ճշմարտությունը Եհովայի Վկաների մասին

Թարգմանեց և խմբագրեց՝

ՄԱՇՏՈՑ ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ 4

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 9

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ 23

ԳԼՈՒԽ Ա. ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ 23

ԳԼՈՒԽ Բ. ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ 37

ԳԼՈՒԽ Գ. Ե. ՎԿԱՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԿՐՈՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ 39

ԳԼՈՒԽ Դ. «ԱՍՏՎԱԾԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ» 41

ԳԼՈՒԽ Ե. ՄԻ ԱՆՀԵԹԵԹ ՀԱՇՎԱՐԿ. 1914 ԹՎԱԿԱՆԸ 45

ԳԼՈՒԽ Զ. «ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ» 50

ԳԼՈՒԽ Է. 1918 ԹՎԱԿԱՆԻ ”ՀՌՉԱԿԱՎՈՐ” ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ 55

ԳԼՈՒԽ Ը. «ՓՈՔՐԻԿ ՀՈՏ»Ը ԵՎ «ՄՅՈՒՍ ՈՉԽԱՐՆԵՐ»Ը 61

ԳԼՈՒԽ Թ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 70

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ 76

ԳԼՈՒԽ Ա. ԱՍՏՎԱԾ 77

ԳԼՈՒԽ Բ. ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ 83

ԳԼՈՒԽ Գ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ 94

ԳԼՈՒԽ Դ. ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 100

ԳԼՈՒԽ Ե. ԿՅԱՆՔ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ 104

ԳԼՈՒԽ Զ. Մ ԱՐԴՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ Մ ԱՀԻՑ ՀԵՏՈ 109

ԳԼՈՒԽ Է. ՔԱՌԱԹԵՎ ԽԱՉԸ 113

ՀԱՎԵԼՎԱԾ 125

# ՆԱԽԱԲԱՆ

*«Կարո՞ղ է գոյություն ունենալ մի կեղծ կրոն: Ասել և ապացուցել, որ կրոններից մեկը կեղծ է, ոչ մեկի համար կրոնական հալածանք չէ: Կրոնական հալածանք չէ այն իրողությունը, որ ուսյալ մի անձ հրապարակայնորեն դիմակազերծում է այդ կրոնը, փաստելով, որ այն կեղծ է, այդպիսով ստեղծելով տեսնելու հնարավորությունը, թե ի՞նչ տարբերություններ կան կեղծ կրոնի և ճշմարիտ կրոնի միջև: Բայց դիմակազերծելու և ապացուցելու համար, որ սխալ կրոնները կեղծիք են, ճշմարիտ երկրպագուն պետք է գործի դնի* դատողության հեղինակավոր միջոցներ, գնահատման այնպիսի կանոններ, որոնք չեն կարող կեղծ լինել*: Կեղծ կրոնը հրապարակայնորեն դիմակազերծելը անշուշտ շատ ավելի կարևոր է, քան փաստելը, թե լրագրի մեջ հայտնըված լուրերը սուտ են: Սա մի ծառայություն է հասարակական օգտակարության, երբեք չի կարող կոչվել կրոնական հալածանք և վերաբերվում է անձանց հավիտենական կյանքին ու երջանկությանը»:*

*Այսպես է արտահայտվում Եհովայի Վկաների Ղեկավար Մարմինն իր «Դիտարան» պաշտոնաթերթի* 368*րդ էջում* (15.06.1964)*: Շատ լավ. միակ կետն է, որի հետ համաձայնվում ենք: Ցավոք սրտի:*

*Որպես գնահատման ապահով կանոն, Եհովայի Վկաների վերաբերյալ մենք գործածելու ենք մեծ մասամբ իրենց իսկ հրապարակությունները: Դրանցում է ամփոփված իրենց պաշտոնական ուսմունքը, ստրի դրանք են* «դատողության հեղինակային միջոցները» և «գնահատման այնպիսի կանոնները, որոնք չեն կարող կեղծ լինել» *այս աղանդի (սեկտայի), – բայց ավելի ճիշտ կլինի ասել՝ հերետիկոսության, – ճանաչման գործում: Դրանց խաղաղ սրտով և պատշվով գործածումը թույլ է տալիս բացահայտել, որ Եհովայի Վկաների կրոնը կրոն – թեկուզև կեղծ կրոն – լինելուց չափազանց հեռու, պարզապես առևտրական իրականություն է և լրտեսական ցանց, կրոնի դիմակով ծպտված:*

*Բրուքլինի Ղեկավար Մարմինը գիտի, որ ասում ենք ճշմարտությունը: Կուզենայինք նաև, որ համոզվեին, որ պատերազմ չենք մղում իրենց շահերի դեմ, առավել ևս նվազ՝ իրենց անձերի դեմ: Իրենց և բոլոր Եհովայի Վկաներին հղում ենք այս պատգամը.* «Ճշմարտությունը ձեզ կազատի» *(Աստվածաշունչ Մատյան,* Հովհաննեսի Ավետարան 8, 32*):*

*Բայց Եհովայի Վկաների շարքերում կան նաև ազնիվ ու անկեղծ հոգիներ, որոնք պարզապես խաբված լինելով, կարծում են, թե*

*իսկապես ծառայում են Աստծուն, երբ կատարում են Բրուքլինի Ղեկավար Մարմնի կողմից ստացված հրամանները: Այդպիսիք սովորաբար կըրոնական աղքատ կրթություն և հոգեբանական թույլ կազմվածք ունեցող անձինք են, որոնց որսալը բավական հեշտ է եղել Եհովայի Վկաների համար: Այդ անձանց հոգիներում հարգում եմ իրենց անկեղծությունը, որով կամենում են ծառայել Աստծուն և հասնել հավիտենական կյանքին: Այդ հոգիները իմ եղբայրներն ու քույրերն են, որոնց սիրում եմ ողջ սրտով և որոնց համար կտայի ամբողջ ժամանակս և ուժերս, նրանց խաղաղ, հոգեպես երջանիկ և ճշմարտության մեջ տեսնելու համար: Ահա նրանց համար է, որ աշխատել եմ. նրանց համար է, որ աղոթում եմ:*

*Բայց անշուշտ, գրությանս որպես առաջին հասցեատերեր ճանաչում եմ Հայ Եկեղեցու հավատարիմ զավակներին, որոնք ներկա դժվարությունների մեջ, հայրենիքի տնտեսական աղքատության պայմաններում, Հայ Եկեղեցու ներքին ու արտաքին նեղությունների ներքո կքված, շարունակում են հետևել իրենց միակ Ուսուցչին՝ Հիսուս Քրիստոսին, և օտարներին չեն վաճառում ո՛չ իրենց հոգիները, ո՛չ իրենց անձերը, ո՛չ իրենց հայրենիքն ու ժողովուրդը, ո՛չ էլ իրենց Մայր Եկեղեցին: Հայ Եկեղեցու այս հավատարիմ զավակներին քաջալերում եմ իրենց ընթացքի մեջ, բայց տեղին եմ համարում տալ նաև մի քանի խորհուրդներ:*

*Նախևառաջ, զանազանել սխալը սխալվողից: Եթե ամբողջական ատելություն պետք է ունենանք կեղծիքի նկատմամբ, որը գործն է սատանայի, այնուամենայնիվ պետք է կատարյալ հարգանք ու սեր ցուցաբերենք այն անձանց նկատմամբ, որոնք տակավին խավարի մեջ են: Մարդկային որևէ էակ, առանց բացառության, – լինի քրիստոնյա, թե բուդդիստ, բողոքական, թե Եհովայի Վկա, իսլամ, թե հրեա, թերահավատ, թե անաստված, – կարիքն ու ծարավն ունի սիրո, ըմբռնումի, իրավունքն ունի հարգվելու որպես մարդկային անձ: Ճիշտ մեր՝ իրական քրիստոնյաներիս պարտականությունն է վկայել աշխարհի դիմաց, որ Աստված Սեր է: Ինչպես որ մենք Աստծուց ստանում ենք մեր մեղքերի ներումը, այնպես էլ մենք պետք է ներենք մեր մերձավորներին: Ուրեմն, պայքարենք սխալի դեմ, բայց երբեք չատորացնենք սխալվողին:*

*Երկրորդ, խուսելիս ժպիտը չպակասի մեր շուրթերից: Տարածենք Քրիստոսի Հարության զվարթությունը, երբեք չտրվենք զայրույթին: Դիմացինը պետք է զգա, որ աշխատում ենք ցույց տալ իրեն ճշմարտությունը ի՛ր իսկ բարիքի, ի՛ր իսկ փրկության, և ո՛չ թե՝ մենք մեզ և մեր գաղափարները պարտադրելու համար: Եվ ո՛չ թե այդպես սոսկ ցույց տալու համար, այլ՝ այդպես պետք է լինի իսկապես:*

*Երրորդ, որ վերջինն է ու ամենակարևորը, հիշենք, որ ո՛չ թե մեր խոսքերը, այլ՝ մեր կյանքն է, որ պետք է քարոզի ճշմարտությունը: Մեր*

*վարքը պետք է ցոլացնի Քրիստոսի Դեմքի փառքը: Ապրենք խոնարհությամբ, հարգելով յուրաքանչյուր մարդու, սիրելով բոլորին, օգնության հասնելով կարիքավորներին, ամենուր և ամեն կերպ գործադրելով քրիստոնեական սերը:*

*Սույն գրքի փիտղոսը («Խոսքին Հավատարիմ») ներշնչված է Նոր Կտակարանից. մենք Աստծո Խոսքի ծառաներն ենք (*Ղուկասի Ավետարան 1, 2*), կրթված ենք Աստծո Խոսքով (*Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 6, 6*), հաստատում ենք Աստծո Խոսքի մեջ (*Հովհաննեսի Ավետարան 8, 31; 15, 20; 17, 6; Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին նամակը 2, 5*): Տնտեսը, ծառան նախևառաջ պետք է հավատարիմ լինի (*Մատթեոսի Ավետարան 24, 45; Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորընթացիներին 4, 2; Պողոս Առաքյալի Նամակը Կողոսացիներին 1, 7; 2Տմ 2, 2*): Գրված Խոսքը հավատարիմ է, այսինքն՝ ճշմարտախոս (*Հովհաննեսի Հայտնություն 21, 5; 22, 6*), և հավատարմությունը, կամ՝ հավատքը, պտուղներից մեկն է այն Հոգու (*Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 5, 22*), որին Եհովայի Վկաները չեն ճանաչում: Եհովայի Վկաները «նենգում են Խոսքը» (*Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Կորնթացիներին 4, 2*), ինչպես կտեսնենք հետագա էջերում:*

*Ընթերցողի ներողամտությունն եմ հայցում, եթե որոշ տեղեր ստիպված եմ եղել դիմել կրկնությունների. նպատակս նյութի առավել խորացումն է, ինչպես նաև՝ քննարկվող նյութերն ուրիշ նյութերի հետ համեմատելու անհրաժեշտությունը: Երբեմն նաև շեղվել եմ բուն նյութից, քննարկվող որոշ հարցերի շուրջ մեկնաբանություններ տալու և Եհովայի Վկաների դիրքորոշումները հերքելու համար:*

*Գրությունը շատ չծանրացնելու նպատակով կանգ չառա Եհովայի Վկաների մի քանի ուսուցումների վրա, որոնք հիմնականում բարոյական ու առողջապահական բնույթի են (ինչպես արյան փոխներարկման հարցը), դրանց քննարկումն իբրև նյութ թողնելով հետագա հավելվածների համար:*

*Չանդրադարձա նաև մի քանի հարցերի, որոնք Եհովայի Վկաները ''որդեգրել են'' բողոքական գալստական (ադվենտիստ) այն միջավայրից, որում ծնվել են: Գտնում եմ, որ այդ նյութերը կարող են առարկան հանդիսանալ նմանատիպ մի ա՛յլ հատորի համար:*

*Ինչպես նաև պետք է նշեմ, որ Եհովայի Վկաների հրապարակություններից բոլոր մեջբերումները կատարել եմ դրանց իտալերեն թարգմանությունից, չունենալով դրանց ո՛չ անգլերեն բնագիրը, ո՛չ էլ հայերենը: Հիմնականում, այս գրքի շարադրման համար գործածածս հատորները հետևյալներն են.*

ANTONIO CONTRI, *Fedeli alla Parola*, Torino 1991.
BERNARD BLANDRE, *La storia dei Testimoni di Geova*, Torino 1989.
GIUSEPPE CROCETTI, *I Testimoni di Geova a confronto con la vera Bibbia*, Milano 1993.
GIUSEPPE CROCETTI, *I Testimoni di Geova*, Bologna, 1979.
LORENZO MINUTI, *I Testimoni di Geova non hanno la Bibbia*, Roma 1992.
PAOLO SCANOCCHINI, *La Bibbia dei Testimoni di Geova; traduzione o manipolazione?*, Torino 1992.

*Կրկին անգամ մաղթում եմ, որ այս էջերի ընթերցանությունը օգնի Եհովայի Վկաներին անդամակցած հայորդիներին՝ բացահայտելու աստվածային ճշմարտությունը և ապրելու այդ ճշմարտության համաձայն:*

*Թող ամենուր ճանաչվի, երկրպագվի ու փառաբանվի Ամենասուրբ Երրորդությունը և Մի Աստվածությունը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, հավիտյանս հավիտենից. ամեն:*

* * *

ՇԱՏԵՐԸ,
ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄՆԵՐ
ԱՍԵԼ ԵՄ ՁԵԶ
ԵՎ ԱՅԺՄ ԷԼ ԼԱԼՈՎ ԵՄ ԱՍՈՒՄ,
ՎԱՐՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ
ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ԹՇՆԱՄԻՆԵՐ:

ԱՅԴՊԻՍԻՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ ԿՈՐՈՒՍՏՆ Է:

ՆՐԱՆՑ ԱՍՏՎԱԾԸ ԻՐԵՆՑ ՈՐՈՎԱՅՆՆ Է,
ԻՍԿ ԻՐԵՆՑ ՓԱՌՔԸ՝ ԻՐԵՆՑ ԱՄՈԹՈՒՅՔԸ:

ՆՐԱՆՔ ՄԻԱՅՆ ԵՐԿՐԱՎՈՐ ԲԱՆԵՐ ԵՆ ԽՈՐՀՈՒՄ:

*Աստվածաշունչ Մատյան,*
Պողոս Առաքյալի Նամակը Փիլիպեցիներին, 3, 18-19

* * *

*Հիսուսը, հարությունից հետո, եկավ փակ դռների միջով, կանգնեց մեջտեղում ու ասաց. «Խաղաղությո՜ւն ձեզ»: Ապա Թովմասին ասաց. «Մի՛ եղիր անհավատ, այլ՝ հավատացյալ»: Թովմասը պատասխանեց Նրան ու ասաց. «*ՏԵՐ ԻՄ ԵՎ ԱՍՏՎԱԾ ԻՄ*»:*

*Հիսուսը նրան ասաց. «Այդ՝ որովհետև դու տեսար ինձ ու հավատացիր: Երանի՜ նըրանց, ովքեր չեն տեսել և սակայն կհավատան, որ Ես եմ միակ* ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ*»:*

*Աստվածաշունչ Մատյան,* Հովհաննեսի Ավետարան, 20, 24-29; 14, 6

* * *

# ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

*Հաարակական այն երևույթը, որ ի հայտ եկավ տասնութերորդ դարի վերջում և տասնիններորդ դարի սկզբում, և որ հայտնի է «արդյունաբերական հեղաշրջում» անվամբ, ծնունդ տվեց կրոնական բազմաթիվ խմբակների, որոնք նախորդ դարում վխտում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այդ իրադարձությունների հետևանքում, գյուղատնտեսական քաղաքակրթությունը անհետանում էր, իր տեղը զիջելով արդյունաբերական հեղափոխությանը: Հասարակական ու քաղաքական կարգերի արմատական փոփոխությունները շատերին մղեցին կարծելու, թե հասել էին վերջին ժամանակները: Շատերն հին աշխարհի վերջում տեսնում էին «աշխարհի վախճանը»: Ոմանք կամեցան Աստվածաշնչում գտնել իրենց վախերի ապացույցը և սկսեցին Աստվածաշնչում փնտրել «աշխարհի վերջի» ճշգրիտ թվականը:*

*Դրանց շարքերում ամենանշանավորը եղավ Վիլիամ Միլլերը* (1782-1849), *որն Աստվածաշունչը ձեռքին ''ապացուցում էր'', թե աշխարհի վախճանը և Քրիստոսի վերադարձը տեղի էին ունենալու* 1843 *թվականին: Հազարավոր մարդիկ հավաքվում էին ունկնդրելու Միլլերի ''մարգարեությունները'': Անցավ* 1843 *թվականը, Միլլերը ուղղեց իր հաշվարկները և աշխարհի վախճանը որոշեց* 1844 *թվականի գարնանը: Այդ գարունը նույնպես անցավ. Միլլերը, հուսախաբ և ծաղրի առարկա դարձած, իր աշակերտների խորհրդին հետևելով, որոշեց մի ա՛յլ թվական.* 22 *հոկտեմբեր* 1844*: Վերջին հույսն էր: Եթե Քրիստոսը չվերադառնար, գալըստականների (ադվենտիստների) ապագան վտանգի ու հարցականի տակ էր հայտնվելու: Միլլերի հետևորդները կրկին պատրաստվում էին Քրիստոսի հետ հանդիպմանը, որը սակայն չներկայացավ տրված ժամադրությանը: Ծաղրուծանակի ենթարկվելով, Միլլերի գալստականները բաժանվեցին զանազան խմբակների:*

*Չիրականացած սպասումների այդ մթնոլորտում էր, որ երևան եկավ Չարլզ Ռասըլը, Եհովայի Վկաների հերետիկոսական աղանդի հիմնադիրը:*

*Ծնվել է* 1852 *թվականի փետրվարի* 15*ին, Բրուքլինի մոտակայքում: Հայրը հյուսվածքեղենի վաճառական էր: Ինը տարեկանում կորցնում է մորը, որից ստացել էր բողոքական կրթություն: Ստանում է կալվինական դաստիարակություն, որը բացասական ազդեցություն է ունենում նրա արդեն իսկ հոռետես*

*բնավորության վրա: Նրան չափազանց վախեցնում էր նախասահմանման ուսմունքը և իրեն արդեն իսկ դատապարտված էր տեսնում դժոխքի: Տասնհինգ տարեկան հասակում, Ռասելը ընկնում է կրոնական խոր ճգնաժամի մեջ: Սկսում է քննել կրոնական զանազան հավատքները, նաև արևելյանները (իսլամ, հինդուիզմ, բուդդիզմ), բայց մնում է դժգոհ:*

1870 *թվականի մի երեկոյան, անցնելով մի տան մոտով, լսում է երգեր ու աղոթքներ:*

*Ներս է մտնում. Ջոնաս Վենդելը (ադվենտիստ) քարոզում է, թե անհնարին է դժոխքի գոյությունը: Ռասելը իրեն սփոփված է զգում, վերագտնում է Աստվածաշնչի հանդեպ հավատքը և ընկղմվում է նրա ուսումնասիրման մեջ: Բայց, ցավոք, այդ ուսումնասիրությունները կատարում է՝ գտնելու համար այն, ինչ փնտրում է, ինչ հարմար է իրեն, ինչը որ որոշ չափով կարող էր սփոփել իր խռովված ու խախտված հոգեկան վիճակը: Ուսումնասիրում էր Աստվածաշունչը ո՛չ թե Աստծո ձայնը լսելու, ճշմարտությունը գտնելու, դարձի գալու, վարքը բարեփոխելու և Աստծո կամքին համապատասխանելու նպատակով, այլ պարզապես՝ այնտեղ արդարացումներ գտնելու համար այն արարքների կամ մտածումների ու զգացումների համար, որոնք ծանրանում էին տակավին պատանի Ռասելի խղճի վրա և նրանում ստեղծում էին դժոխքին դատապարտված լինելու համոզումը:*

*Ուրեմն, բողոքական միջավայրում և հոգեկան անհավասարակշիռ մթնոլորտում է առաջանում Եհովայի Վկաների հերետիկոսական շարժումը:*

*Նույն տարվա ընթացքում հիմնում է երիտասարդական մի խմբակ, որն անվանում է «Աստվածաշնչյան ուսանողներ»: Իրականում, այս կազմակերպությունը «Եհովայի Վկաներ» անունը ստանում է Ռասելի մահից շատ տարիներ հետո, նրան հաջորդած Ռաթըրֆորդի օրոք, ինչպես կտեսնենք, երբ շարունակ չկատարվող մարգարեություններից հոգնած և կազմակերպությունը լքող անձերի թիվն այնքան շատ էր, որ ըստ շուկայական օրենքների՝ սնանկացած կազմակերպությունը փրկելու միակ միջոցը անունը փոխելն էր և նոր շապիկով առևտրի ներկայանալը:*

*Այդ նույն տարիներին, Ռասելը հանդիպում է մի անձի, որի գաղափարները դնում է իր ''աստվածաբանության'' հիմքում. Նելսըն Բառբըրը: Սա ձախողված Վիլիամ Միլլերի համագործակիցներից էր:* 1844 *թվականի մեծ հուսախաբությունից հետո, Բառբըրը մշակել էր մի նոր ծրագիր, որի համաձայն՝ Քրիստոսը գալու էր* 1874 *թվականին: Այդ տարին նույնպես անցավ առանց ոչինչ պատահելու և Բառբըրը մնաց դատարկ ձեռքերով. «Անհնարին է», ասում էր, «հաշվարկները ճշգրիտ են»:*

*Բարբըրը գրեթե համոզվել էր, որ գործել էր իր ուսուցչի՝ Միլլերի միևնույն սխալը, երբ իր գործակիցներից մեկը՝ Բ. Վ. Քէյթ, ցույց տվեց նրան Նոր Կտակարանի անգլերեն հրատարակություններից մեկը, ուր «parusia» բառը, որով Աստվածաշունչը մատնանշում է Քրիստոսի վերադարձը, թարգմանված էր ո՛չ թե «գալուստ», այլ՝ «ներկայություն»: Բարբըրը դրանում տեսավ մի հնարավորություն՝ փրկելու* 1874 *թվականը: Ինքն իրեն և իրեն հետևող պարզամիտներին համոզեց, թե թվականը ճիշտ էր, սխալ էր միայն այն, ինչին որ սպասում էին:* 1874*ին Քրիստոսը վերադարձել էր, բայց որպես «անտեսանելի ներկայություն», ո՛չ թե «տեսանելի գալուստ»:*

*Այո՛, հերետիկոսական այս բոլոր աղանդների գաղափարները մշակվում են այսպիսի քմահաճոյական կերպով, Աստվածաշունչը վերածելով ատրղագուշակության հատորի, ինչը որ բացահայտ ցույց է տալիս, որ այդ անձերը նվազագույն հարգանք անգամ չունեին հավատքի և Աստծո Խոսքի նկատմամբ, այլ այսպես ասած՝ տեղեծում էին իրենց կուսակցությունները, ապրելու միջոցներ և ամբոխի մեջ անուն շահելու համար (մոռանալով, որ Աստծո առաջ պատասխան են տալու դրա համար):*

*«Աշխարհի վախճանի» թվականը հորինեցին՝ մշակելով Դանիել* 4, 13 *հատվածի «յոթ ժամանակների» ուսմունքը: Բարբըրի համաձայն, «յոթ ժամանակները» համապատասխանում էին յոթը տարիների, յուրաքանչյուրը* 360 *օրով, հետևաբար՝* 2.520 *օրերի: Հենվելով, ապա, ուրիշ տեքստերի վրա (որոնք կքննարկենք իրենց ժամանակին), հաստատեց, թե յուրաքանչյուր օր համազոր է մեկ տարվա: Ուստի,* 2.520 *օրերը հավասար սեպեց* 2.520 *տարիների: Քանի որ* 2.520 *տարիների շրջանը հաշվում էր՝ մեկնելով Ք.ա.* 607 *թվականից (կարծելով, թե այդ թվականին Նաբուգոդոնոսորը ավերեց Երուսաղեմը, ինչը որ, ինչպես կտեսնենք, սխալ է), հասավ Ք.հ.* 1914 *թվականին: Այսպիսով, «աշխարհի վախճանը» որոշեց* 1914 *թվականին:*

1876 *թվականին Ռասըլը Լոս Անջելեսում հանդիպեց Բարբըրին, որը նրան բացատրեց իր «ժամանակագրություն»ը և «անտեսանելի ներկայության» ուսմունքը: Ռասըլը ընդունեց Բարբըրի ուսմունքը: Հիսուն տարի շարունակ Եհովայի Վկաների «Դիտարանի Ընկերությունը» իր հետևորդներին քարոզեց, թե Քրիստոսի «անտեսանելի ներկայությունը» սկսվել էր* 1874 *թվականին, իսկ «աշխարհի վախճանը» տեղի էր ունենալու* 1914*ին: Հետագայում, ինչպես կտեսնենք, Եհովայի Վկաները բազում անգամներ փոփոխեցին այս թվականները, ամեն անգամ մատնվելով խայտառակումի: Բայց արդ լսենք Ռասըլի խոսքերը.*

*«1914 թվականին վերանալու է այն, ինչը որ Աստված անվանում է Բաբելոն, իսկ մարդիկ անվանում են քրիստոնեություն, ինչպես որ ցույց են տալիս մարգարեությունները»:*

*«Արքայության սկզբին, այսինքն՝ 1914 թվականի վերջավորությանը, իշխանության գլուխ են անցնելու Հին Կտակարանի հարություն առած սրբերը, սբ. Հովհաննես Մկրտչից սկսած մինչև Աբելը»:*

Ինչպիսի ”հանճարեղ” միտք. գնահատեցեք ինքներդ:

Տարածելու համար իր մտքերը, Ռասըլը 1879 թվականին սկսեց «Watch Tower» (Դիտարան) թերթի հրատարակումը:

Այդ օրերին են տեղի ունենում Ռասըլ ամուսինների ընտանեկան վեճերը, որոնց արդյունքում նրանք ամուսնալուծվում են: Կինը՝ Մերի Ռասըլը, ամուսնուն մեղադրում էր ամուսնական անհավատարմության մեջ: Տեսել էր Չարլզին «Դիտարան» ընկերության աշխատակցուհիներից մեկի սենյակում և լսել էր հետևյալ խոսքերը. «Ես նման եմ մեդուզայի: Լողում եմ այստեղ ու այնտեղ: Հպվում եմ սրան ու նրան: Եթե մեկը պատասխանում է, նրան վերցնում եմ. ապա թե ոչ, լողալով ուղղվում եմ դեպի ուրիշները»: Այստեղ զանց ենք առնում անդրադառնալու այն դատավարություններին, որ տեղի ունեցան՝ ամուսնալուծության և ժառանգության բաժանման համար: Երկարատև կռիվներից ու քաշքշուկներից հետո, Եհովայի Վկաների հերետիկոսության հիմնադիրը կարողացավ կիսել իր ունեցվածքներն իր (արդեն նախկին) կնոջ հետ:

Եհովայի Վկաների հերետիկոսության հետագա պատմությունը նույնպես, մինչև մեր օրերը, չդադարեց դժբախտություն պարածել ընտանիքներից ներս: Եհովայի Վկաների հերետիկոսության գլխավոր թշնամին ընտանեկան օջախն է, որը նրանք կործանում են՝ ընտանեկան սիրո բոլոր կապերը որակավորելով որպես սատանայական (օրինակ՝ ընտանիքի անդամներից մեկի ծննդյան օրվա հանդեսն ու քաղցրեղենները, ընտանիքի անդամներից որևէ մեկին արյուն փոխներարկելը, նույնիսկ եթե հիվանդը մահվան վտանգի մեջ է):

Այդ օրերի թերթերը բավական խոսեցին «վերապատվելի Ռասըլ Մեդուզայի» մասին: Այդ խայտառակիչ իրադարձությունները Ռասըլին ստիպեցին իր Ընկերության կենտրոնական աթոռը Պիտսբուրգից տեղափոխել Բրուքլին:

Ռասըլը մեռավ 1916 թվականի հոկտ. 31ին, այդպես էլ չտեսնելով «աշխարհի վախճանը»: Իր կյանքի ընթացքում չհավատաց դժոխքի գոյությանը: Կարծում եմ, որ հիմա հավատում է:

*Ռասըլի մահն իր հետևորդներից շատերին թողեց խաբված և հուսահատ, ինչը որ բնական էր: Այդպիսի մթնոլորտում, 1917 թվականի Հունվարի 6ին, ներքին պայքարի, դատավարություններից և ուղղակի բռնություններից հետո, «Դիտարանի Ընկերության» նախագահ ''ընտրվեց'' Ջոզեֆ Ռաթըրֆորդը:*

*Ծնվել է* 1869 *թվականին Միսսուրիում, հողագործի ընտանիքում: Հետևում էր իրավաբանական ուսումների, բայց հայրը նրան ոչնչով չէր օգնում, որովհետև կամենում էր նրան ունենալ իր մոտ, ագարակում: Երիտասարդը նաև աշխատում էր, ուսման վարձը վճարել կարողանալու համար:*

1931 *թվականը պատմական կարևորություն ունեցավ այս հերետիկոսական շարժման համար: Ռաթըրֆորդը փոխեց նրա անունը: Այդուհետև չպետք է կոչվեին «աստվածաշընչյան ուսանողներ» կամ «ռասըլականներ», այլ՝ «Եհովայի Վկաներ»: Այս տեսանկյունից դիտված, Ռաթըրֆորդը կարող է համարվել Եհովայի Վկաների հիմնադիրը, որովհետև իր ընտրության արդյունքում՝ սեկտային հարողների մի մասը բաժանվեց և մինչև օրս էլ սերտում է Ռասըլի գրությունները, թշնամական կեցվածք ունենալով Եհովայի Վկաների հանդեպ:*

*Բայց ակամա մտածում եմ. «Վկաներն են ո՞ւմ, ի՞նչ բանի»: Վկան նա է, ով ինչ-որ մի փաստի* ուղղակի *ծանոթությունն ունենալով, այն փոխանցում է ուրիշների: Հովհաննես Առաքյալն Աստվածաշնչում գրում է. «Այն, ինչը որ տեսանք ու լսեցինք, նույնը ավետում ենք ձեզ» (*Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 1, 3*): Մենք՝ քրիստոնյաներս, երբեք չենք վկայում, այլ՝ ավետում ենք Քրիստոսի Հարությունը, հիմնվելով Առաքյալների վկայության վրա, որովհետև նրանք էին ականատեսները: Ո՞ւմ են վկայում Եհովայի Վկաները, ի՞նչ են վկայում Եհովայի Վկաները: Թերևս միայն մի բան. որ ճշմարիտ են Պողոս Առաքյալի խոսքերը. «Եթե որևէ մեկը ձեզ քարոզում է մեզնից լսած Ավետարանից տարբեր մի բան, թող լինի անաթեմա (= նզովված, անիծյալ)» (*Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 1, 9*): Այո՛, վկայում են, որ ծնվել են երեկ (*1879*ին) և սատանայական մոլեգնությամբ, միմիայն փողի համար, մարտնչում են Քրիստոսի* 2000*ամյա Եկեղեցու դեմ:*

*Ռասըլի հաջորդը նույնպես ''հանճարեղ'' միտք ուներ: Որպեսզի քաջալերեր իր հուսահատ հետևորդներին,* 1914*ի չիրականացած «աշխարհի վերջը» փոխադրեց* 1918*ին: Բայց ամբողջովին չմերժեց իր*

*նախորդի ”մարգարեությունը”: Ըստ իր, 1914ին իսկապես հաստատվել էր Աստծո Արքայությունը, բայց ո՛չ թե երկրի վրա, այլ՝ «անտեսանելի երկինքներում»: Պատճառաբանում էր այսպես. հռոմեացիների կողմից Երուսաղեմն ավերվեց Ք.հ. 70 թվականին, բայց իրեական ապստամբությունը ավարտվեց միայն երեք ու կես տարի հետո. 73ին: Ուրեմըն, հարկավոր է այդ տարիները նույնպես ավելացնել 1914ի աշնանը, ինչը որ անելով՝ հասավ 1918ի գարնանը: Բայց այդ թվականին դադարեց պատերազմը և Ռաթըրֆորդը բանտարկվեց, պատերազմի տարիներում պետության դեմ քարոզած լինելու համար: Ուրիշ ոչինչ:*

*Բանտից դուրս գալով, Ռաթըրֆորդը այս անգամ որոշեց 1925 թվականը: 1920 թվականին հրատարակեց աղմուկ հանող վերնագրով մի գրքույկ. «Միլիոնավոր մարդիկ, որ այսօր ապրում են, չեն մահանալու»: Նպատակն էր ցնցում (սենսացիա) առաջացնել և գովազդ կատարել (միշտ հետևելով շուկայական գործելակերպին): Ցույց տալու համար իր վստահությունը, Ռաթըրֆորդը Կալիֆորնիայում, Սան Դիեգոյում, կառուցել տվեց մի հոյակապ պալատ, որպեսզի այնտեղ հյուրընկալեր հարություն առած Աբրահամին և մյուս Նահապետներին:*

*Ես անձամբ չեմ հասկանում նաև, թե ինչո՞ւ հարություն առած Նահապետները պետք է Կալիֆորնիայում հյուրընկալվեին, երբ Աստծո կողմից իրենց խոստացված երկիրը Պաղեստինն է: Զարմանում եմ, թե ինչպես են չափահաս մարդիկ կույր գնում այս խաբեություններին: Պատճառը մեկն է. իրենց աչքերով (կամ ուղեղով) չեն կարողացել Աստվածաշունչը … :*

*Անցավ նաև 1925 թվականը, Նահապետները հարություն չառան, բայց պալատը դատարկ չմնաց. 1930ին այնտեղ բնակվեց ինքը Ռաթըրֆորդը, որովհետև … Կալիֆորնիայի մեղմ կլիման նպաստում էր իր առողջությանը: (Գնահատականները թողնում եմ մտածելու կարողություն ունեցողներին):*

*Եհովայի Վկաներին անկեղծ հավատքով հարած անձանց հուսահատությունն ու զայրույթը վիթխարի էին: Տասնյակ հազարավոր մարդիկ վերջնականապես լքեցին աղանդը և վերադարձան Եկեղեցու գիրկը, որը 2000 տարիներ շարունակ խնամել ու հավիտենական կյանքին է հասցրել իր զավակներին, և նույնը շարունակելու է կատարել մինչև վերջ: Այս վերադարձողները եղան խելացի, որովհետև Եհովայի Վկաների հետագա պատմությունը նույնպես եղավ պատմություն սպախոսությունների ու չիրականացած սպասումների, մինչև մեր օրերը, ինչպես կտեսնենք քիչ հետո:*

*Ռաթըրֆորդը մեռավ 1942ի հունվարի 8ին, ինքը նույնպես չտեսնելով «աշխարհի վախճանը» … , բայց ինքը նույնպես համոզվելով դժոխքի գոյությանը … :*

*Ռաթըրֆորդին հաջորդեց Նաթան Քնորը, 1942ի նոյեմբերի 13ին: Ծնվել էր 1905 թվականին և անդամակցել էր Եհովայի Վկաների հերետիկոսությանը 1921ին:*

*Եհովայի Վկաների համար սովորական բան է ''հանճարեղ'' միտք ունենալը և տրվելը թվաբանական հաշվարկներին: ''Մանրազննին ուսումնասիրելով'' դեպքերի նշանները, Նաթանը որոշեց, որ աշխարհին իր վախճանին հասնելու էր 1975 թվականի աշնանը: Ահա իր իսկ խոսքերը.*

*«Մարդու արարումով սկսված վեց հազար տարիները վերջանալու են 1975 թվականին, իսկ մարդկային պատմության հազարամյա յոթներորդ շրջանը սկսվելու է 1975 թվականի աշնանը»: «Ճիշտ է, անցյալ ժամանակներում եղել են ոմանք, որ կանխագուշակել են աշխարհի վախճանը, տալով նույնիսկ հստակ թվականներ: Վախճանը չի եկել: Այդ մարդիկ կատարել են կեղծ մարգարեություններ: Ինչո՞ւ: Ի՞նչ էր նրանց պակասում: Նրանց պակասում էր Աստծո ճշմարտությունը … : Բայց ի՞նչ ասենք այսօր: Այսօր ունենք պահանջված հստակությունը, ամբողջը: Եվ ջախջախիչ է»:*

*Այդ ոմանք, որոնց Նաթանը անվանում է կեղծ մարգարեներ, իր նախորդներն էին. Ռասըլը և Ռաթըրֆորդը: Ինքը, մինչդեռ, ճշմարիտ մարգարեն էր, որ ուներ «Աստծո ճշմարտությունը» և «ջախջախիչ հստակությամբ» գիտեր, որ 1975 թվականի աշնանը տեսնելու էր «աշխարհի վախճանը»: Կար միայն մի կասկած. «Արմագեդոնի ճակատամարտի» ավարտի և հազարամյա Արքայության սկզբի ճշգրիտ օրը: Բայց «խոսքը վերաբերվում է շաբաթների կամ ամիսների, ո՛չ տարիների» (Դիտարան, 01.02.1969, էջ 83):*

*Ոմանք, սակայն, խորհրդածում էին և, ինչը որ շատ զարմանալի է Եհովայի Վկաների մեջ, մտածում էին իրենց խելքով: Այդպիսիներից մեկն էր Ռայմոնդ Ֆրանցը, Եհովայի Վկաների Ղեկավար Մարմնի հաջորդ Նախագահի զարմիկը, որի գրքից մեջբերում ենք իր իսկ խոսքերը (այդ գիրքը գրել է Եհովայի Վկաների հերետիկոսությունը լքելուց անմիջապես հետո).*

*«Որքան ավելի էի կարդում Աստվածաշունչը, այնքան ավելի էր անտեղի թվում այդ ամբողջ ուսմունքը, որը ոչնչով չէր*

*համապատասխանում Հիսուս Քրիստոսի սովորեցրածներին. ''Ինչ վերաբերվում է այդ օրվան և այդ ժամին, ոչ որ չգիտի, ո՛չ հրեշտակները, ո՛չ Որդին, այլ միայն Հայրը''* (Մատթեոսի Ավետարան 24, 36*)»:*

*Բայց* 01.02.1969 *թվականի «Դիտարան»ը գրեց, թե չափազանց լրջությամբ չպետք է հասկացվեին Հիսուսի խոսքերը.*

*«Սա ժամանակը չէ Հիսուսի խոսքերի հետ խաղալու: Ընդհակառակն, ժամանակն է եռանդագին հասնզվելու, որ մարդկային իրականության այս համակարգը ճեպընթաց հասնում է իր ահավոր վախճանին: Մի՛ թույլատրեք, որ խաբեն ձեզ. բավական է, որ Հայրն իմանա ''այդ օրն ու ժամը''»:*

*Մեկնաբանում է Ռայմոնդ Ֆրանցը.*

*«Սա հավասար է ասելու. ''Հիսուսը ասաց այս ու այս բաները, բայց դուք շատ կարևորություն մի՛ տվեք: Հիսուս Քրիստոսի ասածները չէ, որ պետք է առաջնորդեն ձեր կյանքը, այլ՝ այն, ինչ ասում է Ղեկավար Մարմինը''» (*R. FRANZ, *Crisi di coscienza. Un Testimone di Geova si confessa*, ed. Dehoniane, Napoli 1988, pp. 284-286*) (գրքի վերնագիրը հայերեն նշանակում է* «Խղճի ճգնաժամ: Եհովայի մի Վկա խոստովանվում է»*):*

*Անցավ նաև* 1975 *թվականը: Եվ ի՞նչ պատահեց: Ինքնուրույն մտածող խելացի մարդիկ, որ մինչև այդ օրը հարում էին եհովական հերետիկոսությանը, հարյուր հազարներով լքեցին աղանդը: Ահա մի քանի թվեր.*

| | | | |
|---|---|---|---|
| 1973 | *թվական* | - | 77.806 *մարդ* |
| 1974 | *թվական* | - | 17.232 *մարդ* |
| 1975 | *թվական* | - | 117.040 *մարդ* |
| 1976 | *թվական* | - | 105.693 *մարդ* |
| 1977 | *թվական* | - | 126.809 *մարդ* |
| 1978 | *թվական* | - | 113.845 *մարդ* |
| 1979 | *թվական* | - | 87.948 *մարդ* |
| 1980 | *թվական* | - | 5.683 *մարդ* |
| 1981 | *թվական* | - | 7.498 *մարդ* |

*Ինը փարվա ընթացքում 659.354 մարդ լքել է հերետիկոսության շարքերը: Ուշադրության արժանի է այն, որ անդամների դուրս գալը սաստկացել է 1975-1979 թվականներին, Նաթանի ''ջախջախիչ կերպով հսպակ'', բայց այնուամենայնիվ չիրականացած ''մարգարեությունների'' պատճառով:*

*Տեղի չունեցած վախճանի համար հարկավոր էր գտնել ապլածաշնչյան մի ''արդարացում'', որը Բրուքլինից հասավ* 15.03.1976 *թվականի Դիտարանի էջերի վրա: Ըստ Ղեկավար Մարմնի, սխալը կայանում էր նրանում, որ փարիները սկսել էին հաշվել Ադամի արարումից, մինչդեռ պետք է որ հաշվեին Եվայի արարումից սկսած: (Ծիծաղելի խեղկատակություն): Միմիայն երբ Ադամը վերջացրեց բոլոր կենդանիներին անուններ դնել, Եհովան ստեղծեց Եվային: Բայց որքա՞ն ժամանակ ծախսեց Ադամը բոլոր կենդանիներին անուններ դնելու համար: Ղեկավար Մարմինը գրում է.*

*«Չգիտենք, թե կարճ մի ժամանակամիջոց եղավ, ինչպես մեկ ամիս, կամ մի քանի ամիս, մեկ փարի, կամ դեռ ավելի: Բայց որքան էլ որ լինի այդ ժամանակաշրջանը, այդ քանակությունը պետք է ավելացնել Ադամի արարումից անցած ժամանակին, հասցնելու համար մեզ* 6.000 *փարիներին, մինչև Սատծո յոթներորդ օրը» (եհովական մի հրապարակությունից. Siate svegli finchn riusciate a scampare):*

*Այս «խցանումը» թույլատրում էր շահել բավական ընդարձակ ժամանակ, բայց փակավին որքա՞ն կարող էին Եհովայի Վկաները միայնակ զբոսանքի պահել Ադամին եդեմական պարտեզում: Խուսափելու համար անդամների թվի պեսակետով ուրիշ վտանգավոր կորուստներից,* 1976*ի ամռանը ներկայացվեց նոր բանաձևը. «Վախճանը կգա, երբ քարոզչությունը հասած կլինի իր գագաթնակետին»: Սա այն ամենաերկմիտ ու խարդախ բանաձևն է, որ երբևէ ծնվել է Ղեկավար Մարմնի սատանայական մտքում: Այսպիսով շահագործման է ենթարկվում շարքային խեղճ Վկաների գերագույն փափագը, «աշխարհի վախճանը», այն կապելով նրանց քարոզչական ճիգերին, կամ պարզ ու հասկանալի խոսքերով ասած, թե որքան գրքեր ու ամսաթերթեր կբաժանեն նրանք օրեկան, հարստացնելով Դիտարանի Ընկերությունը, առանց վիճելու, առանց պատճառաբանելու, առանց հարցումներ ուղղելու:*

*Ոմանք ընդդիմանում են, թե Եհովայի Վկաների հրապարակությունները շատ ավելի նվազ արժեն, քան եկեղեցական հրապարակությունները, կամ նույնիսկ, որ Եհովայի Վկաները սկզբի ամիսներին ուղղակի նվիրում են իրենց «գովազդային» գրքույկները: Պատճառը, և մեկ անգամ, շարքային Վկաների աշխատանքի շահագործումն է, որովհետև իրենց փպարաններում աշխատում են*

*առանց վարձատրվելու, կամ չնչին վճարումով, զոհելով երեկոյան հանգստի ժամերը, որ պարտավոր էին իրենց ընտանեկան օջախում անցկացնել, իրենց զավակների կողքին, որոնք կարիքն ունեն իրենց ծնողների գորովին: Մինչդեռ բոլոր եկեղեցական աշխատատեղերում աշխատողները վարձատրվում են, որովհետև որևէ մեկին աշխատեցնելը պարզապես Երկնքի Արքայությունը խոստանալով, նշանակում է սպրկացնել և չարաչար շահագործել այդ բարի հոգիներին:*

1977 *թվականի հունիսի* 8*ին մեռավ Նաթան Քնորը (սա նույնպես չտեսնելով «աշխարհի վախճանը», բայց իր նախորդների նման համոզվելով դժոխքի գոյությանը), իր տեղը թողնելով Ֆրեդերիկ Ֆրանցին, որն իր պաշտոնին անցավ* 1977*ի հունիսի* 22*ին: Նախագահության առաջին ամիսներին Ֆրանցն իր բոլոր ուժերը կենտրոնացրեց՝ մեղմացնելու համար այն խոր ճգնաժամը, որ ծանրացել էր սեկտայի վրա: Բացի անդամների քանակի նվազումը,*

1975*ի հուսախաբությունը բանավեճեր էր առաջացրել նաև Ղեկավար Մարմնի ներսում: Հարկավոր էր ճշտել, թե որն էր այն «սերունդը», որի մասին խոսվում է* Մատթեոսի Ավետարանի 24, 34 *հատվածում. «Այս սերունդը չի անցնելու, մինչև այս բոլորը չիրականանա»:*

*Եհովական մեկնաբանողները գրում էին, թե խոսքը վերաբերվում էր* 1914*ի սերնդին: Այսինքն, «աշխարհի վախճանը» տեսնելու էին բոլոր նրանք, ովքեր* 1914*ին ի վիճակի էին հասկանալու այդ տարվա ''իրադարձությունները'':* 1975*ից հետո երկարաձգվեցին սպասման ժամանակները. «այդ սերնդի» անդամները այդուհետև միայն նրանք չէին, ովքեր կարող էին հասկանալ* 1914*ի ''իրադարձությունները'', այլ՝ բոլոր նրանք, ովքեր կարող էին «տեսնել» այդ ''իրադարձությունները'' (Դիտարան,* 01.04.1979*):*

15.04.1981 *թվականի Դիտարանը ավելի ընդարձակեց հորիզոնները, ճշտելով, որ տասը տարեկան հասակում արդեն որոշ դեպքեր մնայուն հետքեր են թողնում հիշողության մեջ: Ուստի, մինչև որ* 1914 *թվականին ծնվածները բոլորը չմահանան, տրամաբանական է տակավին սպասելը:*

1914 *թվականի խնդրի լուծմանը Ղեկավար Մարմինը հատկացրեց* 1980 *թվականի Մարտի* 5*ի նիստը: Ղեկավար Մարմնի անդամներից ոմանք (Ռոբերտ Շրոյդըր, Քարլ Քլայն և Գրենտ Սուիթըր) առաջարկեցին* Մատթեոս 24, 34 *հատվածի «սերունդը» նկատել այլևս ոչ թե նրանց, ովքեր ծնվել էին* 1914*ին, այլ՝ նրանց, ովքեր ծնվել էին* 1957*ին: Աստվածաշնչյան հիմքը ''կարող էր'' լինել* Մատթեոս 24, 29 *հատվածը. «Արևը խավարելու է, լուսինն այլևս չի տալու իր լույսը,*

*ապրերն ընկնելու են երկնքից և երկնային զորությունները վրդովվելու են»: Շրոյդըրն ու մյուսները առաջարկում էին կապել այս հատվածը 1957ին «Սպուտնիկ» տիեզերանավի արձակմամբ սկսված տիեզերական դարին: Այդպիսով կշահեին ավելի քան 43 տարի, 1914ի համեմատ: Առաջարկը մերժվեց: Այնժամ Քլայնը առաջարկեց հետևել արդեն մի քանի անգամ կիրառված գործելակերպին, այսինքն՝ մի որոշ ժամանակի համար պարզապես լռել որոշակի ուսուցումների շուրջ, այնպես՝ որ եթե կարիքը զգացվեր փոխելու ինչ-որ մի բան, չէր առաջանա ոչ մի հակազդեցություն: Բայց այս առաջարկը նույնպես մերժվեց: Մեծամասնությունը կողմ էր շեշտելու և դուրս ցայտեցնելու, ինչպես որ սովոր էին, 1914 թվականը:*

*Հաղթական ելավ Լլոյդ Բերրիի՝ Ղեկավար Մարմնի ամենապահպանողական անդամներից մեկի առաջարկը, որի համաձայն «Ռուսաստանում կան անձինք, որ ապրում են մինչև հարյուր երեսուն տարեկան և դեռ ավելի», ինչը որ թույլատրում է «աշխարհի վախճանը» տեղափոխել Երկուհազար թվականից այն կողմ:*

*Առայժմ այս գաղափարը տիրապետողն է և ով որ համարձակվում է կասկածել, թե 1914ի սերունդը տեսնելու է աշխարհի վախճանը, արտաքսվում է կազմակերպությունից (երանի՜ իրեն): Սակայն անհնարին չէ, որ վաղ կամ ուշ այս ուսուցումը նույնպես ենթարկվի փոփոխությունների, ինչպիսին եղավ պարագան եհովական ուրիշ շատ (չասելու համար՝ բոլոր) ուսուցումների: Եհովական հերետիկոսության գոյության հարյուր տարիների ընթացքում իրենց ուսմունքի մեջ կատարված այս բազում փոփոխությունները Ղեկավար Մարմինը բացատրում է «նավավարական հնարքների» տեսությամբ, որը ներկայացված է 01.06.1982 թվականի Դիտարանի էջերում, ներշնչված՝ տեսություն-ընդդիմություն-եզրակացություն հեգելյան սկզբունքից (թեզ-անտիթեզ-սինթեզ): Ինչը որ կատարվում է այսպես.*

*ա) Սահմանվում է այսօրվա ’’ճշմարտությունը’’ (տեսություն): Բայց հետո, ժամանակի ընթացքում, բացահայտվում է, որ այդ ’’ճշմարտությունը’’ ունի որոշ թերություններ կամ պակասություններ:*

*բ) Հայնժամ որդեգրվում է ամբողջովին հակառակ, նոր ’’ճշմարտությունը’’ (ընդդիմություն): Հետագայում պարզվում է, որ սա նույնպես չի ներկայացնում ամբողջ ’’ճշմարտությունը’’:*

*գ) Վերջավորության, վերցնում են երկու տեսակետներում ներկա վավերական գծերը (եզրակացություն):*

*Բնականաբար, Ղեկավար Մարմինը իր հետևորդներին չի բացատրում, որ խոսքը վերաբերվում է Հեգելի փիլիսոփայությունից ներշնչված սկզբունքներից մեկին (որովհետև դատապարտում են*

*բոլոր ուսումները, հատկապես՝ փիլիսոփայությունը, որպես սատանայական: Նպատակը շատ հասկանալի է: Տգետ ամբոխների վրա իշխելը շատ հեշտ է: Այս պատճառով են եհովական ծնողներին համոզում դպրոց չուղարկել իրենց երեխաներին), այլ՝ գործածում է «նավավարական հնարքներ» արտահայտությունը: Ահա այդ հնարքներից մեկը որպես օրինակ: Բարոյական նկարագրի մի ’’ճշմարտություն’’. մարմնի անդամների փոխպատվաստումը:*

*ա)* 1963 *թվական: Փոխպատվաստումն օրինավոր է, որովհետև այս հարցի շուրջ աստվածաշնչյան ոչ մի սկզբունք չկա (Դիտարան,* 15.03.1963*):*

*բ)* 1968 *թվական: Փոխպատվաստումն ապօրինի է, վայրագության արարքներից մեկն է: Կան աստվածաշնչյան հիմքեր՝ այն դատապարտելու համար (Դիտարան,* 15.03.1968*):*

*գ)* 1980 *թվական: Փոխպատվաստումն օրինավոր է, պահպանելով որոշ զգուշություններ (Դիտարան,* 01.09.1980*):*

*Բայց ի՞նչ պատճառներից մղված՝ մի ’’ճշմարտություն’’ կարող է հնարքներ բանեցնել: Քանի՞ Վկա է մահացել մինչև* 1980 *թվականը, մերժելով մարմնի անդամների (սրտի, երիկամների, լյարդի և այլն) փոխպատվաստումը կամ արյան փոխներարկումը, որն ապօրինի էր*

1968*ին և օրինավոր դարձավ* 1980*ին: Ո՞ւմ ուսերին է ծանրանում բարոյական ու մարդկային պատասխանատվությունը այնպիսի ընտրությունների համար, որոնք խաղի պակ են դնում մարդկային հազարավոր կյանքեր:*

*«Նավավարական հնարքներ» բանեցնելով՝ փոփոխության են ենթարկել նաև Ադամի արարման թվականը: Սկզբում Ք.ա.* 4.126 *թվականն էր, ապա եղավ* 4.026*ը: Երբ անցավ* 1975 *թվականը և եհովականների հարյուրերորդ հուսախաբությունը, Ղեկավար Մարմինը սկսեց նորից «հնարքներ» բանեցնել և բացահայտեց, որ* 6.000 *տարիները անցել էին, բայց Ադամի և ո՛չ թե Եվայի ստեղծումից: Որքա՞ն երկարատև էր այդ միջոցը: Ամիսներ, ավելեց սկզբում: Իսկ հետո, «հնարքներ» բանեցնելով, տարիներ:*

*Բայց ուրեմն ի՞նչ է մնում եհովական հերետիկոսությունից, եթե ամեն բան կարող է փոփոխվել: Իրականում՝ ոչինչ: Ո՛րն է, ուրեմն, Եհովայի Վկաների հիմնական, բացարձակ և անփոփոխելի ճշմարտությունը: Կարող է հակասություն թվալ, բայց հետևյալն է. Ղեկավար Մարմինը և միմիայն Ղեկավար Մարմինն է միշտ իրավացի:*

*Իսկ Աստվածաշո՞ւնչը:*

*Աստվածաշունչն ուրիշ բան չէ, այլ միայն գործիք Ղեկավար Մարմնի ձեռքերում: Միայն Աստվածաշունչը ոչինչ չարժե եհովականների համար: Ավելին, Աստվածաշունչը վնասակար է, որովհետև այն առանց Ղեկավար Մարմնի առաջնորդության ընթերցելով՝ վտանգն է սպեղծվում «վերստին ընկնելու ավանդական Քրիստոնեության ուսմունքի մեջ» և թավալվելու ''խավարի'' մեջ. «Երբեմն երբեմն, Եհովայի ժողովրդի շարքերում երևան են գալիս ոմանք, որոնք ինչպես սկզբնական Սատանան, որդեգրում են մտածելու քննողական և անկախ մի կերպ [...], ասելով, թե բավական է միայն Աստվածաշնչի ընթերցումը միայնակ կամ փոքրիկ խմբակներով: Բայց զարմանալի բան. իրենց այդ աստվածաշնչյան ընթերցման պատճառով վերադառնում են այն ուսմունքին, որից հեռացել էին և որը Քրիստոնեության եկեղեցականներն ուսուցանում էին հարյուր տարի առաջ» (Դիտարան,* 15.08.1982*): Բայց եթե*

*ճիշտ է, որ ավանդական Քրիստոնեության ուսուցումները հաստատվում են միայն Աստվածաշնչի ընթերցանությամբ, մինչ եհովականներինը կարիքն ունեն այլևայլ հրատարակությունների, սա կայծակնային ապացույցն է, որ ավանդական Քրիստոնեությունը ներդաշնակ է Աստվածաշնչի հետ, մինչ «Դիտարանի Ընկերության» ուսուցումները պտուղն են մարդկային խեղկատակությունների ու ... խարդախությունների:*

1979 *թվականը եղավ ծանր ճգնաժամի տարի: Ղեկավար Մարմնի անդամներից մեկը՝ Ռայմոնդ Ֆրանցը, նախագահ Ֆրեդերիկ Ֆրանցի զարմիկը, կասկածի տակ դրեց* 1914*ի իմաստը և Դիտարանի Ընկերության ուսուցումներից ուրիշ շատերը: Նախ հեռացվեց Ղեկավար Մարմնից, ապա ամբողջովին արտաքսվեց հերետիկոսության շարքերից: Ռայմոնդ Ֆրանցի գրած* «Խղճի ճգնաժամ: Եհովայի մի Վկա խոստովանվում է» *գիրքը, որից արդեն մեջբերեցինք, բավական օգտակար եղավ հերետիկոսության դիմակազերծման համար:*

2000 *թվականից աղանդի ղեկավարն է Ալդեն Ադամսը: Կամաց կամաց իր առջև ճանապարհ է բացում Ալբերտ Շրոյդըրի կողմից բանաձևված գաղափարը, ըստ որի՝ «սերունդը, որ չի անցնելու» Քրիստոսի վերադարձից առաջ, բաղկացած է բոլոր նրանցից, ովքեր զգում են իրենց ''օծյալ'': Իրականում, այս նոր տեսությունը պահանջում է, որ Արմագեդոնի պատերազմի բռնկման օրը գեթ մեկ ''օծյալ'' լինի երկրի վրա: Բայց քանի որ ամեն տարի նորանոր եհովականներ իրենց խախտված մտքերում լսում են (սատանայի) ներքին ձայնը, որը վկայում է, թե իրենք պատկանում են ''օծյալների'' խմբին, այս ուսմունքը թույլատրում է ''մարգարեության'' կատարումը*

*հետրաձգել անսահմանափակ անգամներ, անսահմանափակ ժամանակով:*

֍֍֍

*Կարծում եմ, թե այսքանը արդեն բավական է այս հերետիկոսության պատմությանը ծանոթանալու համար, ինչպես նաև հասկանալու համար, որ եհովականների մոտ չկա ճշմարտության և ո՛չ իսկ մի ճառագայթ, և ո՛չ իսկ մի նշույլ: Բայց հարցերն առավել ըմբռնելի դարձնելու նպատակով, այժմ անցնում եմ քննելու նրանց ուսմունքի առանձին կետերը:*

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ Ա.
## ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

*Աստվածաշունչը մի ժողովածու է, զանազան գրությունների հավաքածու, որոնք միմյանցից տարբերվում են գործածված գրական կերպերով (ժանրերով), շարադրման կամ խմբագրման ժամանակաշրջանով, միջավայրով, ինչպես նաև ուսուցումների տարողությամբ: Մի ժողովածու է, որ ձևացել է կամաց-կամաց, մոտավորապես հազար տարվա ընթացքում, և ունեցել է բազմաթիվ ներշնչված հեղինակներ, որոնց անձնական ինքնությունն ու նկարագիրը միշտ չէ, որ ներդաշնակվում են միմյանց: Աստվածաշունչը բաժանվում է երկու մասի.* Հին Կտակարան և Նոր Կտակարան*: Հին Կտակարանն իրենում ներառնում է* 48 *գիրք, իսկ Նոր Կտակարանը՝* 27*: Բոլոր այս գրքերը միասին բաղկացած են* 1.300*ից ավելի գլուխներից, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են տասնյակ հազարավոր հատվածների:*

*Ներածական այս սակավաքանակ տեղեկությունները չկարծածից ավելի կարևոր են, որովհետև թույլատրում են խկույն հասկանալ, որ Աստվածաշնչին հարկավոր է մոտենալ պատշաճ պատրաստվածությամբ: Եթե գործի չեն դրվում գիտականորեն փորձված միջոցներ, հնարավոր է Աստվածաշնչում բացահայտել հիմքեր մարդկային ամենատարբեր գաղափարախոսությունների և ուսմունքների համար: Կան աստվածաշնչյան մեկնողական գիտության կանոններ, որոնք համընդհանուր կերպով ընդունված են գիտնականների կողմից, բացառությամբ եհովականների (և բողոքական որոշ հոսանքների), որոնց մոտեցումը Աստվածաշնչին քիչ հետո կբացահայտենք միասին:*

*ա) Նախևառաջ ասենք, որ աստվածային հայտնությունը կատարվել է աստիճանաբար: Այս աստիճանական առաջադիմությունը, որն արդեն ներկա է Հին Կտակարանում, առավել մեծ չափեր է ստանում, երբ Հին Կտակարանը համեմատում ենք Նորի հետ: Կա որակի մի ցատկ, ոստում: Լսենք Պողոս Առաքյալին. «Աստված բազում եղանակներով և զանազան օրինակներով*

*անցյալում խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով. այս վերջին օրերին մեր հետ խոսեց Իր Որդու միջոցով, որին Ժառանգ նշանակեց ամեն ինչի, և որի միջոցով ստեղծեց տիեզերքը»* (Պողոս Առաքյալի Նամակը Եբրայեցիներին 1, 1-2*): Ուշադրություն պետք է դարձնել, թե որքազան հեղինակը ի՛նչ տարբերություն է հաստատում Հին և Նոր Կտակարանների միջև, վերաբերյալ հայտնության ձևին (*«բազում եղանակներով և զանազան օրինակներով»*), ժամանակին (*«անցյալում» - «այս վերջին օրերին»*), հասցեատերերին (*«հայրերի հետ» - «մեր հետ»*), հաղորդակցության միջոցին (*«մարգարեներ» - «Որդին»*): Նոր Հայտնությունը կապված է Հնին, բայց միևնույն ժամանակ գերազանցում է նրան:*

*Հին Կտակարանի հայտնությունն իր նպատակակետը գտնում է Հիսուս Քրիստոսի Անձում. «Բայց նրանց (տակավին քրիստոնյա չդարձած հրեաների) միտքը կուրացավ, քանի որ մինչև այսօր նույն քողը ձգված մնում է Հին Կտակարանի ընթերցվածների վրա և չի վերանում, որովհետև Քրիստոսի միջոցով է այն վերանում»* (Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Կորնթացիներին 3, 14*): Հին Կտակարանը լուսավորվում է Քրիստոսի միջոցով: Նաև Առաքյալների ժամանակվա Եկեղեցին, երբ կամենում էր ավետել Քրիստոսի կյանքի և գործի հիմնական երկու պահերը, այսինքն՝ Խաչելությունն ու Հարությունը, շարունակ հիմնվում էր Հին Կտակարանի վրա (հմմտ.* Գործք Առաքելոց 2, 14-41; 3, 11-24; 13, 16-42; *և այլն):*

*Եհովականները չեն զանազանում Հին և Նոր Կտակարանները, ինչպես նաև հաշվի չեն առնում աստիճանական հայտնությունը, որով առաջինը նպատակաուղղված է երկրորդի ծառայությանը: Հայտնության առաջադիմյալ հանգրվանները փորձում են բացատրել հինկտակարանյան նվազ առաջադիմյալ հանգրվաններով: Իրականում, եհովականությունը հիմնականում մնում է հինկտակարանյան (կարելի է ասել՝ հրեական) աղանդ, հրեական սեկտա:*

*բ) Աստվածաշնչի արմատները խոր կերպով միրճված են մարդկության պատմության մեջ: Յուրաքանչյուր գրություն, հետևաբար, գործածում է իր ժամանակվա լեզուն, հասցեագրված է նախևառաջ ներշնչված հեղինակին ժամանակակից մարդկանց, ներկայացնում է իրականությունը այդ ժամանակվա գաղափարների համաձայն (օրինակի համար, տիեզերքի ըմբռնումը Ծննդոց գրքի առաջին գլխում): Մարգարեներն ուղղակի կարիքն էին զգում ճշտելու իրենց կոչման թվականը. Ամոսը կանչվում է Իսրայելի թագավոր Հերոբովամ Երկրորդի և Հուդայի թագավոր Ոզիայի օրերին, երկրաշարժից երկու տարի առաջ* (Ամոս 1, 1*). Եսային կանչվեց այն*

*տարին, որում մահացավ Ոզիա թագավորը (*Եսայի 6, 1*): Երեմիան՝ Հոսիայի թագավորության* 13*րդ տարին (*Երեմիա 1, 2*), և այլն:*

*Տանք ասպվածաշնչյան մի քանի օրինակ: Թիվը Ասպվածաշնչում կարող է ունենալ զանազան տեսակի գործածություններ: Թիվը միշտ չէ, որ ունի տեղեկություն տալու պաշտոն: Այսպես,* 7 *թիվը և իր բազմապատիկները իմաստավորում են ատպություն, միասնություն և ամբողջականություն: Կայենից վրեժ է առնվում* 7 *անգամ, իսկ Ղամեքից՝* 70 *անգամ* 7 *(*Ծննդոց 4, 15.24*): Ղամեքն ապրեց* 777 *տարի (*Ծննդոց 5, 31*): Մարդն օրեկան ընկնում է* 7 *անգամ (*Առակներ 24, 16*): Հարկավոր է ներել ո՛չ թե* 7 *անգամ, այլ՝*70 *անգամ*7 *(*Մատթեոս 18, 21*):*

*Նմանապես,* 100 *թիվը և իր բազմապատիկները, հատկապես* 1.000*ը, ակնարկում են հեքիաթային վիթխարի թվերին (գրեթե ինչպես միլիարդը կամ տրիլիոնը մեր համար): Աստված ողորմում է մինչև հազարերորդ սերունդը (*Ելից 20, 6*): Արդարների համար, տաճարում անցկացված մեկ օրն ավելի արժե, քան հազարն այլուր (*Սաղմոս 83, 11*): Աստծո համար հազար տարիները երեկվա պես են, որ անցած է (*Սաղմոս 89, 4*): Սրբերը Քրիստոսի հետ թագավորելու են հազար տարի (*Հովհաննեսի Հայտնություն 20, 6; *հմմտ.* Դանիել 7, 10*): Նույն ձևով է գործածվում նաև* 40 *թիվը, որը պարզապես նկատվում է որպես սովորական տևողությունը մեկ սերնդի: Այս թվերը փակ աչքերով վերցնելը որպես ճշգրիտ թվեր՝ առաջնորդում է խոշոր սխալների:*

*Վերոհիշյալ պայմանական իմաստից բացի, թիվը Ասպվածաշնչում կարող է ունենալ նաև սրբազան նշանակություն: Այսպես, օրինակի համար,* 12 *թիվը վերջիվերջո դառնում է Աստծո Ժողովրդի սրբազան թիվը. Իսրայելի* 12 *տոհմերը: Քրիստոսը նույնպես հարգում է այս խորհրդաբանական թիվը և ընտրում է* 12 *առաքյալներ (*Մատթեոս 19, 28*), իսկ Հովհաննեսի Հայտնությունը* 12 *թիվը գործածում է նկարագրելու համար երկնքի Եկեղեցին (*Հայտնություն 7, 5-8*) և նոր Երուսաղեմը (*Հայտնություն 21, 12*):*

*Գրական կերպերին (ժանրերին) է պատկանում նաև վախճանաբանությունը (apocalittica): Գրական այս կերպը տարածվում է Ք.ա.* 2*րդ դարից մինչև Ք.հ.* 2*րդ դարը: Իր նախապատրաստական հողը գտնում է հինկտակարանյան մի շարք հատվածներում.* Եզեկիել 38-39; 40-48; Եսայի 24-27; Զաքարիա 9-14; *հատկապես՝* Դանիել 7-12*: Նոր Կտակարանում գրական այս կերպը հանդիպում է հետևյալ հատվածներում.* Մարկոս 13 *և մյուս Ավետարանների զուգահեռ հատվածներում;* Պողոս Առաքյալի Թեսաղոնիկեցիներին գրած Երկրորդ Նամակում 2, 1-12; *և հատկապես՝* Հովհաննեսի Հայտնությունում*: Ներկա տիրությունը միում է խորհրդածելու*

*բարիների ապագա փառքի շուրջ: Նկարագրելու համար սեփական դարաշրջանը, ինչպես նաև Աստծո և բարիների վերջնական հաղթանակի ճանապարհը, գործածվում է մի յուրահատուկ ոճ, որը և կոչվում է վախճանաբանական. տհավոր աղետներ, թվային քննարկումներ, գազանների ու հրեշտակների պատմություններ, վախճանին նախորդող նշաններ, վերջին փորձություններ, աշխարհի դատաստանը, ոմանց երանություն և ոմանց դատապարտություն: Վախճանաբանական այս տեքստերի պատգամը հասկանալու համար հարկավոր է, որ դրանք ընթերցվեն և ուսումնասիրվեն հիմնվելով գրական այդ կերպի յուրահատկությունների վրա: Եհովականները, սակայն, անգիտանում ու մերժում են գրական կերպերի գոյությունը Աստվածաշընչում, հակառակվելով գիտական համընդհանուր հասկացողությանը: Ճիշտ այս պատճառով է, որ տառացի կերպով են հասկանում* 144.000 *ընտրյալների թիվը, ինչպես նաև – ծիծաղելի բան – երկնային Երուսաղեմը երևակայում են որպես կատարյալ խորանարդ,* 12.000 *ասպարեզ երկարությամբ, լայնությամբ ու բարձրությամբ:* 144.000 *թվի խնդրին դեռ կանդրադառնանք, միայն խորանարդի վերաբերյալ կարճառոտ ասենք, որ աստվածաշնչյան պատկերի իմաստն այն է, որ նոր Երուսաղեմը լինելու է կատարյալ քաղաք, բաղկացած* 12 *թվից (որը թիվն է Նոր Իսրայելի՝ Եկեղեցու), բազմապատկված հազար անգամ (որն արտահայտում է անհաշվելիորեն մեծ բազմության իմաստը):*

*գ) Սակավաթիվ չեն դեպքերը, որոնցում եհովականները աստվածաշնչյան նախադասություններից մեկը կղզիացնում են այն պարբերությունից կամ գլխից, որին պատկանում է, տալով նրան ամբողջովին տարբեր իմաստ, քան ուներ իր հարազատ հատվածում (այս մեթոդը գործածվում է նաև բողոքական որոշ հոսանքների մոտ): Այս առումով, օրինակներն առատ են: Տակավին առիթը կունենանք դրանց հանդիպելու: Առայժմ թող բավական լինի միայն այս օրինակը. «Այս սերունդը չի անցնելու, նախքան այս ամենի կատարումը» (*Մատթեոս 24, 34*). նախադասության «այս սերունդը» արտահայտությունը վերաբերվում է Հիսուսի ժամանակակիցներին, ո՛չ թե Ք.հ.* 1914 *թվականին ծնվածներին: Բայց այս օրինակին նույնպես կանդրադառնանք հետո:*

*Միայն ասենք, որ Աստվածաշնչի առանձին նախադասություններին կարելի է տալ ամեն տեսակ և ամեն ինչին հակառակ իմաստ: Օրինակի համար ներկայացնում ենք աստվածաշնչյան մի քանի տողեր, որոնք իրենց պարբերություններից կամ զուգահեռ հատվածներից կղզիացնելով, կարող են առաջնորդել հակասական, անբարոյական, ծիծաղելի եզրակացությունների:*

1*) Հակասական եզրակացություններ.*

– *Աստված զղջում է (*Ծննդոց 6, 6*), չի զղջում (*Թվոց 23, 19*):*

– *Կարելի է երդվել (*Սաղմոս 94, 11; Գործք Առաքելոց 2, 30; Պողոս Առաքյալի Նամակը Եբրայեցիներին 6, 17; Հայտնություն 10, 6*), չի կարելի երդվել (*Մատթեոս 5, 34*):*

– *Մեղավորը ներվում է (*Եզեկիել 33, 11*) և չի ներվում (*Սաղմոս 3, 8; 103, 35*):*

– *Մարդու գործերը նրան հաճո են դարձնում Աստծուն (*Հակոբոս Առաքյալի Ընդհանրական Նամակը 2, 17*) և ոչնչի էլ չեն ծառայում (*Պողոս Առաքյալի Նամակը Հռոմեացիներին 1, 20*):*

– *Մարդը բաղկացած է երկու պարրերից (միտք և մարմին.* Պողոս Առաքյալի Նամակը Հռոմեացիներին 7, 25*) կամ էլ երեք (հոգի, շունչ և մարմին.* Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Թեսաղոնիկեցիներին 5, 23*):*

2*) Անբարոյական եզրակացություններ.*

– *Երանի՜ նրան, ով կբռնի քո մանուկներին ու կխփի քարին (*Սաղմոս 136, 9*). Աստված մի՞թե պատվիրում է մանկասպանությունը:*

– *Ով չի ատում իր հորն ու մորը (*Ղուկասի Ավետարան 14, 26*). Հիսուսը մի՞թե հրամայում է չհարգել չորրորդ պատվիրանը:*

– *Ինչ անելու ես, արա՛ (*Հովհաննեսի Ավետարան 13, 27*). Հիսուսն ի՞նչ է, հրամայո՞ւմ է Հուդային դավաճանել Իրեն:*

3*) Ծիծաղելի եզրակացություններ.*

*– Իշխանություն չունես մազերիցդ մեկն անգամ սև կամ սպիտակ դարձնելու (*Մատթեոսի Ավետարան 5, 36*). մոտ ապագայում եհովականները թերևս կսկսեն դատապարտել նաև վարսավիրներին:*

*դ) Ահավոր կերպով դժվար է եհովականների հետ երկխոսելը: Նրանց մտքում երբեք չի առաջանում կասկածի մի փոքրիկ նշույլ, որ Աստվածաշնչի իրենց մեկնաբանությունը կարող է անհիմն լինել: Ամեն անգամ նրանց հետ հանդիպելիս յուրաքանչյուր ոք համոզվում է, որ ինքնաբավարարության համոզումը նրանց մոտ համաքայլ է իրենց անընդունակության հետ: Որքան ավելի պգետ են, այնքան ավելի գոռոզ են:*

*Տակավին քսանամյա Ռասըլը համոզված էր, մեծամիտ հավակնոտությամբ, թե Քրիստոնեության երկու հազար տարիների ընթացքում իրենից առաջ ոչ ոք ճշմարտությամբ չէր հասկացել Աստվածաշունչը և շտապեց տալ իր բացատրությունները: Իր առաջին*

*եզրակացությունները բովանդակեց «Մեր Տիրոջ վերադարձի նպատակն ու կերպը» հատորում, ուր ավետում էր Քրիստոսի անտեսանելի վերադարձը 1874 թվականին, նախապատրաստելու համար աշխարհի դատաստանը 1914ին և սկսելու համար Իր հազարամյա թագավորությունը այս երկրի վրա: 1877 թվականին գրեց «Երեք աշխարհները և փրկության ծրագիրը» գիրքը, որում զանազանում է երեք ժամանակաշրջաններ. առաջինը, արարչությունից մինչև նախածնողների անկումը, ղեկավարված՝ հրեշտակների կողմից. երկրորդը, անկումից մինչև 1914 թվականը, սատանայի սահմանափակ իշխանության ներքոյ. երրորդը, 1914ից սկսած մինչև անսահմանափակ հավիտենությունը, արժանավորների հարությամբ և երկրի վրա դրախտային խաղաղությամբ: Ուշադրություն դարձրեք այս երկու կետերի վրա. ըստ Ռասըլի, 1914ին պետք է սկսվեր դրախտային հավիտենությունը: Քանի որ հարյուր տարուց ավելի է արդեն անցել և տակավին ոչինչ չի պատահել, – մանավանդ թե, 1914 թվականից սկսած տեղի են ունեցել ամենամեծ աղետներն ու կոտորածները մարդկության պատմության մեջ, ինչպիսիք էին Համաշխարհային Առաջին և Երկրորդ Պատերազմները, Հայոց Մեծ Եղեռնը և ա՛յլ ազգերի ցեղասպանությունները, կոմունիստական բռնությունները և այլն, – կարող ենք ամենայն հստակությամբ տեսնել Եհովայի Վկաների հերետիկոսության հիմնադրի լիակատար կեղծիքը: Երկրորդ. նախածնողների մեղքից մինչև 1914 թվականն ընկած ժամանակաշրջանը հայտարարում է սատանայի իշխանության ներքո, այսինքն՝ նաև Քրիստոսի կյանքի տարիները, Խաչելությունն ու Հարությունը: Ըստ Ռասըլի, ոչինչ էլ չի պատահել. Քրիստոսի կյանքը, ուսուցումներն ու բերած փրկագործությունը Ռասըլին չեն հետաքրքրում (կամ թերևս ժամանակ չուներ Քրիստոսով հետաքրքրվելու, որովհետև զբաղված էր կնոջ հետ ամուսնալուծվելու դատավարություններով, ունեցվածքի բաժանման քաշքշուկներով, աշխատակցուհիների հետ սիրաբանությամբ, մեղուզայի նմանվելով): Բայց անշուշտ այդ ժամանակաշրջանը չէ, որ գտնվում էր սատանայի իշխանության ներքո, այլ՝ ինքը Ռասըլն էր իր հոգին սատանային ծախել և գրում էր այդ հերետիկոսությունները:*

*Ռասըլը մեծագույն կարևորություն էր տալիս իր ''Աստվածաշնչյան Ուսումնասիրություններ''ին, որոնք վեց հատորով լույս տեսան 1886ից մինչև 1904 թվականը: Տեսնենք, թե ինչպիսի համեմատություն է կատարում իր ''ուսումնասիրությունների'' և բուն Աստվածաշընչի միջև.*

*«Քանի որ ''Աստվածաշնչյան Ուսումնասիրություններ''ի վեց հատորները իրականում նույն ինքն Աստվածաշունչն են նյութերի*

*կարգով տեղավորված և իրենց հիմք հանդիսացող աստվածաշնչյան հատվածներով, կարելի է անվանել դրանք ''հարմարեցված Աստվածաշունչ'': Խոսքն, ուրեմն, չի վերաբերվում աստվածաշնչյան պարզ մեկնաբանությունների. դրանք գործնականում Աստվածաշունչն են: Իրոք, ոչ միայն դյուրին է նկատել, որ անհնարին է աստվածային ծրագիրը տեսնել ուսումնասիրելով միայն Աստվածաշունչը, այլ նաև՝ որ երբ մի կողմ են թողնվում ''Աստվածաշնչյան Ուսումնասիրությունները'', նույնիսկ դրանք ընթերցելուց հետո, դրանց հետ ընտանություն ձեռքբերելուց հետո, նույնիսկ դրանք տասը տարի կարդալուց հետո, եթե դրանք մի կողմ են թողնվում, ասում էի, միմիայն Աստվածաշունչն ընթերցելու համար, թեև Աստվածաշունչն ըմբռնելու մակարդակին էին տասը տարիներից ի վեր, մեր փորձառությունը ցույց է տալիս, որ այդ անձինք երկու տարվա ընթացքում վերադառնում են խավարի մեջ: Իսկ եթե կարդում են միայն ''Աստվածաշնչյան Ուսումնասիրությունները'' մեջբերումներով, առանց կարդալու Աստվածաշնչի էջերից ոչ մեկը, երկու տարվա ընթացքում հայտնվում են լույսի մեջ, որովհետև ստանում են Աստվածաշնչի լույսը» (Դիտարան,* 15.09.1910*):*

*Այս տողերում դժվարին չէ տեսնելը Ռասըլի լիրբ համարձակությունը, որով իր մեկնաբանությունները ավելի բարձր է դասում նույն ինքն Աստվածաշնչից: Բայց ճիշտ այս տողերով, Ռասըլն ինքը խոստովանում է, որ Քրիստոնյա Եկեղեցու հավատքը հիմնված է Աստվածաշնչի վրա (ասում է՝ միայն Աստվածաշունչը կարդալով երկու տարվա ընթացքում հեռանում են իր հերետիկոսությունից), մինչ իր ուսուցումները պարզապես իր խելառ մտքի ցնորքներն են ու հորինվածքները:*

*ե) Այս հանդգնությունն ու հավակնոտությունը, սակայն, միայն Ռասըլինը չէին: Եհովականության հայրն իր ախտերը փոխանցել է իր ծնունդներին: Ահա թե ինչ է գրում* 01.08.1955 *թվականի Դիտարանը. գոյություն ունեցող քրիստոնյա* 251 *կրոններից* 214*ը հավատում են Երրորդությանը, ուրեմն կեղծ են: Մնացած* 37*ից* 18*ը հավատում են հոգու անմահությանը, ուրեմն կեղծ են: Մնացած* 19*ից* 6*ը հավատում են Օրենքին (Աստծո պատվիրաններին), ուրեմն կեղծ են: Մնացած* 13*ից* 3*ը չեն հավատում սատանայի գոյությանը, ուրեմն կեղծ են: Մնացած* 10*ից* 4*ը ընդունում են Աստվածաշնչին հավասար կամ գերադաս հեղինակություններ, ուրեմն կեղծ են: Մնացած* 6*ից* 5*ը միակերպ ուսուցումներ չունեն, ուրեմն որպես ճշմարիտ մնում է միմիայն Եհովայի Վկաների կրոնը:*

*Դեռ մի կողմ թողնենք, որ նշված թվերը չեն համապատասխանում իրականությանը: Առայժմ քննենք էականը: Նախևառաջ, Եհովայի Վկաների հերետիկոսությունը քրիստոնյա*

*հարանվանությունների շարքում դասելն անհնարին է, որովհետև այն ամբողջովին դուրս է Քրիստոնեության ծիրից, չնայած որ ինքն իրեն անվանում է քրիստոնյա ընկերություն: Եհովականությունը հրեական աղանդ է, հրեական հերետիկոսական սեկտա՝ ամերիկյան բողոքականության երանգավորումներով: Բայց այս շարժումը սկսվել է միայն անցյալ դարի վերջավորությանը, իսկ այն դիմագծերով, որ ունի այսօր, գոյություն ունի միայն 1919 թվականից սկսած: Սա ըստ իրենց նշանակում է, որ մինչև այդ օրը մարդկությունը երբեք չի ունեցել ճշմարիտ կրոն: Ըստ իրենց, ճշմարիտ կրոնը հայտնվել է, երբ հայտնվել են եհովականները: Հետևաբար, Քրիստոսի գործն ամբողջական ձախողմա՞ն է ենթարկվել այս երկու հազար տարիների ընթացքում: Բայց եթե, գործածելով իրենց կողմից նշված թվերը, 251 քրիստոնյա կրոններից 214ը հավատում է Երրորդությանը, և այդ կրոնները հիմնվում են Աստվածաշնչի վրա, արդյոք չե՞նք կարող համոզվել, որ այդ 214 քրիստոնյա կրոններն Աստվածաշունչը հասկանում են եհովականներից ավելի լավ:*

*գ) Աստվածաշունչն ինքն ասում է, որ իր էջերը լավ հասկանալու համար հարկավոր է ունենալ Հոգու առաջնորդությունը և Առաքյալների Ավանդությունը. «Բայց նախ սա իմացեք. մարգարեական գրություններից ոչ մեկը ենթակա չէ անձնական մեկնությունների, որովհետև մարգարեություններից ոչ մեկը մարդկային կամքի համաձայն չի տրվել, այլ՝ Սուրբ Հոգուց մղված խոսեցին մարդիկ Աստծո կողմից» (*Պետրոս Առաքյալի Ընդհանրական Երկրորդ Նամակը 1, 20*): Զգուշացնում է նաև, թե կան դժվարիմաց բաներ. «Նրանցում (=Պողոսի Նամակներում) կան որոշ դժվար ըմբռնելի բաներ, որոնք տգետներն ու տատամսողները ծուռ են մեկնաբանում, ինչպես նաև մյուս Գրությունները, իրենց անձերի կորստի համար» (*Պետրոս Առաքյալի Ընդհանրական Երկրորդ Նամակը 3, 16*): Բացի սա, Պողոս Առաքյալը պահանջում է քրիստոնյաներից, որ հարգեն ինչպես իր գրավոր նամակները, այնպես էլ բանավոր ավանդածները. «Ուրեմն, եղբայրներ, հաստատուն մնացեք և պահպանեցեք ավանդությունները, որ ստացաք մեր խոսքից, ինչպես և թղթից» (*Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Թեսաղոնիկեցիներին 2, 14*). «Պատվիրում եմ ձեզ, եղբայրներ, հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի, հեռու մնացեք այն բոլոր եղբայրներից, որոնք անկանոն կյանք են վարում, ինչը չի համապատասխանում այն ավանդությանը, որ ստացաք մեզնից» (*Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Թեսաղոնիկեցիներին 3, 6*):*

*է) Արդյոք Եհովայի Վկաների Դիտարան Ընկերությունը մեկնաբանում է ամբո՞ղջ Աստվածաշունչը, թե՞ նրա մի մասը: Հետաքրքիր է, շարքային եհովականներից որևէ մեկը երբևէ իր առջև դրե՞լ է այս հարցը: Պատասխանն անմիջական է. իրենց տոնականերով տպագրված հրապարակություններում, եհովական հերետիկոսության ղեկավարները մեջբերում են Աստվածաշնչի միայն այն տողերը, – միշտ կղզիացված, համատեքստից անջատված, – որոնք թվում է, թե ծառայում են իրենց ուսուցումներին: Բայց այդ մեջբերումները (ըստ Վիլիամ Շնելլի, որը հեղինակն է* «Երեսուն տարի ’’Դիտարան’’ի ստրուկն էի» *գրքի) ամբողջ Աստվածաշնչի հազիվ* 6,5 *տոկոսն են կազմում: Մնացած* 93,5 *տոկոսը երբեք չի մեջբերվում: Բայց սրա համար մեր խորին շնորհակալություններն ենք հայտնում եհովականների Բրուքլինի Ղեկավար Մարմնին, որովհետև մեզ է թողնում Աստծո պատգամի ճնշող մեծամասնությունը, և ճիշտ այս մասն է, որ կասկածներ է առաջացնում այն խեղացի Վկաների մտքում, որոնք փորձում են ինքնուրույն ուսումնասիրել Աստվածաշունչը և վերջում վերադառնում են քրիստոնեական հարազատ հավատքին:*

*Բայց էական հարցն այն է, թե արդյոք եհովականներն իրենց սխալների մեջ ընկնում են ակամա՞, առանց անդրադառնալո՞ւ, թե՞ գիտակից են և այնուամենայնիվ ընտրում են մնալ սխալի մեջ, մղված ինչ ինչ շահերից: Եթե խոսքը այս երկու հնարավորություններից առաջինին վերաբերվեր, եհովականները թերևս հանցավոր չէին լինի ծանր կերպով, բայց ցավալին այն է, որ այդ բոլոր սխալները կատարում են գիտակցաբար և դրամական շահից մղված՝ համարձակվել են նույնիսկ կեղծել Աստծո Խոսքը: Տեսնենք, թե ինչպես:*

*Մինչև* 1950 *թվականը եհովականները չունեին Աստվածաշնչի իրենց թարգմանությունը:* 1950-1960 *թվականներին Դիտարանի Ընկերությունը հրապարակեց, անգլերենով, վեցհատորյա մի ’’աստվածաշունչ’’, «Սուրբ Գրությունների Նոր Աշխարհի Թարգմանություն» (New World Translation of the Holy Scriptures) տիտղոսով և ծանոթագրություններով: Թարգմանիչները խնդրել էին մնալ անանուն, ’’համեստության’’ համար: Բայց իրականությունն այն է, որ եհովականները չէին կարողացել գտնել գոնե մի գիտնական լեզվաբան, որն հաճձն առներ ներկայացնել իրենց ’’թարգմանությունը’’: Ահա մի քանի գիտնականների կարծիքը, որ հրապարակվել է ավստրալիական «Australian Recordե պարբերականի* 20.05.1974 *համարի* 6*րդ էջում.*

*Anthony Hoekema. «”Նոր Աշխարհ” կոչվող նրանց թարգմանությունը Աստվածաշնչի առարկայական (օբյեկտիվ) թարգմանություն չէ արդի անգլերենով, այլ՝ կողմնապահ թարգմանություն է, ուր մաքսանենգորեն ներմուծվել են ”Դիտարանի Ընկերության” ուսուցումները»:*

*Ray Stedman. «Մանրամասն քննությունը, որ հասնում է թարգմանիչների կրթության*

*արտաքին երևույթներից այն կողմ, բացահայտում է իրական շաղախում ֆանատիկության, տգիտության, նախապաշարումների ու կողմնապահության, ինչը խախտում է աստվածաշնչյան քննական գիտությունների կանոնները»:*

*R. Mantey. «Նոր Կտակարանի բազում հատվածներում նրանց թարգմանությունը ուսումնասիրելուց հետո եկա այն եզրակացության, որ երբ Աստվածաշունչը համաձայն չի գտնվել իրենց ուսուցումներից որևէ մեկի հետ, նրանք կամովին թարգմանել են այն սխալ տերմիններով, կամ էլ այն աստիճան են աղավաղել տեքստը, որ հնարավորություն են ստեղծել կարծելու, թե որոշ հիմքեր ունեն իրենց ոչ-աստվածաշնչյան կարծիքները: [...] Բայց այն, ինչը որ վատթարագույնն է, հանցավոր են դարձել կամովին սրախոսելու մեջ: Սա իրենց թարգմանությունը դարձնում է պախարակելի» (*A. AVETA, *Analisi di una setta*, ed. Filadelfia, Altamura 1985, pp. 30-31*):*

*Այս անվանի գիտնականներից հետո, իմ մեկնաբանություններն ավելորդ են: Բայց անցնենք առաջ և տանք մի քանի օրինակ:*

| *Եհովական թարգմանություն* | *Քրիստոնյա թարգմանություն* |
|---|---|
| Հովհաննեսի Ավետարան 14, 26 | |
| *Բայց օգնականը, սուրբ հոգին, որին Հայրը ուղարկելու է իմ անունով, այն կսովորեցնի ձեզ ամեն բան ու կպարզի այն ամենը, որ ձեզ ասել եմ:* | *Բայց Մխիթարիչը, Սուրբ Հոգին, որին Հայրը առաքելու է իմ անունով, նա կսովորեցնի ձեզ ամեն բան ու կհիշեցնի այն ամենը, որ ձեզ ասել եմ:* |

*Եհովական թարգմանության մեջ հունարեն «ekeinos» դերանունը թարգմանվել է «այն»: Այդպիսով, տեքստում Սուրբ Հոգին չի ներկայանում որպես Անձ, այլ՝ առարկա, որովհետև եհովականները չեն ընդունում Ամենասուրբ Երրորդության հավատքը (նաև այս պատճառով են Սուրբ Հոգին միշտ փոքրատառ գրում): Բոլոր*

*գիրնական լեզվագետները թարգմանում են «նա», որովհետև «ekeinos»ը արական է և վերաբերվում է «Pneuma»ին (Հոգի), որը չեզոք սեռի է: Եհովական թարգմանությունը ճիշտ կլիներ, եթե դերանունը նույնպես չեզոք լիներ («ekeino»):*

| *Եհովական թարգմանություն* | *Քրիստոնյա թարգմանություն* |
|---|---|
| Պողոս Առաքյալի Նամակը Կողոսացիներին 1, 15-17 | |
| *Նա պատկերն է աներևույթ Աստծո, անդրանիկը բոլոր արարածների, որովհետև նրա միջոցով* (մյուս) *բոլոր բաները ստեղծվեցին երկընքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները, լինեն դրանք գահեր, թե տերություններ, պետություններ, թե իշխանություններ:*<br>*Բոլոր* (մյուս) *բաները ստեղծվել են նրա միջոցով և նրա համար: Նա* (մյուս) *բոլոր բաներից առաջ է եւ նրա միջոցով* (մյուս) *բոլոր բաները* ստեղծվեցին*:* | *Նա պատկերն է աներևույթ Աստծո, անդրանիկը բոլոր արարածների. որովհետև նրա միջոցով* բոլոր բաները *ստեղծվեցին երկնքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները, գահերը, տերությունները, պետությունները, իշխանությունները:* Բոլոր բաները *ստեղծվեցին նրա միջոցով և նրա համար: Նա* բոլոր բաներից *առաջ է և նրա միջոցով* բոլոր բաները գոյություն ունեն*:* |

*Եհովականների նպատակն ակնհայտ է. քանի որ չեն ընդունում Ամենասուրբ Երրորդությունը և Քրիստոսի աստվածությունը, իրենց ’’թարգմանությունում’’ Նրան դարձրել են «մյուս» բոլոր արարածներից մեկը, մինչդեռ իրական Աստվածաշնչի համաձայն՝ Քրիստոսը ոչ միայն բոլոր բաների Արարիչն ու Նպատակն է («ստեղծվեցին նրա միջոցով և նրա համար»), այլ նաև Քրիստոսն Ինքն է կյանքի սկզբնական աղբյուրը («նրա միջոցով բոլոր բաները գոյություն ունեն»):*

| *Եհովական թարգմանություն* | *Քրիստոնյա թարգմանություն* |
|---|---|
| Հովհաննեսի Ավետարան 8, 58 | |
| *Հիսուսը նրանց ասաց. «Ճշմարտագույնս կերպով եմ ձեզ ասում. Աբրահամի գոյություն ունենալուց առաջ* ես էի*»:* | *Ասաց նրանց Հիսուսը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ձեզ ասում. Աբրահամի լինելուց առաջ* ես եմ*»:* |

*Երբ եհովականները սկսում են քարոզել, առաջին խոսքերից մեկը լինում է. «Չպետք է աղոթել Հիսուսին, իսկ Աստծուն աղոթելիս պետք է ասել ’’Եհովա’’»: Բայց Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Հիսուսը նույնպես կրում է աստվածային* YHWH *անունը: Այս հարցին տակավին կանդրադառնանք ավելի մանրամասն կերպով, այստեղ բավարարվենք մի քանի խոսքով: «Յահվէ» անունը, որը եհովականները սխալ կերպով կարդում են «Եհովա», Աստված հայտնեց Մովսեսին. «Աստված ասաց Մովսեսին. ’’Ես Նա Եմ, Որ Եմ’’: Ապա ասաց. Կասես Իսրայելացիներին. ’’ԵՍ ԵՄը ուղարկեց ինձ ձեր մոտ’’» (*Ելից 3, 13-14*): «ԵՍ ԵՄ» անունը (Յահվէ) ցույց է տալիս Աստծո էությունը որպես Հավիտենական Էակ («Ես եմ»ը «Լինել» բայի ներկա ժամանակի եզակի առաջին դեմքն է): Եթե բոլոր արարածները ենթակա են անցյալի, ներկայի ու ապագայի փոփոխություններին, Աստված միշտ ներկայի մեջ է, որովհետև դուրս է ժամանակի սահմաններից: Միմիայն Աստված կարող է ասել «ԵՍ ԵՄ» բառիս բացարձակ իմաստով: Եվ ահա, Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Հիսուսը նույնպես կրում է աստվածային «Յահվէ» անունը, ամբողջովին հավասար է Հորը և կարողանում է ասել «ԵՍ ԵՄ»: Եհովականների նման կույր պետք է լինել, կամ՝ կամենալ լինել, չտեսնելու համար:*

*Ահա նախադասության հունարենը տառադարձությամբ.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Prin* | *Abraam* | *genesthai,* | *ego* | *eimi.* |
| *Նախքան* | *Աբրահամ* | *լինելը,* | *ես* | *եմ:* |

| *Եհովական թարգմանություն* | *Քրիստոնյա թարգմանություն* |
|---|---|
| *Բայց Որդու վերաբերյալ.* Աստված ինքն է քո գահը հավիտյան*:* | *Որդու մասին, մինչդեռ, հաստատում է.* Քո գահը, ո՜վ Աստված, հավիտյան է*:* |

Պողոս Առաքյալի Նամակը Եբրայեցիներին 1, 8

*Կարծում եմ, թե մեկնաբանության կարիք չկա: Լիրբ խարդախությունը երևում է ինքնըստինքյան:*

*Եհովական թարգմանություն* *Քրիստոնյա թարգմանություն*

Ղուկասի Ավետարան 23, 43

| Եհովական թարգմանություն | Քրիստոնյա թարգմանություն |
|---|---|
| *Եվ Հիսուսը ասաց նրան.* *Ճշմարտապես եմ* քեզ ասում այսօր. Դու *կլինես իմ հետ Դրախտում»:* | *«Եվ Հիսուսը նրան պատասխանեց. «Ճշմարիտ եմ* քեզ ասում. այսօր *կլինես իմ հետ Դրախտում»:* |

*Թերևս արդեն նկատեցիք, որ կետը եհովականների մոտ անցել է «այսօր» բառից հետո և ավելացել է «Դու» դերանունը: Փոքրիկ մի բան, բայց որն ամբողջովին փոխում է նախադասության իմաստը: Ինչպե՞ս: Եհովականները չեն հավատում կյանքին մահից հետո: Մահն իրենց համար անձի ամբողջական ոչնչացումն է: Այս հարցին նույնպես տակավին կանդրադառնանք, բայց արդեն այստեղ իսկ կարող ենք նկատել, որ Հիսուսի խոսքերը համաձայն չեն եհովականների ուսուցումների հետ, որովհետև Հիսուսը զղջացած ավազակին շատ պարզ բառերով ասում է, որ մահից անմիջապես հետո («այսօր») միասին լինելու են Դրախտում:*

*Եհովական թարգմանություն* *Քրիստոնյա թարգմանություն*

Առակներ 11, 9

| Եհովական թարգմանություն | Քրիստոնյա թարգմանություն |
|---|---|
| *Իր բերանով՝* ուրացողն *իր մերձավորին տանում է դեպի կործանում, բայց ճանաչողության միջոցով՝ արդարներն ազատված են:* | *Իր բերանով՝* կեղծավորը *կործանում է իր մերձավորին, մինչ արդարներն ազատվում են իրենց կորովամտությամբ:* |

*Եբրայեցերեն «khanef» բառը նշանակում է «խաբեբա, կեղծավոր, չարախոս, զրպարտող»: Այս խարդախությունը եհովականներն անում են Աստվածաշնչի ''օգնությամբ'' վարկաբեկելու համար այն խելացի մարդկանց, որոնք եհովական լինելու դժբախտությունն ունենալուց հետո՝ բացահայտել են ճշմարտությունը և վերադարձել են Քրիստոնեությանը (տարեկան տասնյակ հազարավոր մարդիկ): Բայց եթե նույնիսկ այստեղ խոսվեր ուրացության մասին, ինչպես պատահում է ա՛յլ տեղեր Աստվածաշնչում, այդպիսի տողերն անկասկած պետք է վերագրվեն ո՛չ թե եհովական հերետիկոսությունից հեռացածներին, այլ՝ դրա մեջ մնացողներին:*

| *Եհովական թարգմանություն* | *Քրիստոնյա թարգմանություն* |
|---|---|
| *Առեք, կերեք, սա* նշանակում է *իմ մարմինը:* | *Առեք, կերեք, սա իմ մարմինն* է: |

Մատթեոսի Ավետարան 26, 26-28

*Հունարեն «estin»ը «einai (լինել) բայի ներկա ցուցականն է (է), որը եհովականները փոխարինում են «նշանակում է»ով, մերժել կարողանալու համար Սուրբ Պատարագն ու Հաղորդությունը: Ինչ-որ մի բան մերժելու այնքան էլ պատվաբեր միջոց չէ – կարծում եմ – կեղծիքը:*

֍֍֍

*Աստվածաշնչի սրբազան էջերում եհովականների կողմից կատարված խարդախումների ցանկը կարող էի շատ երկարել, բայց այսքանը արդեն բավական եմ համարում յուրաքանչյուր խելացի մարդու համար:*

*Հավատում ենք, որ Աստվածաշունչը Աստծո Խոսքն է:*

Երկրորդումն Օրինաց 4, 2 *հատվածում կարդում ենք. «Ոչինչ չավելացնեք այն ամենի վրա, որ պատվիրում եմ ձեզ, և ոչինչ չպակասեցնեք»:*

*Իսկ* Հովհաննեսի Հայտնության *գրքում (*22, 19*) գրված է. «Եթե մեկը այս մարգարեական գրքից պակասեցնի ինչ-որ մի բան, Աստված նրան կզրկի կյանքի ծառից և սուրբ Քաղաքից»:*

*Կոչս է Եհովայի Վկաներին միամիտ անկեղծ հավատքով հարած անձանց. ընթերցե՛ք Աստվածաշունչը (իրականը) առանձին, առանց Դիտարանի հսկողության: Գործածեցե՛ք ձեր բանականությունը, որն Աստծո մեծագույն շնորհներից մեկն է ձեզ տրված: Առանց խոր կերպով, կամ գեթ մակերեսային կերպով, ճանաչելու Քրիստոնեությունը, ձեր հավանությունը մի՛ տվեք եհովականների ամպարար քարոզիչներին:*

## ԳԼՈՒԽ Բ.
## ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԸՍՏ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ

*Կարճառոտ քննենք Հին Կտակարանի հատվածներից մի քանիսը, որոնց վրա եհովականությունը ջանում է հիմնել իր ուսմունքը:*

*ա) Ծննդոց գրքի առաջին գլխում աշխարհի արարչությունը ներկայացված է որպես վեց օրերի ընթացքում կատարված գործ, առավել մեկ օր, յոթերորդը, որում Աստված հանգստացավ: Եհովականները* 7.000 *տարիների արժեք են վերագրում արարչական օրերից յուրաքանչյուրին: Պատճառաբանում են հետևյալ կերպ. «Ավելի մեծ հանգստից կամ շաբաթից արդեն անցել են մոտավորապես* 6.000 *տարիներ և իր խոսքը մեզ վերջնական կերպով վստահեցնում*

*է, թե մնացել են անցնելիք* 1.000 *տարիներ»: Հետևաբար, ստանում են* 6.000+1.000*: Եզրակացնում են. «Տրամաբանական է եզրակացնելը, որ աշխատանքի նախորդ վեց օրերից յուրաքանչյուրն ուներ միևնույն տևողությունը: Վեց օրերը, հետևաբար, հավասար են* 42.000 *տարիների» (եհովական հրատարակություններից՝* La veritՈ vi farՈ liberi, 56-57; *Sia Dio riconosciuto verace*, 164*):*

*Ասում են «տրամաբանական է եզրակացնելը», բայց ես տրամաբանական ոչինչ չեմ տեսնում իրենց այդ հաշվարկներում: Միակ բանը, որ տեսնում եմ, այն է, որ իրենց մոտեցումը ոչնչով չի համապատասխանում իրականությանը, ո՛չ էլ գիտական ու եկեղեցական մեկնություններին: Արդի գիտական մեկնաբանությունը հասել է լավագույն արդյունքների՝ Ծննդոցի այդ պատմության վերծանման ասպարեզում: Չենք կարող մեր փաստագածի չափ կանգ առնել այս կետի վրա, այլապես գրությունը շատ կերկարի, բայց հնարավոր է ասել էականը:*

1) *Ծննդոցի առաջին գլխում «օր» բառը նշանակում է կամ* 12 *ժամ տևող ժամանակամիջոց (արևային օր. Աստված ստեղծում է արևը «ցերեկվան իշխելու համար» և լուսինը՝ «գիշերվան իշխելու համար»), կամ էլ* 24 *ժամ տևող ժամանակամիջոց («և եղավ երեկո և եղավ առավոտ. օր մի»): Աստվածաշունչը, հետևաբար, խոսում է սահմանափակ ճշգրիտ ժամեր իր մեջ ներառող օրվա մասին: Տալ այս օրերին ուրիշ որևիցէ տևողություն, նշանակում է չհասկանալ և չհասկացնել տեքստի իրական իմաստը:*

*2) Հին աշխարհում «6 օր առավել 1 օր» արտահայտությունը ցույց է տալիս մի բան, որ տևել է որոշ ժամանակ և ապա դադարել է: Ահա, օրինակի համար, ինչպես է նկարագրվում հրդեհը Ք.ա. 13րդ դարում Միջագետքում շարադրված մի գրության մեջ.*

*«Ահա մի օր և մի երկրորդ օր կրակն այրում է տունը, բոցը՝ պալատը: Մի երրորդ, մի չորրորդ օր կրակն այրում է տունը, բոցը՝ պալատը:*

*Մի հինգերորդ օր, մի վեցերորդ օր կրակն այրում է տունը, բոցը՝ պալատը:*

*Բայց յոթերորդ օրը կրակը դուրս եկավ տնից, բոցը՝ պալատից»:*

*Ահա մի ա՛յլ օրինակ նույն դարաշրջանի գրականությունից.*

*«Նա (Դանելը) Քաթարաթներին ուտելիք է տալիս, և նոր լուսնի դուստրերին՝ պատրակներին խմելիք է տալիս:*

*Մի օր, մի երկրորդ օր Նա Քաթարաթներին ուտելիք է տալիս, և նոր լուսնի դուստրերին՝ պատրակներին խմելիք է տալիս:*

*Մի երրորդ, մի չորրորդ օր Նա Քաթարաթներին ուտելիք է տալիս, և նոր լուսնի դուստրերին՝ պատրակներին խմելիք է տալիս:*

*Մի հինգերորդ, մի վեցերորդ օր Նա Քաթարաթներին ուտելիք է տալիս, և նոր լուսնի դուստրերին՝ պատրակներին խմելիք է տալիս:*

*Բայց յոթերորդ օրը թողնում են իր տունը Քաթարաթները և նոր լուսնի դուստրերը՝ պատրակները»:*

*Պետք է հաշվի առնենք, որ Ծննդոցի առաջին գլխի սրբազան հեղինակը շատ լավ կարող է կարդացած լինել այս տողերը: Համենայն դեպս, անշուշտ սա էր իր միջավայրում արտահայտվելու եղանակը. «վեց օր առավել մեկ օր» նշանակում է մի բան, որ տևել է ժամանակի ընթացքում, բայց հետո ավարտվել է:*

*բ) Ըստ եհովականների, Ծննդոցի առաջին գլխի «երկինք» և «երկիր» բառերը պետք է ընդունել որպես այլաբանություններ, այսինքն՝ իբր թե երկինք նշանակում է հրեշտակները, իսկ երկիր նշանակում է Ադամն ու Եվան: Սա նույնպես իրենց ուսուցումներում կարևոր դիրք գրավող կետերից մեկն է, բայց չունի աստվածաշնչյան հիմնավորում: Ճիշտ է, քրիստոնյա միջնադարյան հեղինակներ ևս ներկայացրել են նման պատկերներ, բայց դա արել են պարզապես բանաստեղծական (պոետիկ) նպատակով, առանց շեղվելու իրականությունից և առանց ստեղծելու մտացածին ուսմունքներ:*

*Թող ընթերցողն ինքը իր ձեռքը վերցնի Աստվածաշունչը և ընթերցի Ծննդոցի առաջին գլուխը: Կտեսնի, որ երկինքը ներկայացված է որպես փափարակ տարածք («հաստատություն»), որն իր վրա է պահում վերին ջրերը, երկնքի ներքևում կան ամպերը, երկնքի ու երկրի միջև սավառնում են թռչունները: Ակնհայտ է, որ խոսքը վերաբերվում է այն երկընքին, որը տեսնում ենք մեր մարմնի աչքերով: Նույնը նաև երկրի պարագան. ցամաք է, աճեցնում է բույսեր, բնակավայրն է զանազան կենդանիների:*

*Եզրակացությունը մեկն է. գոյություն չունի ոչ մի խորհրդաբանական (սիմվոլիկ) երկինք և դատարկաբանություն է եհովականների քարոզությունը, որով արդարացնելու համար* 1914 *թվականի ձախողված ''մարգարեությունը'', ասում են, թե Քրիստոսը այդ թվականից սկսած գտնվում է ''երկնքում'', անտեսանելի ներկայությամբ:*

## ԳԼՈՒԽ Գ.
## ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԿՐՈՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

*Ահա թե ինչպես է եհովական հերետիկոսությունը բացատրում կրոնի ծագումը: Արժե մեջբերել իրենց գրքերի խոսքերը: Նախածնողներին ուղղված օձի խոսքերով («Չեք մահանա».* Ծննդոց 3, 4-5*) սատանան «կրոնի ներմուծման պատասխանատուն եղավ, որպես նպատակ ունենալով թակարդի մեջ նետել մարդկությունը, շեղելով Եհովա Աստծո պաշտամունքից, մտցված՝ հոգով և ճշմարտությամբ»: Ու մի քանի տող հետո. «Ո՞ր ազնիվ մարդը կարող է մերժել, որ պաշտամունքի ու աստվածացման այդ համակարգը կրոնն է, և որ սատանան է, որ ներմուծել է կրոնը» (La verità vi farà liberi*, 86-87; *Sia Dio riconosciuto verace*, 1952, p. 71*):*

*Կարծես այսքանը բավական չէր, անմիջապես հետո շարունակում են. «Կրոնավոր օձի կողմից Աստծո Խոսքի ընդդիմության վրա են հիմնված մարդկային հոգու անմահության, քավարանի, դժոխքի սխալ ուսմունքները»:*

*Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ աստվածաշնչյան պատմությունը ընթերցելով երբեք տպավորությունը չենք ստանում, թե սատանան կամենում է հաստատել պաշտամունքային որևէ համակարգ, այլ՝ պարզապես մղում է մեր նախածնողներին անհնազանդության, որպես ազնիվ մարդ կարող ենք և պարտավոր ենք մերժել եհովական այս ապուշությունները: Իսկ թե ի՞նչ է նշանակում «կրոնավոր օձ» արտահայտությունը, որևէ խելացի մարդ*

*չի կարող հասկանալ, այլ միայն եհովական հերետիկոսների ֆանատիկ մտքերում են ծնվում նմանատիպ արտահայտություններ:*

*Բայց այսպիսով, այսինքն՝ հաստատելով, թե սատանան է կրոնական պաշտամունքների հեղինակը, հասնում են լկտիության ծայր աստիճանին, որովհետև այդպիսով – մեղա՛, քավ լիցի – սատանայական են կոչում նաև Աստծուն: Ինչպե՞ս:*

*ա) Ելից գրքի երկրորդ մասը գրեթե ամբողջովին նվիրված է հրեաների մոտ կրոնական պաշտամունքի կազմակերպմանը. Աստված Մովսեսին* հրամայում *է կառուցել ուխտի վրանը, տապանակը, քերովբեները, պաշտամունքի կահկարասիները (*Ելից 25-40*): Երբ ավարտվում են աշխատանքները, Աստված հանդիսավոր կերպով ծածկում է պաշտամունքի վայրը, հայտնըվելով խիտ ամպի կերպարանքով, ցույց տալով իր ամբողջական հաճությունը (*Ելից 40, 32-36*):*

*բ) Թագավորաց գրքի առաջին յոթ գլուխները վերաբերվում են զոհաբերման զանազան եղանակներին: Ութերորդ և իններորդ գլուխներում պատմվում է քահանայության հաստատումը Ահարոնի գլխավորությամբ: Սողոմոնի կողմից կառուցված Երուսաղեմի Տաճարում, ապա, Աստված հայտնվում է պաշտոնական և հանդիսավոր կերպով (*Թագավորների Երրորդ Գիրք 8, 10-13*):*

*գ) Բաբելոնյան աքսորից հետո նույնպես, Անգեոս և Զաքարիա մարգարեների նախաձեռնությամբ Տաճարը վերականգնվում է և պաշտամունքը վերահաստատվում է ինչպես առաջ (հմմտ.* Անգեոս *և* Եզրաս, *գլուխ* 3 *և* 5*):*

*դ) Հիսուսը նույնպես մասնակցում էր Երուսաղեմի Տաճարում կատարվող պաշտամունքներին (*Հովհաննեսի Ավետարան 2, 13; 5, 1; 6, 4; 7, 14-37; 10, 23*): Նույն բանն էին անում նաև առաջին քրիստոնյաները. աղոթում էին Տաճարում (*Գործք Առաքելոց 2, 46; 3, 1*), մասնակցում էին Ամենասուրբ Հաղորդությանը (*Գործք Առաքելոց 2, 42-47; 20, 7-11; 1*Կր* 11, 17-34*):*

*Այսքանը կարծեմ արդեն բավական է տեսնելու համար, որ պաշտամունքը կամեցված է Աստծո կողմից, գերագույն աստիճանի բարի իրականություն է, և իրենց սատանայական լինելը ծածկելու համար է, որ եհովականների ղեկավարները այդ որակավորումը տալիս են կըրոնին:*

*Դեռ կարող էինք անդրադառնալ եհովական որոշ առասպելների, որ վերաբերվում են սատանայի կռիվներին Աստծո դեմ, որոնք կարող ենք կոչել «Բրուքլինի ազգային հեքիաթներ», բայց այսօրինակ*

*մանկամտություններով զբաղվելը մեր գործը չէ: Բոլոր այս խաղերի իմաստը մեկն է. Բրուքլինի Ղեկավար Մարմինը ուզում է համոզել իր հետևորդներին, թե այն կինը, որ ջախջախելու էր օձի գլուխը – չզարմանանք և ո՛չ էլ ծիծաղենք – նույն ինքն Ղեկավար Մարմինն է:*

*Իսկ Քրիստո՞սը: Քրիստոսը Իր ծնունդով, մկրտությամբ, ուսուցումներով, պայծառակերպությամբ, հրաշքներով, վերջին ընթրիքով, խաչելությամբ, հարությամբ, համբարձմամբ, ապա Սուրբ Հոգու գալուստը, Առաքյալների քարոզչությունը, Ստեփանոսի մարտիրոսությունը, քրիստոնյաների հալածանքները, ... ... ... այս բոլորն ինչի՞ ծառայեց, եթե ''խեղճ ու թշվառ'' մարդկությունը Ադամի անկումից հետո ստիպված էր սպասելու 1919 թվականին, որում վերապապրվելի Ռասըլ Մեղուզայի հաջորդ Ռաթըրֆորդը խորամանկություններով ու դապավարություններով հիմնեց Բրուքլինի Ղեկավար Մարմինը, որի գլուխ անցան հետագայում ''հռչակավոր մարգարե'' Նաթանը և խեղճ Ֆրանցը, որն իր զարմիկին անգամ չկարողացավ համոզել և եհովական հերետիկոսության շարքերում պահել:*

*Հարցնում էի. իսկ Քրիստո՞սը: Քրիստոսը, ըստ իրենց, եկավ, ինչ-ինչ բաներ խոսեց, մահացավ ու գնաց (չեն հավատում իրական հարությանը):*

*Զարմանում եմ, թե չափահաս և մտածելու կարողություն ունեցող մեկը ինչպե՞ս կարող է ուշադրություն դարձնել եհովական փիմարություններին:*

## ԳԼՈՒԽ Դ.
## «ԱՍՏՎԱԾԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ» ԵՎ «ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ԺԱՄ ԱՆԱԿՆԵՐԸ»

*Եհովականությունը հաստատում է, թե 1914 թվականը ճակատագրական տարի է եղել, որի ընթացքում կատարվել են հիմնական կարևորություն ունեցող չորս իրադարձություններ. 1) ավարտվել են հեթանոսների ժամանակները, որոնք իբր թե սկսվել էին Ք.ա. 607 թվականին. 2) Քրիստոսի անտեսանելի վերադարձը, հիմնումը նոր երկինքների, Քրիստոսի հռչակումը թագավոր. 3) հին աշխարհի վախճանի սկիզբը. 4) սատանան արտաքսվում է երկնքից և ընկնում է երկրի մոտակայքում ինչ-որ մի տեղ:*

*Հետաքրքիր է հարցնել եհովականների ղեկավարներին, թե ի՞նչ են հասկանում ասելով «երկրի մոտակայքում ինչ-որ մի տեղ»: Արդյոք լուսնի՞ վրա: Եթե լուսնի վրա, ուրեմն պետք է զգուշացնենք բոլոր ազգությունների փիեզերանավորդներին, որպեսզի լուսնի վրա իջնելիս ուշադիր լինեն, սատանա կոչվող շնիկը չկծի իրենց ոտքերը, ինչպես ցավոք արդեն կծել է եհովական հերետիկոսների խելառ ուղեղները:*

*Արդ տեսնենք, թե այն, ինչը նրանք հասկանում են, ասելով «հեթանոսների ժամանակներ» (համեմ.* Ղուկասի Ավետարան 21, 24*), ունի՞ աստվածաշնչյան հիմքեր կամ ո՛չ: Ահա՛ իրենց իսկ խոսքերը.*

*«՛՛Հեթանոսների ժամանակներ՛՛ արտահայտությունը մատնանշում է այն ժամանակաշրջանը, որում Եհովան չի ունեցել երկրի վրա մի կառավարություն, որը կարող էր ներկայացնել իրեն, ինչպես օրինակի համար՝ Իսրայելը: Այլ ընդհակառակն, հեթանոսները տիրել էին աշխարհին: Այս ՛՛ժամանակները՛՛ ներկա էին արդեն Հիսուսի օրերին, որովհետև ստեղծվել էր ճիշտ այդպիսի մի իրավիճակ: Մի՞թե Երուսաղեմը ենթակա չէր Հռոմին, իսկ դրանից առաջ մի՞թե ենթակա չէր եղել Հույներին, Պարսիկներին, Բաբելացիներին: [...] Իր անհավատարմության պատճառով, Իսրայելը կորցրեց իր թագավորությունը և ստրկացվեց Բաբելոնի կողմից Ք.ա.* 607 *թվականին: Այդպիսով երկրի վրա վերջացավ աստվածապետական կառավարումը» (Sia Dio riconosciuto verace,* 242*):*

*Կենտրոնանանք երկու արտահայտությունների վրա. «աստվածապետական կառավարում» և «հեթանոսների ժամանակներ»:*

*ա) «Աստվածապետություն» (թեոկրացիա) բառը և «աստվածապետական կառավարում» արտահայտությունը ամբողջովին բացակայում են Աստվածաշնչում: Եհովականները, ինչպես չեն ընդունում Ամենասուրբ Երրորդությունը, պարզապես որովհետև որպես այդպիսի բառ չի հանդիպում Աստվածաշնչում, ազնիվ լինելու համար՝ չպետք է ընդունեին նաև աստվածապետական կառավարման գաղափարը: Բայց անում են այն, ինչ հարմար է իրենց շահերին:*

*Իսկ ինչ վերաբերվում է այս բառի իմաստին, «աստվածապետություն» բառը մատնանշում է Սինա լեռան վրա հաստատված քաղաքական-կրոնական վարչակարգը: Այս իմաստով, բառն առաջին անգամ գործածում է հրեա պատմիչ Հովսեփ Փլավիոսը, ծնված Ք.հ.* 37 *թվականին: Արդ, «աստվածապետության»*

*էական տարրը այն հաղորդակցությունն ու հարաբերությունն է, որն Աստված հաստատում է Իր ժողովրդի հետ, Ուխտի միջոցով. հարաբերություն, որ կայանում է նրանում, որ Աստված հրեա ժողովուրդը զատում է որպես Իր հատուկ ժողովուրդ (*Ելից 19, 3-8; 24, 1-11*) և բնակվում է Իր ժողովրդի մոտ, այն սրբատեղում, որ հրամայում է կառուցել (*Ելից 25, 8*):*

*Այս հատուկ հարաբերությունը ոչ մի կապ չունի քաղաքական վարչակարգի հետ, որի վրա հիմնվում է հրեա ազգը: Երբ Սինայի վրա ծագեց «աստվածապետությունը», Իսրայելում փակավին գոյություն չուներ միապետությունը: «Աստվածապետությունը» նախ գոյատևեց դատավորների շրջանում, ապա նաև թագավորների տիրապետության տարիներին, մինչ նաև աքսորի ընթացքում, Երուսաղեմի կործանումից հետո: Ահա թե ինչ է հաստատում Եզեկիել մարգարեն աքսորի ընթացքում կատարվածի վերաբերյալ. Երուսաղեմի կործանումից առաջ, Աստծո «Փառքը» թողնում է Տաճարը և գնում է քաղդեացիների երկիրը (*Եզեկիել 11, 23-24*): Ապա տեղի է ունենում Երուսաղեմի կործանումը (*Եզեկիել 33, 21*): Բայց աքսորի ընթացքում նույնպես, Աստծո Փառքը վերադառնում է Երուսաղեմ.*

*«Տեսիլքը, որ ես տեսա, նման էր այն մյուսին, որ տեսել էի Քեբարի ջրանցքի մոտ: Երեսս դեպի երկիր խոնարհած ընկա: Յահվէի Փառքը մտավ տաճար այն դռնով, որ նայում էր դեպի արևելք: [...] Ահա Յահվէի Փառքով լի էր տաճարը» (*Եզեկիել 43, 1-12*):*

*Ուրեմն, Եզեկիելի համաձայն, Երուսաղեմի կործանումը ոչնչով չի նշանակում, թե երկրի վրա վերջացել է «աստվածապետական կառավարումը»: Ընդհակառակն, այն շարունակվում է նաև աքսորից հետո: Անգեոս մարգարեն, Զաքարիա մարգարեի հետ միասին, վերանորոգում է Տաճարը և հայտարարում է նրա ապագա մեսիական փառքը (*Անգեոս 2, 10; Զաքարիա 4, 9*): Երուսաղեմի վերանորոգումից հետո նույնպես, Աստծո փրկարար ծրագրերը ընթանում են առաջ: «Աստվածապետությունը» շարունակում է գոյություն ունենալ: Եվ ի վերջո, սխալ է հաստատելը, թե Հիսուսի ժամանակներում «աստվածապետությունը» չկար: Այսպես է խոսում Հիսուսը հրեաների հետ. «Այս իսկ պատճառով ասում եմ ձեզ. վերցվելու է ձեզնից Աստծո թագավորությունը և տրվելու է մի ուրիշ ժողովրդի, որը կարող է լինելու պտղաբերել այն» (*Մատթեոսի Ավետարան 21, 43*): Եթե Քրիստոսը հաստատում է, թե Աստծո թագավորությունը վերցվելու է հրեաներից, սա նշանակում է, որ այդ թագավորությունը հրեաները դեռևս ունեին:*

*բ) Ղուկաս Ավետարանիչը գործածում է «հեթանոսների ժամանակներ» արտահայտությունը, մինչ պատմում է Հիսուսի կողմից կատարված մարգարեությունը, որը վերաբերվում էր Երուսաղեմի կործանմանը Ք.հ.* 70 *թվականին: Թող ընթերցողն ինքը իր ձեռքը վերցնի Աստվածաշունչը և կարդա* Ղուկասի Ավետարանի 21, 20-24 *հատվածը: Աշակերտները Հիսուսին*

*հարցնում են, թե ե՞րբ է կործանվելու Տաճարը և ինչպիսի՞ն են լինելու այդ դեպքի կանխահայտ նշանները: Հիսուսը պատասխանում է (առանց թվականներ նշելու). Երուսաղեմը շրջապատվելու է, ժողովուրդը սրով սպանվելու է, ողջ մնացածները աքսորվելու են, հեթանոսները հաստատվելու են սուրբ քաղաքում: Իմանալը և հատկապես տեսնելը, թե ինչպես է իրենց սուրբ քաղաքը ոտնակոխ արվում հեթանոսների, այսինքն՝ պիղծ անձանց կողմից, հրեաների համար հատուկ կերպով ցավալի իրականություն էր: Հետևաբար, ֆիզիկական պատապանքին ավելանալու էր նաև հոգևոր նվաստացումը: Ոչ մի խոսք չկա, որ ինչ-որ մի կերպ հաստատի եհովականների ուսուցումները:*

*Մինչև ե՞րբ էր տևելու հրեաների այդ նվաստացումը: Հիսուսը պատասխանում է. «Մինչև կավարտվեն հեթանոսների ժամանակները»: Բայց իրականում ի՞նչ է նշանակում «հեթանոսների ժամանակներ» արտահայտությունը: Նշանակում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է և դեռևս չի ամբողջացել հեթանոսների ավետարանումը (*Ղուկասի Ավետարան 24, 47; 20, 16*): Երբ բոլոր ազգերը ընդունած կլինեն Քրիստոս Աստծո լույսը, Իսրայելը նույնպես դարձի կգա ճշմարիտ հավատքին: Հրեաների քրիստոնեության դարձի հույսն ունի Պողոս Առաքյալը (*Նամակ Հռոմեացիներին 11, 25-27*), թերևս նաև Ղուկաս Ավետարանիչը (հմմտ.* Ղուկասի Ավետարան 13, 35*):*

*Հետևաբար, եզրակացնելով ասենք, որ սխալ է եհովականների ուսմունքի մեկնակետն արդեն: «Աստվածապետական կառավարումը» չդադարեց Ք.ա.* 607 *թվականին, այլ՝ շարունակվեց մինչև Հիսուսի ժամանակները: Իսկ Ղուկաս Ավետարանիչը, երբ ասում է «հեթանոսների ժամանակներ», չի հասկանում Ք.ա.* 607 *թվականից մինչև Ք.հ.* 1914 *թվականն ընկած ժամանակաշրջանը, այլ՝ Ք.հ.* 70 *թվականից սկսած ժամանակաշրջանը, որ տևում է մինչև մեր օրերը և տևելու է մինչև Քրիստոսի փառավոր վերադարձը, մինչև Աստվածային արդար դատաստանը, որը Քրիստոսի բոլոր թշնամիների (նաև եհովականների) համար լինելու է ահեղ, իսկ Խաչյալի հավատարիմ ծառաների համար՝ քաղցր:*

# ԳԼՈՒԽ Ե.
# ՄԻ ԱՆՀԵԹԵԹ ՀԱՇՎԱՐԿ.
# 1914 ԹՎԱԿԱՆԸ

1914 *թվականն այսօրվա եհովականների համար նույնքան կարևոր է, որքան կարևոր են մեր՝ քրիստոնյաներիս համար Եկեղեցին, յոթ խորհուրդները, փրկությունը և այլն: Եհովականների այս ուսուցման հերքումը համահավասար է եհովական հերետիկոսության ուսմունքային շինության փլուզմանը: Երբ հստակ է դառնում այս կետի անհիմաստ լինելը, ինքնաբերաբար անհիմաստ են դառնում մյուս բոլորը: Ուրեմն, կանգ առնենք այս կետի վրա որոշակի ուշադրությամբ: Ընթերցողին խորհուրդ եմ տալիս, որ եթե առաջին ընթերցմամբ չհասկանա ամեն բան, կարդա մեկ անգամ ևս, քննի աստվածաշնչյան նշված հատվածները և համեմատի մեր կողմից ներկայացված բացատրությունների հետ:*

*Նախ լսենք, թե ինչ են ուսուցանում եհովականները.*

*«Յոթ ժամանակները [Դանիել* 4, 10-17 *հատվածում հիշատակված] Նաբուգոդոնոսորի պարագային բառացիորեն յոթ տարիներ էին, որոնց ընթացքում զրկվեց գահից: Այդ յոթ տարիները հավասար էին* 84 *ամիսների, այսինքն՝ աստվածաշնչյան եղանակով յուրաքանչյուր ամիսը* 30 *օրով հաշվելով,* 2.520 *օրերի: Հովհաննեսի Հայտնության* 12, 6-14 *հատվածում խոսվում է* 1.260 *օրերի մասին, նշելով ''մեկ ժամանակ, երկու ժամանակներ և մեկ ժամանակի կեսը'', այսինքն՝ երեք ժամանակ ու կես: ''Յոթ ժամանակները''* 1.260 *օրերի կրկնակին են, այսինքն՝* 2.520 *օր: Եզեկիելը՝ Եհովայի հավատարիմ մարգարեն, գրում է. ''Յուրաքանչյուր տարվա դիմաց մեկ օր եմ սահմանել քեզ'' (Եզեկիել* 4, 6*): Կիրառելով այս կանոնը՝* 2.520 *օրերը դառնում են* 2.520 *տարիներ: Արդ, քանի որ Երուսաղեմն իրեն մայրաքաղաք ունեցող Աստծո բուն թագավորությունը դադարեց գոյություն ունենալ Ք.ա.* 607 *թվականի աշնանը, հեթանոսների ժամանակները հաշվելով այդ թվականից սկսած՝* 2.520 *տարիները հասնում են Ք.հ.* 1914 *թվականի աշնանը» (Sia Dio riconosciuto verace,* 243-244*):*

*Ի՞նչ պատասխանել: Սխալ է ինքնին մեկնակետը (*607 *թվականը), ինչպես նաև՝ աստվածաշնչյան մեջբերված հատվածների բացատրությունը (*Դանիել 4, 10-17; Հովհաննու Հայտնություն 12, 6.14; Եզեկիել 4, 6*): Հետևաբար, չի կարող ճշմարիտ լինել եզրակացությունը: Քննենք համառոտ կերպով: Ընթերցողը թող իր*

*ձեռքում ունենա Աստվածաշունչը և քաջ կհասկանա ինքնուրույն կերպով:*

*ա) Միայլ է մեկնման տարին, այսինքն՝* 607 *թվականը: Երուսաղեմը չի կործանվել* 607 *թվականին, այլ՝ քսան տարի հետո, (*587*)* 586 *թվականին: Այս ճշգրտումը անկասկածելիորեն հետևում է Հուդայի թագավոր Սեդեկիայի և Նաբուգոդոնոսորի թագավորության տարիների համեմատությունից:*

*Այդ համեմատությունները, որ ընծայում է մեզ Աստվածաշունչը և որ փաստվում են նորագույն պեղումներով ու գիտական հետազոտություններով, երկուսն են:*

*Առաջին. Նաբուգոդոնոսորի* 7*րդ տարին (*Երեմիա 52, 28*) և Նաբուգոդոնոսորի* 18*րդ տարին (*Երեմիա 52, 29*): Այսինքն, Երեմիա մարգարեն հաստատում է, որ Նաբուգոդոնոսորը իր թագավորության* 7*րդ տարում Հուդայի երկրից գերեվարեց* 3.023 *հրեա, ապա իր թագավորության* 18*րդ տարում Երուսաղեմից գերեվարեց* 832 *հոգի, իսկ Նաբուգոդոնոսորի թագավորության* 23*րդ տարում Նաբուզարդան դահճապետը հրեաներից գերի տարավ* 745 *հոգի: Բոլորը միասին՝* 4.600 *հոգի:*

*Երկրորդ. Նաբուգոդոնոսորի* 8*րդ տարին (*Թագավորների Չորրորդ Գիրք 24, 12*) և Նաբուգոդոնոսորի* 19*րդ տարին (*Թագավորների Չորրորդ Գիրք 25, 8; Երեմիա 52, 12*): Այսինքն, Թագավորաց* 4*րդ գրքի համաձայն՝ Նաբուգոդոնոսորը Հուդայի արքա Հովակիմին ու զորականներին գերեվարեց իր թագավորության* 8*րդ տարում: Բոլորը միասին՝* 7.000 *մարդ: Իսկ Նաբուգոդոնոսորի թագավորության* 19*րդ տարում Նաբուզարդան դահճապետը այրեց Երուսաղեմի Տաճարը և կողոպտեց Տաճարի ու Երուսաղեմի հարստությունները:*

*Ինչպես տեսնում եք, Երեմիա մարգարեի և Թագավորաց* 4*րդ գրքի հեղինակի նշած թըվերը միմյանցից տարբերվում են մեկ միավորով. այն, ինչը Երեմիան կապարված է ասում Նաբուգոդոնոսորի թագավորության* 7*րդ և* 18*րդ տարում, Թագավորաց* 4*րդ գրքի հեղինակը թվագրում է* 8*րդ և* 19*րդ տարում: Հավանական պատճառն այն է, որ մի դեպքում Նաբուգոդոնոսորի թագավորությունը սկսում են հաշվել թագադրության տարին նույնպես ներառնելով (որով թվականը մեկ միավորով ավելի է), իսկ երկրորդ դեպքում թագադրության այդ տարին ևս վերագրվում է Նաբուգոդոնոսորի հորը (որով թվականը մեկ միավորով պակաս է): Համենայն դեպս, տարբերությունը միայն մեկ տարվա է:*

*Ապա տեսնում ենք, որ Նաբուգոդոնոսորի 19րդ տարին համապատասխանում է Հուդայի թագավոր Սեդեկիայի թագավորության 11րդ տարվան: Ահա ապրվածաշնչյան հատվածը. «Քաղաքը [Երուսաղեմը] պաշարվեց մինչև Սեդեկիա արքայի թագավորության տասնմեկերորդ տարվա իններորդ ամիսը: Քաղաքում սովը սաստկացավ և երկրի ժողովուրդը հաց չուներ: […] Բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքայի տասնիններորդ տարվա հինգերորդ ամսվա յոթերորդ օրը, Բաբելոնի արքայի պաշտոնյան՝ պահակախմբի հրամանատար Նաբուզարդանը, մտավ Երուսաղեմ, այրեց Տաճարը […] » (*Թագավորների Չորրորդ Գիրք 25, 2-3.8-9*):*

*Հետևաբար, Երուսաղեմի կործանումը տեղի ունեցավ Սեդեկիայի թագավորության 11րդ տարվա ընթացքում, որը համապատասխանում է Նաբուգոդոնոսորի թագավորության 19րդ տարվան: Արդ, Նաբուգոդոնոսորը գահ բարձրացավ Ք.ա. 605 թվականին, ուրեմն, իր թագավորության 19րդ տարին, որում կործանեց Երուսաղեմը, Ք.ա. 586 թվականն է: 607 թվականի փոխարեն հաշվարկը 586 թվականից սկսելով, եհովականները պետք է որ քսան տարիով հետաձգեին իրենց եզրակացությունները: Բայց սա նույնպես չէր ունենա ապրվածաշնչյան հիմքեր:*

*բ) Նաբուգոդոնոսորի երազը (*Դանիել 4, 10-17*): Ընթերցողը թող բացի Դանիելի չորրորդ գլուխը և ինքնուրույն կերպով տեսնի, թե ինչպես բովանդակությունը պարունակում է երեք իրողություն. Նաբուգոդոնոսորը պատմում է երազը (*1-15*), Դանիելը մեկնաբանում է (*16-24*), երազն իրականանում է (*25-34*): Ամբողջ պատմությունը վերաբերվում է միմիայն իրեն՝ Նաբուգոդոնոսորին, և ոչ մի մարգարեական կապ չունի մարդկության պատմության հետ:*

*«Ծառը, որ տեսել ես […]* դու ինքդ ես*, ո՛վ թագավոր […] : Վտարվելու ես մարդկային հասարակությունից և բնակությունդ լինելու է երկրի գազանների հետ, եզների նման խոտ ես արածելու և անցնելու են* քո վրա *յոթ ժամանակներ, մինչև որ կճանաչես, թե Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորությունների վրա և Նա է տալիս այն, ինչ կամենում է:*

*Նույն այդ պահին* կատարվեց *խոսքը Նաբուգոդոնոսորի վրա: Նա վտարվեց մարդկանց հասարակությունից, սկսեց խոտ արածել […]» (*Դանիել 4, 28-30*):*

*Այսօրինակ տողերից անհնարին է եզրակացնել անհիմն գաղափարներ, ինչպիսիք տեսանք այս գլխի սկզբում, երբ մեջբերեցինք եհովականների գրությունը: Դանիելի գրքի չորրորդ գլխում չի խոսվում «հեթանոսների ժամանակներ»ի մասին:*

գ) Մեծ նեղությունը (Հովհաննեսի Հայտնություն 12, 6.14): Նախևառաջ նշենք, որ Դանիելի գիրքն է արփահայփչական նյութեր փալիս Հայփնության գրքի երկու հափվածներին (Դանիել 7, 25; 8, 14; 12, 7): Դանիելի գրքում խոսվում է երեք ու կես փարիների մասին (7, 25; 12, 7), որոնք ներկայացվում են հավասար կա՛մ 1.150 օրերի (8, 14), կա՛մ 1.290 օրերի[1] (12, 11), կա՛մ էլ 1.335 օրերի (12, 12): Ուսմունքային գեփնի վրա, այդ ժամանակամիջոցը նշանակում է նեղության, հալածանքի շրջան, թույլափրված՝ Ասփծուց: Իրոք, մոփավորապես երեք ու կես փարի էր փևել հրեաների դեմ Անփիոքոս Չորրորդ Եպիփանի սանձազերծած հալածանքը (Դանիել 9, 27; հմմփ. 8, 13), որին ընկերացել էր Երուսաղեմի Տաճարի պղծումը (փևած երեք փարի. 167ի դեկփեմբերից մինչև 164ի դեկփեմբերը. հմմփ. Մակաբայեցիների Առաջին Գիրք 1, 57; 4, 52): Ժամանակի այդ փևողությունը դարձել էր, այդպիսով, հալածանքի խորհրդանշան: Հայփնության գիրքը գործածում է արփահայփվելու այդ նույն եղանակը. խոսում է, հեփևաբար, 42 ամիսների (11, 2; 13, 5), 1.260 օրերի (12, 6) կամ երեք ու կես ժամանակների մասին (12, 14): Այդ երեք թվերի իմասփը համարժեք է Դանիել 9, 27 հափվածի թվերի նշանակությանը. մափնանշում է հալածանքի ժամանակամիջոցը, որն այդ օրերին նեղում էր Եկեղեցուն:

Հայփնության ամբողջ գրքում խոսվում է մեկ և միևնույն հալածանքի մասին, որն հիշվում է արդեն 11, 2 հափվածում, ապա 12, 6.14 և 13, 5 հափվածներում, որն արդեն 7, 14 հափվածում անվանել էր «մեծ նեղություն»:

Այս բոլորից հսփակ երևում է, որ Հովհաննեսի Հայտնության 12, 6.14 հափվածին փրված եհովական մեկնաբանությունը քմահաճ է ու սխալ: Ինչո՞ւ է Հովհաննեսի Հայտնության 12, 6.14 հափվածը կապում Դանիելի չորրորդ գլխին, ուր խոսվում է յոթ ժամանակների մասին, և ո՛չ թե Դանիելի յոթից փասներկուերորդ գլուխներին, որոնցում խոսվում է երեք ու կես ժամանակների մասին և, ինչպես Հայտնության գրքում, խոսքը վերաբերվում է հալածանքներին:

դ) Բայց ինքնըսփինքյան արդեն անմիփ է մեկ օրվան մեկ փարվա փևողություն փալը, հիմնվելով միայն Եզեկիելի 4, 6 հափվածի վրա: Բավական է շարունակել Եզեկիելի չորրորդ գլխի ընթերցումը, համոզվելու համար, որ «մեկ օրը հավասար է մեկ փարվա» հասփափումը «կանոն» չէ, այլ՝ պարզապես փվյալ պարագային միայն հարմար արփահայփչամիջոց: Այլապես կարելի է հասնել

[1] Ասփվածաշնչի գրաբար թարգմանության համաձայն՝ 1.235 օր:

*ամբողջովին անպրամաբանական հապպապումների. օրինակ, նույն չորրորդ գլխի 10րդ պողում, այսինքն՝ միայն մի քանի պող հետո, գրված է. «Եվ կերակուրը, որ պիտի ուտես, կլինի կշռով. օրեկան քսան սիկղ»: Եթե որպես «կանոն» մեկ օրը հավասար է մեկ տարվա, խեղճ Եզեկիել մարգարեն ուտելու էր* 200 *գրամ կերակուր ամբողջ տարվա ընթացքում: Իսկ մի քանի պարբերություն առաջ (*3, 15*) կարդում ենք, որ մարգարեն մտքով հափշտակված մնաց յոթը օր, այսինքն՝ յոթ տարի՞:*

*Արդեն ավելորդ է նաև հիշեցնելը, որ այս հատվածներից ոչ մեկում չի խոսվում «հեթանոսների ժամանակների» մասին:*

*ե) Ընթերցողից խնդրում եմ այժմ հատուկ կերպով ուշադիր լինել անելիքիս, որ կարևոր է և իսկույն ցույց կտա եհովական ուսմունքի խարդախությունն ու անխելքությունը: Համարենք, թե չունենք եհովականների ուսմունքը մերժող այս փաստերը, որոնք արդեն ներկայացրեցինք: Մեջբերում եմ մի անդրադարձություն, որ կատարել է Գ. Փեյփը, մի*

*նախկին Եհովայի Վկա, որը ներկայիս վերադարձել է Քրիստոնյա Եկեղեցու գիրկը,* 30 *տարի հեռու մնալուց հետո:*

*«Համարենք, թե Երուսաղեմը կործանվել է* 607 *թվականին: Համարենք, թե* 2.520 *օրերը հավասար են* 2.520 *տարիների: Համարենք, վերջապես, որ Աստվածաշնչի համաձայն՝ ամիսը բաղկացած է* 30*, իսկ տարին՝* 360 *օրերից: Եթե հաշվում ենք այսպես, ''յոթ ժամանակները'' (այսինքն՝ յոթ տարիները) համապատասխանում են* 2.520 *օրերի: Բայց* 30 *օրերով աստվածաշընչյան* 2.520 *տարի հաշվելով, սկսած Ք.ա.* 607 *թվականից, չենք հասնում Ք.հ.* 1914 *թվականին, այլ՝* 1878*ին: Այստեղ Բրուքլինի Ղեկավար Մարմինը թույլատրել է մի անուշադրություն, որը սակայն մեծ կարևորություն ունի մեր համար:* 607 *թվականից մինչև* 1914 *թվականը անցել են այն՛* 2.520 *տարիներ, բայց մեր արդի օրացույցի համաձայն, որում ամիսներից ոմանք* 30 *օր ունեն, ուրիշները՝* 31*, իսկ փետրվարը՝* 28*, և տարին ո՛չ թե* 360 *օրից է բաղկացած, այլ՝* 365*: Հետևաբար, Եհովայի Վկաների հաշիվը սխալվում է տարեկան* 5 *օր,* 6 *ժամ,* 9 *րոպե և* 54 *վայրկյանով, որոնք* 2.520 *անգամ բազմապատկելով՝ ստանում ենք երեսունվեց տարի ու կես»* (G. PAPE, *Io ero un Testimone di Geova*, Brescia 1974, p. 99) *(գրքի վերնագրի հայերեն նշանակությունն է.* Մի ժամանակ Եհովայի Վկա էի*): Մեր ցավակցություններն ենք հայտնում եհովական հերետիկոսության ղեկավարներին այս կարևոր անուշադրությունն իրենց թույլատրած լինելու համար:*

*Եզրակացությունն, ուրեմն, այն է, որ աստվածաշնչյան հատվածներից ոչ մեկը չի հանգեցնում մեզ 1914 թվականին, որն այդքա՜ն կարևոր է եհովական հերետիկոսների համար:*

## ԳԼՈՒԽ Զ.
## «ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ»

*Եհովականները հաստատում են, թե* 1914 *թվականին տեղի են ունեցել զանազան իրադարձություններ, որոնցից ամենակարևորը Աստծո Արքայության հիմնումն է: Տեսնենք, թե ինչպես են պատճառաբանում:*

*ա) Քրիստոսի անտեսանելի վերադարձը: Եհովական հերետիկոսության ուսմունքային ողջ համակարգում իրենց համար կարևորագույն կետերից մեկն է: Քրիստոսի փառահեղ վերադարձը, որին սպասում էին Առաքյալների ժամանակվա քրիստոնյաները (հմմտ.* Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 16, 22; Հովհաննեսի Հայտնություն 22, 20; Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Թեսաղոնիկեցիներին 4, 13-5, 11*), ըստ եհովականների՝ արդեն իսկ տեղի է ունեցել* 1914 *թվականին: Բնականաբար, այդ վերադարձը կատարվել է անտեսանելի կերպով և միմիայն եհովականներն են այն տեսել. «Ամբողջովին տրամաբանական է, որ միմիայն իր հավատարիմ հավատացյալները պետք է պատրաստակամությամբ ճանաչեին այդ վերադարձը» (Sia Dio riconosciuto verace,* 185*): Բայց ներողամիտ թող լինեն եհովական հերետիկոսները, Աստվածաշունչը մղում է ինձ հաստատելու, որ ամբողջովին անտրամաբանական է այս գոռոզ ինքնահավանությունը, որովհետև երբ խոսում է Քրիստոսի երկրորդ գալստյան մասին, Նոր Կտակարանը միշտ ներկայացնում է այն որպես փառավոր ու բացահայտ, որը տեսնելու են բոլորը. «Այնժամ», – Ինքը Հիսուսն է խոսում, – «երկնքում հայտնվելու է Մարդու Որդու նշանը (=Խաչը) և երկրի բոլոր ժողովուրդները ծեծելու են իրենց կրծքերը, և տեսնելու են Մարդու Որդուն, որ գալու է երկնքի ամպերի վրայով, մեծ զորությամբ ու փառքով» (*Մատթեոսի Ավետարան 24, 30*): «Ահա գալիս է ամպերի վրայով և ամեն ոք տեսնելու է Նրան, նաև նրրանք, ովքեր խոցեցին Նրան, և երկրի բոլոր ժողովուրդները ծեծելու են իրենց կուրծքը: Այո՛, ամեն» (*Հովհաննեսի

Հայտնություն 1, 7*)*: *Աստվածաշնչյան այս հատվածներից պարզ երևում է, որ ո՛չ միայն Հիսուսի «հավատարիմ հավատացյալներ»ն են տեսնելու Նրան, – որոնք, համենայն դեպս, եհովականները չեն, որովհետև հավատարիմ հավատացյալ չի կարող կոչվել մեկը, ով ամեն քայլափոխի սփռում է կեղծիք ու ստախոսություն, – այլ՝ «ամեն որ», «երկրի բոլոր ժողովուրդները», «նաև նրանք, ովքեր խոցեցին Նրան» (միայն հանձինս այս վերջինների կարելի է տեսնել եհովական հերետիկոսներին):*

*Ապա, – ինչը որ ամենակարևորն է, – Քրիստոսը վերադառնալու է Իր գործը ավարտելու և ո՛չ թե վերսկսելու համար: Լսենք Աստվածաշնչի խոսքերը. «Որովհետև Տերն Ինքը իջնելու է երկնքից […] : Եվ նախ հարություն են առնելու ի Քրիստոս ննջեցյալները: Ապա մենք՝ ողջերս, փրկվածներս, Իր հետ հափշտակվելու ենք ամպերի մեջ, ընդառաջ գնալու համար Տիրոջը օդում, և այդպես միշտ Տիրոջ հետ ենք լինելու» (*Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Թեսաղոնիկեցիներին 4, 16-17*): Քրիստոսի վերադարձի ահեղ նկարագրությունը եզրափակվում է այս խոսքերով. «Եվ կգնան սրանք հավիտենական տանջանքներին, իսկ արդարները՝ հավիտենական կյանքին» (*Մատթեոսի Ավետարան 25, 31-46*): Քրիստոսի փառավոր վերադարձը վերջակետ է դնելու մարդկության պատմությանը: Հետևաբար, մտածելու կարողություն ունեցող յուրաքանչյուր մարդու համար պարզ է, որ* 1914 *թվականին ոչ մի վերադարձ էլ տեղի չի ունեցել և որ եհովականներն իզուր են սպասում* 1914*ին ծնվածների մահվանը, որպեսզի հասնեն «աշխարհի վախճանին», որին սպասում են հոգեկան հիվանդ Ռասըլ Մեղուզայից սկսած:*

*բ) Աստծո Արքայության սկզբի վերաբերյալ ուսուցանում են հետևյալը. «Այն ժամանակամիջոցը, որի ընթացքում Հիսուսը երկրի վրա էր, ժամանակը չէր, որ Հայրը սահմանել էր արքայությունը հիմնելու համար, նույնիսկ եթե Հիսուսը փառավորվեր որպես թագավոր: Փայտի վրա մահից և մեռելներից հարություն առնելուց հետո, Հիսուսը տարվեց երկինք, այնտեղ սպասելու համար հեթանոսների ժամանակների լրմանը, որպեսզի կարողանար գահ բարձրանալ: Եղավ* 1914 *թվականին, սպասման ժամանակամիջոցի ավարտին, որ իրականացավ այս մարգարեությունը (*Սաղմոս 110, 12*)» (Sia Dio riconosciuto verace*, 245*): Որպես առաջին անդրադարձություն, ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ մերժելով Հիսուսի աստվածությունը, եհովականներն ինչպես են ասում «Հիսուսը տարվեց երկինք», հասկացնելով, թե Հիսուսն Ինքը չէր կարող գնալ այնտեղ, այլ՝ կարիքն ուներ, որ Իրեն տանեին այնտեղ: Բայց բավական է կարդալ* Գործք Առաքելոցի 1, 9-11

*հարվածը, պեսնելու համար, որ Հիսուսն ինքնիշխան կերպով համբարձավ երկինք, որպես Տեր։ Ինչպես նաև* Մարկոս 16, 19; Ղուկաս 24, 50-51 *հատվածներում հաստատվում է Հիսուսի ինքնիշխան համբարձումը և փառահեղ նստելը Հոր աջ կողմում։ Հոր աջ կողմում նստելը արդեն իսկ նշանակում է ստանալ «ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա»* (Մատթեոս 28, 18*), նշանակում է թագավորել հավիտյան, և ուրեմն կեղծիք է եհովականության հաստատումը, թե Հիսուսը Հորից արքայությունը ստացավ միայն* 1914 *թվականին։*

*Իսկ ինչ վերաբերվում է «ժամանակների լրմանը», որը եհովականներն ինչպես միշտ հիշում են որպես «հեթանոսների ժամանակների լրումը» «*1914 *թվականին, սպասման ժամանակամիջոցի ավարտին», ահա ներկայացնում եմ մի քանի աստվածաշնչյան հատվածներ, պարզապես օրինակներ տալու համար։ Աստվածաշնչի հանդեպ անկեղծ հարգանք ունեցող յուրաքանչյուր հավատացյալ կարող է ինքն իրեն համոզվել, որ եհովական ուսուցումները հիմնված չեն Աստվածաշնչի վրա։*

*«Հովհաննեսի ձերբակալվելուց հետո, Հիսուսը գնաց Գալիլիա, քարոզում էր Աստծո ավետարանը և ասում էր. ''Ժամանակը լրացել է և Աստծո արքայությունը մոտ է. դարձի եկեք և հավատացեք ավետարանին''»* (Մարկոսի Ավետարան 1, 14-15*)։*

*«Իսկ եթե ես սատանաներին դուրս եմ հանում Աստծո Հոգու զորությամբ, ուրեմն ձեր վրա հասել է Աստծո Արքայությունը»* (Մատթեոսի Ավետարան 12, 28; *հմմտ.* Ղուկասի Ավետարան 17, 21*)։*

*«Իսկ երբ հասավ ժամանակների լրումը, Աստված առաքեց իր Որդուն, որ ծնվեց կնոջից, ծնվեց օրենքի տակ, փրկելու համար նրանց, ովքեր օրենքի տակ էին, որպեսզի ստանայինք որդեգրությունը»* (Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 4, 4-5*)։*

*Ժամանակներն հասել են իրենց լրումին, երբ Աստված առաքել է իր Որդուն, այսինքն՝ Քրիստոսի ծննդյան օրից սկսած Աստծո Արքայությունը ներկա է։ Մենք այդ Արքայության մեջ ենք, կամ ավելի ճիշտը՝ Աստծո Արքայությունը մեր մեջ է* (Ղուկասի Ավետարան 17, 21*), բայց նրա փառքն ամբողջովին վայելելու սպասման մեջ՝ մենք խոնարհաբար աղոթում ենք մեր Հորը. «Թող գա Քո Արքայությունը»* (Մատթեոսի Ավետարան 6, 10*)։*

*Բայց եհովականները, իրենց բնորոշ համառ պնդագլխությամբ, այսքանով չբավարարվելով՝ հակաճառում են. «Քանի դեռ Հիսուսն իրենց հետ էր, աշակերտները հռչակում էին արքայության ներկայությունը, բայց հիշատակումներ չկան, թե շարունակեցին նույնը հռչակել նաև նրա համբարձումից հետո։ Այդ ավետումը չէր*

*կարող կատարվել մինչև Քրիստոսի վերադարձը և երկրորդ ներկայությունը» (այսինքն՝ մինչև 1914 թվականը) (Sia Dio riconosciuto verace): Բայց կրկին, բավական է պարզապես կարդալ* Գործք Առաքելոցի *հատվածներից մի քանիսը, համոզվելու համար, որ իրողությունների ընթացքը ամբողջովին տարբեր է. Փիլիպոսը Սամարիայի հավատացյալներին տանում է «Աստծո Արքայության և Հիսուս Քրիստոսի անվան բարի լուրը» (*Գործք Առաքելոց 8, 12*). Պողոսն ու Բառնաբասը խրախուսում են աշակերտներին, ասելով. «Բազում նեղությունների միջով է հարկավոր անցնել՝ Աստծո արքայություն մտնելու համար» (*Գործք Առաքելոց 14, 21*). Պողոսը հռոմեական բանտարկության երկու տարիներն անցկացնում է «ավետարանելով Աստծո Արքայությունը» (*Գործք Առաքելոց 28, 31; *հմմտ.* 28, 23*): Նույն Պողոս Առաքյալը հոգու բերկրանքով երախտագիտություն է մատուցում Հայր Աստծուն. «Նա է, հիրավի, որ ազատեց մեզ խավարի իշխանությունից և փոխադրեց մեզ իր սիրեցյալ Որդու արքայության մեջ, որի շնորհիվ մենք ունենք փրկությունը, թողությունը մեր մեղքերի» (*Պողոս Առաքյալի Նամակը Կողոսացիներին 1, 13-14*):*

*գ) Ուսուցանում են, թե իբր* 1914 *թվականին սատանան արտաքսվեց երկնքից (կարծես թե մինչև այդ թվականը երկնքում էր):*

*«Այն ամբարիշտը (սատանան) և իր դևերի բանակները արտաքսվեցին երկնքից Ք.հ. 1914 թվականից սկսած, երբ Եհովան իր Որդուն գահ բարձրացրեց որպես թագավոր և ծնվեց նոր աշխարհի կառավարությունը» (Libertà nel nuovo mondo*, 20; *Il regno è vicino*, 318-319*):*

*Աստվածաշնչին քիչ թե շատ տեղյակ անձանց համար հստակ է խաբկանքը, որովհետև «Ք.հ.* 1914 *թվականից սկսած» արտահայտությունը ամբողջովին հակասում է աստվածաշընչյան բազում հատվածների, որոնցում հաստատվում է, որ սատանայի հանդեպ հաղթանակը Քրիստոսն Իր անձով ու գործով իրագործեց Իր քարոզչությամբ, չարչարանքներով ու Հարությամբ: Ահա այդ հատվածներից մի քանի օրինակ.*

*«Յոթանասուներկուսը վերադարձան խնդությամբ և ասացին. ”Տեր, դևերն էլ են մեզ ենթարկվում քո անունով”: Եվ նրանց ասաց. ”Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը: Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխելու [...] թշնամու ամբողջ զորության*

*վրա’’» (*Ղուկասի Ավետարան 10, 17-19; *հմմտ.* Մարկոսի Ավետարան 10, 13*):*

*«Այժմ է այս աշխարհի դատաստանը. հիմա այս աշխարհի իշխանը դուրս է նետվելու»*

*(*Հովհաննեսի Ավետարան 12, 31; *հմմտ.* Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 3, 8*):*

*Քրիստոսի հաղթանակը որպես հիմք ունենալով է, որ Պետրոս Առաքյալի ժամանակվա և բոլոր ժամանակների քրիստոնյաներս հավատքի շնորհիվ կարող ենք դիմադրել սատանայի հարձակումներին (*Պետրոս Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 5, 8-9*): Նույն բանն ասում է նաև Պողոս Առաքյալը (*Պողոս Առաքյալի Նամակը Եփեսացիներին 6, 10-16*):*

*Եհովական հերետիկոսները զանազան հատվածներ են մեջբերում* Հովհաննեսի Հայտնության *գրքի* 12*րդ գլխից, բայց ոչնչով չեն կարող փաստել, որ այդ իրադարձությունները տեղի են ունեցել* 1914 *թվականին:*

## ԳԼՈՒԽ Է.
## 1918 ԹՎԱԿԱՆԻ ”ՀՌՉԱԿԱՎՈՐ” ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Միալներն իրենց ետևից ծնում են ուրիշ սխալներ: Այսպիսով,* 1914 *թվականը եհովականների ”պայծառապես” խելքում ծագեց մի ուրիշ թվական.* 1918*ը: Այդ տարում եհովական հերետիկոսների համար տեղի են ունեցել ”կարևորագույն” դեպքեր: Իբր թե.* 1*) Քրիստոսը անտեսանելի կերպով մտել է հոգևոր տաճար.* 2*) նույնպես անտեսանելի կերպով հարություն է առել* 144.000 *ընտրյալների մի մասը.* 3*) սկիզբ է առել կրկնակի դատաստանը Աստծո տան և ազգությունների վրա:*

*Բրուքլինի Ղեկավար Մարմինը հատուկ հաշվարկներ չի կատարում* 1918 *թվականին հասնելու համար, քանի որ անսասան է նկատում* 1914*ի համար կատարածները: Հետևաբար, մենք նույնպես, քանի որ վավերական են* 1914*ի հերքման համար մեր կողմից ներկայացված բացատրությունները, կանգ չենք առնի այս երկրորդ թվականի վրա: Հարկ էլ չկա, որովհետև մանկական հեքիաթասացությունը պարզ կերևա ինքնըստինքյան:*

*Միայն մի բան արժանի է ուշադրության. ինչպես նկատեցիք, եհովականների կողմից ուսուցանված այս բոլոր ”հռչակավոր” իրադարձությունները տեղի են ունեցել անտեսանելի կերպով: Բացատրությունները, կարծում եմ, ավելորդ են:*

1*) Հիսուսի անտեսանելի մուտքը հոգևոր տաճար:*

*Ահա իրենց ուսուցումը. Հիսուսը «եկավ հոգևոր տաճար և սկսեց արբագործել այն: Սա տեղի ունեցավ* 1918 *թվականի գարնանը, երբ սկսվեց դատաստանի և իր օծյալ հետևորդների քննության ժամանակաշրջանը» (Sia Dio riconosciuto verace,* 189-190*):* 1918 *թվականին գալու իմաստը եհովականները հիմնում են նմանաբանության վրա. ինչպես Հիսուսը մկրտությունից երեք ու կես տարի անց – ըստ եհովականների – գնաց սրբագործելու տաճարը, այնպես էլ երկնքում գահ բարձրանալուց երեք ու կես տարի հետո սկսեց մաքրել հոգևոր տաճարը:*

*Ամբողջն այսքանն է: Միայն:*

*Ի՞նչ պետք է պատասխանենք: Նախ, ոչնչով հնարավոր չէ ապացուցել, որ Հիսուսը Տաճար գնաց մկրտությունից երեք ու կես տարի հետո: Չորս Ավետարաններն այս հարցի վերաբերյալ միաձայն չեն. եթե Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանները*

*Տաճարից վաճառականների վտարումը տեղադրում են Քրիստոսի քարոզչության վերջավորությանը (*Մատթեոս 21, 12-13; Մարկոս 11, 15-19; Ղուկաս 19, 45-48*), Հովհաննեսի Ավետարանը այդ նույն դեպքը պատմում է Քրիստոսի քարոզչության սկզբնավորությանը (*Հովհաննես 2, 13-22*): Ավետարանիչների պատմության միջև այս տարբերությունն արդեն պարզ ցույց է տալիս, որ Առաքյալների համար ոչ մի կարևորություն չուներ դեպքերի ժամանակագրական հերթականությունը. Առաքյալներին և բոլոր ժամանակների իրական քրիստոնյաներին հետաքրքրում է միմիայն Աստծո Խոսքը, Քրիստոսի փրկարար պատգամը և փրկությունը, որը Նա պարգևեց մեզ Իր Արյան հեղմամբ Խաչի վրա, Հարությամբ, Համբարձմամբ, Աստծո աջ կողմում բազմելով և Ամենաասուրբ Երրորդության երրորդ Անձի՝ Սուրբ Հոգու առաքմամբ: Իսկ թե առավոտյան ժամը քանիսին դուրս եկավ Նազարեթի տնից, ժամը քանիսին նախաճաշեց աշակերտների հետ, քանի ժամ տևեց ճամփորդությունը դեպի այսինչ կամ այնինչ տեղը, արդյոք ոտքով գնացին, թե ջորիների վրա հեծած, արդյոք ճանապարհին ջորիներին խոտ տվեցին ուտելու կամ խմելու ջուր, և այլն, սրանք դատարկ ու անիմաստ բաներ են, որոնցով միայն եհովական հերետիկոսները կարող են զբաղվել:*

*Բայց հետո, Հիսուսը չգնաց Տաճարը սրբագործելու. Տաճարի գավթում վաճառքով զբաղվողներին դուրս վռնդելը չի նշանակում Տաճարը սրբագործել, որովհետև Աստծո Տունն ինքնըստինքյան արդեն սուրբ էր, քանի որ բնակատեղին էր Սրբություն Սրբոցի, երիցս Սրբի: Բավական է ուղիղ մտքով կարդալ Ավետարանները, տեսնելու համար, որ Հիսուսը ուրիշ անգամներ ևս արդեն այցելել էր Տաճար, վաճառականներին վռնդելուց շատ առաջ. այնտեղ գնում էր հրեաների մեծ տոների կապակցությամբ (Տաղավարահարաց, Զատիկ, և այլն), մասնակցում էր աղոթքներին, ուսուցանում էր Տաճարի ներսում (հատկապես Սողոմոնյան սրահում): Իսկ ամենաառաջին անգամ Հիսուսը Տաճար այցելում է տակավին ութ օրեկան հասակում, ենթարկվելով Աստծո Օրենքին և ընդունելով թլփատությունը (*Ղուկաս 2, 21-24*): Ուրեմըն, վաճառականների վտարմանը տալ իմաստներ, որ իրական չեն, նշանակում է քմահաճությամբ և առանց հարգանքի վարվել Աստվածաշնչի սրբազան պատմությունների նկատմամբ:*

*2) Դատաստանը Աստծո տան և ազգությունների վրա:*

*Ահա իրենց խոսքերը. «Իրոք,* 1918 *թվականի գարնանը նա եկավ տաճար որպես Եհովայի պատգամաբերը և սկիզբ տվեց դատաստանին, նախ ’’Աստծո տան’’, ապա այս աշխարհի բոլոր*

*ազգությունների վրա (1Պետ 4, 17; Մտթ 25, 31-32) (Sia Dio riconosciuto verace, 283):*

*Ահա եհովականների քմահաճության մեկ օրինակ ևս, որը հստակ կերպով հակասում է Աստվածաշնչին: Որպեսզի մերժեն Քրիստոսի աստվածությունը և ստորացնեն Նրան, մեջբերում են* Մաղաքիա 3, 1 *հատվածը, ուր խոսվում է «պատգամաբերի» մասին, այդ փիտղոսը տալով Հիսուսին, իբր թե Հիսուսը միայն պատգամաբեր էր, մի պաշտոնյա, ուրիշ ոչինչ: Բայց Ավետարանին գոնե մի քիչ ծանոթ յուրաքանչյուր անձ գիտի, որ Հիսուսն Ինքը Մաղաքիայի այդ հատվածը վերագրում է Հովհաննես Մկրտչին. «Ի՞նչ տեսնելու ելաք: Մի մարգարե՞: Այո՛, ասում եմ ձեզ, և ավելի՛ն, քան մարգարե: Նա է, որի մասին գրված է. ''Ահա իմ պատգամաբերն առաքում եմ քո առջևից, որպեսզի քո առաջ պատրաստի ճանապարհները''»* (Մատթեոսի Ավետարան 11, 9-10*): Տեսնում եք, այսպիսով, թե եհովական հերետիկոսությունն ինչպես է և՛ս մեկ անգամ հակասում Հիսուսի պատգամին, ինչպես է ևս մեկ անգամ կեղծում Աստվածաշնչի իրական իմաստը:*

*Իսկ ինչ վերաբերվում է «Աստծո տան» և «ազգությունների վրա» սկիզբ առած դատաստանին, պատասխանելու համար՝ քննենք եհովականների կողմից մեջբերված աստվածաշընչյան հատվածները, տեսնելու համար, թե արդյոք իրենց տված բացատրություններն իրական են, թե ո՛չ: Բայց քննարկումը կկատարենք եհովականներից մի տարբերությամբ. մենք այդ տողերը կներկայացնենք իրենց ամբողջական հատվածների ներսում (ինչպես հիշում եք, այս հարցին արդեն անդրադարձանք, որ եհովականները աստվածաշնչյան տողերը անջատում են տեքստից և այդպիսով հնարավորությունն են ստեղծում այդ տողերին տալու ամբողջովին ա՛յլ իմաստներ, ըստ իրենց քմահաճույքի):*

**1** Պետրոս **4, 12.16-17.** *«Սիրելիներ, անակնկալի մի՛ մատնվեք հալածանքների հրդեհի բռնկման պատճառով, որը ձեր մեջ վառվել է ձեզ փորձելու համար, կարծես թե ինչ-որ մի տարօրինակ բան է դա: [...] Եթե մեկը տառապում է քրիստոնյա լինելու համար, թող չամաչի, այլ՝ փառավորի Աստծուն այդ անվան համար: Հասել է, իրոք, այն պահը, որում սկսվում է դատաստանը Աստծո տան վրա: Բայց եթե սկսվում է մեզնից, ինչպիսի՞ն է լինելու արդյոք վախճանը նրանց, ովքեր մերժում են հավատալ Աստծո Ավետարանին»:*

*Պետրոս Առաքյալն իր նամակը գրել է Հռոմից, որը քրիստոնյաների կողմից այլաբանորեն կոչվում էր Բաբելոն, որովհետև հալածում էր քրիստոնյաներին: Խրախուսում է նամակի*

*հացեապերերին՝ համբերությամբ կրելու նեղությունները, որոնց ենթարկված են քրիստոնյա լինելու պատճառով: Ինչպես հստակ երևում է, այդ խոսքերում ոչ մի մարգարեություն չկա, որը կարող լիներ սկսվել 1918 թվականին, այլ՝ Առաքյալը խոսում է իր ժամանակակիցների նեղությունների մասին: Ասում է.* «Իրոք, հասել է այն պահը, որում սկսվում է դատաստանը Աստծո տան վրա». *«հասել է», և ո՛չ թե՝ հասնելու է մոտ 2.000 տարի հետո: «Աստծո տուն» արտահայտությունը մատնանշում է այն հասարակությունը, որին իր խոսքն ուղղում է Պետրոսը: Մի քանի տող առաջ, Առաքյալը քրիստոնյաների վերաբերյալ արտահայտվել էր հետևյալ կերպ. «Դուք կենդանի քարերն եք՝ հոգևոր կառույցի շինության համար»: Ուրեմն, «Աստծո տուն» արտահայտությունը հանկարծակի չի հայտնվում: Եթե Աստծո դատաստանը, ասում է Պետրոսը, այսքա՜ն զորեղ է ձեր վրա նեղություններով ու հալածանքներով, որքա՜ն ավելի սաստիկ է լինելու հեթանոսների վրա, որոնք այժմ ձեզ հալածում են: Էականում սա Քրիստոսի միտքն է, մինչ խաչը ուսին գնում էր դեպի Գողգոթա. «Եթե այսպես են վարվում մատղաշ ճյուղի հետ, ի՞նչ է լինելու չոր փայտի հետ» (*Ղուկաս 23, 31*): Ինչպես նաև ուշադրություն դարձնենք Պետրոս Առաքյալի վերջին խոսքի վրա.* «Ինչպիսի՞ն է լինելու արդյոք վախճանը նրանց, ովքեր մերժում են հավատալ Ավետարանին»*: Սիրելի ընթերցող, եթե արդեն անդամակցել ես Եհովայի Վկաների հերետիկոսությանը կամ մտադիր ես անդամակցելու նրանց, մի քիչ խորհրդածիր Առաքյալի այս խոսքերի վրա. եթե հավատարիմ քրիստոնյաներս կրում ենք Աստծո զայրույթը մեր մեղքերի փոխարեն, ի՞նչ է լինելու նրանց վախճանը, ովքեր մերժում են ճշմարիտ հավատքը: Սա չեմ ասում քեզ սարսափեցնելու համար, այլ՝ զգուշացնելու, ինչպես նաև քաջալերելու, որ Քրիստոսի ճշմարիտ հավատքով ընդունես հավիտենական փրկությունը, Աստծո այն սերը, որ վերջում ջնջելու է մեր մեղքերի հիշատակը և չորացնելու է մեր աչքերի արցունքները: Ճշմարտությունը և Աստծո սերը, որոնք չկան Եհովայի Վկաների մոտ, այլ՝ գտնվում են Քրիստոս Աստծո Սուրբ Եկեղեցու մեջ:*

Մատթեոս **25, 31-46.** *«Արդ, երբ մարդու Որդին կգա իր փառքով և բոլոր հրեշտակներն իր հետ, այնժամ նա կբազմի իր փառքի գահին և նրա առաջ կհավաքվեն երկրի բոլոր ազգերը և նա նրանց միմյանցից կզատի, ինչպես մի հովիվ, որ զատում է ոչխարները այծերից: Ոչխարներին կկանգնեցնի իր աջ կողմում, իսկ այծերին՝ ձախ կողմում: Այնժամ թագավորը կասի իր աջ կողմում եղողներին. ՚՚Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեր համար պատրաստված արքայությունը. որովհետև քաղցած էի, ինձ ուտելիք*

*տվեցիք, ծարավ էի, խմելու ջուր տվեցիք ինձ, պանդուխտ էի, ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, հագցրեցիք ինձ, հիվանդ էի, ինձ տեսության եկաք, բանտում էի, այցելեցիք ինձ": Այնժամ արդարները կպատասխանեն նրան ու կասեն. "Տեր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ՝ ծարավ ու ջուր տվեցինք. ե՞րբ տեսանք քեզ պանդուխտ ու մեր մեջ առանք, կամ՝ մերկ ու հագցրեցինք. ե՞րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանտի մեջ ու այցի եկանք քեզ": Թագավորը կպատասխանի ու կասի նրանց. "Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկի համար արեցիք դա, իմ համար արեցիք": Ապա կասի ձախակողմյաններին. "Անիծյալներ, հեռացե՛ք ինձնից դեպի հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի ու իր հրեշտակների համար. որովհետև քաղցած էի, ուտելիք չտվեցիք ինձ, ծարավ էի, ջուր չըտվեցիք ինձ, պանդուխտ էի, ինձ ձեր մոտ չառաք, մերկ էի, չհագցրեցիք ինձ, հիվանդ էի ու բանտարկյալ, այցի չեկաք ինձ": Այնժամ նրանք նույնպես կպատասխանեն ու կասեն. "Տեր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած, կամ ծարավ, կամ պանդուխտ, կամ մերկ, կամ հիվանդ, կամ բանտի մեջ, ու չծառայեցինք քեզ": Իսկ նա կպատասխանի նրանց ու կասի. "Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ այս փոքրերից մեկի համար դա չարեցիք, իմ համար էլ չարեցիք": Եվ նըրանք կգնան հավիտենական պանջանքների, իսկ արդարները՝ հավիտենական կյանքի»:*

*Այս տողերում կա՞ արդյոք ինչ-որ մի բան, որ կարող է գեթ նվազագույն չափով հուշել 1918 թվականը և մարդկության մի մասի դատապարտանը: Իր խոսքի սկզբում արդեն Հիսուսը ճշտում է, որ այս ամենը կատարվելու է, երբ «մարդու Որդին գալու է իր փառքով և բոլոր հրեշտակներն իր հետ», և ո՛չ թե 1914 կամ 1918 թվականին "անտեսանելիորեն": «Բոլոր ազգեր» արտահայտությունը մատնանշում է բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում ապրած և ապրող մարդկանց, բարիներին ու չարագործներին: Ինչպես նաև Հիսուսը հաստատում է, որ չարագործները ենթարկվելու են հավիտենական կրակի տանջանքներին, որը ճիշտ կոչվում է դժոխք. եհովական հերետիկոսները այս կետում նույնպես հակառակվում են Աստվածաշնչին, ուսուցանելով, թե դժոխքը գոյություն չունի (ինչպես ներածության մեջ տեսանք, Ռասըլն այդ գաղափարը որդեգրեց գալստական բողոքականներից [ադվենտիստներից], և սիրով համոզվեց, թե դժոխքը գոյություն չունի, որպեսզի կարողանար խաղաղեցնել իր խըռովված ու խախտված հոգեկան ներաշխարհը: Բայց իր խիղճը կեղծիքի միջոցով խաղաղեցնելով՝ չկարողացավ խաղաղեցնել իր ընտանեկան կացությունը, որը վերջացավ ամուսնալուծությամբ և Ռասըլ Մեդուզայի արդեն հիշատակածս սիրային արկածներով):*

*Ապա, ի՞նչ կապ կա Մարթենսի այս հատվածում ներկայացվող համընդհանուր, տիեզերական դատաստանի և այն նեղությունների միջև, որոնց մասին խոսում է Պետրոս Առաքյալը: Ո՛չ մի:*

3*) Այժմ տեսնենք, թե ինչ են ուսուցանում «փոքրիկ հոտ» կոչվածի հարության վերաբերյալ. «*1918 *թվականին, երբ Եհովայի դաշինքի պատգամաբերը եկավ տաճար՝ դատելու համար Աստծո տունը, ’’Քրիստոսի մարմնի’’ այն անդամները, որոնք մահով ավարտել էին իրենց կյանքի ընթացքը (=* 144.000 *ընտրյալների թվին պատկանողների մի մասը), հարություն ստացան որպես Աստծո կողմից իրենց տրված վավերացում, իբրև թագավորական ընտանիքի անդամներ» (Il regno Ռ vicino*, 334*):*

*Եհովականներն այստեղ ներկայացնում են իրենց հորինած չորս հարություններից առաջինը: Հարություն առածներն իբր թե նրանք են, ովքեր պատկանում են* 144.000 *ընտրյալների թվին և մահացել են* 1918 *թվականից առաջ: Մյուս ընտրյալները, որ մահանում են* 1918 *թվականից հետո, «ստանում են ակնթարթային հարություն, հոգով ապրելու համար իրենց թագավորի հետ» (Il regno Ռ vicino*, 334*):* 144.000 *ընտրյալների հարցին մանրամասն կանդրադառնամ հաջորդ գլխում: Առայժմ բավարարվում եմ միայն հիշեցնելով, որ Աստվածաշնչում ոչ մի խոսք չկա ’’ատրիճանական’’ հարությունների մասին:*

*«Գալու է պահը, որում բոլոր նրանք, ովքեր գերեզմաններում են, լսելու են նրա ձայնը (=մարդու Որդու) և դուրս են գալու. ովքեր բարիք են գործել՝ կյանքի հարության, իսկ ովքեր չարիք՝ դատապարտության հարության համար» (*Հովհաննեսի Ավետարան 5, 28-29*):*

*Հետևաբար, հարությունը մեկ և միակ է բոլորի՝ բարիների ու չարերի համար: Պողոս Առաքյալը, Ֆելիքս նահանգապետի առաջ խոսելիս, հաստատում է, թե ունի «առ Աստված հույսը, որ լինելու է արդարների ու անարդարների մի հարություն» (*Գործք Առաքելոց 24, 15*): Հայտնության գիրքը նույնպես ճանաչում է միայն մի հարություն (*Հովհաննեսի Հայտնություն 20, 11-15*), թեև նախ խոսում է մարտիրոսների այլաբանական հարության մասին (*Հովհաննեսի Հայտնություն 20, 4-6; *հմմտ.* 6, 9-11*):*

*Եզրակացնելով ասենք, – ինչպես ակնարկեցինք արդեն հինգերորդ գլխի սկզբում, – որ եհովական հերետիկոսության համար տարեթվերը միշտ ունեցել են վիթխարի նշանակություն. ուստի, դիմակազերծելն ու փաստելը, որ* 1914 *և* 1918 *թվականները լիովին զուրկ են ո՛չ միայն աստվածաշնչյան, այլ նաև որևէ հիմատից, նշանակում է կործանել եհովականության բոլոր հիմքերը և ստեղծել շփոթություն ու քաոս, որից դուրս գալ չեն կարող Բրուքլինի Ղեկավար*

*Մարմնի անդամները: Իսկ շարքային եհովականներին կմնա խոնարհաբար ընդունել իրենց սխալը: Սխալվելը մարդկային է և ամեն ոք կարող է սխալվել (և իրականում ամեն ոք հաճախ սխալվում է, թեև յուրաքանչյուրը տարբեր աստիճաններում): Սեփական սխալը խոնարհաբար ընդունելը ամոթ բան չէ, այլ ճիշտ հակառակը՝ պատիվ է բերում մարդուն: Ինչպես ասում էին հին իմաստունները. «Errare humanum est, perseverare est diabolicum», «Սխալվելը մարդկային է, սխալի մեջ գիտակցաբար մնալն է սատանայական»:*

## ԳԼՈՒԽ Ը.
## «ՓՈՔՐԻԿ ՀՈՏ»Ը
## ԵՎ «ՄՅՈՒՍ ՈՉԽԱՐՆԵՐ»Ը

*Հարկ է կանգ առնել քննելու եհովականության այս երկու ուսուցումները, որոնք Աստվածաշնչին լիովին հակառակ լինելով հանդերձ, մեծագույն կարևորություն ունեն հերետիկոսության ուսմունքային և գործնական համակարգում:*

*ա)* 144.000 *ընտրյալների կամ իրենց կողմից ասված «փոքրիկ հոտի» վերաբերյալ ուսուցանում են հետևյալը. «Ովքե՞ր և քանիսե՞ր են լինելու, որ կարողանալու են մտնել արքայություն: Հայտնության գիրքը սահմանափակում է այդ թիվը* 144.000*ի, որոնք մասնակից են դառնալու արքայությանը և բնակվելու են Սիոն լեռան վրա (Հայտ* 14, 3; 7, 4.8*): Այսպիսով տեսնում ենք, որ Աստված երբեք չի որոշել ''փոփոխության ենթարկել այս հին աշխարհը և բարիներին տանել երկինք'': Շատ քչերն են մտնելու արքայություն: Միայն մի ''փոքրիկ հոտ'', համեմատելով երկրի բնակչությանը (Մատթ* 7, 13; *Ղուկ* 12, 32*)» (Sia Dio riconosciuto verace*, 120-121; *La verità che conduce alla vita eterna*, 77ss*):*

*Բայց արդյոք ինչի՞ց մղված՝ Աստված պետք է սահմանափակեր երկնային կյանքին սահմանվածների քանակը: Ի՞նչ պատճառներից մղված՝ Աստված պիտի սահմանափակեր Քրիստոսի կողմից իրականացված փրկագործության արդյունավետությունը: Այժմ կմեջբերենք աստվածաշնչյան մի քանի հատվածներ, ինչպես նաև կտանք եհովականների կողմից մեջբերված հատվածների իրական մեկնաբանությունը, որոնց հիմքի վրա պարզորոշ կերևա, որ եհովականների «այսպիսով տեսնում ենք, որ Աստված երբեք չի որոշել ''փոփոխության ենթարկել այս հին աշխարհը և բարիներին տանել*

*երկինք”» արտահայտությունը հակաաստվածաշնչյան է և, ինչը որ ամենաասարսափելին ու արքապիղծն է, հակառակվում է Աստծո հայրական անսահման սիրույն ու փառքին: Կրեսնենք, որ այս ուսմունքը նույնպես արդյունքն է Բրուքլինի Ղեկավար Մարմնի մարդկային (չասելու համար՝ սատանայական) մըտահղացումների:*

*«Աստված* կամենում է, *որ* բոլոր *մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության ճանաչմանը»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Տիմոթեոսին 2, 4*):*

*«Մեր հույսը դրել ենք կենդանի Աստծո վրա, որը փրկիչն է* բոլոր *մարդկանց, հատկապես նրանց, ովքեր հավատում են»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Տիմոթեոսին 4, 10*): «Աստված այնքան սիրեց* աշխարհը *(=ամբողջ մարդկությունը), որ տվեց իր միածին Որդին, որպեսզի* ով հավատա նրան, *չմեռնի, այլ՝ ունենա հավիտենական կյանքը: Աստված իր Որդուն չառաքեց դատելու համար աշխարհը, այլ՝ որպեսզի* աշխարհը *փրկվի նրա միջոցով»* (Հովհաննեսի Ավետարան 3, 16-17*):*

*Աստված կամենում է լինել բոլո՛ր մարդկանց փրկիչը, Աստծո ծրագիրը բոլո՛ր մարդկանց փրկությունն է, բոլորի՛ հասնելն է հավիտենական կյանքին, այսինքն՝ այն աստվածային կյանքին, որը Քրիստոսը բերեց մեզ և որը ճիշտ Ինքն է (*Հովհաննես 14, 6; *հմմտ.* 6, 53.57*): Իրոք, Քրիստոսը՝ փրկության Միջնորդը, լուսավորում է աշխարհ եկող յուրաքանչյուր մարդու (*Հովհաննես 1, 9*), «իրո՛ք աշխարհի փրկիչն է» (*Հովհաննես 4, 42*): Փրկությունը Աստված պարգևում է բոլորին. թողնված է յուրաքանչյուր մարդու անձնական ընտրությանը՝ ընդունել կամ մերժել այդ փրկությունը. այսինքն՝ Աստված Արքայությունից դուրս չի թողնում ոչ ոքի, մարդիկ իրենք են, որ ազատությունն ունեն ներս մտնելու կամ դրսում մնալու: (Եվ եհովական հերետիկոսների ղեկավարները ճիշտ այսպես են վարվում. կամովին մնում են Աստծո Արքայությունից դուրս, և քանի որ սատանայից ոչնչով չեն տարբերվում, աշխատում են դրսում պահել նաև ուրիշների, շարքային խեղճ Վկաների):*

*բ) «Մյուս ոչխարներ» կամ «վիթխարի բազմություն» կոչվածների վերաբերյալ եհովականներն ուսուցանում են. «Այդ մարմնի [=*144.000*ի] ամբողջությունը լրացնելուն բավարար մի փոքրիկ մնացորդ է միայն մնացել երկրի վրա: Հավատարմացյալ անձերի մի անհաշվելի բազմություն, որն այժմ աշխատում է Եհովայի Վկայի որականիշով, անվանվում է իր ”մյուս ոչխարները” կամ ”Հոնադաբ”, որովհետև նախապատկերվել էր Հոնադաբի՝ Հեու թագավորի*

*ընկերոջ անձում (Հովհ* 10, 16; 4*Թագ* 10, 15-28; *Երեմ* 35, 8. 18-19*): Այս անձինք երկինք գնալու չեն սպասում: Սրանց խոստացված է հավիտենական կյանք երկրի վրա, երկրին տիրանալու, երկիրը գեղեցկացնելու և բնակեցնելու առանձնաշնորհությամբ, պայմանով, որ որպես Եհովայի Վկաներ՝ հավատարմության ապացույցներ տան Աստծուն, Արմագեդոնի պատերազմից առաջ» (Sia Dio riconosciuto verace*, 220-221*):*

*Եհովականներն այս ուսմունքը սկսել են ծամել* 1931 *թվականից սկսած, բայց միայն* 1935 *թվականի Մայիսի* 31*ին, Վաշինգտոնի Համաժողովում էր, որ ընդունվեց որպես եհովական ուսմունք և ծանուցվեց ''օծյալներին'': Ուրեմն, եհովականների մոտ ճշմարտությունը որոշողը Աստված Ինքը չէ, ո՛չ էլ Աստվածաշունչը, այլ՝ Ղեկավար Մարմնի խաբեբա անդամների քվեներով է որոշվում ամեն բան: Խելքը գլխին մի մարդ ինչպե՞ս կարող է հետևել եհովական հերետիկոսությանը, ես անձամբ չեմ հասկանում, բայց անշուշտ գիտեմ, որ գլխավոր պատճառը ժողովրդի անտեղյակ լինելն է, որով շատ հեշտ է խաբվում: Հուսամ, որ տվածս լուսաբանումներն ու տեղեկությունները կծառայեն եհովականության տարածման առջևն առնելուն, ինչպես նաև՝ արդեն եհովական դարձածներին Եկեղեցու գիրկը վերադարձնելուն: Ուրեմն, ինչպես երևում է քիչ առաջ մեջբերված եհովական գրությունից, վիթխարի բազմության անդամներն ունեն հետևյալ հատկությունները. չունեն երկինք գնալու հույսը, հավիտենական կյանքը կարող են ունենալ միայն երկրի վրա, եռակի առանձնաշնորհությամբ. տիրանալ, գեղեցկացնել և բնակեցնել Երկիր մոլորակը: Այս ամենը կստանան, եթե հավատարիմ ստրուկները լինեն Բրուքլինի Ղեկավար Մարմնի բանկիրների:*

*Իրենց հրատարակություններում ներկայացնում են գունագեղ հարյուրավոր պատկերներ, իբր թե այդպիսի դրախտային պայմաններ են վայելելու երկրի վրա հավիտենական կյանք ստացած եհովականները և այդ պատկերներով խաբում են մանկամիտ հոգիներին: Ծիծաղով եմ հիշում, թե ինչպես են ներկայացնում որդեծնության հարցը. Արմագեդոնի պատերազմից հետո, որպես առաջին գործ՝ խեղճ եհովականներն ունենալու են պարտված և սպանված թշնամիների դիակները երկրի երեսից հավաքելն ու թաղելը, որպեսզի համաճարակներ չտարածվեն իրենց մեջ ( – ի՞նչ հավիտենական կյանք է դա, եթե տակավին ենթակա է լինելու հիվանդություններին, կամ ի՞նչ է, Եհովան կամ եհովական ''օծյալ''ներն ի զորու չե՞ն վարակների դեմն առնելու – ). ապա սկսելու են զբաղվել հողագործությամբ, շինարարությամբ և այլն: Քանի որ երկրի բնակչությունը բավական նվազած է լինելու, ասում են, եհովականներն ունենալու են որդեծնության հնարավորությունը, այսինքն՝ դեռ որոշ ժամանակով կարողանալու են վայելել սեռային*

*հաճույքը, բայց հետո, երբ եհովականների թիվը հասնելու է երկիրը բնակեցնելու համար հարմար թվին, Եհովան հանկարծակի ամլացնելու է բոլորին (խեղճե՛ր) և դրանից հետո չի լինելու որդեծնությունը ( – քիչ առաջ ասում էին, որ Եհովան ի զորու չէ վարակների դեմն առնելու, այլ՝ իրենք պետք է ափսպված թաղեն թշնամիների դիակները, իսկ հիմա պնդում են, թե ի զորու է բոլորին միասին ու միանգամից ամլացնելու. բավական հակասական պնդումներ են, չե՞ք կարծում – ): Բայց, սիրելիներս, հավիտենական կյանքի այսօրինակ նյութապաշտ (մատերիալիստ) ըմբռնումը ո՛չ միայն առասպելական է, այլ նաև ամբողջովին հակառակ է Հիսուսի ուսուցումներին. «Մոլորվածնե՛ր, ո՛չ Գրքերն եք հասկանում և ո՛չ էլ Աստծո զորությունը, որովհետև հարության ժամանակ ո՛չ կին են առնում և ո՛չ էլ մարդու գնում, այլ լինելու են՝ ինչպես հրեշտակները երկնքում» (*Մատթեոսի Ավետարան 22, 23-33; Մարկոսի Ավետարան 12, 18-27; Ղուկասի Ավետարան 20, 27-40*):*

*Այժմ տեսնենք, թե եհովական ուսուցումը, որի համաձայն՝*144.000 *ընտրյալների և երկրի վրա մնացած ''մյուս ոչխարների'' հավիտենական կյանքի որակը տարբեր է (առաջինները հոգով երկնքում, երկրորդները մարմնով երկրի վրա), ունի՞ արդյոք աստվածաշնչյան հիմքեր: Անմիջապես պատասխանում ենք՝ ո՛չ: Աստվածաշնչում հստակ կերպով ասվում է, որ Աստված բոլոր փրկվածների համար պատրաստել է հավասար վարձատրություն: Փառքի զանազան աստիճանները, որ երբեմն հանդիպում են նաև քրիստոնեական ավանդության մեջ, պարզապես քանակական բնույթ ունեն, երբեք չեն վերաբերվում հատուցման որակին, մինչդեռ եհովականների նշած տարբերությունը ուղղակի որակական է:*

*Այստեղ քննենք օրինակներից միայն մեկը. քանքարների առակը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքի համաձայն, ով ստացել էր հինգ քանքար և շահել էր ուրիշ հինգ քանքար ևս, ստանում է հետևյալ գովասանքն ու վարձատրությունը.* «Շատ լավ, բարի ու հավատարիմ ծառա, քանի որ հավատարիմ եղար քչի մեջ, իշխանություն եմ տալիս քեզ շատի վրա. մասնակից եղիր տիրոջդ ուրախությանը» *(*Մատթեոս 25, 21*): Ամբողջովին նույն պատասխանն է ստանում նաև նա, ով ստացել էր երկու քանքար և շահել էր ուրիշ երկու քանքար ևս.* «Շատ լավ, բարի ու հավատարիմ ծառա, քանի որ հավատարիմ եղար քչի մեջ, իշխանություն եմ տալիս քեզ շատի վրա. մասնակից եղիր տիրոջդ ուրախությանը» *(*Մատթեոս 25, 23*): Մինչդեռ ով ստացել էր միայն մի քանքար, բայց ծուլությամբ գործի չէր դրել, դատապարտվում է հետևյալ կերպ.* «Դատարկապորտ ծառային նետեցեք արտաքին խավարի մեջ. այնտեղ լինելու է լաց և ատամների կրճտում» *(*Մատթեոս 25, 30*): Հավատարիմներն ընդունվում են ներս,*

*անհավատարիմը՝ նետվում է դուրս: Հետևաբար, Աստվածաշնչի համար գոյություն չունեն առաջին կարգի և երկրորդ կարգի վարձատրվածներ, փոքրիկ հոտ և ուրիշ ոչխարներ: Աստծո պարգևած փրկությունը այլուր կամ շաքար չէ, որպեսզի լինի առաջին որակի կամ երկրորդ որակի:*

*Ընթերցողին եմ թողնում Հովհաննեսի* Ավետարանի 10, 14-16 *հատվածի քննությունը. ուշադիր կարդացեք և անձամբ եզրակացրեք, թե արդյոք եհովականների ուսուցումներին նմանվող ինչ-որ մի բան կա՞ այնտեղ: Քրիստոսը՝ միակ Հովիվը, ուղղվելով Իրեն աշակերտածներին, որոնց դեռևս սակավաթիվ լինելու պատճառով անվանում է «փոքրիկ հոտ», վստահեցնում է, որ Իրեն հավատալու են ո՛չ միայն սակավաթիվ մարդիկ Հրեաստանում, այլ՝ անսահմանափակ հոգիներ ամբողջ աշխարհում, այդ օրերում և մինչև աշխարհի վախճանը: Ահա այդ ապագա հավատացյալներին, հատկապես հեթանոսությունից քրիստոնեության դարձի եկող ոչ-հրեաներին է Քրիստոսն անվանում «ուրիշ ոչխարներ», այսպիսով հասկացնելով կուրացած հրեաներին, որ Աստված միայն Իսրայելինը չէ, այլ՝ Արարիչն ու Տերը, Աստվածն է ամբողջ աշխարհի: Ոչ մի ակնարկ չկա* 144.000 *երկնաբնակ փրկվածների և երկրի վրա հավիտենական կյանք ստացող, դիակներ թաղող, հողագործությամբ զբաղվող, նախ որդեծնող, ապա հանկարծակի ամլացող երկրորդ որակի փրկվածների մասին:*

*Բայց եթե նույնիսկ փրկվածների ամբողջությունը բաժանված լիներ երկու մասի, –* 144.000 *հաշվող «փոքրիկ հոտը» և «վիթխարի բազմությունը», – նրանց փառքն ու վարձատրությունը միշտ լինելու էին միևնույնը: Սա հաստատում է Աստվածաշունչը,* Հովհաննեսի Հայտնության *գիրքը: Վիթխարի բազմության հաղթանակը նկարագրվում է այսպես.*

*«Որից հետո հայտնվեց մի վիթխարի բազմություն, որը ոչ ոք չի կարող հաշվել, ամեն ազգությունից, ցեղից, ժողովրդից և լեզվից: Բոլորն էլ կանգնած էին (Աստծո) գահի առաջ և Գառան առաջ, հագած անարատ զգեստներ, և արմավենու ճյուղեր էին կրում իրենց ձեռքերում: Եվ մեծաձայն աղաղակում էին. ''Փրկությունը պատկանում է գահին բազմած մեր Աստծուն և Գառանը'': Այնժամ բոլոր հրեշտակները, որ կանգնած էին գահի չորսբոլորը, և երեցները և կենդանի չորս էակները երեսներն ի վար խոնարհվեցին գահի առաջ և երկրպագեցին Աստծուն, ասելով. ''Ամեն: Գովք, փառք, իմաստություն, երախտիք, պատիվ, զորություն և կարողություն*

*Աստծուն հավիտյանս հավիտենից: Ամեն''» (*Հայտնություն 7, 9-12*):* *Վստահ եմ, որ արդեն նկատեցիք տարբերությունը: Հայտնության գրքի համաձայն, վիթխարի բազմությունը երկնքում է (բոլորն էլ կանգնած էին Աստծո գահի առաջ և Գառան առաջ) և ո՛չ թե երկրի վրա, ինչպես ուսուցանում է եհովական հերետիկոսությունը: Ինչ վերաբերվում է այդ բազմությանը մաս կազմող անձանց, վայելում են Աստծո և Գառան երանացուցիչ փառքը, ունեն անարատ զգեստներ, որը պատկերն է երկնային փառքի, իրենց ձեռքերում կրում են արմավենու ճյուղեր, որը պատկերն է իրենց հաղթանակի: Հետևաբար, վիթխարի բազմության համար երկրի վրա երևակայված եհովական դրախտը հակասում է Աստվածաշնչի ուսուցումներին: Արժե շարունակել Հայտնության գրքի այս հատվածի ընթերցումը, տեսնելու համար, թե ինչպիսին է վիթխարի բազմության անդամների վարձատրությունը.*

*«Եվ նա (երեցներից մեկը) ասաց ինձ. ''Սրանք նրանք են, որ գալիս են մեծ նեղություններից և իրենց զգեստները լվացին ու սպիտակեցրեցին Գառան արյունով: Այդ պատճառով են նրանք կանգնած Աստծո աթոռի առաջ և օր ու գիշեր պաշտում են նրան իր տաճարում: Եվ նա, որ նստում է աթոռի վրա, բնակվում է նրանց մեջ: Ո՛չ քաղց են զգալու, ո՛չ էլ ծարավելու են, և նրանց չի վնասելու ո՛չ արեգակը, ո՛չ էլ տոթը: Եվ Գառը, որ իր աթոռի մեջտեղում է, պիտի հովվի նրանց ու պիտի առաջնորդի նրանց դեպի կյանքի աղբյուրը կենդանի ջրի, որովհետև Աստված նրանց աչքերից սրբեց ամեն արտասուք''» (*Հայտնություն 7, 14-17*):*

*Ինչպես հստակ երևում է, ըստ* Հայտնության *գրքի՝ բոլոր փրկվածները միևնույն աստիճանի վրա են, շարունակ փառաբանում են Աստծուն և Գառանը, ենթակա չեն ներկա կյանքի կարիքներին (ուտելիք, խմելիք, և այլն), և ոչ մի խոսք չկա երկրին տիրելու, թշնամիների դիակները թաղելու, համաճարակներից ազատվելու, առողջապահության, հողագործության, շինարարության, երկիրը գեղեցկացնելու ''առանձնաշնորհությունների'' մասին, էլ չեմ խոսում նախ որդեծնելու և ապա հանկարծակի ամլանալու զառանցանքների մասին:*

*Ուրիշ մի բան ևս, որ կապ ունի այս նյութի հետ. զանազանելու համար* 144.000*ի երկնային բնակությունը և վիթխարի բազմության երկրային հավիտենական կյանքը, առաջինների բնակավայրը եհովականներն անվանում են «երկնքի Արքայություն», իսկ երկրորդներինը՝ «Աստծո Արքայություն», անամոթաբար*

*հաստատելով, թե իբր Աստվածաշնչից են սովորել այս տարբերությունը: Բայց Աստվածաշնչում այս երկու արտահայտություններն ունեն միևնույն իմաստը, նույնանում են միմյանց որպես հոմանիշներ, ինչպես հստակ երևում է հետևյալ հատվածների համեմատությունից.*

| ՄԱՏԹԵՈՍ | ՂՈՒԿԱՍ |
|---|---|
| *Կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չկա. այնուամենայնիվ,* երկնքի արքայության *մեջ ամենափոքրը նրանից ավելի մեծ է* (11, 11)*:* | *Կանանցից ծնվածների մեջ Հովհաննեսից ավելի մեծը չկա. սակայն* Աստծո արքայության *մեջ ամենափոքրը նրանից ավելի մեծ է* (7, 28)*:* |
| *Հարուստը դժվարությամբ կարող է մտնել* երկնքի արքայություն*: Կրկնում եմ ձեզ. ավելի դյուրին է, որ ուղտը ասեղի ծակով անցնի, քան թե հարուստը մտնի* երկնքի արքայություն (19, 23-24)*:* | *Հարստություններ ունեցողների համար քանի՜ս դժվար է մտնել* Աստծո արքայություն*: Ավելի հեշտ է ուղտի համար անցնելը ասեղի ծակով, քան հարուստի համար՝ մտնելը* Աստծո արքայություն (18, 24-25)*:* |
| *Շատեր պիտի գան արևելքից ու արևմուտքից և պիտի ընթրիքի նստեն Աբրահամի, Իսահակի ու Հակոբի հետ* երկնքի արքայությունում, *[...] մինչ արքայության որդիները արտաքսվելու են դեպի արտաքին խավարը* (8, 11-12)*:* | *Այնտեղ կլինի լաց և ատամների կրճտոց, երբ կտեսնեք Աբրահամին, Իսահակին ու Հակոբին և բոլոր մարգարեներին* Աստծո արքայության *մեջ, իսկ ձեզ՝ վտարված դուրս: Գալու են արևելքից ու արևմուտքից, հարավից ու հյուսիսից, և նստելու են ընթրիքի* Աստծո արքայության *մեջ* (13, 28-29)*:* |

*Ինչպես շատ պարզ երևում է, այնտեղ, ուր Ղուկասը խոսում է «Աստծո արքայության» մասին, Մատթեոսը գործածում է «երկնքի արքայություն» արտահայտությունը: Աբրահամը, Իսահակն ու Հակոբը, ինչպես նաև մյուս բոլոր նահապետներն ու մարգարեները սահմանված չեն հավիտենական կյանքը երկրի վրա անցկացնելու, ինչպես լրբությամբ պնդում են եհովականները, այլ՝ նրանցն է «երկնքի*

*արքայությունը»* (Մատթեոս 8, 11*), որն անվանվում է նաև «Ասքծո արքայություն»* (Ղուկաս 13, 28*):*

*գ) Այժմ անդրադառնանք* 144.000 *ընտրյալների հարցին, տեսնելու համար, թե աստվածաշնչյան հատվածին տված եհովական մեկնաբանությունն արդյոք ազնի՞վ է, թե՞ սովորականի համաձայն մի խարդախության է վերաբերվում խոսքը: Ահա ներկայացնում եմ* Հովհաննեսի Հայտնության *գրքի* 7, 49 *հատվածը, որը խնդրո առարկա տեքստն է, փակագծերում նշելով այն բացատրությունը, որ տալիս են եհովականները: Մեր բացատրությունները կներկայացնենք հետո:*

*«Ապա լսեցի նրանց թիվը, ովքեր ստացան կնիքի դրոշմը.* 144.000 *(իրական թիվ) դրոշմվածներ Իսրայելի որդիների յուրաքանչյուր ցեղից (այլաբանական արտահայտություն). Հուդայի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Ռուբենի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Գադի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Ասերի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Նեփթաղիմի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Մանասեի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Սիմեոնի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Ղևիի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Իսաքարի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Զաբուղոնի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Հովսեփի ցեղից* 12.000 *(այլաբանական թիվ) Բենիամինի ցեղից* <u>12.000</u> *(այլաբանական թիվ)* 144.000 *(իրական թիվ):*

*Որից հետո հայտնվեց մի վիթխարի բազմություն, որը ոչ ոք չի կարող հաշվել, ամեն ազգությունից, ցեղից, ժողովրդից և լեզվից: Բոլորն էլ կանգնած էին գահի առաջ և Գառան առաջ [...] »:*

*Ամբողջովին այլաբանական տեքստում, ինչո՞ւ միայն մի թիվ պետք է իրական լինի: Ինչպե՞ս կարող է տասներկու այլաբանական թվերի գումարը լինել իրական թիվ: Կա՛մ ամբողջը պետք է հասկանալ որպես իրական և, հետևաբար, այդ թվում տեսնել* 144.000 *հոգու («*144.000 *դրոշմվածներ Իսրայելի որդիների յուրաքանչյուր ցեղից»), կա՛մ էլ ամբողջը պետք է ընդունել որպես այլաբանական: Եհովականների համաձայն,* 144.000*ը տառացի իմաստով է, մինչդեռ «Իսրայելի որդիների յուրաքանչյուր ցեղից» արտահայտությունը այլաբանական է: Բայց այսպիսով շատ պարզ է, որ եհովականների բացատրության կերպը ամբողջովին քմահաճ է: Այսպես եթե վարվենք, ես էլ կարող եմ հազար ու մի պատմություններ շինել Ռասելի ու իր հետևորդների գլխին: Բայց անձնական արժանապատվությունս և ազնվությունս ինձ չեն թույլատրում զբաղվել սուտ գործերով, ինչը որ սովորական է եհովական հերետիկոսների Բրուքլինի Ղեկավար Մարմնի անդամների համար:*

*դ) Բայց մի պահ ենթադրենք, թե եհովականների մեկնաբանությունը ճիշտ է (թեև այդպես չէ) և թե երկինք մեկնելու «վիզա» ստացել են միայն 144.000 անձինք, որոնց անձնագրերն ու բոլոր փաստաթղթերը կանոնավոր էին: Արդյոք ովքե՞ր են լինելու այդ կատարյալները, որ արժանի են լինելու թագավորելու Քրիստոսի հետ: Դրանց շարքում են Առաքյալներն ու Մարիամը: Իսկ Հովսե՞փը, Մարիամի փեսան և Հիսուսի հայրագիրը: Նա՝ ո՛չ: Նրա առջև երկնքի դռները փակ են: Արժանի չէ իր հարսնացուի և Հիսուսի կողքին կանգնելու, պարզապես որովհետև մահացել է Քրիստոսի փրկարար մահից առաջ: Միևնույն պատճառով նաև Նոյը, Աբրահամը, Հակոբը, Մովսեսը, Եսային, բոլոր նահապետներն ու մարգարեները, Հովհաննես Մկրտիչը, եհովականների համաձայն՝ արժանի չեն մաս կազմելու 144.000 ընտրյալների խմբակին:*

*Ուրեմն, երկինք գնալու համար հարկավոր է մահացած լինել Քրիստոսի մահից հետո:*

*Շատ լավ: Հետևաբար, տրամաբանական պետք է լինի, որ այդ խմբին պատկանեն մարտիրոսները, որոնք իրենց արյունը հեղեցին հավատքի համար, հալածանքների ժամանակ հավատարիմ մնալով Քրիստոսի Ավետարանին: Զարմանալի է, բայց 1975 թվականի Սեպտեմբերի 15ի Դիտարանն իր 575րդ էջում հայտնեց, որ մարտիրոսները նույնպես անարժան են 144.000 ընտրյալների խմբին պատկանելու:*

*Բայց եթե անարժան են Նահապետներն ու Մարգարեները, եթե իրական հավատարիմ քրիստոնյաներ չեն մարտիրոսները, ուրեմն ո՞վ կարող է մաս կազմել այդ խմբին: Դիտարանն առանց երկար բարակ մտածելու հաստատում է, որ 144.000 ընտրյալների խմբին պատկանում են Ռասելը, Ռաթըրֆորդը, Նաթան Քնորը, Ղեկավար Մարմնի անդամները և ուրիշ ոմանք, բոլորն էլ Եհովայի Վկա, և ավելին՝ արական սեռի միայն:*

*Նոյը, Աբրահամը, Մովսեսը, Եսային, Երեմիան, Հովհաննես Մկրտիչը և Քրիստոսի Մարտիրոսները երկրի վրա հողագործությա՜մբ զբաղվելու, մինչ վերապատվելի Ռասել Մեղուզան, խորամանկ աղվես Ռաթըրֆորդը, իրենց հաջորդը՝ ''հռչակավոր մարգարե'' Նաթանը, որն իր նախորդներին անվանում էր «կեղծ մարգարեներ», այն խեղճուկրակ Ֆրանցը և իրենց նմանօրինակ թափթփուկները՝ երկնքում թագավորելո՜ւ Քրիստոսի հետ: Նորալուր տխմարություններ: Ուրիշ ոչինչ:*

# ԳԼՈՒԽ Թ.
# ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Արդեն ասացինք, որ եհովական հերետիկոսների համար Աստվածաշունչը պարզապես գնացքների չվացուցակի պես մի բան է, թեև վերաբերվում է տարիների ու դարերի: Նրանց*

*ամենակարևոր գրքերից մեկի («Ճշմարտությունը ձեզ կազատի») 11րդ գլուխը ողղակի կրրում է «Ժամանակի հաշիվը» վերնագիրը, հաստատելով, որ ժամանակագրական հաշվարկները եհովական ուսմունքի էական մասն են կազմում:*

*Ահա այն հիմնական աղյուսակը, որն եհովականներն ասում են, թե իբր քաղել են Աստվածաշնչից.*

| | | |
|---|---|---|
| *Ք.ա.* | 4026 *թ.* | *Մարդու արարումը* |
| *Ք.ա.* | 2370 *թ.* | *Նոյան ջրհեղեղը* |
| *Ք.ա.* | 1513 *թ.* | *Իսրայելի ելքը Եգիպտոսից* |
| *Ք.ա.* | 607 *թ.* | *Երուսաղեմի կործանումը* |
| *Ք.հ.* | 29 *թ.* | *Հիսուսի մկրտությունը* |
| *Ք.հ.* | 1914 *թ.* | *«Վերջին օրերի» սկիզբը* |
| *Ք.հ.* | 1975 *թ.* | *Մարդու արարումով սկսված* 6.000 *տարիների ավարտը* |

*Այս թվականներից մի քանիսին արդեն անդրադարձանք: Քիչ հետո կքննարկենք նաև մյուսները: Բայց նախևառաջ հիշեցնեմ, որ Աստվածաշնչի նպատակների մեջ չի մտնում ճըշգրրիտ թվականներ հաղորդելը. Սրբազան Հեղինակները լրատվական գործակալությունների աշխատակիցներ չէին: Եկեղեցին միշտ ուսուցանել է, որ Աստվածաշնչի գրքերը վստահությամբ, հավատարմությամբ և առանց սխալների ուսուցանում են ճշմարտությունը, որն Աստված մեր փրկության համար կամեցավ ավանդել Սրբազան Գրությունների միջոցով: Աստված Սուրբ Գրքում խոսում է մեր փրկության համար, և ո՛չ թե՝ որպեսզի ժամանակագրական հաշվարկներով զբաղվենք: Ինչպես գեղեցիկ կերպով ասում է Սուրբ Օգոստինոսը, «մեզ քրիստոնյաներ դարձնելու համար, և ո՛չ թե՝ մաթեմատիկոսներ»: Աստվածաշնչին հարկավոր է մոտենալ՝ փրկության պատգամը ստանալու համար, քարոզիչներ դառնալուց առաջ սեփական վարքը բարենորոգելու, չարիքից՝*

*նախանձից, ատելությունից, ագահությունից և ուրիշ մոլություններից հեռանալու համար, բարին՝ մարդասիրությունը, խոնարհությունը, հույսը և մյուս բոլոր առաքինությունները գործադրելու համար: Աստվածաշնչին ա՛յլ կերպ մոտեցողը կեղծում է նրա պատգամը:*

*Բայց այժմ կտեսնենք, որ գործածելով Աստվածաշնչի հաղորդած տվյալները՝ անհնարին է հասնել ստույգ հաշիվների: Այս քննարկումը ցույց կտա, յուրաքանչյուր խելացի մարդու, որ եհովական վերոնշյալ թվականները միրացածին են և ոչնչով չեն համապատասխանում իրականությանը:*

*ա) Նախաջրհեղեղյան նահապետներից մինչև հետջրհեղեղյանները:*

*Վերցնենք, օրինակի համար,* Ծննդոց գրքի *այն երկու հատվածները, որոնք եհովականները շատ են ''գործածում'', որոնցում ներկայացվում է ջրհեղեղից առաջ (*Ծննդոց 5*) և ջրհեղեղից հետո (*Ծննդոց 11, 10-32*) ապրած նահապետների ծննդաբանությունը:*

*Աստվածաշնչյան գիտություններին քիչ թե շատ տեղյակ յուրաքանչյուր անձ գիտի, որ Սրբազան Գրությունները մեզ հասել են զանազան ավանդություններով. մազորեթների տեքստը (կամ հրեաներինը), սամարացիների տեքստը, Յոթանասնից կոչվող հունարեն հնագույն թարգմանությունը: Այսպիսով, Ադամից մինչև Նոյի մուտքը տապան անցնում են* 1.656 *տարիներ ըստ մազորեթական,* 1.307 *տարիներ ըստ սամարական,* 2.242 *տարիներ ըստ Յոթանասնից թարգմանության տեքստի: Սրանցից ո՞ր մեկին պետք է հետևել:*

*Նույն բանը կրկնվում է հետջրհեղեղյան նահապետների պարագային. Սեմից մինչև Աբրահամի կոչումը (*Ծնդ 12, 4*) անցնում են* 367 *տարիներ ըստ մազորեթական,* 1.017 *տարիներ ըստ սամարական,* 1.147 *տարիներ ըստ Յոթանասնից թարգմանության տեքստի: Կրկին նույն հարցը. ո՞րն է ճշգրիտը:*

*Այն, ինչը որ ամենից ավելի է ապշեցնում երկու ծննդաբանություններում, նահապետների երկարակեցությունն է, որոնցից ոմանք մոտենում են մի հազարամյակի: Արդ, երկարակեցության նմանօրինակ դեպքերի հանդիպում ենք նաև ոչ-աստվածաշնչյան գրականության մեջ, այսպես կոչված «Բաբելոնի թագավորների ցանկ»ում: Այդ ցանկում ներկայացվում են տասը նախաջրհեղեղյան և նույնպես տասը հետջրհեղեղյան թագավորներ: Մի քանի օրինակ այդ ցանկից. Ալուլիմը թագավորում է Էրիդու քաղաքում*28.000 *տարի, Ալագարը՝*36.000 *տարի, իսկ Էմմենլուաննան թագավորում է Բադ Թիբիրա քաղաքում* 43.000 *տարի, և այլն: Իսկույն հասկանում ենք, որ մեր առջև ունենք արտահայտվելու ձևեր, որոնք*

*ապրում են այդ դարաշրջանին և իրենց նպատակը ճշգրիտ թվականներ հաղորդելը չէ: Ենոքը ապրում է* 365 *տարի, այսինքն՝ որքան որ են արևային տարվա օրերը: Կայնանին վերաբերվող բոլոր թվականները ձևացած են* 70*ով. ծնում է* 70 *տարեկան հասակում, ապրում է* 840 *տարի (*70 x 12*), մահանում է* 910 *տարեկան հասակում (*70 x 13*):*

*Անշուշտ առաջանում է հետևյալ հարցը. ինչո՞ւ է* Ծննդոցի *սրբազան հեղինակը գործածել գրական այդ կերպը (ժանրը), ինքը նույնպես գիտակից լինելով, որ ներկայացված թվերը ճշգրիտ չեն: Որովհետև պարզապես կամեցել է լրացնել ժամանակային այն դատարկությունը, որ կար Ադամից մինչև Աբրահամը: Ահա այս պատճառով է մի ծննդաբանությունը տեղադրում Ադամի ու Նոյի միջև (*Ծննդոց 5*), իսկ երկրորդը՝ Նոյի ու Աբրահամի միջև (*Ծննդոց 11*): Բայց այդ ծննդաբանությունները Սրբազան Հեղինակը չի հորինել, այլ՝ գործածել է իր ձեռքի տակ եղած ժողովրդական ավանդույթները: Այսպիսով, դատարկությունը լցվել է: Ծնընդաբանությունների միջոցով, Սրբազան Հեղինակը հայտնում է ամենակարևորը. Ադամին Աստծո կողմից տրված օրհնությունը անցել է Նոյին, ապա՝ Նոյից Աբրահամին: Սրբազան Հեղինակին հետաքրքրում է Աստծո օրհնությունը, Սրբազան Հեղինակը ոչնչով նման չէ եհովականներին, որոնց միակ հետաքրքրությունը իրենց դատարկ ուղեղները տարեթվերով լցնելն է:*

*բ) Աբրահամից մինչև Եգիպտոսից ելքը:*

*Այս ժամանակաշրջանի վերաբերյալ, Աստվածաշունչը համաձայն չէ ինքն իր հետ: Ավանդություններից մեկն ասում է, թե հրեաները Եգիպտոսում մնացին* 400 *տարի: Ավանդություններից մյուսի համաձայն՝* 430 *տարի: Երրորդ ավանդության համաձայն,* 430 *տարիների մեջ մտնում են նահապետների Քանանում և հրեաների Եգիպտոսում պանդխտացած ժամանակամիջոցները: Տեսնենք մեկ առ մեկ:*

400 *տարիների ավանդությունը. «Իմացիր, որ սերունդդ պանդուխտ է լինելու մի երկրում, որ իրենը չէ (=Եգիպտոս): Ենթարկվելու է ստրկության և շահագործվելու է* 400 *տարի» (*Ծննդոց 15, 13; *հմմտ.* Գործք Առաքելոց 7, 6*):*

430 *տարիների ավանդությունը (միայն Եգիպտոսում). «Ժամանակը, որի ընթացքում իսրայելացիները մնացին Եգիպտոսում, եղավ* 430 *տարի»* (Ելից 12, 40*):*

430 *տարիների ավանդությունը (նահապետները Քանանում, իրեաները Եգիպտոսում). «Աբրահամին ու իր սերնդին տրվեցին խոստումները: [...] Արդ, ես ասում եմ. նախապես Աստծո կողմից հաստատված դաշինքը չի կարող ջնջվել մի օրենքով, որը եկել է* 430 *տարի հետո, այսպիսով ջնջելով խոստումը»* (Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 3, 16-17*):*

*Այս վերջինի համաձայն, ուրեմն, Աստծո կողմից Աբրահամին տրված խոստումից* (Ծննդոց 12, 7; 13, 15; *և այլն), այսինքն՝ Քանանում իր բնակություն հաստատելու սկզբից մինչև Սինայի ուխտը* (Ելից 19-24*) անցել է* 430 *տարի:*

*Եթե ներշնչված հեղինակներն ուշադրություն չեն դարձրել այս տարբերություններին և Աստվածաշնչի սրբազան էջերում թողել են դրանք այնպես, ինչպես որ են, սա շատ հստակ փաստ է, որ այդ թվականներին չեն տվել այն կարևորությունը, որ դրանց տալիս է եռովական հերետիկոսությունը:*

*գ) Ելքից մինչև Սողոմոնի Տաճարը:*

*Այս ժամանակամիջոցի վերաբերյալ նույնպես, Աստվածաշնչում կան միմյանց միջև անհամաձայն երկու ավանդություններ:*

*Դրանցից առաջինը* 480 *տարիների ավանդությունն է, որը վկայված է* Թագավորների Երրորդ Գրքի 6, 1 *հատվածում. «Յահվէի Տաճարի կառուցումը սկսվեց Եգիպտոսից իսրայելացիների ելքից* 480 *տարի հետո, Իսրայելի վրա Սողոմոնի թագավորության չորրորդ տարին»:*

*Իսկույն նշենք, որ այս թվականը այլաբանական է, որովհետև ներկայացնում է* 12 *սերունդ, յուրաքանչյուրը* 40 *տարի տևողությամբ* (40 x 12 = 480*):*

*Երկրորդը «*533 + *x տարիներ»ի ավանդությունն է: Այս թիվը ստացվում է՝ միմյանց գումարելով այն թվականները, որոնք հնարավոր է գտնել Աստվածաշնչում, Եգիպտոսից ելքից մինչև Սողոմոնի թագավորության չորրորդ տարին: Այսպիսով ստանում ենք* 533 *տարի, որին հարկավոր է ավելացնել Սավուղի թագավորության տարիները, որոնք ճշտված չեն* (Գործք Առաքելոց 13, 21 *հատվածի համաձայն՝* 40 *տարի), ապա Սամուելի և Հեսուի դատավորության*

*տարիները: Պարզապես պեղեկություն տալու համար նշեմ, որ այստեղ ևս չենք կարող գտնել անսասան վստահություններ, որովհետև օրինակի համար՝* Թագավորների Առաջին Գրքի 4, 18 *հատվածում Էլին ղեկավարում է* 40 *տարի ըստ մազորեթական,* 20 *տարի ըստ Յոթանասնից թարգմանության տեքստի:*

*Արդ ներկայացվածները օրինակներ տալու համար էին միայն: Նմանատիպ քննարկումներ կարելի է կատարել նաև Իսրայելի և Հուդայի թագավորների թագավորության տևողության շուրջ, առանց կասկածների եզրակացնելով, որ անհնարին է այսպիսի հաշվարկներով հասնել* 1914, 1918, 1975 *կամ ա՛յլ եհովական թվականների, որոնցում կատարվել ու կատարվում են շա՜տ հոչակավոր, բայց միշտ անտեսանելի իրադարձություններ:*

*Այժմ հարցնում եմ ինքս ինձ. շարքային Վկաները դոնե դուռ ընկած, իրենց ղեկավարների մարդկային (չասելու համար՝ սատանայական) ուսուցումները տարածելու փոխարեն ավելի լավ չէ՞ր անի, եթե նստեին տանը և Դիտարանի իրենց ունեցած օրինակներն աղբանոց նետելով՝ մի քիչ ավելի լրջությամբ ընթերցեին Աստվածաշունչը (իրականը): Հպարտ ինքնագոհության զգացումների փոխարեն ավելի լավ չէ՞ր անի, եթե իրենց հոգիներում խնամեին մի քիչ խոնարհություն ու ինքնաքննադատական ոգի, որը վայել է յուրաքանչյուր պատվական ազնիվ մարդու:*

֍֍֍

*Ավարտելով սույն աշխատության առաջին մասը, հուսով եմ, որ ընթերցողն իմ հետ հանգեց այն եզրակացությանը, որ Աստվածաշնչի ու մարդկության պատմության վերաբերյալ եհովական ուսուցումները լիովին զուրկ են ճշմարտությունից: Խոստովանելով ասեմ, որ բազում անգամներ ունեցա ձանձրույթի ահավոր զգացումներ և կամենում էի որքան հնարավոր է կարճ կապել: Չխորացրեցի եհովական հերետիկոսների կողմից արյան փոխներարկման արգելման հարցը և մի քանի ուրիշ երկրորդական խնդիրներ, թողնելով յուրաքանչյուր խելացի անձի գնահատմանը: Նաև մտածեցի, որ թերևս յուրաքանչյուր ընթերցող կհարցնի ինքն իրեն. «Այսքան ապախոսություններ բացահայտելուց հետո հիմա՞ր եմ՝ հավատամ եհովական հերետիկոսների խոսքերին: Հիմա՞ր եմ, ընտանիքս, ժողովուրդս, Հայրենիքս, Եկեղեցիս թողած՝ տարածեմ այս խաբեբաների ազդեցությունը»:*

*Կամենում էի նաև այսքանով ավարտել աշխատությունը, բայց Ամենասուրբ Երրորդության օրհնությամբ ու օգնությամբ, ինչպես նաև որպես միակ նպատակ ունենալով սիրելի հայրենակիցներիս զերծ պահելը եհովական ախտից (վարակվածներին ետ կանչելով, վարակվելուն մոտ գտնվողներին պաշտպանելով), անցնում եմ քննելու աստվածաբանական մի քանի կետեր, որոնցում եհովական հերետիկոսությունը հակասում է Աստվածաշնչին ու Քրիստոնեությանը: Վերջում կներկայացնեմ եհովականությունից Քրիստոնեությանը վերադարձած մի քանի անձանց վկայությունները, որոնք որպես օրինակ կարող են ծառայել արդեն եհովական դարձած կամ դառնալ կամեցող հայորդիների համար, օգնելով հավատարիմ մնալ Քրիստոսի Եկեղեցուն և Ճշմարտությանը:*

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ա.
## ԱՍՏՎԱԾ

*Երանի՜ թե եհովական հերետիկոսների սխալները վերաբերվեին միայն մարդկությանն ու պատմությանը, բայց դժբախտաբար՝ սխալները ծնում են ուրիշ սխալներ, հաջորդները նախորդներից ավելի ծանր: Այդպիսիք են նաև Աստծո վերաբերյալ եհովականների ուսուցումները, սխալներ, որոնց պատճառը հիմնականում նրանց տգիտությունն է Աստվածաշնչի մեկնողական գիտությունների ասպարեզում (չասելու համար՝ տգիտությունը բոլոր ասպարեզներում):*

*ա) Աստվածաշնչում, ներշնչված հեղինակների միջոցով, Աստված խոսում է մարդուն, հետևաբար՝ գործածում է մարդկային լեզուն ու բառապաշարը: Ավելին, գործածում է ա՛յդ դարաշրջանի ասելու ձևերն ու արտահայտչական միջոցները: Սա անում է՝ մարդու սահմանափակ իմացականությանը հասկանալի լինելու համար: Սրանում Աստված բացահայտում է Իր անսահման սերն ու գթությունը, որովհետև մեզ դեպի Ինքը բարձրացնելու համար՝ խոնարհվում է մինչև մեր մակարդակը:*

*Այս բաները հաշվի չառնելով և տառացի կերպով հասկանալով Աստվածաշնչի խոսքերը, եհովականները հաստատում են, թե իբր Աստված ունի մարմին, հետևաբար՝ աչքեր, ականջներ և այլն, և ամենուր ներկա չէ: Այս պարագային նույնպես, գտնվում ենք Աստվածաշնչի մասնակի և ո՛չ ամբողջական ծանոթության առաջ: Թողնում եմ, որ Աստվածաշունչն ինքը պատասխանի:*

*«Աստված հոգի է»* (Հովհաննեսի Ավետարան 4, 24*):*

*«Կարո՞ղ է մի մարդ թաքնվել թաքստոցներում, այնպես, որ չտեսնեմ իրեն: Մի՞թե ինձնով լի չեն երկինքն ու երկիրը: Տիրոջ խոսքը»* (Երեմիա 23, 24*):*

*«Դեպի ո՞ւր կարելի է հեռանալ հոգիիցդ, ո՞ւր կարելի է փախչել ներկայությունիցդ [տառացի՝ երեսիցդ]: Եթե բարձրանում եմ երկինք, դու այնտեղ ես: Եթե իջնում եմ մինչև դժոխք, ահա՛ դու: Եթե արշալույսի թևերով սավառնում եմ՝ բնակվելու ծովերից այն կողմ, այնտեղ նույնպես առաջնորդում է ինձ բազուկդ և աջդ բռնում է ինձ»* (Սաղմոս 138, 7-10*):*

*«Իրոք, Նրանում (=Աստծո մեջ) ենք ապրում, շարժվում և գոյություն ունենք»* (Գործք Առաքելոց 17, 28):

*Երբ ասում ենք «Հայր մեր, որ երկնքում ես», չենք սահմանափակում Աստծուն միայն երկնքում, այլ՝ արտահայտվելու այդ ձևով իմաստավորում ենք Աստծո սրբությունը, կատարելությունը, զանազանելու համար Նրան մեր երկրային վիճակից: Յուրաքանչյուր ազնիվ հավատացյալ թող ուշադիր կարդա Աստվածաշունչը. հազարավոր են այն վկայությունները, որ խոսում են Աստծո ամենուրեքության, ամենակարողության, հոգևոր լինելիության մասին: Եհովական հերետիկոսները կարողանում են համոզել ճիշտ այն անձանց, որոնք կա՛մ երբեք չեն կարդացել Աստվածաշունչը, կա՛մ էլ երբեք ուշադիր չեն կարդացել այն:*

*բ) Հարցը, որի վրա այժմ կանգ կառնեմ որոշակի ուշադրությամբ, այն է, որ ըստ եհովականների՝ Աստված ունի հատուկ մի անուն – Եհովա – որը «նրան ծառայում է բազում կեղծ աստվածներից տարբերվելու համար» (La verit∩ che conduce alla vita eterna,* 17.18*): Քիչ հետո մանրամասն կքննենք այս հարցը, բայց անմիջապես ուզում եմ ասել, որ Աստված հարևանիդ ամուսինը չէ, անձնագրի կամ ծննդյան վկայականի կարիք չունի՝ որևէ մեկից տարբերվելու համար: Կա միայն մեկ Աստված, որն Արարիչն է գոյություն ունեցող ամեն ինչի:*

*Իրականում, «Եհովա» անունը ծառայում է Ռաթըրֆորդի հետևորդներին՝ տարբերվելու համար ուրիշներից (ուշադրություն. չեմ ասում Ռասըլի հետևորդներին, այլ՝ Ռաթըրֆորդի, որովհետև ինչպես հիշում եք, այս վերջինը փոխեց սեկտայի անունը): Եվ հետո, իմ կողմից «Եհովա» ասելով չէ, որ Աստված ճանաչում է ինձ իբրև Իր ճշմարիտ երկրպագու, այլ՝ երբ տեսնում է, որ կատարում եմ Իր կամքը:*

*Աստվածաշնչում, երբ խոսվում է Աստծո անվան գաղափարի շուրջ, հասկացվում և մատնանշվում է Աստծո Անձը: Բայց քանի որ Աստծո անձնականությունն ու ինքնությունը անսահմանորեն հարուստ են, Աստվածաշունչը գործածում է զանազան անուններ՝ միևնույն Աստծուն դիմելու համար: Ահա՛ դրանցից գլխավորները (աստվածաշնչյան պարզ կրթություն ստացած անձանց պարզապես հիշեցնեմ, որ այս անունները չեն գտնվում Աստվածաշնչի արդի հրատարակություններում, այլ՝ հին ձեռագրերում: Արդի հրատարակությունները գործածում են կա՛մ Աստված և Տեր տիտղոսները, կա՛մ էլ թարգմանում են եբրայեցերեն անունը և ներկայացնում տվյալ լեզվում գործածվող համազոր եզրը).*

– Էլ, *որ արտահայտում է զորության իմաստը. «Պաշտպանիր ինձ, Աստված (Էլ), Քեզ եմ ապավինում» (*Սաղմոս 16, 1*):*

– Էլոհիմ, *որը քերականորեն նախորդի հարգանք արտահայտող հոգնակին է. «Սկզբում Աստված (Էլոհիմ) ստեղծեց երկինքն ու երկիրը» (*Ծննդոց 1, 1*):*

– Ադոնայ, *որ նշանակում է Տեր. «Տեսա Տիրոջը (Ադոնայ) բարձր ու վերացած գահի վրա բազմած» (*Եսայի 6, 1*):*

– Էլոհահ, *որն արտահայտում է աստվածային էության գաղափարը: Առավել հաճախականությամբ հանդիպում է Հոբի գրքում. «Աստծո (Էլոհահ) շնչով մահանում են» (*Հոբ 4, 9*):*

– Քաննա՛, *որ նշանակում է «Խանդոտ», այսինքն՝ ամբողջական սեր պահանջող (հմմտ.* Ելից 34, 14*):*

– Յահվէ *(կամ՝* Յահվէհ*), որն արտահայտում է գործող և ազդող ներկայության գաղափարը: Քերականորեն, սա մի բայ է, hawah բայի արական սեռի ապառնի երրորդ դեմքն է:*

– Շադդայ, *որն ամենայն հավանականությամբ արտահայտում է ամենակարողության գաղափարը. «Երբ Ամենակարողը (Շադդայ) ցիրուցան էր անում թագավորներին, ձյուն էր տեղում Սաղմոնի վրա» (*Սաղմոս 68, 15*):*

– Էլիոն, *արմատից, որ նշանակում է բարձրանալ, հետևաբար՝ Բարձրյալ. «Երբ Բարձրյալը (Էլիոն) բաժանում էր ժողովուրդներին» (*Երկրորդումն Օրինաց 32, 8*):*

*Հաճախ այս անուններից երկուսը միանում են և ձևացնում են նոր անուններ: Օրինակ,* Էլ Շադդայ, *Ամենակարող Աստված.* Էլ Էլիոն, *Բարձրյալ Աստված:*

*Սրանցից, անկասկած, ամենակարևորն է Յահվէ անունը, որը եհովականները սխալվելով կարդում են Եհովա: Այս անունը Աստված հայտնեց Մովսեսին Սինա լեռան վրա (*Ելից 3, 14-15*): Թեև գործածվում է մեծ հաճախականությամբ, մոտավորապես 6.820 անգամ ամբողջ Հին Կտակարանում (Նոր Կտակարանում լիովին բացակայում է), Յահվէ անունը այնուամենայնիվ միակը չէ, ինչպես տեսանք, որ Հին Կտակարանը գործածում է ճշմարիտ Աստծուն մատնանշելու համար: Բացի սա, այս անվան գործածության հաճախականությունը նույնպես շարունակական չէ. օրինակի համար, Հոբի երկար գրքում հանդիպում է միայն 32 անգամ, իսկ Երգ Երգոցում, Եսթերում և Ժողովողում ամբողջովին բացակայում է:*

*Այս անվան պարտմությունը հետևյալն է. երբ Մովսեսը հարցնում է, թե ի՞նչ է պատասխանելու հրեաներին, եթե հարցնեն իրենց հայրերի Աստծո անունը, Աստված պատասխանում է. «Ես նա եմ, ով եմ»: Ապա ավելացնում է. «Այսպես կասես իսրայելացիներին. ''ԵՍ ԵՄ-ը առաքեց ինձ ձեր մոտ''»* (Ելից 3, 14*): Առաջին բանը, որ նկատում ենք, այս անունը («ԵՍ ԵՄ», եբրայեցերեն՝ Յահվէ) իրականում անուն չէ, իրականում՝ որևիցէ մի անուն տալու մերժում է: Կարծես թե Աստված ասեր. «Շատ մի՛ զբաղվեք ձեզ չվերաբերվող գործերով և մի՛ հանդրգնեք քննել աստվածությունս: Ես նա եմ, ով որ ես եմ: Բավական է ձեզ իմանալը, որ ես եմ ձեր հայրերի՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը»: Բայց եթե այսքանը բավական չէ, շարունակեմ այս ոչ-անուն անվան պատմությունը: Ինչպես որ հայտնի է որոշ կրթություն ստացած անձանց, դասական գրավոր եբրայեցերենը (ո՛չ թե արտասանությունը) զուրկ է ձայնավորներից և գրում է բառի միայն բաղաձայնները: «ԵՍ ԵՄ» ոչ-անուն անունը եբրայեցերենում ներկայացվում է չորս տառերով, որոնք եվրոպական տառերով սրանք են.* YHWH*: Ժամանակի ընթացքում, հրեաները սկսում են հարգանքի համար չարտասանել այս անունը: Երբ Հին Կտակարանի ընթերցման ժամանակ հանդիպում էին սրբազան թեթրագրամմային (աստվածային անունը նշանակող քառատառ նշանին), այն փոխարինում և ընթերցում էին «Ադոնայ», «Տեր» (հունարեն՝ Քիրիոս): Այսպես վարվելով դարեր շարունակ, վերջիվերջո մոռացել են, թե որոնք էին այն ձայնավորները, որոնք հնարավոր էին դարձնում չորս բաղաձայնների արտասանությունը: Ինչպես նաև հիշարժան է, որ Աստծո ոչ-անուն անունը արտասանում էր միայն Քահանայապետը, տարին մեկ անգամ, Քավության տոնի օրը, Տաճարի այն մասում, որ կոչվում էր Սրբություն Սրբոց և ուր միայն ինքը՝ Քահանայապետն էր մտնում տարին մեկ անգամ: Այսինքն, նաև այդ մեկ անգամ, որ արտասանվում էր Աստծո անունը, ոչ ոք չէր լսում, որովհետև բոլորը գտնվում էին դրսում: Երբ զանազան թշնամիների ասպատակությունների հետևանքում Իսրայելի քահանայական ցեղը բնաջնջվում է, այլևս չի մնում ոչ ոք, որ իմանար այդ անվան ճիշտ արտասանությունը: Երբ աքսորից վերադառնալով՝ Մազորեթները ստեղծեցին ձայնավորները և տեղադրեցին դրանք Աստվածաշնչի յուրաքանչյուր բառի տակ, անելանելի վիճակում հայտնվեցին սրբազան թեթրագրամմայի առաջ. ի՞նչ ձայնավորներ պետք է դնեին, երբ* 1000 *տարուց ի վեր ոչ ոք չէր արտասանել աստվածային անունը: Միակ ելքը եղավ այն, որ վերցնելով* EDONAH *(Տեր, ըստ շէվա հնչողության) բառի ձայնավորները՝ մազորեթները միացրեցին դրանք* YHWH *սրբազան թեթրագրամմային, ստանալով* YeHoWaH, *որն էլ ճիշտ «Եհովա» ձևն է: Սա, ուրեմն, հորինված բառ է և երբեք չի կարող համարվել Աստծո կողմից Մովսեսին հայտնված անունը:*

*Բայց ինչպե՞ս, կարող եք հարցնել, կաթոլիկե և բողոքական քրիստոնյաները նույնպես դարեր շարունակ ընդունել ու գործածել են այդ անունը: Պատասխանը շատ պարզ է. որովհետև Եվրոպայում ցրված հրեաներից լսելով, վստահությամբ ընդունել էին որպես ճշգրիտ արտասանություն: Եվ ո՛չ միայն արտասանել են այդ անունը, այլ նաև արձանագրել են եկեղեցիների ճակատներին: Միմիայն աստվածաշնչյան առաջադիմյալ գիտությունները կարողացան փաստել, որ այդ արտասանությունը սխալ է:*

*Սա գիտեն նաև Եհովայի Վկաները: Կարող եմ փաստել: «Աստվածային անունը, որ մընալու է հավետ» (Il nome divino che durerΠ per sempre) իրենց գրքույկի յոթերորդ էջում գրում են. «Բայց ճիշտն ասած, ոչ ոք հաստատ չգիտի, թե սկզբում ինչպես էր արտասանվում Աստծո անունը»: Հետևաբար, չգիտեն նաև իրենք: Ուրեմն ինչո՞ւ են այդքան պնդում այդ անվան գործածության վրա: Ուրիշներից տարբերվելո՞ւ համար: Թե՞ հոգեբանական ճնշումներ բանեցնելու համար այն միամիտ ու պարզ հոգիների վրա, որոնց սարսափեցնում են, թե եթե չգործածեք այս անունը, Աստված չի լսի ձեր աղոթքները: Եվ սակայն, այսօրինակ ուսուցումները ո՛չ միայն չեն կարող փաստվել Աստվածաշնչի օգնությամբ, այլ՝ ուղղակի հակառակ են նրա պատգամին: Եթե իմանայի, թե այդ անունը չգործածելով անհնարին է դառնում հաղորդակցությունը իմ և Արարչիս միջև, ես նույնպես կշտապեի գործածել այն: Բայց Հիսուսի առակներից մեկը ցրում է ամեն վախ ու կասկած. փարիսեցու և մաքսավորի առակը*

*(*Ղուկասի Ավետարան 18, 9-14*): Հաասարակական երկու զանազան դիրքի անձինք մտնում են Տաճար աղոթելու. մեկը փարիսեցի է, մյուսը՝ մաքսավոր: Հիսուսը երկուսի շրթունքներին էլ դընում է միևնույն բառը՝ Արարչին դիմելու համար.* ԱՍՏՎԱԾ *(հունարեն՝* THEÓS*): Երկուսն էլ դիմում են միևնույն անունով, այնուամենայնիվ՝ վերադառնում են մեկն արդարացած, իսկ մյուսը՝ մերժված: Եվ Հիսուսն ուսուցանում է, որ հոգևոր ներքին տրամադրվածությունն ու դիրքորոշումն է (տվյալ դեպքում՝ խոնարհությունը), որ հնարավոր է դարձնում հաղորդակցությունը մեր և Արարչի միջև, և ոչ թե՝ հորինված ինչ-որ մի անվան գործածությունը: Նորից կրկնում եմ. բազում աստվածներ գոյություն չունեն և Աստված ինչ-որ մեկից տարբերվելու կարիք չունի:*

*«Յահվէ» արտասանությունը շատ հավանաբար ճշգրիտն է. բացարձակորեն հաստատ չէ, ամենահավանականն է: Եվ սա գիտի նաև Բրուքլինի Ղեկավար Մարմինը: Կամաց կամաց սկսում է իր հետևորդներին վարժեցնել այս անվանը. Հռոմում կայացած իրենց հավաքներից մեկի ընթացքում, հավաքվածներին բազում անգամներ կրկնել տվեցին «Օրհնեցեք Յահին» արտահայտությունը (Յահը՝ Յահվէի համառոտ ձևն է): Հարցնում եմ ինքս ինձ. արդյոք մոտ*

*ապագայում Եհովայի Վկաները կսկսե՞ն կոչվել Յահվէի Վկաներ: Հնարավոր է: Այսքա՞ն դիմակափոխումներից հետո կրկին փոխել աղանդի անունը՝ զարմանալի չէր լինի, բայց անշուշտ՝ ղեկավարները պետք է շատ զգույշ լինեն այդպիսի պարագային. կարող են նորից կորցնել հարյուր հազարավոր հետևորդներ:*

*Բայց այս բոլոր պատմությունները վերաբերվում են Հին Կտակարանին: Նոր Կտակարանի քննական հրատարակումներից ոչ մեկը, որոնցից եհովականներն ասում են, թե իբր օգտըվել են իրենց ''թարգմանությունների'' ժամանակ (Westcott-Hort, Nestle, Bover, Merk), չի պարունակում Յահվէ (կամ Եհովա) անունը: Նոր Կտակարանում, որը Հնի լրումն է, միակ արամայերեն անունը, որ տրվում է Աստծուն, «Աբբա»ն է, որ նշանակում է «Հայր».*

*«Եվ [Հիսուսն] ասում էր. ''Աբբա, Հայր, ամեն բան հնարավոր է քեզ''» (*Մարկոսի Ավետարան 14, 36*):*

*«Իսկ որ դուք որդիներ եք, փաստն այն է, որ Աստված ձեր սրտերից ներս առաքեց Իր Որդու Հոգին, որն աղաղակում է. ''Աբբա, Հայր''» (*Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 4, 6*):*

*«Ստացել եք որդեգրության Հոգին, որի միջոցով աղաղակում ենք. ''Աբբա, Հայր''» (*Պողոս Առաքյալի Նամակը Հռոմեացիներին 8, 15*):*

*Նոր Կտակարանը կարևորության միևնույն մակարդակի վրա է դնում «Յահվէ», «Հայր» և «Հիսուս» անունները: Եհովական հերետիկոսները վկայում են հորինված մի անվան, մինչ քրիստոնյաներս մեր Տիրոջ կողմից, Իր Համբարձման հանդիսավոր պահին, ստացել ենք ահա ա՛յս պատվերը. «Երբ Սուրբ Հոգին կիջնի ձեր վրա, զորություն կառնեք և* իմ վկաները *կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը» (*Գործք Առաքելոց 1, 8*): Քրիստոսի Անվանն է, որ պարտավոր ենք վկայել, որովհետև «ուրիշ ոչ մեկում չկա փրկություն: Երկնքի տակ մարդկանց տրված ուրիշ անուն չկա, որում հաստատված լինի, թե կարող ենք փրկվել» (*Գործք Առաքելոց 4, 12*):*

*Այդ միակ անունը՝ քաղցր անունն է Հիսուսի, որի շուրջ* Գործք Առաքելոցի 3-5 *գլուխները ներկայացնում են կարևոր աստվածաբանություն: Թող որ Աստծուն անկեղծ սրտով հավատացողները անդադար հիշեն այս խոսքը և իրենց հավատքի կյանքը կառուցեն Հիսուսի հիմքի վրա, որովհետև մյուս բոլորը, նաև Եհովայի Վկաների առաջարկածը, խարխուլ հիմքեր են:*

## ԳԼՈՒԽ Բ.
## ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

*Հավատքը, որ Նոր Կտակարանը ներկայացնում է մեզ, հաստատում է, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված է, որովհետև մասնակցում է աստվածային մեկ միակ բնությանը՝ Հոր և Սուրբ Հոգու հետ. Հիսուս Քրիստոսը նաև ճշմարիտ մարդ է, որովհետև մարդեղությամբ՝ վերցրեց մարդկային մեր բնությունը: Եհովական հերետիկոսությունը համառորեն մերժում է այս երկու հիմնական ճշմարտությունները, ինչպես նաև ուրիշներ, որ վերաբերվում են Հիսուս Քրիստոսի ճշմարիտ անձնականությանը: Եվ սա, իրենց սովորության համաձայն, կատարում են խարդախություններով, այսինքն՝ Հիսուսի աստվածությունը մերժելու համար մեջբերում են աստվածաշնչյան այն հատվածները, որոնցում խոսվում է Հիսուսի մասին որպես Իսրայելի կողմից սպասված Մեսիայի (որպես ազատարար թագավորի), կամ էլ՝ աղավաղում ու կեղծում են Աստվածաշնչի այն տողերը, որոնցում հստակ խոսվում է Հիսուսի աստվածային հեղինակության մասին:*

*ա) Նախևառաջ քննենք եհովականների կողմից Հիսուսի մարդեղության մերժման հարցը: Իրենց հրապարակություններում հաստատում են, թե «տեղի չի ունեցել ոչ մի մարդեղություն» (Vita eterna nella libertà dei figli di Dio*, 75; *Accertatevi*, 208*):*

*Բայց բավական է կարդալ* Հովհաննեսի Ավետարանի *առաջին իսկ տողերը, համոզվելու համար, որ եհովականությունն իրավացի չէ. «Եվ Բանը*[2] *մարմին եղավ և բնակվեց մեր մեջ. և մենք տեսանք նրա փառքը [...] լի շնորհով ու ճշմարտությամբ»* (Հովհաննեսի Ավետարան 1, 14*): Հովհաննես Առաքյալի «մարմին եղավ» արտահայտությունից է առաջ եկել Մարդեղություն կամ Մարմնացում եզրը (իրոք, քրիստոնյաներս Հավատամքում դավանում ենք, որ Որդին Աստված «մարմնացավ և մարդացավ»): Դատաստանի օրը, ինքը Հովհաննես*

---

*[2] Գրաբարյան «բան» եզրը (հունարեն՝ լոգոս), որ սովորաբար թարգմանվում է որպես «խոսք», բայց կարող է նշանակել նաև «միտք», «իմաստ», բան-ականության, բան-ավորության արմատն է, որով մատնանշվում է գոյություն ունեցող ամեն ինչի գոյութենական իմաստը և հակառակվում է անիմաստությանը, ան-բան-ությանը, ան-բան-ականությանը: Հատկանշական է, որ հայերենում գոյություն ունեցող ամեն ինչ մատնացույց է արվում որպես «մի բան», այսինքն՝ իր մեջ բանականություն պարունակող միավոր: Գրվելով մեծատառով, «Բան» («Լոգոս»), հասկանում ենք Աստվածային Միտքը, Իմաստությունը, Խոսքը (Ամենասուրբ Երրորդության երկրորդ Անձը՝ Որդին), որը ստեղծված որևէ բանականության արմատն ու աղբյուրն է, որից կտրվելու, հեռանալու դեպքում ամեն բան դառնում է անբան, իմաստազուրկ, հակասական, անտրամա-բան-ական:*

*Առաքյալն է դարձելու եհովական հերետիկոսներին այս հարցում. «Բազում մոլորեցնողներ են հայտնվել աշխարհում. ով որ չի խոստովանում Հիսուս Քրիստոսին՝ եկած մարմնով, նա մոլորեցնող է և Նեռ» (*Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Երկրորդ Նամակը 7; *հմմտ.* Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 4, 2*):*

*բ) Եհովական այս սկզբնական սխալից ծնվում է հետևյալը. եթե տեղի չի ունեցել իրական մարդեղություն, Հիսուսը հարություն չի առել իրական մարմնով, այլ՝ Իր երևումների համար Հիսուսը «նյութավորվել է ինչ-որ մի մարմնում»* (*Il millenario regno di Dio*, 69), *որովհետև «Աստված ոչնչացրեց Հիսուսի մարմինը» (Potete vivere per sempre*, 144*): Համառոտ քննենք աստվածաշնչյան մի քանի հատվածներ, որոնցից հստակ երևում է, որ Հիսուսը հարություն է առել Իր իսկ մարմնով, որով որ ապրել էր ծննդյան օրից ի վեր, անշուշտ այն միակ տարբերությամբ, որ հարություն առած Իր մարմինն այլևս փառավորված էր:*

*Հիսուսի մարմինը գերեզմանում փնտրող կանանց հրեշտակը պատասխանում է. «Դուք փնտրում եք Հիսուսին, Նազովրեցուն, խաչյալին: Հարություն առավ, այստեղ չէ» (*Մարկոսի Ավետարան 16, 6; *հմմտ.* Մատթեոսի Ավետարան 28, 5-6*): Հիսուսն Ինքը դիմում է աշակերտներին այս խոսքերով. «Ինչո՞ւ եք խռովված և ինչո՞ւ եք կասկածում ձեր սրտերում: Նայեցեք ձեռքերիս ու ոտքերիս.* ճիշտ ես եմ*: Շոշափեցեք ինձ և տեսեք. հոգին մարմին և ոսկոր չունի, ինչպես տեսնում եք, որ ես ունեմ» (*Ղուկասի Ավետարան 24, 38-39; *հմմտ.* Հովհաննեսի Ավետարան 20, 1923*): Հիսուսի իրական հարության հետևանքում Առաքյալների սիրտը լցվել էր ուրախությամբ, այնպես, որ բացականչում էին. «Տերն իրո՛ք* (հունարեն՝ òntôs) *հարություն է առել» (*Ղուկասի Ավետարան 24, 34*):*

*Եհովականները կեղծում են* Պետրոս Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակի 3, 18-19 *հատվածի իմաստը և իրենց կույր հետևորդներին համոզում են, որ այդ միակ հատվածն է Հիսուսի հարության վերաբերյալ ճշմարտությունը սովորեցնողը. «Մարմնով մահվան ենթարկվելով, կենդանի մնաց հոգով և հոգով գնաց փրկությունն ավետելու այն հոգիներին, որ սպասում էին բանտում»: Ուրեմն, պատճառաբանում են, «կենդանի մնաց հոգով» նշանակում է կենդանի չմնաց մարմնով: Բայց այս բացատրությունն ամբողջովին հակասում է տեքստի իմաստին: Պետրոս Առաքյալն իրականում խոսում է այն երեք օրերի մասին, որոնք Հիսուսը անցկացրեց գերեզմանում: Մարմնով մահանալով, ասում է Առաքյալը, Հիսուսը չոչնչացավ, այլ՝ մնաց հոգով կենդանի և գնաց փրկությունն ավետարանելու բանտարկյալ հոգիներին: Այս իրականությունը*

*քրիստոնյա Ավանդությունն ու աստվածաբանությունն անվանում են «Քրիստոսի էջքը դժոխք»: Նախ ընթերցողի ուշադրությունը հրավիրեմ այն փաստի վրա, որ «հոգով գնաց փրկությունն ավետելու» արտահայտությունը հունարեն բնագրում ներկայանում է որպես «այդ ժամանակ», «այդ առիթով» (en hԻ kՌi): Այսինքն, ըստ Առաքյալի, այն ժամանակ կամ այն օրերի ընթացքում, որ Հիսուսը մնաց հոգով կենդանի, թեև մարմնով ենթարկվել էր մահվան, գնաց փրկությունն ավետելու այն հոգիներին, կամ ավելի ճիշտը՝ այն արդար հոգիներին, որոնք Իրենից առաջ մահացած լինելով՝ չէին կարողացել մուտք գործել Աստծո երկնային արքայություն, այլ՝ բանտարկված սպասում էին Մեսիային, խոստացված Փրկչին: Հիսուսը, այն երեք օրերի ընթացքում, որ մնաց գերեզմանում, ուր Նրա մարմինը «չտեսավ ապականություն»* (Սաղմոս 15, 10; Գործք Առաքելոց 2, 27.31; 13, 33-41*), այսինքն՝ չփտեց (այսպիսով հերքելով եհովականների ուսուցումը, թե իբր Աստված ոչնչացրեց կամ անհետացրեց Հիսուսի մարմինը), սպասումից ազատեց Հին Կտակարանի արդարներին և նրանց առաջ բացեց երկնքի դռները: Այս գործը կատարելուց հետո է, որ Հիսուսը հարություն առավ: Հետևաբար, եհովականների հերթական կեղծիքն այն է, որ հարությունից առաջ կատարվածը ներկայացնում են որպես նաև հարությունից հետո տևող իրականություն, ինչը որ հակասում է Աստվածաշնչին:*

*Ուրիշ մի բան ևս. եհովականները կամովին շփոթում են «հարությունը» և «վերակենդանացումը»: «Վերակենդանացումն» այն է, երբ մի ննջեցյալ աստվածային հատուկ միջամտությամբ վերադառնում է կյանքի, բայց հետո, մի օր, կրկին մահանալու է: Այդպիսին էր պարագան Ղազարոսի, Հայրոսի աղջկա, Նայինի այրի կնոջ որդու, որոնց Հիսուսը վերակենդանացրեց («հարություն» տվեց), փաստելով Իր աստվածային հեղինակությունն ու իշխանությունը կյանքի ու մահվան վրա: Մինչ բուն «հարություն» ասվածն այն է, երբ կյանքին վերադարձողը չի մահանում այլևս երբեք և իր մարմինը ստանում է նոր ու փառավոր հատկություններ (օրինակ, ենթակա չէ ժամանակի ու տարածքի սահմանափակումներին, հիվանդություններին ու ծերությանը, տաքի ու ցրտի ազդեցություններին, քաղցին ու ծարավին, և այլն): Այս զանազանությունից հետևում է, որ մատնանշելու համար մարդկային անձի բնական վիճակը և փառավորյալ վիճակը հարությունից հետո, Աստվածաշունչը հաճախ առաջինն անվանում է «մարմնավոր կյանք» կամ պարզապես «մարմին», իսկ երկրորդն անվանում է «հոգևոր կյանք» կամ պարզապես «հոգի»: Այս իմաստով պետք է հասկանանք* Պողոս Առաքյալի Կորնթացիներին ուղղված Առաջին Նամակի 15, 50 *հատվածը, որը շարունակ եհովականների բերանում է, բայց ինչպես միշտ՝ կղզիացած իր պարքերությունից: Հարության վերաբերյալ շատ*

*կարևոր հարված է սա, այս իսկ պատճառով կամենում եմ քննել այն ձեր հետ միասին:*

Կորնթացիներին ուղղված իր Առաջին Նամակի 15*րդ գլխի առաջին տողերում իսկ, Պողոս Առաքյալը զգուշացնում է քրիստոնյաներին՝ ամուր պահել այն խոսքերը, որոնք ինքը նրանց քարոզել էր մեռելների հարության մասին, ասելով, որ այդ հավատքի մեջ է փրկությունը (*Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 15, 14*): Այսինքն՝ Առաքյալն ինքը գիտակից էր, որ լինելու էին և իր ժամանակ արդեն կային որոշ խաբեբաներ ու մոլորեցնողներ, որոնք փորձում էին հերքել Քրիստոսի հարությունը, այդպիսով ցանկանալով քանդել քրիստոնեության հիմքերը: Ապա շարունակում է և բացատրում, թե ինչպես են հարություն առնելու հավատացյալները: Թեև մի քիչ երկար է, բայց մեջբերում եմ ամբողջ հատվածը. «Բայց մեկը կասի՝ ինչպե՞ս են հարություն առնում մեռելները. կամ՝ ի՞նչ մարմնով են գալու: Անմիտ, ինչ որ դու սերմանում ես, չի կենդանանա, եթե չմեռնի: Եվ ինչ որ սերմանում ես, սերմանվածը այն նույն մարմինը չէ, որ ծնվելու է, այլ մի մերկ հատիկ, լինի ցորենի, թե ա՛յլ սերմերի: Եվ Աստված նրան մարմին է տալիս, ինչպես որ կամենում է. և սերմերից յուրաքանչյուրին՝ իր մարմինը: Ամեն մարմին նույն մարմինը չէ. ա՛յլ է մարմինը մարդկանց և ա՛յլ է մարմինը անասունների, ա՛յլ է մարմինը թռչունների և ա՛յլ է մարմինը ձկների: Կան նաև երկնային մարմիններ և երկրային մարմիններ, բայց ա՛յլ է փառքը երկնայինների և ա՛յլ է փառքը երկրայինների. ա՛յլ է փառքը արեգակի, ա՛յլ է փառքը լուսնի և ա՛յլ է փառքն աստղերի. և մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ: Այսպես է նաև մեռելների հարությունը. սերմանվում է ապականությամբ և հարություն է առնում առանց ապականության. սերմանվում է անարգությամբ և հարություն է առնում փառքով. սերմանվում է տկարությամբ և հարություն է առնում զորությամբ. սերմանվում է շնչավոր մարմին և հարություն է առնում հոգևոր մարմին: Եթե կա շնչավոր մարմին, կա նաև հոգևոր մարմին: [...] Եվ ինչպես որ կրեցինք հողեղենի պատկերը, նույնպես և կրելու ենք երկնավորի պատկերը: Բայց այս եմ ասում ձեզ, եղբայրներ, որ մարմին և արյուն Աստծո թագավորությունը ժառանգել չեն կարող, ո՛չ էլ ապականությունը ժառանգում է անապականություն: Արդ, մի խորհուրդ եմ ձեզ հայտնում. բոլորս [...] նորոգվելու ենք հանկարծակի, մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանի որ փողը հնչելու է և մեռելները հարություն են առնելու առանց ապականության, և մենք նորոգվելու ենք, որովհետև պետք է, որ այս ապականացու մարմինը կրի անապականություն, և այս մահկանացու գոյությունը հագնի*

*անմահություն»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 15, 35-44.49-53*):*

*Կարծեմ այլևս հստակ է, որ Պողոս Առաքյալը չի ասում, թե մարմինը չի մտնելու Երկնքի Արքայություն, այլ՝ ապականացո՛ւ մարմինը: Եվ այս իրական հարության ճշմարտությունը հիմնված է Քրիստոսի իրական հարության ճշմարտության վրա: Մեջբերում եմ Պողոս Առաքյալի խոսքերից մեկ ուրիշը և սրանով վերջացնում եմ այս նյութի շուրջ խոսելը, վստահ, որ յուրաքանչյուր խելացի անձ համոզվեց եհովական ուսուցումների կեղծ լինելուն: «Մեր հայրենիքը, մինչդեռ, երկնքում է, և այնտեղից ենք որպես փրկիչ սպասում Տեր Հիսուս Քրիստոսին, որը փոխակերպելու է մեր թշվառ մարմինները՝ կերպարանակից դարձնելու համար Իր փառավորյալ մարմնին, շնորհիվ այն իշխանության, որ ունի՝ Իրեն ենթարկելու գոյություն ունեցող ամեն բան»* (Պողոս Առաքյալի Նամակը Փիլիպեցիներին 3, 20-21*):*

*գ) Հիսուսի իրական Մարդեղությունն ու իրական Հարությունը մերժելուց բացի, եհովականությունն ուսուցանում է, թե իբր Հիսուսը Աստված չէ: Սա անում է զանազան հաստատումներով, որոնք համառոտ կքննարկենք այժմ:*

*Եհովականությունը նախևառաջ ուսուցանում է, թե իբր Աստված բոլորից առաջ ստեղծել է Հիսուս Քրիստոսին, ապա Հիսուսի միջոցով ստեղծել է աշխարհը: Բայց սա չի համապատասխանում իրականությանը, չի համապատասխանում Աստվածաշնչի իսկական ուսուցումներին:* Հովհաննեսի Հայտնության *գիրքը հաստատում է. «Ահա ես գալիս եմ շուտով և բերում եմ իմ հետ վարձատրությունը, յուրաքանչյուրին հատուցելու համար ըստ իր գործերի: Ես եմ Ալֆան և Օմեղան, Առաջինն ու Վերջինը, սկիզբն ու վերջը»* (Հովհաննեսի Հայտնություն 22, 1213; *հմմտ.* 1, 17; 2, 8*): «Ալֆա»ն և «Օմեղա»ն հունարեն այբուբենի առաջին և վերջին տառերն են, ինչպես «Այբ»ը և «Քէ»ն հայերենի համար: Ալֆա-Օմեղա, Առաջին-Վերջին, սկիզբ-վերջ հակադիր եզրերով Հովհաննես Առաքյալն արտահայտում է Հիսուս Քրիստոսի գոյության և գործունեության հավիտենականությունը: Եվ ինչը որ ամենակարևորն է, այս հակադիր արտահայտությունները գործածվում են նաև Հայր Աստծո համար (*Հովհաննեսի Հայտնություն 1, 8; *հմմտ.* Եսայի 41, 4; 44, 6*): Այսպիսով, Հիսուսը ներկայանում է ժամանակի և ստեղծված աշխարհի սահմաններից դուրս և հավասար՝ Հորը:*

*Եհովականներն ընդդիմադրում են, մեջբերելով* Հովհաննեսի Ավետարանի 1, 3 *հատվածը, ուր գրված է. «Ամեն բան ստեղծվեց նրա միջոցով»: Բայց այս արտահայտությունը չի նշանակում, թե Հիսուսը*

*մի գործիք էր Հայր Աստծո ձեռքերում, ինչպես բահն ու բրիչն են ծառայում հողագործին, կամ մուրճն ու սղոցը՝ շինարարին: Ճիշտ հակառակը, «նրա միջոցով ստեղծվեց ամեն բան» արտահայտությունը ցույց է տալիս, որ արարչագործության մեջ Հիսուսի դերը համահավասար է Հոր ունեցած դերին: Աստվածաշնչյան ուրիշ հատվածներում, «նրա միջոցով» արտահայտությունը գործածվում է Հայր Աստծո վերաբերյալ (օրինակ,* Պողոս Առաքյալի Նամակը Հռոմեացիներին 11, 36; Պողոս Առաքյալի Նամակը Եբրայեցիներին 2, 10*): Ապա, միշտ կեղծելով իրական իմաստը, եհովականները մեջբերում են* Հովհաննեսի Հայտնության *գրքի* 3, 14 *հատվածը, ուր գրված է. «Լաոդիկիայի Եկեղեցու հրեշտակին գրիր. Այսպես է ասում Ամենը, հավատարիմ ու ճշմարտախոս Վկան, Աստծո արարչագործության Սկիզբը»: Բայց այստեղ նույնպես, «Սկիզբ» բառը չի նշանակում «սկզբնավորված», այլ ճիշտ հակառակը՝ «Սկզբնավորող»: Նույն «Սկիզբ» բառը, նույն* Հայտնության *գրքի* 21, 6 *հատվածում գործածվում է Հայր Աստծո վերաբերյալ, այսպիսով հաստատելով, որ այդ եզրը չպետք է հասկանալ կրավորական (պասսիվ), այլ՝ ներգործական (ակտիվ) իմաստով:*

*Կարող եք հարցնել, որ եթե ըստ եհովականության Հիսուսը Աստված չէ, ուրեմն ո՞վ է: Եհովական ցնորամտություններից մեկն էլ հենց սա է, որ ներկայացնում են Հիսուսին որպես Միքայել հրեշտակապետը: Այս սատանայական հանդգնությանը թողնում եմ, որ պատասխանի Պողոս Առաքյալը. «Աստված [...] այս վերջին օրերին մեր հետ խոսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամեն ինչի, և որի միջոցով ստեղծեց տիեզերքը: [...] Նա (=Որդին) այնքան գերազանց եղավ հրեշտակներից, որ նրանցից շատ ավելի անուն ժառանգեց: Արդարև, հրեշտակներից ո՞ր մեկին երբևէ ասաց. ”Դու իմ Որդին ես և ես այսօր ծնեցի քեզ”: Եվ դարձյալ. ”Ես նրան Հայր կլինեմ, իսկ նա ինձ Որդի կլինի”: Եվ դարձյալ, երբ Անդրանիկին (=Իր Ժառանգին) աշխարհ է մտցնում, ասում է. ”Թող երկրպագեն նրան Աստծո բոլոր հրեշտակները”: Մինչ հրեշտակների մասին ասում է. ”Նա իր հրեշտակներին հոգիներ դարձրեց և իր ծառաներին՝ կրակի բոց”, Որդու մասին ասում է. ”Ո՜վ Աստված, քո աթոռը հավիտյանս հավիտենից է. քո արքայության գավազանը՝ ուղղության գավազան է: Դու սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրենությունը. դրա համար, ո՜վ Աստված, քո Աստվածը օծեց քեզ ուրախության յուղով, ավելի՝ քան քո ընկերներին”: Նաև. ”Դու, Տեր, սկզբից երկիրը հիմնեցիր և քո ձեռքերի գործն են երկինքները: Նրանք կորստյան պիտի մատնվեն, բայց դու կաս և մնում ես: Բոլորը մաշվելու են որպես ձորձեր և որպես վերարկու. ոլորելու ես դրանք հագուստի պես և ոլորվելու են: Բայց դու*

*միշտ նույնն ես և քո տարիները չեն պակասելու": Ո՞ր մի հրեշտակին երբևէ ասաց. "Նստիր իմ աջ կողմում, մինչև որ թշնամիներըդ ոտքերիդ տակ պատվանդան դարձնեմ": Չէ՞ որ բոլոր հրեշտակներն էլ ծառայող հոգիներ են, որ ուղարկվում են ի սպասավորություն նրանց, որոնք ժառանգելու են փրկությունը: [...] Քանի որ հրեշտակներին չէ, որ հնազանդեցրեց գալիք աշխարհը, որի մասին մենք խոսում ենք: Բայց տեսնում ենք փառքով ու պատվով պսակված Հիսուսին»* (Պողոս Առաքյալի Նամակը Եբրայեցիներին 1, 1-2.4-14; 2, 5.9*):*

*Կարծում եմ արդեն հստակ նկատեցիք այն հակադրությունը, որ Պողոս Առաքյալը դընում է Հիսուսի և բոլո՛ր հրեշտակների միջև: Ասում է. «Թող երկրպագեն նրան (=Հիսուսին) Աստծո բոլոր հրեշտակները»: Եթե Հիսուսը իրենցից մեկը լիներ, նույնիսկ իրենցից առաջինը, եթե երկրպագեին նրան, հրեշտակները կմեղանչեին կռապաշտությամբ, բայց արդ տեսնում ենք, որ բոլոր հրեշտակներին հրամայվում է երկրպագել Հիսուսին, որովհետև Հիսուսը նրանց Արարիչն է և Աստվածը:*

*դ) Այժմ հրավիրում եմ ընթերցողին իմ հետ միասին քննելու աստվածաշնչյան մի քանի հատվածներ, որոնցից պարզորոշ հետևում են երկու ճշմարտություններ.* 1) *Հիսուսը Աստծո Որդին է, բայց ո՛չ թե ինչպես մենք (մենք որդեգրված ենք, Ինքը՝ Որդին է ըստ բնության, ծնված է Հորից).* 2) *Հիսուսն ունի աստվածային հեղինակությունը: Եհովական հերետիկոսության ղեկավարները անազնիվ են գտնվում, երբ այս ճշմարտությունները հերքելու համար մեջբերում են միշտ կղզիացած այն հատվածները, որոնք վերաբերվում են Հիսուսին որպես մարդ, Մեսիա, Փրկիչ, ինչպես ասացի սկզբում. կամ էլ, ինչը որ ամենասարր իրականությունն է եհովականության մեջ, իրենց "թարգմանություններում" աղավաղում ու կեղծում են Աստվածաշնչի բովանդակությունը:*

*Նախևառաջ ասեմ, որ «Աստծո որդի» արտահայտությունը Աստվածաշնչում ունի զանազան իմաստներ: «Աստծո որդի» տիտղոսը տրվում է Իսրայելին* (Ելից 4, 22; Ովսեե 11, 1*), հրեշտակներին* (Սաղմոս 29, 1; 89, 7*), դատավորներին* (Սաղմոս 82, 6*), թագավորին* (Թագավորների Երկրորդ Գիրք 7, 14*), որոշ անհատների* (Երկրորդումն Օրինաց 14, 1*): Բայց երբ գործածվում է Հիսուսի վերաբերյալ, այս արտահայտությունը ստանում է ամբողջովին յուրահատուկ իմաստ: Սրա փաստն է այն հակազդեցությունը, որ Հիսուսի հանդեպ ցուցաբերում էին հրեաները, որոնք կամենում էին սպանել նրան, որովհետև «Աստծուն անվանում էր իր Հայրը, և իրեն հավասար էր դարձնում Աստծուն»* (Հովհաննես 5, 18*): Հետևաբար, Հիսուսին ունկնդրողներն ըմբռնում էին, որ Հիսուսն Ինքն Իր մասին խոսելիս՝*

*«Աստծո Որդի» արտահայտությունը չէր գործածում այն իմաստներից որևէ մեկով, որոնք տեսանք քիչ առաջ: Ահա մի ա՛յլ հատված Հովհաննեսի Ավետարանից. «Պատասխանեցին նրան հրեաները. ՚՚Չենք քարկոծում քեզ բարի գործերի համար, այլ՝ որովհետև հայհոյում ես և որովհետև դու, որ մարդ ես, ներկայացնում ես քեզ որպես Աստված՚՚»* (Հովհաննես 10, 33)*: Մեր որդեգրության և Հիսուսի բուն բնության Աստծո Որդի լինելու միջև տարբերությունը Նոր Կտակարանում ընդգծվում է «Միածին» տիտղոսով, որը նշանակում է միակ որդի. «Եվ մենք տեսանք նրա փառքը, փառքը՝ որպես Հոր Միածնի, լի՝ շնորհով և ճշմարտությամբ»* (Հովհաննես 1, 14)*. «Աստծուն ոչ ոք երբևէ չի տեսել. Միածին Որդին, որ Հոր ծոցում է, նա հայտնեց»* (Հովհաննես 1, 18; *հմմտ.* 3, 16-18; Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 4, 9)*: Հետևաբար, Հիսուսը գերազանց և յուրահատուկ կերպով «Հոր Որդին» է* (Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Երկրորդ Նամակը 3)*: Այս եզակի արտահայտությունը, «Հոր Միածին», մաս է կազմում քրիստոնեական Հավատամքին, որի արտասանության ժամանակ մենք՝ որդեգրվածներս դավանում ենք Հիսուսին որպես «Աստծո Որդի» և «Որդի Աստված»:*

*Երկրորդ ճշմարտությունը, որին նախապես ակնարկեցի, այն է, որ Հիսուսն ունի աստվածային հեղինակությունը: Նախևառաջ գտնում ենք մեզ Հիսուսի այս աստվածային հեղինակության առաջ, երբ լսում ենք Տասնաբանյայի շուրջ տրված նրա բացատրությունները. «Լսեցիք, թե ինչ ասվեց նախնիներին. Մի՛ սպանիր* (Ելից 20, 13) *[…] : Իսկ ես ձեզ ասում եմ […] »* (Մատթեոս 5, 21-22)*. «Լսեցիք, թե ինչ ասվեց. Մի՛ շնացիր* (Ելից 20, 14) *[…] : Իսկ ես ձեզ ասում եմ […] »* (Մատթեոս 5, 27)*: Թող ընթերցողն ինքը ինքնուրույն կարդա ամբողջ հատվածը* (Մատթեոս 5, 21-48)*: Ապա, երբ հարցը վերաբերվում է շաբաթ օրվան, որը հրեաների սրբազնասուրբ օրենքն էր. «Մարդու Որդին (=Հիսուս Քրիստոսը) Տերն է նաև շաբաթ օրվա»* (Մարկոս 2, 28; *հմմտ.* Մատթեոս 12, 8; Ղուկաս 6, 5)*: Եվ քանի որ Հիսուսը Տերն է նաև շաբաթ օրվա, թեև հրեաները հակառակ էին Իրեն, Հիսուսը ազատորեն հրաշքներ էր գործում նաև շաբաթ օրը (հմմտ.* Ղուկաս 13, 10-17; Հովհաննես 5, 9; 9, 14)*: Եվ սակայն, շաբաթ օրը պահելու պատվիրանը տրված էր Յահվէի կողմից* (Ելից 20, 8-11)*:*

*Հին Կտակարանում, Յահվէն Ինքն Իր վերաբերյալ հաստատել էր. «Ես եմ, որ ջնջում եմ հանցանքներդ»* (Եսայի 43, 25)*: Հիսուսի աստվածային հեղինակության ամենամեծ ապացույցներից մեկն այն էր, որ Հիսուսը ներում էր մեղքերը. «Որդյակ, ներված են քո մեղքերը»* (Մարկոս 2, 5)*: «Ինչո՞ւ է այդպես խոսում: Հայհոյում է: Ո՞վ կարող է ներել մեղքերը, եթե ոչ միայն՝ Աստված»* (Մարկոս 2, 7)*: «Արդ,*

*որպեսզի իմանաք, որ մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի ներելու մեղքերը, հրամայո՛ւմ եմ քեզ, – ասաց անդամալույծին, – վե՛ր կաց, վերցրո՛ւ անկողինդ և գնա՛ քո տուն»* (Մարկոս 2, 10-11)*:* *Անդամալույծը բժշկվեց և Հիսուսն այդպիսով փաստեց, որ ճշմարիտ է ասում և իրոք ունի այն հեղինակությունը, որն ունի «միայն Աստված»* (Մարկոս 2, 7)*:*

*Բայց սրանք – թերևս կասեք – ուղղակի հաստատումներ չեն: Իրոք, մի օր մեկը (ո՛չ եհովական) հարցրեց ինձ, թե արդյոք Աստվածաշնչում կա՞ն ուղղակի հաստատումներ, որ Հիսուսը Աստված է: Իսկույն պատասխանեցի. Այո՛: Եթե այդ ուղղակի հաստատումները չլինեին, հավատքն անհիմն կլիներ: Ահա՛ այն չորս հիմնականները, որոնք այս պահին ներկա են հիշողությանս մեջ, բայց թող որ հավատացյալներն ինքնուրույն կարդան Նոր Կտակարանը և իրենք ևս գտնեն ուրիշ հատվածներ.*

*«Սկզբում էր Բանը և Բանն Աստծո մոտ էր և Բանն Աստված էր»* (Հովհաննեսի Ավետարան 1, 1)*: Հովհաննես Աստվածաբան Ավետարանիչը խոսում է Հիսուս Քրիստոսի գոյության մասին Մարդեղությունից առաջ (այս պատճառով է գործածում անցյալ եղանակը. «էր») և հաստատում է, որ Բանն Աստված է:*

*Երկրորդ հաստատումի համար պարտական ենք Թովմաս Առաքյալին. երբ վերջինիս պատմում են, որ Տերը հարություն է առել և տեսնվել է մյուս Առաքյալների հետ, Թովմասը կասկածում է և պահանջում է շոշափելի փաստեր: Քիչ ժամանակ անց Հիսուսը երևում է նաև Թովմասին, մյուսների ներկայությամբ, և հանդիմանում է նրա թերահավատությունը: Հարուցյալ Հիսուսի փառքի առաջ սքանչացած, Թովմասը ծնրադրում է Հիսուսի առաջ և դավանում է. «Տեր իմ և Աստված իմ»* (Հովհաննեսի Ավետարան 20, 28)*:*

*Երրորդ հաստատումը Պողոս Առաքյալինն է, մինչ խոսելով հրեա ժողովրդի մասին՝ իր սրտի ցավն է հայտնում նրանց անհավատության համար. «Նրանցն է որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենսդրությունը, պաշտամունքը և խոստումը. նրանցն են նահապետները, նրանցից է նաև Քրիստոսն ըստ մարմնի. և նա՛ է բոլորի վրա հավիտյանս օրհնյալ Աստված: Ամեն»* (Պողոս Առաքյալի Նամակը Հռոմեացիներին 9, 4-5)*:*

*Չորրորդ վկայությունը կրկին Հովհաննես Առաքյալինն է, բայց ո՛չ թե Ավետարանում, այլ՝ ընդհանրական իր առաջին նամակում.*

*«Գիտենք, որ Աստծո Որդին եկավ և մեզ խելք տվեց, որպեսզի ճանաչենք Նրան, ով Ճշմարիտն է: Եվ մենք Ճշմարիտի՝ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ ենք, որովհետև Նա՛ է ճշմարիտ Աստված և հավիտենական կյանք: Որդյակներ, հեռու պահեցեք ձեզ կռապաշտությունից»* (Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 5, 20)*: Հովհաննես Առաքյալի համաձայն, ով չի ընդունում Հիսուսի աստվածությունը, կռապաշտ է: Այսինքն՝ նաև Եհովայի Վկաները, որոնց ստախոսություններին պատասխանեցին Տասներկու Առաքյալներից Հովհաննեսն ու Թովմասը և հեթանոսների Առաքյալը՝ Պողոսը: Սրանցից ավելի հեղինակավոր ի՞նչ աղբյուրներ եք ուզում Հիսուսի աստվածությանը հավատալու համար:*

*ե) Ընթերցողը թող ներողամիտ լինի այս գլխին այսքան երկարաշունչ դարձնելու համար, բայց քանի որ Քրիստոնեությունը քրիստոսակենտրոն է (և ա՛յլ կերպ չէր կարող լինել), այսինքն՝ քրիստոնեական հավատքի կենտրոնը Հիսուս Քրիստոսն է, այս պատճառով է, որ կամենում եմ որքան կարելի է ավելի պարզել հարցերը:*

*Այժմ անդրադառնամ մի հարցի, որը վերաբերվում է Հիսուսի գործունեությանը, Նրա կողմից իրագործված փրկությանը՝ ի նպաստ մարդկության: Եհովականության համաձայն, Հիսուսի կողմից իրականացված ամբողջ փրկագործությունը կայանում է պարզապես Ադամի հասցրած վնասները նորոգելու մեջ, վերադարձնելով մեզ այն երկրային դրախտը, որը կորցրեցին մեր նախածնողներ Ադամն ու Եվան իրենց անհնազանդությամբ: Եվ այս հարցին շատ են անդրադառնում, իրենց հրապարակություններում ներկայացնելով նկարներ, որոնցում պատկերված է մի կշեռք, որի հավասարակշիռ թաթերից մեկի վրա կանգնած է Ադամը, իսկ մյուսի վրա՝ Հիսուսը: Բայց յուրաքանչյուր հավատացյալի համար բավական է ընթերցել Ավետարանը, համոզվելու համար, որ եհովական այս ուսուցումը չի համապատասխանում իրականությանը, որովհետև Հիսուսը մեզ չխոստացավ Ադամի կորցրած եդեմական պարտեզը, այլ՝ երկնքի Արքայությունը, Աստծո թագավորությունը, Աստծո տեսությունը. «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի Արքայությունը»* (Մատթեոս 5, 3)*. «Երանի՜ սրտով մաքուրներին, որովհետև նրանք տեսնելու են Աստծուն»* (Մատթեոս 5, 8)*: Օրինակներն Ավետարաններից և Նոր Կտակարանի մյուս գրություններից այնքան շատ են, որ անհնարին է դրանք մեկ առ մեկ մեջբերելը: Հավատացյալները թող գիտակից լինեն, որ եհովական հերետիկոսությունն ամբողջովին կեղծում է փրկության քրիստոնեական գաղափարը. թող որ հավատացյալներն ինքնուրույն ընթերցեն Ավետարանը և շուտով կհամոզվեն դրան:*

զ) Այժմ անդրադառնանք մի վերջին հարցի, որով կվերջացնենք այս գլուխը: Եհովականներն անդադար, ինչ-որ մի սատանայական մոլեգնությամբ, ետև ետևի նշանակում են թարեթվեր, ամիսներ ու օրեր, որոնցում հաստատում են, թե իբր կատարվելու է աշխարհի դատաստանը և Քրիստոսը վերադառնալու է փառքով: Այս հարցին արդեն անդրադարձանք սույն աշխատության առաջին մասում, բայց միայն պատմական տեսանկյունից դիտված: Այժմ Հիսուսի խոսքերը քննելով տեսնենք, որ Հիսուսը երբեք չի ասել, թե երբ է հասնելու աշխարհի վախճանը: «Ինչ վերաբերվում է այդ օրվան և այդ ժամին, սակայն, ոչ ոք չգիտի, ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթեոս 24, 36; հմմտ. Մարկոս 13, 32): Եհովականները փորձում են գործածել նաև այս հատվածը, մերժելու համար Հիսուսի աստվածությունը, ասելով, որ եթե Որդին չգիտի այն, ինչ գիտի Հայրը, ուրեմն հավասար չէ Հորը: Բայց Հիսուսը մի ուրիշ անգամ հաստատում է, որ այդպես ասում է ո՛չ թե որովհետև չգիտի, այլ՝ որովհետև չի կամենում հայտնել. «Բայց նա (=Հիսուսը) պատասխանեց. ՚՚Ձեզ չի վերաբերվում իմանալ ժամանակներն ու պահերը, որոնք Հայրը վերապահել է իր ընտրությանը» (Գործք Առաքելոց 1, 7): Բայց ո՛չ միայն այսքանը, այլ՝ ավելին. Հիսուսը և Առաքյալները դատապարտում են նրանց, ովքեր համարձակվում են – ինչպես եհովականները – թվականներ նշել աշխարհի վախճանի համար. «Զգույշ եղեք, որպեսզի չխաբեն ձեզ: Շատեր կըգան անունիս տակ ծպտված և ասելով. ՚՚Ես եմ՚՚ կամ ՚՚Ժամանակը հասել է՚՚: Չհետևեք նըրանց» (Ղուկաս 21, 8; հմմտ. 17, 22-23; 19, 11...). «Ժամանակների ու օրերի վերաբերյալ, եղբայրներ, կարիք չունեք, որ գրեմ ձեզ: Իրոք, քաջ գիտեք, որ ինչպես գիշերվա գողը, այնպես է հասնելու Տիրոջ օրը» (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Թեսաղոնիկեցիներին 5, 1-2, որն ակնարկում է Հիսուսի ուսուցումներին Մատթեոս 24, 43 և Ղուկաս 12, 39-40 հատվածներում, որոնք լավ կլինի, եթե ընթերցողը կարդա ինքնուրույն). «Իսկույն մի՛ խռովվեք ձեր մտքում և մի՛ զարհուրեք ո՛չ հոգով, ո՛չ խոսքով, ո՛չ էլ նամակներով՝ իբր թե մեր կողմից գրված, որպես թե արդեն եկած հասած լինի Տիրոջ օրը» (Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Թեսաղոնիկեցիներին 2, 2):

Կարծեմ շատ ու շատ պարզ է այլևս, որ եհովականությունն այս կետում ևս, ինչպես մյուսներում, ուղղակի հակասության մեջ է Աստվածաշնչի հետ: Մեր՝ ներկա ժամանակների քրիստոնյաներիս դեմ պայքարելուց առաջ, եհովականությունը պայքարում է Աստվածաշընչի դեմ, պայքարում է Աստծո դեմ, միայն թե

*սատանայական կեղծավորությամբ խաբում է այն միամիտ հոգիներին, որոնց ներկայանում է իբր քրիստոնեական կազմակերպություն: Ամենասուրբ Երրորդության շնորհով և օրհնությամբ, այս տողերը թող ծառայեն այդ միամիտ հոգիներին որպես լուսաբանություն, մոլորեցուցիչների ձայնից չխաբվելու համար:*

*Ամեն: Թող անցնի այս աշխարհը և թող որ գա մեր Տեր Հիսուս Քրիստոսի Թագավորությունը: «Ամեն: Ե՛կ, Տեր Հիսուս Քրիստոս»* (Հովհաննեսի Հայտնություն 22, 20)*:*

## ԳԼՈՒԽ Գ.
## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

*Սուրբ Հոգու վերաբերյալ եհովական գաղափարը թշվառության սարսափելի աղբյուր է:*

*«Անձ չէ, այլ՝ Աստծո ակտիվ ուժն է»* (La veritΩ che conduce alla vita eterna, 24)*: Ամբողջն՝ այսքանը: Եվ հաստատելու համար իրենց այս ցնորամտությունը, մեջբերում են* Դատավորների Գրքի 14, 6 *հատվածը, որը ոչ մի կապ չունի փվյալ նյութի հետ, և սկսում են խոսել այնպես, որ կարծես թե գոյություն չունի Նոր Կտակարանը: Այս գլուխը բաժանում եմ երեք մասի. առաջինում միասին կտեսնենք, որ Սուրբ Հոգին անձ է. երկրորդում, որ Սուրբ Հոգին աստվածային Անձ է. երրորդում կքննարկենք եհովականների խղճուկ ընդդիմություններից մի քանիսը:*

*Սկսելուց առաջ կամենում եմ ընթերցողների ուշադրությունը հրավիրել մի փաստի վրա, որը ցույց է տալիս, թե քանի՛ցս սատանայական է եհովականների ուսմունքային ամբողջ համակարգը: Իրենց բոլոր հրապարակություններում Սուրբ Հոգին միշտ գրում են փոքրատառով (սուրբ հոգի), մինչդեռ անխտիր ամեն տեղ սատանան գրում են մեծատառ (Սատանա): Նույնիսկ եթե Սուրբ Հոգին անձ չլիներ, այլ՝ Աստծո ներգործող զորությունը, ինչպես հաստատում են իրենք, սա բարոյական թույլատրություն չէր լինի եհովականների համար՝ հարգելու սատանային ավելի, քան Աստծո զորությունը: Իրոք, սիրելիներս, հեռու մընանք սատանային հարգող և Աստծո ճշմարտության դեմ մարտնչող եհովականներից:*

*ա) Գիտենք, որ աստվածաշնչյան հայտնությունն աստիճանական է: Աստված բոլոր ճշմարտությունները չի հայտնում միասին, այլ՝*

*կամաց-կամաց, որպեսզի մարդկային փխար բանականությունն ի վիճակի լինի դրանք ատինճանաբար յուրացնելու: Այսպես վարվելով՝ Աստված բացահայտում է իր գթությունն ու սերը մարդու նկատմամբ: Ահա այս պատճառով է, որ Հին Կտակարանը գործածում է «Յահվէի հոգի» կամ «Էլոհիմի հոգի» արտահայտությունները, նախևառաջ մատնանշելու համար որոշ յուրահատուկ կարողություններ, որոնք Աստված հաղորդում է ոմանց (հմմտ.* Դատավորաց 3, 10; 6, 34; 11, 29; Թագավորների Առաջին Գիրք 11, 6; *և այլն): Այս և նման դեպքերում Աստվածաշունչը Սուրբ Հոգու մասին խոսելուց առաջ խոսում է Սուրբ Հոգու պարգևների մասին, այսինքն՝ սկսում է ցույց տալ գործը, ապագային թողնելով այդ գործերը Գործողի ճանաչումը: Այս ճանաչումը կատարվում է Նոր Կտակարանում, ուր խոսվում է Հոգու կամ Սուրբ Հոգու կամ Մխիթարիչի (հունարեն՝ Parnkletos) մասին՝ մատնանշելու համար մի անձ, ինչը որ պարզորոշ կտեսնենք քիչ հետո մեջբերված հատվածներում, ինչը որ չեն կարող հերքել սատանային հարգող եհովականները: Հովհաննեսի Ավետարանի այն հատվածներն են, որոնցում Հիսուսը խոստանում է առաքել Սուրբ Հոգին:*

*«Ես կխնդրեմ Հորից և նա կտա ձեզ մի ա՛յլ Մխիթարիչ, որպեսզի ձեր հետ մնա ընդմիշտ» (*Հովհաննեսի Ավետարան 14, 16*):*

*«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը առաքելու է իմ անունով, նա կուսուցանի ձեզ և կհիշեցնի այն ամենը, որ ասացի ձեզ» (*Հովհաննեսի Ավետարան 14, 26*):*

*«Երբ կգա Մխիթարիչը, որին ես առաքելու եմ Հորից, ճշմարտության Հոգին, որ բխում է Հորից, նա կվկայի ինձ. դուք նույնպես կվկայեք ինձ, որովհետև իմ հետ եք սկզբից ևեթ» (*Հովհաննեսի Ավետարան 15, 26-27*):*

*«Արդ, ասում եմ ճշմարտությունը. լա՛վ է ձեր համար, որ ես գնամ, որովհետև եթե ես չգնամ, չի գա ձեր մոտ Մխիթարիչը: Երբ ես գնամ, նրան կառաքեմ ձեր մոտ» (*Հովհաննեսի Ավետարան 16, 7*):*

*«Իսկ երբ կգա ճշմարտության Հոգին, ձեզ կառաջնորդի դեպի ամբողջական ճշմարտությունը, որովհետև ինքն իրենից չի խոսելու, այլ՝ ասելու է այն, ինչ լսելու է և ձեզ ավետարանելու է ապագա իրողությունները» (*Հովհաննեսի Ավետարան 16, 13*):*

*Մեջբերված այս հինգ հատվածներում շատ պարզորոշ երևում է, որ Սուրբ Հոգին մխիթարում է, ուսուցանում, հիշեցնում, վկայում,*

*առաջնորդում, խոսում, ասում, լսում և ավետարանում: Մտածելու կարողություն ունեցող որևէ մարդ, որի մտային և հոգեկան վիճակն առողջ է, կարող է հաստատել, որ այս բոլորը կարող են վերաբերվել միմիայն անձի, որն ունի զգացումներ (մխիթարում է, ուրեմն՝ նաև կարեկցում է), ունի հիշողություն (հիշեցնում է, ասում է այն, ինչ լսել է), ունի կամք և ընտրողություն (վկայում է, առաջնորդում), ունի բանականություն (ուսուցանում է, խոսում, ավետարանում): Հետևաբար, ամբողջովին սխալ և հակաաստվածաշնչյան է եհովական հերետիկոսների ուսուցումը Սուրբ Հոգու վերաբերյալ:*

*բ) Այժմ քննենք աստվածաշնչյան մի քանի հատվածներ, որոնցում Սուրբ Հոգին ներկայանում է որպես հավասար Հորը և Հիսուս Քրիստոսին: Այս հատվածներից երևում է, որ Սուրբ Հոգին ո՛չ միայն անձ է, այլ՝ աստվածային Անձ:*

*Նախևառաջ տեսնում ենք, որ մի էական հաղորդակցություն կա աստվածային երեք Անձերի միջև: Հիսուսը ասում է. «Նա փառավորելու է ինձ, որովհետև վերցնելու է ինձնից և ավետելու է ձեզ: Այն ամենը, որ Հայրն ունի, իմն է. սրա համար ասացի ձեզ, որ (Սուրբ Հոգին) վերցնելու է ինձնից (= Հիսուսից) և ավետելու է ձեզ» (*Հովհաննես 16, 14-15*): Հոգին Որդուց վերցնում է այն, ինչը որ Որդին ունի Հորից, և այն, ինչը որ Հոգին վերցնում է Որդուց, նույնը հաղորդում է աշակերտներին, որոնք Հոգու կողմից առաջնորդվում են դեպի Որդին և Որդու միջոցով հասնում են Հորը: Ուրեմն, Աստծո կողմից պարգևված փրկությունը մեզ հասնում է Սուրբ Հոգու միջոցով, Սուրբ Հոգին է, որ պարգևում է մեզ այդ փրկությունը (որը միմիայն աստվածային գործ է): Եվ փրկության ճանապարհը հակառակ ընթացքով դիտելով, մարդիկ առ Աստված բարձրանում և Նրա հետ հաղորդակցվում են Սուրբ Հոգու միջոցով, որը մարդկության Մխիթարիչն է:*

*Սուրբ Հոգու հավասարությունը Երրորդության մյուս Անձերին երևում է Հովհաննեսի Ավետարանի այն հատվածներում, որոնցում համեմատության են դրվում Հիսուսի (Որդի Աստծո) և Սուրբ Հոգու Անձերը: Իրոք, տեսնում ենք, որ ինչպես Որդին Հոր մոտ է («Բանն Աստծո մոտ էր».* Հովհաննես 1, 1*), այնպես նաև Հոգին Հոր մոտ է («Մխիթարիչը, որին առաքելու եմ Հոր մոտից».* Հովհաննես 15, 26*). ինչպես Հայրը առաքեց Որդուն (խոսքերը «Հորն են, որն առաքեց ինձ».* Հովհաննես 14, 24*), նույնպես առաքում է Սուրբ Հոգուն («որը բխում է Հորից».* Հովհաննես 15, 26*):*

*Տակավին կխորացնենք այս հարցը հաջորդ գլխում, որ վերաբերվում է Ամենասուրբ Երրորդությանը: Այստեղ պարզապես հիշեցնեմ, որ «բխում է Հորից» արտահայտությունը ինքնըստինքյան*

*արդեն ցույց է տալիս այն էական կապը, որ կա Հայր Աստծո և Սուրբ Հոգու միջև: Եվ քանի որ տեսանք, որ Սուրբ Հոգին անկասկածելիորեն անձ է, Հայր Աստծուց բխված լինելը նշանակում է, որ Նա անկասկածելիորեն աստվածային Անձ է:*

*գ) Մի քանի տողով անդրադառնամ նաև այն ընդդիմություններին, որոնք եհովականությունը սովոր է մեջտեղ հանել՝ իբր թե ''փաստելու'' համար իր ուսուցումները Սուրբ Հոգու վերաբերյալ: Բայց նախևառաջ ուզում եմ տալ մի քանի նախապատրաստական տեղեկություններ: Ինչպես շատ անգամներ արդեն ասացի, երբ աստվածաշնչյան հատվածները կղզիացվում են իրենց հարազատ պարբերություններից, այդ մեկուսացված նախադասություններին կարելի է տալ ցանկացած նշանակություն (օրինակ,* Սաղմոսաց *գրքի նախադասություններից մեկը կղզիացնելով իր պարբերությունից, կարելի է հաստատել, որ Աստված գոյություն չունի, որովհետև այնտեղ գրված է. «Աստված չկա»: Բայց երբ քննում ենք ամբողջ նախադասությունը. «Ասաց անմիտն իր սրտում. ''Աստված չկա''» (*Սաղմոս 13, 1*), խնդիրն ամբողջովին փոխվում է, որովհետև ըստ Սաղմոսերգուի՝ հիմարների համար է, որ չկա Աստված): Եհովականությունը, մերժելու համար Սուրբ Հոգու անձ և աստվածային Անձ լինելը, կա՛մ մեջբերում է հինկտակարանյան հատվածներ, որոնցում տակավին չճանաչելով Սուրբ Հոգու անձը, խոսվում է Նրա գործերի մասին (ինչպես արդեն ասացի այս գլխի սկզբում), կա՛մ էլ նորկտակարանյան այն հատվածները, որոնցում ուղղակի ակնարկվում է Սուրբ Հոգու պարգևներին կամ շնորհներին: Այս պատճառով, հավատացյալները պետք է միշտ հիշեն Գործք Առաքելոցի այս հատվածը, որում հստակ զանազանվում է Սուրբ Հոգին և Իր զորությունը, և մնացած բոլոր հատվածները, որոնցում զանազանությունը թերևս շատ հստակ չէ, հարկավոր է ընթերցել այս հատվածի լույսի ներքոյ. «Զորություն կստանաք Սուրբ Հոգուց, որն իջնելու է ձեր վրա, և իմ (=Հիսուսի) վկաները կլինեք» (*Գործք Առաքելոց 1, 8*): Առավել ուսյալներին որպես տեղեկություն ասեմ, որ «որն իջնելու է» բառակապակցությունը հունարենում չեզոք դերբայ է և անկասկած վերաբերվում է Սուրբ Հոգուն (հունարեն՝ Pneuma), և ո՛չ թե զորությանը (հունարեն՝ dynamis), որն իգական սեռի է. այսինքն՝ իջնողը Սուրբ Հոգին է, ո՛չ թե զորությունը:*

*«Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով» (*Գործք Առաքելոց 2, 4*): Եհովականները, մեջբերելով այս հատվածը, ընդդիմադրելով՝ հարցնում են. «Հնարավո՞ր է լցվել մի անձով» (հմմտ. Potete vivere per sempre,* 40*): Այստեղ խոսվում է այն արդյունքի մասին, որը Սուրբ Հոգին*

*գործում է, մի արդյունք, որը ապացվում է, որովհետև Հայրը և Որդին առաքում են Մխիթարիչ Սուրբ Հոգու Անձը: Շարունակելով հատվածի ընթերցանությունն, իրոք, համոզվում ենք, որ խոսվում է Սուրբ Հոգու զորության (dynamis) մասին. « […] և սկսեցին խոսել զանազան լեզուներով, յուրաքանչյուրն՝ ինչպես որ Հոգին տալիս էր արտահայտվելու կարողությունը» (*Գործք Առաքելոց 2, 4*): Բայց մարդկային մեր բառապաշարում ևս, այն ամենագեղեցիկ արտահայտություններում, որոնցով կամենում ենք արտահայտել մարդկային ամենավեհ զգացումը՝ սերը, մենք ասում ենք. «Սիրտս ամբողջովին լի է քեզնով»: Այո՛, հնարավոր է լցվել մի անձով, դա հնարավոր է սիրո զորությամբ, և եհովականները կկարողանային հասկանալ սա, եթե գեթ նվազագույն չափով գաղափար ունենային, թե ի՛նչ է նշանակում սերը, որի ակունքը հենց Սուրբ Հոգին է, աստվածային Սերը:*

*Միևնույն հատվածում, մի փոք առաջ կարդում ենք. «Նրանց հայտնվեցին հրեղեն լեզուներ և իջան նրանցից յուրաքանչյուրի վրա»* (Գործք Առաքելոց 2, 3*): Եհովականներն առարկում են. «Ինչպե՞ս կարող է սուրբ հոգին մի անձ լինել, երբ մոտ* 120 *աշակերտներ նրանով լցվեցին միաժամանակ»* (*Potete vivere per sempre*, 41)*: Ահա այստեղ ակնհայտ երևում է եհովական ողջ գաղափարախոսության նյութապաշտ (մատերիալիստ) բնույթը: Այստեղ Սուրբ Հոգու մասին խոսում են որպես որևիցէ մի անձ և Նրան շփոթում են նյութական աշխարհի հատկությունների հետ: Սուրբ Հոգին նյութական էակ չէ, որպեսզի սահմանափակվի տարածքի մեջ և հնարավորությունն ունենա զբաղվելու միայն մեկ անհատով: Ինչպես տեսանք վերևում, Սուրբ Հոգին աստվածային Անձ է: Արդ, աստվածային Անձն ունի ամենուր ներկա գտնվելու և ներբնակության միմիայն Աստծուն բնորոշ հատկությունը: Հիսուսը շատ հստակ կերպով հաստատում է Սուրբ Հոգու վերաբերյալ. «Բայց դուք նրան (=Սուրբ Հոգուն) ճանաչում եք, որովհետև բնակվում է ձեր մոտ և լինելու է ձեր մեջ [Որդու փառավորումից և Հոգեգալստից հետո]»* (Հովհաննես 14, 17*): Մարդու ներաշխարհում, նրա սրտի ու հոգու այն ամենախորին խորքում, ուր դրոշմված է Աստծո պատկերն ու նմանությունը (հմմտ.* Ծննդոց 1, 26*), Աստված հաստատում է Իր բնակությունը, ինչը որ քրիստոնեական աստվածաբանության մեջ կոչվում է «աստվածային ներբնակություն»: Այո՛, սա հնարավոր է: Հնարավոր չէ ապականացու մարդուն, հնարավոր է երիցս Սուրբ Աստծուն, որն Իր ամենակարողությամբ ներում է մեր մեղքերը: Հիսուսը վստահեցնում է մեզ. «Եթե մեկը սիրում է ինձ, կպահի իմ խոսքը և իմ Հայրը կսիրի նրան, և մենք (=Հայրը և Որդին) կգանք նրա մոտ և նրա մոտ կբնակվենք մեր բնակությունը»* (Հովհաննես 14, 23*): «Նրա մոտ կհաստատենք մեր բնակությունը» արտահայտությունը չի նշանակում, թե «նրա*

*պարփակեզում կփփենք մեր վրանը» կամ «նրա նոջասենյակի կողքի սենյակում կհասփափվենք» կամ էլ «նրա հարևանը կլինենք»: Նշանակում է աստվածային այն ներքնակությունը, որը զորեղ խոսքերով Պողոս Առաքյալն արտահայտում է այսպես. «Փախե՛ք պոռնկությունից: Ի՛նչ մեղք էլ որ գործի մարդ, իր մարմնից դուրս է դա. իսկ ով պոռնկանում է, մեղանչում է իր մարմնի դեմ: Չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է և որ ստացել եք Աստծուց: [...] Փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմիններում»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 6, 1820*)*:

*«Բոլորի վրա հեղելու եմ Հոգիս»* (Գործք Առաքելոց 2, 17*): Եհովականները, մեկնելով այս խոսքից, առարկում են. մի՞թե հնարավոր է, որ մի անձ «հեղվի» ուրիշ անձերի վրա: Եթե աստվածաշնչյան հատվածների շուրջ իրենց բացատրություններում եհովականները սովորաբար բացահայտում են իրենց տգիտությունն ու կարճամտությունը, այստեղ ցույց են տալիս իրենց չքավորությունն ու անկրթությունը մշակութային գետնի վրա, որովհետև ոչինչ չեն հասկանում արտահայտվելու կերպերի գեղեցկությունից, զգացումներից, բանաստեղծական ասույթներից, մտքի սլացքներից, լեզվի պերճախոսությունից, գրության ոճաբանական դարձվածքներից: Ինչպես որ անհանճար են իրենք, կուզենային, որ ամբողջ աշխարհն իրենց պես անհանճար լիներ և համ չառներ խոսակցության գեղեցկությունից:*

*Բայց Աստված եհովականների նման չէ: Աստված գեղեցկության Հեղինակն է: Աստված Ինքը գերագույն Գեղեցկությունն է: Եվ Աստվածաշնչում անթիվ են այն հատվածները, որոնցում Աստված, ներշնչված հեղինակների միջոցով, խոսում է բանաստեղծական ոճով: Օրինակ, Եսայի մարգարեի միջոցով կարող էր պարզապես ասել. «Կներեմ ձեր մեղքերը, կջնջեմ ձեր մեղքերը, այլևս չեմ հիշի դրանք» և մենք այսպես էլ շատ լավ կհասկանայինք, թե ինչ է կամենում ասել Աստված: Բայց ո՛չ, Աստված նախընտրում է արտահայտվել այսպես. «Եկե՛ք, խոսե՛նք իրար հետ, – ասում է Տերը, – եթե ձեր մեղքերն արյան պես կարմիր են, ապա ես ձյան պես ճերմակ կդարձնեմ. եթե որդան կարմիր լինեն, կսպիտակեցնեմ ինչպես բուրդը»* (Եսայի 1, 18*): Աստված մեր Արարիչն է, Ինքն է ստեղծել մեզ, և գիտի, որ հասկանալու համար միտք ունենալուց բացի, զգալու համար ունենք նաև մի սիրտ, որը խանդավառվում է գեղեցկությանն ի տես: Աստված, մեր մտքերին խոսելուց առաջ, կամենում է խոսել մեր սրտին: Այո՛, Սուրբ Հոգին կարող է հեղվել մեր վրա, որովհետև այն աստվածային Ջուրն է, միակ հագեցնող Ջուրը, որի ծարավն ունենք երկրային պանդխտության անապատներում թափառող թշվառներս, որ այստեղից ու այնտեղից մուրում ենք այն, ինչի կարիքը որ ունենք ապրելու համար. մուրում ենք*

*Սեր: «Աստծո մուրացկաններն ենք», ասում էր մեծ իմաստուններից մեկը: Սուրբ Հոգին այն աստվածային Սերն է, որով Հայրը հավիտյան սիրում է Իր Որդուն և որով Որդին հավիտյան սիրում է Իր Հորը: Սուրբ Հոգին Հոր և Որդու հավիտենական Սերն է: Սուրբ Հոգին այն Սերն է, որով Հայրը և Որդին սիրում են արարչությունը, և առաջին հերթին՝ մարդուն, որին ստեղծել են Իրենց պատկերով ու նմանությամբ (*Ծննդոց 1, 26*): Վերջապես, Սուրբ Հոգին այն Սերն է, որով մենք նույնպես կարող ենք պատասխանել Աստծո այդ հավիտենական նախընտրությանը, որ ունի մեր նկատմամբ, այն Սերն է, որով մենք նույնպես կարող ենք սիրել Աստծուն:*

*Սուրբ Հոգին սիրում է գեղեցկությունը. Հիսուսի Մկրտության պահին հայտնվեց որպես Աղավնի (*Մատթեոս 3, 16; Մարկոս 1, 10; Ղուկաս 3, 22*), իմաստավորելով խաղաղությունն ու հաշտությունը, որը Հիսուսի միջոցով հաստատվելու էր Աստծո և մարդկության միջև. Հոգեգալստյան օրը հայտնվեց որպես հուր (*Գործք Առաքելոց 2, 3*), իմաստավորելով սրբությունը, որովհետև Ինքն է օգնում մեզ հաղթելու մեր փկարությունններին, մաքրվելու մեր վատ գործերից, ինչպես որ կրակն է այրում ու մաքրում ամեն նեխվածություն: Եվ ամենից ավելի, Սուրբ Հոգին ցույց է տալիս գեղեցկության հանդեպ Իր սերը, որովհետև ծածուկ է մնում, ազդում է ներքին նո՜ւրբ հպումներով, առանց ճնշելու. Սուրբ Հոգին սիրում է այն առաքինությունը, որն ամենագեղեցիկն է. Խոնարհությունը: Խոնարհությունը, որ գոյություն չունի հպարտ սատանային հարգող եհովականների սրտերում:*

## ԳԼՈՒԽ Դ.
## ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

*Այս գլուխն իրականում նախորդ երեք գլուխների եզրակացությունն է. Ամենասուրբ Երրորդության հավատքը բանական հետևանքն է Հոր, Որդու և Սուրբ Հոգու վերաբերյալ մինչ այժմ ասվածների. աստվածային միակ բնությունը, այսինքն՝ աստվածային կատարելությունների ամբողջությունը, համընդհանուր է Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անձերին: Կա միայն մի Աստված՝ միմյանց հավասար և միմյանցից զատ երեք Անձերով: Աստվածային բնությունը մեկ և միակ է, իսկ աստվածային մեկ և միակ բնությունն ունեցող Անձերը՝ երեք: Եվ քանի որ մեկ առ մեկ քննեցինք Հոր, Որդու և Սուրբ Հոգու աստվածությանը վերաբերվող հարցերը, այստեղ բավարարվում եմ միայն մի քանի երրորդութենական հատվածներ մեջբերելով: Վերջում, մի քանի խոսքով կանդրադառնանք նաև եհովական կարճամիտ առարկումներին:*

*Հարուցյալ Հիսուսը պատվիրում է. «Գնացեք աշխարհ և ավետարանեցեք բոլոր ազգերին, մկրտելով նրանց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»* (Մատթեոս 28, 19)*: Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել, որ Հիսուսն ասում է «հանուն» և ո՛չ թե «հանուններ»: Հիսուսի ուսուցման համաձայն, «Հայր, Որդի և Սուրբ Հոգի» միայն մեկ անուն է, որին քրիստոնեական աստվածաբանությունը և եզրաբանությունը տվել են «համագո Երրորդություն» անունը: «Համագո» նշանակում է մեկ գոյացություն ունեցող, մեկ միասնական բնության մասնակցող:*

*Պողոս Առաքյալը Կորնթոսի հավատացյալներին օրհնում է այսպես. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը թող ձեր հետ լինեն: Ամեն»* (Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Կորնթացիներին 13, 13)*: Քանի որ աստվածային երեք Անձերը կատարյալ կերպով հավասար են միմյանց, նրանց հաջորդականությունը այստեղ փոխվում է. Հիսուս Քրիստոս (Որդի), Աստված (Հայրը), Սուրբ Հոգի: Մեր հավատացյալների ուշադրությունը հրավիրում եմ այն փաստի վրա, որ եհովականներն իրենց ’’թարգմանություններում’’ կեղծում են այս հատվածը, ուրեմն հարկավոր է կարդալ իրական Աստվածաշնչի մեջ (խորհուրդ եմ տալիս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից 1994 թվականին կամ Հայաստանի Աստվածաշնչյան Ընկերության կողմից վերջին տարիներին հրատարակված օրինակները, որոնք թեև անթերի չեն, բայց ներկայիս լավագույններն են):*

*Պողոս Առաքյալը, երբ խոսում է Աստծո զանազան պարգևների մասին, գրում է. «Թեև տարբեր են շնորհները, նույնն է Հոգին: Թեև տարբեր են պաշտոնները, նույնն է Տերը: Թեև տարբեր են գործելու կարողությունները, նույնն է Աստված, որ գործում է ամեն բան ամենքի մեջ»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 12, 4-6)*: Այն նույն պատճառով, որ նշեցինք քիչ առաջ, այսինքն՝ քանի որ աստվածային երեք Անձերը կատարյալ կերպով հավասար են միմյանց, այստեղ նույնպես՝ նրանց հաջորդականությունը փոխվում է. Հոգին, Տերը (Հիսուս), Աստված (Հայրը):*

*Ահա մի ուրիշ հատված Պետրոս Առաքյալի նամակից. «Ընտրյալներին՝ ըստ Հայր Աստծո կանխագիտության, Հոգու սրբագործմամբ՝ հնազանդվելու համար Հիսուս Քրիստոսին»* (Պետրոս Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 1, 2)*: Հաջորդականությունը նորից փոխվում է. Հայր Աստված, Հոգի, Հիսուս Քրիստոս:*

*Հարկավոր է նաև հիշել, որ Սուրբ Հոգու գալստյան վերաբերյալ* Հովհաննեսի Ավետարանում *պարունակված հինգ խոստումները,*

*որոնք արդեն մեջբերեցինք նախորդ գլխում, բոլորն էլ երրորդութենական են.*

– *Քրիստոսը, Հայրը, Միխիթարիչը (*Հովհաննես 14, 16*). – Միխիթարիչը, Հայրը, Քրիստոսը (*Հովհաննես 14, 26*). – Միխիթարիչը, Քրիստոսը, Հայրը (*Հովհաննես 15, 26*). – Քրիստոսը, Հայրը, Միխիթարիչը (*Հովհաննես 16, 5-7*).*

– *Սուրբ Հոգին, Քրիստոսը, Հայրը (*Հովհաննես 16, 13-15*):*

*Ով կամենում է շարունակել ինքնուրույն, մատնանշում եմ հետևյալ հատվածները.* Պողոս Առաքյալի Նամակը Հռոմեացիներին 8, 14-17; 15, 15-16; 15, 30; Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Կորընթացիներին 1, 21-22; Պողոս Առաքյալի Նամակը Եփեսացիներին 2, 18; 4, 3-6; *և այլն: Իրականում, ամբողջ Նոր Կտակարանը պարունակում է իրենում Ամենաասուրբ Երրորդության հոգեզմայլ բույրը:*

*Այժմ անցնենք եհովական առարկումներին, որոնց հիմնական արմատները հետևյալներն են.* 1) *մերժումը Քրիստոսի ճշմարիտ աստվածության և մարդկության.* 2) *մերժումը Սուրբ Հոգու անձնականության և աստվածային անձնականության.* 3) *փրկության գաղափարի սխալ ըմբռնումը, որն հասկանում են որպես սոսկ վերադարձ երկրային այն դրախտին, որը կորցրեցին Ադամն ու Եվան.* 4) *Աստծո հայտնության կերպերի վերաբերյալ սխալ հասկացողությունը:*

*Առաջին երեքին արդեն անդրադարձանք, միայն մի քանի խոսք ասեմ չորրորդի վերաբերյալ: Եհովականները կարծում են, թե Աստծո հայտնությունը կատարվել է այնպես, ինչպես որ ծանոթանում են երկու մարդիկ: Բայց եթե մեկն ուշադրությամբ ընթերցի Աստվածաշունչը, կտեսնի, որ Աստված, հայտնվելուց և Իր մասին տեղեկություններ տալուց առաջ, մեր բանականությանը խոսում է Իր գործերի միջոցով (օրինակ, երբ ներում է, հասկանում ենք, որ բարեգութ է. երբ պատժում է, հասկանում ենք, որ միաժամանակ նաև արդար է): Ահա այսպես, թեև Երրորդության վերաբերյալ ակնարկներ ունենք Աստվածաշնչի առաջին տողերից սկսած («Սկզբում Էլոհիմը ստեղծեց երկինքն ու երկիրը».* Ծննդոց 1, 1*: Արդ, «Էլոհիմ»ը եբրայեցերենում հոգնակի է, տե՛ս այն հատվածը, ուր ներկայացնում էի աստվածային զանազան անունները Հին Կտակարանում: «Աստված ասաց. ”Մարդ ստեղծենք մեր պատկերով ու նմանությամբ”.* Ծննդոց 1, 26, *ուր «Աստված» եզակի է, բայց Ինքն Իր մասին խոսում է հոգնակի թվով. «ստեղծենք մեր»), այդուամենայնիվ՝*

*գաղափարը մարդկանց մտքում հասունացել է աստիճանաբար, այսինքն՝ ո՛չ թե փոխվել է Աստված, այլ՝ փոխվել են մեր ճանաչողություններն Իր վերաբերյալ: Հետևաբար, ի զուր է հինկտակարանյան նախնական (պրիմիտիվ) վիճակում գտնվող անձանց խոսքերը մեջբերել՝ հերքելու համար առաջադիմյալ (պրոգրեսիվ) ճանաչողությունները:*

*Ահա՛ եհովականների ամենակարճամիտ առարկումը. Երրորդությունը հեթանոսական գաղափար է (հմմտ. Accertatevi, 46-47): Այս հաստատումն ամբողջովին անհիմն է և ցույց է տալիս եհովականության ներկայացուցիչների տգիտությունը կրոնների պատմության և գաղափարախոսությունների շուրջ: Ինչպես արդեն նշեցինք, Քրիստոնեությունը դավանում է համագո Երրորդությունը, ինչպես նաև բացատրեցինք, որ «համագո» նշանակում է մեկ և միևնույն գոյացությունն ունեցող: Եթե բացելու լինեք կրոնների պատմության և ուսմունքի որևէ հանրագիտարան կամ պարզ դասագիրք (նույնիսկ անհավատ որևէ գիտնականի կողմից գրված), երբեք չեք գտնի քրիստոնեությունը բազմաստվածյան կրոնների շարքում, որովհետև հեթանոսության մեջ աստվածները միմյանցից տարբեր բնություն ունեին, ինչպես օրինակի համար՝ կար սիրո աստվածը և կար ատելության աստվածը, կար խաղաղության աստվածը և կար պատերազմի աստվածը, որոնք հաճախ նաև պատերազմում էին միմյանց դեմ: Քրիստոնեությունը հեռու է նման առասպելաբանություններից: Հեթանոսական այդ հեքիաթներին ավելի մոտ է հենց ինքը՝ եհովականությունը, որ ներկայացնում է սատանայի պատերազմներ Աստծո դեմ, արմագեդոնյան ճակատամարտեր և այլն, բոլորն էլ հորինված: Նույնիսկ եթե հեթանոսական կրոնի որոշ համակարգեր ներկայացնում են գլխավոր երեք աստվածներ, սրանք նույնպես հեռու են Քրիստոնեության Երրորդության գաղափարից: Այդ համակարգերում ներկայացված երեք աստվածները կա՛մ մի ընտանիք են (հայր, մայր, որդի), կա՛մ էլ միմյանցից տարբեր բնություն ունեցողներ են, որ միանում են մեկ դաշնակցության մեջ:*

*Եհովական մյուս առարկությունն այն է, որ Նոր Կտակարանը երբեք չի գործածում «Երրորդություն» բառը: Շատ կներեք, բայց այսքա՞ն մեծ խորհուրդը իջեցնել պարզապես մի բառի գործածության մակարդակի, պարզապես ճղճիմ է: Եթե ուզենամ, ես նույնպես կարող եմ չգործածել «Երրորդություն» բառը, բայց այնուամենայնիվ կշարունակեմ դավանել Հոր, Որդու և Սուրբ Հոգու աստվածային համագոյակցությունը, Աստծո եռանձն միությունը: Բառն այստեղ ոչինչ չի նշանակում: «Հոր, Որդու և Սուրբ Հոգու աստվածային*

*համագոյակցություն» երկար արտահայտությունն ավելի հարմար դարձնելու համար է, որ քրիստոնեական աստվածաբանությունը գործածում է Երրորդություն եզրը (տերմինը): Կարևորն այդ եզրով արտահայտվող գաղափարն է, այդ եզրի պարունակությունը, որը պարզորոշ տեսանք աստվածաշնչյան հատվածների քննարկմամբ: Պարզապես իբրև պատմական տեղեկություն տամ հետևյալը. հունարեն «TriՈsե (Երրորդություն) բառն առաջին անգամ գործածում է – որքան որ այժմ գիտենք – Թեոֆիլոս Անտիոքացին մոտ 169-181 թվականներին, «Ad Autolycumե կոչվող իր աշխատության 15րդ գլխում: Իսկ լատիներեն «Trinitas» (Երրորդություն) բառն առաջին անգամ գործածում է – կրկին՝ որքան որ այժմ գիտենք – Տերտուղիանոսը մոտ 160-222 թվականներին, «Adversus Praxeamե կոչվող իր աշխատության 2րդ գլխում: Այսինքն, արդեն Երկրորդ դարից սկսած, ահա 19 դար շարունակ քրիստոնյաներս գործածել ենք այդ սրբազան եզրը, և Պիտսբուրգի ու Բրուքլինի երեկ ծնված թափթփուկները՝ Ռասըլ Մեղուզայի եհովականները չէ, որ պիտի մեզ ետ կանգնեցնեն այդ սրբազան եզրը գործածել շարունակելուց և դրանում պարունակված ամենավեհ ու ամենաանճառելի խորհուրդը դավանելուց:*

*Եզրակացնելով կրկնում եմ, որ կարևորը բառերը չեն, այլ՝ հավատքը: Բայց եթե ոմանք հոգեբանական ճնշումներ են գործածում մեր հավատքի դեմ, պարտավոր ենք պաշտպանել և հավատարմորեն գործածել նաև այն եզրերը, որոնցով է արտահայտվում մեր հավատքը:*

## ԳԼՈՒԽ Ե.
## ԿՅԱՆՔ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

*Եհովականների համաձայն, այն, ինչը որ ասվում է ինքնաշարժի տակ ընկած շան համար («սատկեց»), նույնը հավասարապես վավերական է մարդու համար, այսինքն՝ եհովականները շարունակ ուսուցանում են, թե մարդը ո՛չ թե մահանում է, այլ՝ սատկում (հմմտ. E questa vita tutto quello che c’è?, 43): Այսինքն՝ իբր թե մահով ամբողջովին ոչնչանում է մարդկային կյանքը (հմմտ. La verità che conduce alla vita eterna, 35; Potete vivere per sempre in una terra paradisiaca, 76): Անշուշտ տալիս են նաև մի փոքրիկ հույս. այն է, որ Աստված կարող է ձեզ*

*«կրկին ’’սպեղծել’’», բայց պայմանով, որ եհովական հերեփիկոսության հեփևորդ լինեք (հմմփ. La veritΩ che conduce alla vita eterna, 150): Գփնվում ենք մի ամբողջովին բացասական ուսմունքի առաջ, բայց այդ ուսմունքը ասփվածաշնչյան չէ:*

*ա) Եհովականների ’’ասփվածաշնչի’’ թակարդը:*

*Արդեն բազում անգամներ անդրադարձանք եհովականների կողմից կապարված ասփվածաշնչյան ’’թարգմանություններին’’: Կարծում եմ, որ ընթերցողի համար պարզ դարձավ այն հանգամանքը, որ հնարավոր չէ ճշմարիփ եզրակացությունների հանգել՝ մեկնելով եհովականների կողմից առաջարկվող ’’թարգմանություններից’’: Նրանց խարդախություններից մեկը վերաբերվում է եբրայեցերեն «nefesh» բառին, որը Հին Կփակարանում գործածվում է ավելի քան 750 անգամ: Այս բառը եբրայեցերենում ունի զանազան իմասփներ, որոնք հնարավոր է քննել եբրայեցերենի որևէ բառարանում: Այդ իմասփներից մեկն է «հոգի»ն, մահից հեփո գոյափևման նշանակությամբ: Եհովական հերեփիկոսների Բրուքլինի «Դիփարան» Ընկերությունը, իր սովորական խաբեբայությունները շարունակելով, անխփիր բոլոր փեղերում «nefesh» բառը թարգմանում է «հոգի», կարողանալու համար համոզել պարզամիփ ու անգեփ մարդկանց, թե իբր Ասփվածաշնչի համաձայն՝ հոգին մահկանացու է (հմմփ. Potete vivere per sempre, 79): Բայց քանի որ մարմնական մահից հեփո հոգու գոյափևումը փասփվում է ամբողջ Ասփվածաշնչում, այժմ միասին կքննենք նախ մի քանի հափվածներ Հին Կփակարանից, ապա՝ ուրիշ հափվածներ Նոր Կփակարանից:*

*բ) Խաղաղությամբ գնալ հայրերի մոփ:*

*– Ասփված ասում է Աբրահամին. «Դու վերաբերվում է քեզ, խաղաղությամբ կգնաս նախնիներիդ գիրկը. կթաղվես խոր ծերության հասած» (*Ծննդոց 15, 15*):*

*– «Ապա Աբրահամը մահացավ [...] և գնաց միացավ իր նախնիներին: Նրա որդիներ Իսահակն ու Իսմայելը նրան թաղեցին» (*Ծննդոց 25, 8-9*):*

*– «Իսահակը հոգին ավանդեց ու մահացավ փարիքն առած, խոր ծերության մեջ, և գնաց միացավ իր նախնիներին» (*Ծննդոց 35, 29*):*

– *«Երբ Հակոբը վերջացրեց այս հրահանգներն իր որդիներին տալ, ոտքերը հետ բերեց մահճի մեջ, հոգին ավանդեց և միացավ իր նախնիներին»* (Ծննդոց 49, 32)*:*

*Այս հատվածներում շատ հստակ կերպով զանազանվում են երկու իրականություններ. հայրերին միանալը և թաղվելը: Այս երկու իրականությունները միմյանցից ամբողջովին տարբեր են: Եհովականների ղեկավարները խարդախությամբ ուսուցանում են, թե հայրերին միանալ նշանակում է թաղվել ընտանեկան գերեզմանում: Բայց այդ պատճառաբանումը ամբողջովին անտեղին է, որովհետև Աբրահամի նախնիները Միջագետքում էին (հմմտ.* Ծննդոց 11, 27-12, 9*), և ո՛չ թե Պաղեստինում: «Նախնիներին միանալ» արտահայտության աստվածաշնչյան իրական իմաստը «շեոլ» կոչվող վայրում կամ վիճակում միմյանց վերագտնելն է: Ահա՛ մի քանի հատվածներ ևս, որոնց ընթերցմամբ պարզ է դառնում, որ եհովականների կողմից «շեոլ»ի և գերեզմանի նույնացումը ճիշտ չէ:*

*Հակոբը ճանաչում է Հովսեփի զգեստը և ասում է. «Որդուս պատմուճանն է: Մի վայրի գազան կերել է նրան: Հովսեփը հոշոտվել է: […] Ո՛չ, սգով եմ ուզում իջնել շեոլ, իմ որդու մոտ»* (Ծննդոց 37, 33.35)*: Աշխարհաբար հայերեն Աստվածաշունչը նույնպես տվյալ դեպքում թարգմանում է «գերեզման», բայց շատ պարզ է, որ այստեղ գերեզման չի նշանակում այն փոսը, որի մեջ թաղվում է ննջեցյալի մարմինը, որովհետև եթե Հովսեփին կերել են վայրի գազանները, ուրեմն Հովսեփը չի թաղվել փոսի մեջ (գերեզմանում): Այդուամենայնիվ, Հակոբը ուզում է գնալ «շեոլ», ուր համոզված է, որ գտնվում է իր որդին: Ուրեմն, անկախ այն բանից, թե թաղվում է փոսի մեջ, կամ խեղդվում ջրում, կամ այրվում կրակով, կամ մարսվում վայրի գազանների ստամոքսի մեջ, այս բոլորը վերաբերվում է նյութական մարմնին և ոչնչով չի կարող խոչընդոտել, որ հոգին գնա ննջեցյալների ընդհանուր հավաքավայրը, որը Հին Կտակարանում կոչվում է «շեոլ»:*

*«Երբ Մովսեսը ավարտեց այս խոսքերը, նրանց [Կորխի, Դաթանի ու Աբիրոնի] ոտքերի տակ պատռվեց գետինը, երկիրը բացեց իր երախը և կուլ տվեց նրանց: […] Նրանք և նրանց ունեցվածքները ողջ-ողջ իջան դժոխք (շեոլ), երկիրը ծածկեց նրանց և նրանք վերացան ժողովրդի միջից»* (Թվոց 16, 31-33)*: Ինչպես հստակ երևում է, Աստվածաշունչը շեոլը ներկայացնում է երկրի խորքերում, ուր իջնում են նաև «ողջ-ողջ», հետևաբար՝ սա ամբողջովին տարբեր է գերեզմանից:*

*գ) Հիսուսի ուսուցումները:*

*Հիսուսն ուսուցանում է, որ կյանքը շարունակվում է մահից հետո. «Գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, ուր ցեցն ու ժանգը փչացնում են և ուր գողերը պատերը ծակում են ու գողանում, այլ՝ գանձեր դիզեցեք երկնքում, ուր ո՛չ ցեցն ու ժանգն են փչացնում, և ո՛չ էլ գողերն են պատերը ծակում ու գողանում» (*Մատթեոս 6, 19-20; *հմմտ.* Ղուկաս 12, 33*): Երկնքում գանձեր հավաքելը իմաստ ունի միայն այն դեպքում, երբ ենթադրվում է, որ մարդ կարողանալու է վայելել դրանք մահից հետո:*

*«Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ՝ առավել վախեցեք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին և մարմինը» (*Մատթեոս 10, 28*): Հունարենում «կորստյան մատնել» բայն է «apՅllymiե, որը եհովականները, շարունակելով իրենց խարդախությունները, կեղծում են ու ''թարգմանում'' «ոչընչացնել»:*

*«Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ հարստության միջոցով ձեր համար բարեկամներ շահեցեք, որպեսզի երբ այն պակասի, հավիտենական օթևանների մեջ ընդունեն ձեզ» (*Ղուկաս 16, 9*): Հիսուսը հարստություններ ունեցողներին խորհուրդ է տալիս ապրվածավախ կերպով տրնօրինել իրենց հարստությունները, այսինքն՝ մտածել աղքատների մասին, որպեսզի այն օրը, որում այդ հարստություններն այլևս բանի պետք չեն լինի տվյալ անձի համար, այսինքն՝ մահվան օրը, Աստծո հավիտենական Արքայության մեջ ընդունեն իրեն, որովհետև ապրել է Հիսուսի ուսուցումների համաձայն (հմմտ.* Մատթեոս 25, 31-46*):*

*Մարմնի մահից հետո հոգու անմահության հստակ փաստերից մեկն են Իր հետ խաչված բարի ավազակին ուղղված Հիսուսի խոսքերը. «Ճշմարիտ եմ ասում քեզ. այսօր ինձ հետ դրախտում կլինես» (*Ղուկաս 23, 43*): Բայց ինչպես արդեն անդրադարձանք սույն գրքի առաջին մասի առաջին գլխում, այս հատվածը նույնպես աղավաղվում ու կեղծվում է եհովականների կողմից՝ իրենց ''թարգմանություններում'' ու հրատարակություններում:*

*Շատ լավ գիտեմ, որ եհովականները երբեք չեն կարդում Աստվածաշունչը, այլ՝ գոհանում են եհովական հրատարակությունները սերտելով, բայց խորհուրդ կտայի խելացի (դեռևս խելացի) շարքային Վկաներին ընթերցել* Մատթեոս 17, 1-8 *հատվածը, ուր պատմվում է Հիսուսի պայծառակերպությունը (հմմտ. նաև* Մարկոս 9, 2-12; Ղուկաս 9, 28-36*): Առանց որևէ դժվարության կարող են տեսնել, որ փառավորված Հիսուսի մոտ հայտնվում են Մովսես և Եղիա մարգարեները, և Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները տեսնում են, թե ինչպես էին նրանք խոսում Հիսուսի հետ: Ավետարանի այս հատվածը հստակ կերպով ցույց է տալիս, որ*

*մարմնի մահից հետո հոգին շարունակում է ապրել, և որ եհովական ցնորամտություններն ամբողջովին հակասում են Աստվածաշնչի պատգամին: Եհովականներն այսօր հետևում են սադուկեցիների աղանդին, որոնք կտրուկ կերպով մերժվում ու հանդիմանվում են Հիսուսի կողմից (հմմտ.* Մատթեոս 22, 23-33; Մարկոս 12, 18-27; Ղուկաս 20, 27-40*):*

*Նոր Կտակարանից դեպի Հինը մի քայլ ետ գնալով, նմանատիպ հատվածների ենք հանդիպում* Թագավորների Առաջին Գրքի 28, 6-25 *և* Մակաբայեցիների Երկրորդ Գրքի 15, 12-14 *հատվածներում, որոնց և ուրիշ բազմաթիվ հատվածների ընթերցումը թողնում եմ ձեզնից յուրաքանչյուրին, անպայման կարդալ խորհուրդ տալով:*

*դ) Նորկտակարանյան ուրիշ հատվածներ:*

*«(Իր մահից հետո, Հիսուսը) գնաց փրկությունն ավետելու նաև այն հոգիներին, որոնք բանտում էին» (*Պետրոս Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 3, 19*), այսինքն՝ շեոլում գտնվող հոգիներին, որոնք սպասում էին ազատարար Մեսիային, հետևաբար՝ չէին ոչնչացել, այլ՝ շարունակում էին հոգով ապրել:*

*«Երբ Գառը բացեց հինգերորդ կնիքը, խորանի տակ տեսա հոգիներն այն բոլոր մարդկանց, որոնք սպանվել էին Աստծո խոսքի և նրան տրված վկայության համար: Բարձր ձայնով աղաղակում էին. ''Սուրբ և ճշմարիտ Տեր, մինչև ե՞րբ […] ''» (*Հովհաննեսի Հայտնություն 6, 910*): Մարտիրոսներին, որոնք իրենց արյունը հեղեցին հավատքի համար, Հովհաննես Առաքյալը տեսնում է երկնային խորանի ստորոտում, ուր աղոթքներով դիմում են Տիրոջը: Հետևաբար՝ ոչնչացած չեն:*

*Հին և Նոր Կտակարաններից մեջբերումները կարելի է անվերջ շարունակել, բայց դա թողնում եմ Աստծուն անկեղծ սրտով հավատացողներին, որպեսզի իրենց սրտաբուխ նախաձեռնությամբ մասնակցեն ճշմարտության փնտրտուքին: Աստվածային ճշմարտությունը պատրաստի հրամցվելիք խորտիկ չէ, որ ճաշակենք և վերջ: Պարտավոր ենք ապրել այն, նրա ամբողջական քաղցրությունը վայելելու համար:*

*Իսկ այժմ անցնենք հաջորդ գլխին, ուր կաշխատենք ճանաչել մարդու ճակատագիրը մահից հետո ըստ Աստվածաշնչի: Որոշ առումով, այդ հարցի լուծումը կարելի է նկատել որպես այս գլխի շարունակություն, որովհետև էապես վերաբերվում է հոգու անմահությանը և ներկա կյանքում բարոյապես դրական կամ բացասական արարքների հատուցմանը:*

## ԳԼՈՒԽ Զ.
## ՄԱՐԴՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

*Բուն նյութին անցնելուց առաջ, պարտավոր եմ մի քանի տողով բացատրել, թե քրիստոնյաներս ինչ ենք հասկանում, ասելով «ճակատագիր»: Այս եզրը, որ սովորաբար նշանակում է սկզբից ևեթ հաստատված մի բան, որն անպատճառ պատահելու է, որը քեզնից ամբողջովին անկախ է և որից դու խուսափելու ոչ մի հնարավորություն չունես (սրա համար էլ ասվում է ճակատագիր, ճակատին գրված), քրիստոնեական աստվածաբանության մեջ ոչնչով չի համապատասխանում այս գաղափարին, այլ՝ ստանում է ամբողջովին ուրիշ իմաստ: Բայց քանի որ գոյություն ունեցող եզրերը բոլորն էլ ունեն իրենց նախնական իմաստները, ավելի հարմար ենք գտնում «ճակատագիր» եզրի գործածությունը: Կարելի է գործածել նաև «բախտ» եզրը, բայց սա չափազանց գնչուական տպավորություն է թողնում: Շատ ավելի հարմար կլիներ «վախճան» եզրի գործածումը, «վերջում պատահելիք»ի իմաստով, բայց այս եզրի «վերջ», «վերջակետ» իմաստը նույնպես բավական արմատացած է և առիթ կարող է հանդիսանալ շփոթումների համար:*

*«Մարդու ճակատագիրը մահից հետո» արտահայտությամբ հասկանում ենք այն, ինչը որ պատահելու է մարդուն մահից հետո, բայց որի շուրջ մարդն ինքն ունի իր պատասխանատվությունը: Այսինքն, այն, ինչ պատահելու է մարդուն մահից հետո (վարձատրում կամ դատապարտում), ո՛չ թե անխուսափելի, մարդու կամքից անկախ և նախապես որոշված մի բան է, այլ՝ մարդն ինքն է, որ ներկա կյանքում գործած իր արարքներով, որոնք բարոյապես որակավորելի են (բարի կամ չար), արժանանում է երանության կամ դատապարտության: Եթե կարելի է խոսել ճակատագրի մասին որպես նախապես որոշված մի բան, ապա պետք է ասենք, որ Աստծո կողմից մարդու համար որոշված «ճակատագիրը» երկնքի երանավետ Արքայությունն է: Աստված կամենում է, որ բոլոր մարդիկ բարի ապրեն և հավիտյան վայելեն Իր երանությունն ու փառքը: Աստված ոչ որի չի դատապարտում դժոխքի: Մարդն ինքն է, որ ազատակամ ընտրելով չարը, ինքն իրեն հեռացնում է հավիտենական երանությունից և ինքն իրեն նետում է հավիտենական դատապարտության մեջ:*

*Եհովականությունը ժխտում է այս կարևորագույն բարոյական ճշմարտությունները, ամբողջովին հակառակվելով Աստվածաշնչի պատգամին: Այժմ միասին տեսնենք մի քանի աստվածաշնչյան հատվածներ, որոնք վերաբերվում են հավիտենական երանությանը*

*Սպծո երկնային Արքայությունում և Սպծո շնորհը չընդունած չարագործների հավիտենական դատապարտությանը դժոխքում:*

*ա) Երկնքի հավիտենական երանությունը:*

*«Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեր համար պատրաստված արքայությունը: [...] Եվ (պիտի գնան) արդարները դեպի հավիտենական կյանք»* (Մատթեոս 25, 34.46)*:*

*«Երբ աղքատը [=Ղազարոսը] մահացավ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գիրկը. մեծահարուստն էլ մեռավ ու թաղվեց: Եվ դժոխքում, մինչ սա տանջանքների մեջ էր, բարձրացրեց աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած»* (Ղուկաս 16, 22-23)*:*

*«Հայր, կամենում եմ, որ նրանք, որոնց ինձ տվեցիր, ուր որ ես եմ, նրանք էլ լինեն իմ հետ միասին, որպեսզի տեսնեն իմ փառքը, որը դու ինձ տվեցիր»* (Հովհաննես 17, 24)*:*

*«Այժմ տեսնում ենք աղոտ, ինչպես պատկերը հայելու մեջ, բայց այն ժամանակ տեսնելու ենք դեմառդեմ: Այժմ թերի է ճանաչողությունս, բայց այն ժամանակ ճանաչելու եմ կատարյալ կերպով, այնպես, ինչպես որ Նա ճանաչում է ինձ»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 13, 12)*:*

*«Մեր նեղությունների առժամանակյա, թեթև բեռը մեր համար ստանում է անչափելի ու հավիտենական մի փառք»* (Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Կորնթացիներին 4, 17)*:*

*«Մեր հայրենիքը, սակայն, երկնքում է և այնտեղից ենք որպես Փրկիչ սպասում Տեր Հիսուս Քրիստոսին, որը կերպարանափոխելու է մեր թշվառ մարմինը՝ կերպարանակից դարձնելու համար իր փառավոր մարմնին, այն զորությամբ, որով կարող է ամեն բան հպատակեցնել իր իշխանությանը»* (Պողոս Առաքյալի Նամակը Փիլիպեցիներին 3, 20-21)*:*

*«Իսկ երբ հայտնվի Քրիստոսը՝ ձեր կյանքը, այնժամ դուք էլ նրա հետ կհայտնվեք փառքով»* (Պողոս Առաքյալի Նամակը Կողոսացիներին 3, 4)*:*

*Պողոս Առաքյալը հորդորում է Թեսաղոնիկեցիներին «ապրել Աստծուն արժանի կերպով, որը կանչում է ձեզ իր արքայությանը և փառքին»* (Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Թեսաղոնիկեցիներին 2, 12)*:*

*«Այս իսկ պատճառով, ամեն ինչի համբերում եմ ի սեր ընտրյալների, որպեսզի նրանք էլ հասնեն փրկության ու երկնային փառքին, որը Քրիստոս Հիսուսի միջոցով է»* (Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Տիմոթեոսին 2, 10)*:*

*«Սիրելիներ, այժմ իսկ արդեն Աստծո որդիներ ենք, բայց այն, ինչ որ լինելու ենք, դեռևս ամբողջովին հայտնված չէ: Սակայն գիտենք, որ երբ նա հայտնվի, լինելու ենք նրա նման, որովհետև նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ է»* (Հովհաննես Առաքյալի Ընդհանրական Առաջին Նամակը 3, 2)*:*

*Այս հատվածների ամբողջականության համաձայն՝ դրախտը կամ հավիտենական երանավետ կյանքը կայանում է մահից հետո Աստծո և Քրիստոսի հետ ամբողջական ու երանացուցիչ հաղորդության մեջ: Առանց Աստծո դեմառդեմ տեսության՝ չկա կյանք կամ երանություն: Քրիստոսը շատ հստակ բառերով հաստատում է. «Ես Ինքս եմ Հարությունը և Կյանքը»* (Հովհաննես 11, 25)*: Մեջբերված հատվածներում հանդիպեցինք այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք են. հավիտենական կյանք, տեսնել Աստծո փառքը, տեսնել Աստծուն դեմառդեմ, տեսնել Աստծուն այնպես, ինչպես որ է, և այլն: Արդ, թող եհովական հերետիկոսներին միամիտ սրտով անդամակցած անկեղծ հավատացյալը բացի եհովական հրատարակությունները, մի րոպե նայի նրանց ներկայացրած դրախտի գունավոր պատկերները, որոնցով խաբում են պարզամիտներին, և ինքնուրույն կերպով տեսնի, թե այդտեղ ինչ-որ մի բան կա՞, որ համապատասխանում է Աստվածաշնչի պատգամին: Այս պահին առջևս են այդպիսի պատկերներից մի քանիսը. տեսնում եմ գեղեցիկ լեռներ ու լճեր, տեսնում եմ միշտ ժպտացող երիտասարդ դեմքեր տարբեր ազգություններից, տեսնում եմ ջրվեժ, թռչուններ, միմյանց հետ հաշտված անասուններ, լոլիկով, ամբուկով, վարունգով, ելակով և զանազան ուրիշ պտուղներով ու բանջարեղեններով լի զամբյուղներ, և այլն, բայց այդ բոլոր պատկերներից ոչ մեկում չեմ տեսնում էականը, այն, ինչը որ Աստվածաշունչը ներկայացնում է որպես էությունը հավիտենական երանավետ կյանքի կամ դրախտի.* ԱՍՏՎԱԾ*: Եհովականների դրախտում տեղ չկա Աստծո համար: Եհովականները կարող են վայելել իրենց դրախտն առանց Աստծո ներկայության,*

*որովհետև Աստված եհովականների համար ոչինչ չի նշանակում, որովհետև եհովականների համար կարևորն իրենց ստամոքսները լցնելն է: Բայց մոռանում են, որ Աստված իրենց դեմ է. «Շատերն ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի.* նրանց վախճանը կորուստն է. *նրանց աստվածն իրենց որովայնն է, և նրանց փառքը՝ իրենց ամոթույքը: Նրանք միայն երկրավոր բաներ են խորհում»* (Պողոս Առաքյալի Նամակը Փիլիպեցիներին 3, 18-19):

*Կարծում եմ, որ անկեղծ որևէ հավատացյալի համար շատ պարզ է, որ եհովական ուսուցումներն այս կետում նույնպես հակասում են Աստծո Խոսքին ու ճշմարտությանը:*

*բ) Դժոխքի հավիտենական դատապարտությունը:*

*Եհովականներն, իրենց խելացնոր մտքերն ու խղճերը հանգստացնելու համար, մերժում են դժոխքի գոյությունը, ինչպես միշտ՝ արհամարհելով Աստվածաշնչի բազմաթիվ վկայությունները: Այդ վկայությունները մենք՝ քրիստոնյաներս չենք հիշում ու հիշեցնում՝ ինքներըս մեզ և մարդկանց սարսափեցնելու, այլ՝ սթափեցնելու համար, ինչպես նաև հավատարիմ մնալու համար Աստծո Խոսքին, որը վկայում է դժոխքի գոյությանը: Այդ դժոխքի սպառնալիքը մեր բոլորի՛ս առջև է և մեզ բոլորի՛ս հրավիրում է գիտակից պատասխանատվության: Ինչպես նաև հարկ է նշել, որ դժոխքն ա՛յլ բան չէ, քան միայն՝ Աստծո Արքայությունից և Աստծո տեսությունից դուրս մնալը: Ինչպես որ լույսի բացակայության դեպքում տիրում է խավարը, ջերմության բացակայության դեպքում՝ ցուրտը, ջրի բացակայության դեպքում՝ երաշտը, այնպես էլ դժոխքն ա՛յլ բան չէ, քան միայն՝ Աստծո երանացուցիչ ներկայությունից հեռացումը, որևէ հաղորդության հավիտենական ու անհետսկնչելի խզումն է մարդու և Արարչի միջև: Հետևաբար, Աստվածաշնչի կողմից ներկայացվող պատկերները նույնպես (կըրակ, ատամների կրճտում, լաց, և այլն) հարկավոր է հասկանալ այլաբանական իմաստով, որով Աստվածաշունչը կամենում է հասկացնել տառապանքի ծանրությունը, այլ ո՛չ թե տալ նրա մանրամասն նկարագրությունը:*

*Այժմ մեջբերում եմ աստվածաշնչյան երեք հատվածներ, պարզապես օրինակներ տալու համար: Ընթերցողն ինքը թող շարունակի Աստվածաշնչի ամբողջական ընթերցումը և անձամբ գտնի ուրիշ հատվածներ ևս, որոնք բազմաթիվ են:*

*«Նրանցից, ովքեր ննջում են հողի փոշու տակ, շատերը հարություն են առնելու, ոմանք հավիտենական կյանքի համար, իսկ*

*ոմանք՝ հավիտենական նախատինքի ու ամոթի համար»* (Դանիել 12, 2)*:*

*«Եթե ձեռքդ կամ ոտքդ գայթակղեցնում է քեզ, կտրիր այն և հեռացրու քեզնից. լավ է քո համար մի ձեռքով կամ մի ոտքով մտնել կյանք, քան երկու ձեռք ու երկու ոտք ունենալ և հավիտենական կրակի մեջ ընկնել»* (Մատթեոս 18, 8)*:*

*«Անիծյալներ, ինձնից հեռու գնացեք դեպի հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի ու իր հրեշտակների համար [...] : Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք»* (Մատթեոս 25, 41.46)*:*

*Եզրակացությունն, ինչպես միշտ, մեկն է. եհովականների համար Աստվածաշունչը ոչինչ չարժե: Պարզապես մեղքս են գալիս այն խեղճ շարքային Վկաները, որոնք խաբված ու մոլորված, դռնե դուռ ընկած կամ փողոցներում ժամերով կանգնած՝ տարածում են Բրուքլինի արիկա Ղեկավար Մարմնի մարդկային (չասելու համար՝ սատանայական) ուսմունքները: Ավելի լավ կանեին, եթե նստեին տանը և սերտեին իրական Աստվածաշունչը, այդպիսով ճանաչելով Աստծո Խոսքը և իրենց կյանքը վստահելով աստվածային ճշմարտությանը, որը հուսախաբ չի թողնում: Լավ կանեին, եթե իրենց տներից հեռու վռնդեին եհովական հերետիկոսություն քարոզողներին, որովհետև դրանք «կույրեր են, կույրերի առաջնորդներ: Իսկ երբ կույրը առաջնորդում է կույրին, սխալվում է և երկուսն էլ փոսն են ընկնում»* (Մատթեոս 15, 14)*: Մաղթում եմ եհովականներին միամիտ սրտով անդամակցած բոլոր ազնիվ հոգիներին՝ սթափվել և կույրերի ձեռքը չվստահել սեփական կյանքը, հոգին ու հավատքը:*

## ԳԼՈՒԽ Է.
## ՔԱՌԱԹԵՎ ԽԱՉԸ

*Եհովական հերետիկոսությունը համառորեն պնդում է, թե իբր մահապատժի գործիքը, որի վրա մահացավ Հիսուսը, ո՛չ թե քառաթև խաչ էր ( | ), այլ՝ պարզապես ուղղահայաց գերան ( † ): Սկզբից ներ ասեմ, որ քրիստոնյաների համար, աստվածաբանական և ավետարանական ու միստիկ տեսանկյունից դիտված, ամբողջովին երկրորդական է*

*իմանալը, թե ինչպիսի ձև ուներ մահապատժի այն գործիքը, որի վրա Հիսուսը մահացավ: Բայց երկրորդական չէ՝ հարցի հոգեբանական տեսանկյունից դիտված, որովհետև թշվառամիտ եհովականներն այս կետը նույնպես գործածում են քրիստոնյա Եկեղեցու դեմ սատանայական պատերազմ մղելու համար: Հոգեբանական կարեւկցանքով եւ մոտենում եհովականների հոգեխախտությանը, և այս պատճառով է, որ այս գրքին մի քանի տող ևս կամենում եմ ավելացնել այս հարցի վերաբերյալ:*

*Եհովականների կողմից Քրիստոսի Խաչի ուրացումը հիմնվում է իրենց կողմից հնարված երեք կետերի վրա. ա) «խաչը հեթանոսական առարկա է», բ) «խաչը որպես մեծարանքի առարկա կռապաշտություն է», գ) «Հիսուսի մահվան գործիքը ուղղահայաց գերան էր» (հմմտ.* Accertatevi, 127-128*): Հերթով քննենք այս երեք կետերը:*

*ա) Եհովականները շարունակ կրկնում են, թե խաչը հեթանոսական գործածություն ունեցող առարկա էր, հետևաբար՝ քրիստոնյաները պետք է հեռու մնան նրանից: Բայց սա տխմարության գագաթնակետն է: Ինչո՞ւ: Որովհետև եթե քրիստոնյաները մերժեն այն ամենը, որն ունեցել է նախնական հեթանոսական գործածություն, չի փրկվի աշխարհիս վրա այլևս ոչինչ: Քրիստոնեությունը երկնքից ընկած քարակտոր չէ, որպեսզի ոչ մի կապ չունենա իրեն նախորդած մարդկային միջավայրի ու մշակույթի հետ: Շա՜տ ու շա՜տ բաներ կան, որոնք Քրիստոնեությունը ժառանգել է իրեն նախորդած քաղաքակրթություններից, բայց այն ամեն ինչին, որ ժառանգել է իրեն նախորդողներից, Քրիստոնեությունը տվել է նո՛ր իմաստ, նո՛ր նշանակություն, որով այդ իրականություններն ամբողջովին կորցրել են իրենց նախնական հեթանոսական իմաստները, զգեստավորվել են նոր իմաստով և առանց որևէ արգելքի ծառայել են Աստծո ժողովրդին: Այսպիսով, դեռևս Հին Կտակարանում կարող ենք հիշել* թլփատությունը, *որը դարձել էր հրեա ժողովրդին անդամակցելու նյութական նշանը: Այն հանկարծակի չի հայտնվում մարդկության պատմության մեջ: Հրեաներից առաջ, թլփատությունը կիրառում էին նաև եգիպտացիները և հին աշխարհի ուրիշ շատ ազգեր: Եվ սակայն, «նախնական հեթանոսական գործածություն ունեցող» թլփատությունը Աստված Ինքը պարտադրում է Իր ժողովրդին որպես Ուխտի նշան: Կարելի է հիշել նաև* ծիածանը, *որը դառնում է Աստծո և Նոյի միջև կնքված դաշինքի նշանը, չնայած դրանից առաջ էլ անշուշտ գոյություն ուներ ծիածանը և ո՞վ գիտի քանի՜ քանի՜ հեթանոս սերունդներ երկրպագել են ծիածանին որպես երկնային զորություն: Ուրեմն, մարդկային խելքին, մտքին, բանականությանն ու տրամաբանությանը ամբողջովին հակառակ է*

*եհովականների այս ցնորամտությունը: Հեթանոս աշխարհում նույնպես գործածվել են դանակները, անիվները, նավերը, գութանները և այլն. ուրեմն ի՞նչ, հրաժարվե՞նք դրանք գործածելուց: Ապուշությունների ապուշությունը կլիներ, որին ընդունակ կարող են լինել միայն եհովականները: Մինչդեռ կարևորն այն է, թե Քրիստոնեության մեջ ինչպիսի՛ իմաստ և նշանակություն է տրվում նախապես գոյություն ունեցող տվյալ առարկային:*

*բ) Քրիստոնեության դեմ եհովական հերետիկոսների կողմից առաջ բերված ամենատխմար զրպարտությունն այն է, որ իբր թե քրիստոնյաները պաշտում են խաչը, ինչը որ կռապաշտություն է: Ամբողջովին անհիմն զրպարտություն, որը ոչնչով չի համապատասխանում իրականությանը: Քրիստոնյաները երբեք խաչը չեն պաշտել որպես կուռք, երբեք իրենց հույսը չեն դրել նյութական խաչի վրա, այլ՝ քրիստոնյա բոլոր սերունդների համար Քրիստոսի Խաչը հանդիսացել է և հանդիսանում է իրենց փրկության նշանը. նշանն այն սատվածային սիրո, որը մղեց Աստծո Որդուն զոհաբերվել մեր մեղքերի համար: Բայց քանի որ եհովականները շարունակ կրկնում են, թե խաչի ու սրբապատկերների ներկայությունը քրիստոնյա եկեղեցիներում ու քրիստոնյաների տներում կռապաշտություն է, թող ընթերցողը թույլատրի ինձ մի քիչ երկար կանգ առնել այս հարցի վրա, մանրամասնորեն տեսնելու համար, թե արդյոք Աստված իսկապես արգելո՞ւմ է պատկերների գործածությունն Իր տաճարներում:*

*Այս հարցն ունի իր պատմությունը: Եհովականներն առաջինը չեն, որ մերժում են սրբապատկերների գործածությունը: Նրանցից շատ առաջ, 8րդ դարում արդեն, բյուզանդական կայսրությունում և նրան հարակից աշխարհամասերում տարածվել էր հերետիկոսական մի բռնի շարժում, որը մերժում էր սրբապատկերների գործածումը, որի համար էլ պատմիչների կողմից կոչվում է պատկերամարտների (իկոնոկլաստների) շարժում: Նրանց ուսմունքի դեմ արտահայտվեց Եկեղեցու Տիեզերական Յոթերորդ Ժողովը, որն հայտնի է Նիկիայի Երկրորդ Ժողով անվամբ: Հարցն այդպիսով փակվեց մինչև 16րդ դարի կեսը, երբ ծնվեցին բողոքական առաջին շարժումները: Բայց նրանց կողմից առաջ բերված մեղադրանքները նույնպես գտան իրենց պատասխանները Եկեղեցու կողմից գումարված Տիեզերական Տասնիններորդ՝ Տրիդենտյան կոչվող Ժողովում: Ուստի այսօր ևս, եհովականներին պատասխանելու համար հարկ չկա նորանոր ուսումնասիրություններ կատարելու, այլ՝ պարզապես պետք է հիշենք այն, ինչ ասվել է արդեն հազար երկուհարյուր տարի առաջ (եհովականների կրթական մակարդակը ցավոք այսքա՜ն հետ է մնացել արդի քաղաքակրթությունից):*

*Սրբապատկերների դեմ պայքարը ծնունդ էր առել Տասնաբանյայի առաջին պատվիրանի սխալ ըմբռնումից (հմմտ.* Ելից 20, 4-5*): Աստված արգելում է պատկերներ կամ արձաններ պատրաստել դրանք պաշտելու համար որպես կուռքեր, ճի՛շտ է, բայց միևնույն ժամանակ՝ պատվիրում է պատկերներ ու արձաններ պատրաստել Իր Տաճարի գեղազարդման և կրոնական իմաստներն այլաբանորեն ներկայացնելու համար:*

*Այսպիսով, Աստված հրամայում է Մովսեսին քանդակել երկու քերովբեներ և տեղադրել Ուխտի Տապանակի վրա, որն Իսրայելի ամենասրբազան առարկան էր. «Կոփածո երկու ոսկյա քերովբեներ կպատրաստես և կդնես (տապանակի) կափարիչի երկու ծայրերին»* (Ելից 25, 18*):* Ելից 37, 7 *հատվածը տեղեկացնում է, որ աստվածային հրամանը կատարվեց:*

*«Նրբահյուս բեհեզից, կապույտ, ծիրանի և կրկնակի կարմիր կտավից պաստերատանի վարագույրով խորան կպատրաստես: Այն կզարդարես ասեղնագործ քերովբեներով»* (Ելից 26, 1*):* Ելից 36, 8 *հատվածը տեղեկացնում է, որ աստվածային հրամանը կատարվեց:*

*«Տերն ասաց Մովսեսին. ''Մի պղնձե օձ պատրաստիր և դիր ձողի վրա: Եթե օձերից խայթվող մարդը նայի քո սարքած օձին, կփրկվի'': Այնժամ Մովսեսը պղնձե օձ պատրաստեց և դրեց ձողի վրա: Օձերից խայթվողը, նայելով պղնձե օձին, կենդանի էր մնում»* (Թվոց 21, 89*): Շատ հստակ հասկացվում է, որ այս պարագային այլևս գեղազարդարման պատմության առջև չենք, այլ՝ մի բան, որն ունի կրոնական իմաստ և նշանակություն: Եվ որպեսզի բոլորի համար պարզ դառնա, որ կռապաշտությունը կախում ունի տվյալ անձի ներքին դիրքորոշումից և ո՛չ թե առարկայի անխտիր գործածությունից, մեջբերենք* Թագավորների *գրքից հետևյալ հատվածը. «(Եզեկիան) փշրեց Մովսեսի շինած պղնձե օձը, քանի որ մինչև այդ օրը իսրայելացիները խունկ էին մատուցում նրան և այն կոչում էին Նեքուսթան»* (Թագավորների Չորրորդ Գիրք 18, 4*): Հաշվի առնելով, որ Եզեկիան ապրեց մոտավորապես* 716-687 *թվականներին, հետևում է, որ պղնձե օձը հրեա ժողովուրդը պահպանել էր մոտ* 500 *տարի: Բայց չնայած որ իսրայելացիները այդ օձը վերածել էին մի տեսակ կուռքի, Հիսուսը չի մերժում համեմատվել նրա հետ. «Ինչպես որ Մովսեսը անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ մարդու Որդին պետք է բարձրանա [=Հիսուս Քրիստոսը Խաչի վրա], որպեսզի ով նրան հավատում է, ընդունի հավիտենական կյանքը»* (Հովհաննես 3, 14-15*): Հետևաբար, Հիսուսն իրականությանը նայում է ուրիշ աչքով, քան եհովականները:*

*Մի քանի հատված մեջբերենք Սողոմոնի տաճարի կառուցման վերաբերյալ. «Սրբարանի ներսում դրեց նոճու փայտից*

*պատրաստված երկու քերովբեներ: Մեկի բարձրությունը տասը կանգուն [մոտ 5 մետր]: Նրա մի թևը հինգ կանգուն էր, մյուս թևը՝ նույնպես հինգ կանգուն. մի թևի ծայրից մինչև մյուս թևի ծայրը տասը կանգուն էր: Երկրորդ քերովբեն նույն չափն ու նույն ձևն ուներ: Մի քերովբեի բարձրությունը տասը կանգուն էր, նույնը նաև՝ երկրորդ քերովբեինը: Երկու քերովբեները դրեց ներսի սենյակում [=տաճարի ամենասրբազան վայրում], և նրանց թևերը տարածեց. մի քերովբեի մեկ թևը հասնում էր մի պատին, իսկ երկրորդ քերովբեի մեկ թևը՝ մյուս պատին: Նրանց մյուս թևերը սենյակում գալիս միանում էին իրար: Նա քերովբեները ոսկիով պատեց»* (Թագավորների Երրորդ Գիրք 6, 23-28*): Ամբողջովին ակնհայտ է, որ այս մեծղի արձանները միայն զարդարանքի համար չէին, այլ՝ ունեին կրոնական նշանակություն. իմաստավորում էին Յահվէի ներկայության վայրը, Յահվէի, «որ նստում է քերովբեների վրա»* (Թագավորների Չորրորդ Գիրք 4, 4*):*

*«Տան բոլոր պատերի վրա ներսից ու դրսից շուրջանակի քանդակեց, փորագրեց քերովբեներ, արմավենիներ ու բարձրաքանդակներ»* (Թագավորների Երրորդ Գիրք 6, 29; *հմմտ.* 6, 32.35*): «Երկու սյուների համար պատրաստեց նռնաձև զարդեր […] : Կամարի մոտ դրեց մի պսակ […] վրան շուշաններ էին քանդակված: […] Երկրորդ խոյակի շուրջը՝ կարգով շարված երկու հարյուր նռնաձև զարդեր»* (Թագավորների Երրորդ Գիրք 7, 18-20*): «Ձուլածո ավազանը դրված էր տասներկու եզների վրա. երեքը դեպի հյուսիս էին նայում, երեքը՝ դեպի ծով, երեքը՝ դեպի հարավ, երեքը՝ դեպի արևելք»* (Թագավորների Երրորդ Գիրք 7, 25*): «Պատվանդաններն այսպիսի կառուցվածք ունեին. փոսիկները հաջորդում էին միմյանց, և դրանց միջև ելուստներ կային: Ելուստների միջև գտնվող փոսիկների վրա պատկերված էին առյուծներ, եզներ ու քերովբեներ, իսկ փոսիկների վրա պատկերված առյուծներից ու եզներից վերև ու ներքև զարդեր էին կախված»* (Թագավորների Երրորդ Գիրք 7, 28-29*): «Բռնակների ու խորշերի վրա քանդակեց ներսի կողմից շուրջանակի միմյանց դիմաց կանգնած քերովբեներ, առյուծներ ու արմավենիներ»*

(Թագավորների Երրորդ Գիրք 7, 36*): Սողոմոնի տաճարի կառուցումը ավարտվեց Ք.ա. մոտավորապես* 960 *թվականին (հմմտ.* Թագավորների Երրորդ Գիրք 6, 37-38*): Կանգուն մնաց մինչև Ք.ա.* 586 *թվականը, երբ կործանվեց Նաբուգոդոնոսորի զորքի ձեռքով (հմմտ.* Թագավորների Չորրորդ Գիրք 25, 8...*): Հետևաբար, Տասնաբանյան սպացած հրեա ժողովուրդն այդ ամբողջ երկար ժամանակամիջոցն ապրել է զանազան պատկերներով քանդակների ու արձանների հետ, որոնք ոչ թե փողոցներում էին դրված, այլ՝ տաճարի ամենասրբազան սենյակում:*

*Հարց է առաջանում. ո՞րն է, ուրեմն, Տասնաբանյայի առաջին պատվիրանի ճշգրիտ իմաստը: Արդյոք այդ արգելքը պետք է հասկանալ բացարձա՞կ իմաստով, թե՞ հոգևոր իմաստով: Եթե պատասխանենք «բացարձակ իմաստով», ստեղծված իրականությունը ամբողջովին հակասական ու անտրամաբանական կլինի, որովհետև Աստվածաշունչը կհակասի ինքն իրեն: Ուրեմն, մնում է միայն երկրորդ հնարավորությունը, այսինքն՝ Տասնաբանյայի արգելքը պետք է հասկանալ հոգևոր իմաստով. Աստված արգելում է պատկերների հանդեպ ունենալ այն զգացումները, որոնք մարդ պարտավոր է ունենալ միմիայն Աստծո նկատմամբ: Արգելվում է երկրպագել պատկերներին: Եվ իրոք, քրիստոնյաներս երբեք չենք երկրպագում սրբապատկերներին, այլ՝ դրանց միջոցով* մեծարում ենք *պատկերված անձանց, որոնք հերոսության սահման հավատարիմ մնացին Քրիստոսին: Այդ անձերից խնդրում ենք օգնել մեզ, որպեսզի մենք նույնպես կարողանանք հավատարիմ մնալ մեր և իրենց ընդհանուր միակ Աստծուն:*

*Ինչպես նաև, հարցին լեզվաբանական տեսակետից մոտենալով, «երկրպագել» կամ «պաշտել» բառերը միշտ չէ, որ արտահայտում են կրոնական պաշտամունքի իմաստ: «Համերգասրահը լի էր հանրածանոթ երգչուհի Լուսինե Զաքարյանի երկրպագուներով» նախադասության մեջ, «երկրպագու» գոյականը չունի ոչ մի աստվածաբանական և ոչ մի պաշտամունքային արժեք: Հայ ժողովուրդը, Քրիստոսի անվան նկատմամբ իր ամբողջական հավատարմության համար, արժանացել է «խաչապաշտ ժողովուրդ» անվանը, որի համար անսահմանորեն հպարտ եմ որպես հայորդի: Բայց այստեղ նույնպես, «խաչապաշտ» ածականը չի նշանակում, թե հայ ժողովուրդը պաշտում է խաչաձև մի կուռք (քա՜վ լիցի), այլ՝ որ հայ ժողովուրդն իր խաչքարերի միջոցով պաշտում է Խաչյալին՝ Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն կամ Որդի Աստծուն:*

*Սրբապատկերների կամ Խաչի առջև «խոնարհվել»ը նույնպես, կարող է կռապաշտություն դառնալ միմիայն այն դեպքում, երբ արարքը կատարող փվյալ անձը հոգեպես տրամադրված է պաշտելու նյութական պատկերը կամ քանդակը: Աստվածաշնչում ունենք մարդկանց առջև մինչև գետին խոնարհվելու բազմաթիվ օրինակներ, բայց ինչպես կտեսնենք այժմ մեջբերված հատվածներից, արտաքին արարքը ամբողջովին անկարևոր է և ամեն բան կախում ունի հոգևոր ներքին դիրքորոշումից:*

*«Աբրահամը բարձրացրեց աչքերը և իր դիմաց տեսավ երեք տղամարդկանց: Տեսնելով նրանց, իր վրանի դռան մոտից ընդառաջ գնաց, գլուխը խոնարհեց մինչև գետին ու ասաց նրանց […] » (*Ծննդոց 18, 2*):*

*«Երկու հրեշտակները երեկոյան հասան Սոդոմ: [...] Երբ Ղովտը տեսավ նրանց, ընդառաջ գնաց, գլուխը խոնարհեց մինչև գետին ու ասաց [...] »* (Ծննդոց 19, 1):

*«Ինքը [=Հակոբը] նրանցից առաջ անցավ և յոթն անգամ գետին խոնարհվեց մինչև իր եղբորը մոտենալը»* (Ծննդոց 33, 3):

*«Հովսեփի եղբայրները, գալով, գլուխները խոնարհեցին մինչև գետին»* (Ծննդոց 42, 6; *հմմտ.* 43, 26):

*Օրինակներն հնարավոր է բազմապատկել: Կարևորը նկատելն է, որ հրեշտակների կամ ազդեցիկ անձնավորությունների առջև կատարված այս արարքն Աստվածաշունչը չի ներկայացնում որպես պաշտամունք, թեև նույն արարքը (մինչև գետին խոնարհվելը) ուրիշ անգամներ կատարվում է Աստծո առաջ և ներկայանում է որպես իրական պաշտամունք: Այս բոլորից հետևում է մի եզրակացություն. արարքի մեջ չէ, որ կայանում է պաշտամունքը, այլ՝ դիտավորության: Եթե պատկերի առջև մինչև գետին խոնարհվում եմ աստվածային էակի առջև գտնվելու դիտավորությամբ, արարքս կռապաշտություն է: Բայց եթե դիտավորությունս այդպիսին չէ, արարքս նույնպես կռապաշտական չէ: Եհովականներն իզուր են մեղադրում քրիստոնյաներիս, թե իբր պաշտում ենք Աստվածածնին, Սրբերին և Խաչը, որովհետև քրիստոնյաներիս համար Մարիամը երբեք չի եղել աստվածուհի, Սրբերը երբեք չեն եղել աստվածներ, և Խաչը նույնպես՝ երբեք չի եղել կուռք: Իրենց փիմար մտքերի հորինվածքներն են եհովական այս զրպարտությունները:*

*Եհովականները քրիստոնյաներիս մեղադրում են նաև Սրբերի մասունքները պատվելու համար, բայց իրենց սատանայաթույն լեզուները լռեցնելու համար՝ մեջբերում եմ աստվածաշընչյան այս երկու հատվածները:*

*«Մահացավ Եղիսեն և նրան թաղեցին: Հաջորդ տարվա սկզբին, Մովաբի կողոպտիչ զորքը հարձակվեց երկրի վրա: Այդ օրը մի մարդ էին թաղում: Երբ թաղողները տեսան Մովաբի կողոպտիչ զորքին, հանգուցյալին շտապ նետեցին գերեզմանի մեջ: Մեռած մարդու դիակը հազիվ թե դիպավ Եղիսեի ոսկորներին, հանգուցյալը կենդանացավ և ոտքի կանգնեց»* (Թագավորների Չորրորդ Գիրք 13, 20-21):

*«Աստված ո՛չ պակաս զորավոր գործեր էր կատարում Պողոսի միջոցով. մինչև իսկ նրա մարմնին քսված թաշկինակներ կամ վարշամակներ էին տանում հիվանդների մոտ, և ախտերը հեռանում էին նրանցից. և չար ոգիները դուրս էին գալիս»* (Գործք Առաքելոց 19, 11-12):

*Առաջին հատվածից հետևում է, որ Եղիսե մարգարեի ոսկորները (մասունքները) նույն զորությունն ունեին, որն ուներ մարգարեն, երբ ողջ էր (հմմտ.* Թագավորների Չորրորդ Գիրք 4, 3237*): Երկրորդ հատվածից նույնպես հետևում է, որ Պողոս Առաքյալի մարմնին քսված թաշկինակներից (մասունքներից) հեռու են փախչում սատանաները, իսկ հիվանդությունները բուժվում են: Եվ Գործք Առաքելոցի հեղինակը՝ Ղուկաս Ավետարանիչը, հստակ կերպով հաստատում է, որ այդ մասունքների միջոցով կատարված հրաշքներն Աստծո գործն էին: Եհովականների նման կույր պետք է լինել՝ չտեսնելու համար:*

*գ) Վերջապես վերադառնանք քառաթև Խաչին: Դարեր ու դարեր շարունակ, Ավարայրի ճակատամարտից մինչև մեր օրերը, քառաթև Խաչը եղել է Քրիստոսի ճշմարտության հանդեպ հայ ժողովրդի հավատարմության խորհրդանշանը, այն աստիճան, որ բազում ծնողներ իրենց որդիներին անվանակոչել են «Խաչ», Խաչատուր, Խաչիկ, այդ անվան մեջ զգալով Աստվածատուր մի բան: Մեր հայրերն այնքա՜ն խորը համոզումով էին մոտենում քառաթև Խաչին որպես Քրիստոսի նշանը, որ հայերենում «խաչ» և «նշան» բառերը դարձել են հոմանիշներ: Ասելով «Սուրբ Նշան», հասկանում ենք «Սուրբ Խաչ»: Եվ այս անունը նույնպես, բազում սերունդներ գործածել են իրենց որդիներին անվանակոչելու համար. «Նշան»: Եվ ահա չգիտես որտեղից, օվկիանոսի մյուս ափից, Պիտսբուրգի ու Բրուքլինի փողոցների թափթըփուկները, ոմն փսլնքոտ եհովականներ գալիս են մեր ամբողջ պատմությունը ոտնակոխ անելու և մեր բոլոր սրբությունները քանդելու: Հազիվ այբուբեն ստեղծած՝ Աստվածաշունչ ենք թարգմանել, հազար յոթ հարյուր տարի ծառայել ենք Քրիստոսին քառաթև Խաչի դրոշի ներքո, խաչքարերը մեզ վահան դարձրած, մեր ունեցվածքները փրկելու փոխարեն՝ մշակույթ ու մագաղաթ ենք փրկել, և այսօր մի քանի թշվառ տխմարներ համարձակվում են կրոնապաշտություն կոչել Քրիստոսի անվան համար կրած մեր մարտիրոսությունը: .......*

*... Ընթերցողի ներողամտությունն եմ հայցում այս մի պահ բորբոքումիս համար: Շտապեմ վերադառնալ աստվածաբանական քննարկմանը:*

*Նոր Կտակարանը չի նկարագրում խաչը, չի ասում, թե ինչպիսի կառուցվածք ուներ: Իսկ հրեաները մահապատժի էին ենթարկում քարկոծելով (հմմտ.* Գործք Առաքելոց 7*): Բայց Մատթեոսի Ավետարանը տեղեկացնում է, որ Հիսուսին խաչեցին հռոմեական «կուսակալի զինվորները»* (Մատթեոս 27, 26-27.31*), այսինքն՝*

*Պոնտացի Պիղատոսի ծառաները, և հետևաբար՝ կիրառվեց խաչելու հռոմեական եղանակը: Հռոմեական աղբյուրներից գիտենք, որ խաչը կազմված էր երկու գերաններից. մեկն ուղղահայաց, որ լատիներեն կոչվում էր «stipes» կամ «staticulum» և որ տնկվում էր հողի մեջ. մյուսը հորիզոնական, որ կոչվում էր «patibulum»: Այս վերջինը պարաններով կապվում էր դատապարտվածի ուսերին, որը պարտավոր էր քարշ տալ այդ ծանրությունը քաղաքի փողոցներով, մինչև քաղաքի դարպասներից դուրս գալը և հասնելը խաչելության վայր, ուր տնկված էր ուղղահայաց գերանը, որովհետև միշտ խաչում էին քաղաքի պարիսպներից դուրս: Նախ գամում էին դատապարտվածի ձեռքերը, ապա պարաններով քաշելով վեր էին բարձրացնում և հորիզոնական գերանն ամրացնում էին ուղղահայացին: Պետք է նաև ավելացնել, որ ուղղահայաց գերանը որոշ բարձրության վրա ուներ դուրս ցցված մի մաս, որը հունարեն կոչվում էր «pUgma», իսկ լատիներեն «sedile», որի վրա էին հենվում դատապարտվածի ոտքերը: Մահապատժի գործադրման պահերի համաձայն, «crux» (խաչ) բառը մատնանշում էր կա՛մ միայն «patibulum»-ը, կա՛մ էլ «patibulum»-ը և «staticulum»-ը միասին: Հետևաբար, այնպիսին էր, ինչպիսին որ տեսնում ենք շարունակ. հորիզոնական գերան՝ ուղղահայաց գերանի վրա (այս երկու ձևերով. † կամ | ):*

*Ահա լատիներեն երեք վկայություն հռոմեական շրջանի հեթանոս հեղինակներից:*

*«Tibi esse perendum extra portam despissis manibus, patibulum quom habebis» - «Մեռնելու ես քաղաքի դռնից դուրս,* տարածված ձեռքերով, *պատժափայտի վրա, որ ունեիր»* (PLAUTO, *Mostellaria*, I, 1, 56-57)*:*

*«Patibulum ferat per urbem, deinde adfigitur cruci» - «Իր* պատժափայտը *թող կրի քաղաքի փողոցներում, ապա՝ թող բևեռվի* խաչին*»* (PLAUTO, *Miles gloriosus*, II, 4, 67, 358)*:*

*«Patibulo suffixus, in crucem tollitur» - «*Պատժափայտին *գամված, թող* խաչ *հանվի»* (FIRMICO MATERNO, *Mathematica*, VI, 31, 58)*:*

*Հռոմեացի այս հեղինակներին, որոնք անշուշտ շատ լավ էին ճանաչում իրենց պետությունում կիրարկվող մահապատժի եղանակը, ավելացնենք նաև հնագույն քրիստոնյա հեղինակների վկայություններից մի քանիսը, որոնք նույնպես, հռոմեական կայսրությունում ծնված ու մեծացած անձինք լինելով, քաջատեղյակ էին իրականությանը:*

*Առաջին վկայությունը, որն ուզում եմ ներկայացնել, Բառնաբասի Նամակն է, որը բանասերներից ոմանք թվագրում են* 96-98 *թվականներին, իսկ ոմանք՝* 130 *թվականին: Մեկնաբանելով այն դեպքը, որ Աբրահամը թլփատեց իր ազգականներին, թվով* 318 *մարդ (հմմտ.* Ծննդոց 17, 23-27 *և* 14, 14*), տալիս է հետևյալ այլաբանական բացատրությունը. «*18 *թիվը գրվում է մի յոթայով և մի էթայով [այսինքն՝* I=10 *և* H=8*]: Ստանում ենք՝ Հիսուս [այսինքն՝* IH, *որ* «IHSOYS»*ի համառոտությունն է]: Ապա, Աստվածաշունչն ավելացնում է* 300 *[որը հունարենում գրվում է* T *], որովհետև թաու տառը [* T *] պատկերում է խաչը, որից ստացանք մեր փրկությունը: Եզրակացնելով, առաջին երկու տառերով [* IH *] խորհրդանշում է Հիսուսին, երրորդ տառով [* T *] խորհրդանշում է խաչը» (Բառնաբասի Նամակը,* 9, 8*):*

*Երկրորդ վկայությունը Սբ. Հուստինոսինն է, որն ապրել է մոտավորապես* 100-163 *թվականներին: Վկայությունը գտնվում է իր «Երկխոսություն Թրիփոն հրեայի հետ» աշխատությունում (*90, 4*), որը գրել է մոտավորապես* 150 *թվականին: Հրեաների ու ամաղեկացիների միջև ճակատամարտի ընթացքում (հմմտ.* Ելից 17, 11*) «Մովսեսն ինքը աղոթում էր Աստծուն, վեր բարձրացրած և տարածած ձեռքերով (tas chniras ekatnrÑs ekpetΩsas): Օվրը և Ահարոնը օգնում էին նրան ամբողջ օրը վեր բարձրացրած պահել ձեռքերը, որպեսզի վար չիջեցներ: Իրոք, երբ պարգևում էր խաչին նմանվող այս նշանը (tЯn staurЯn mimoumnnou), ժողովուրդը հաղթում էր»: Ուրեմն, խաչը նման էր ձեռքերը տարածած մարդու:*

*Երրորդ վկայությունը Սբ. Երանոսինն է, որն ապրել է մոտավորապես* 140-202 *թվականներին: Իր ամենակարևոր աշխատությունում («Ընդդեմ հերետիկոսությունների»), Երանոսն այսպես է նկարագրում խաչը. «Խաչի ձևն ինքնին ունի հինգ կետ, կամ ծայր. երկուսն ըստ երկարության, երկուսն ըստ լայնության և մեկը մեջտեղում, որի վրա էր հանգչում նա, ով բևեռվում էր գամերով» (*II, 24, 4*): Ուրեմն, ուղղահայաց գերանից բացի, խաչն ուներ նաև հորիզոնական գերան:*

*Չորրորդ վկայությունը Տերտուղիանոսինն է, որն ապրել է մոտավորապես* 160-222 *թըվականներին: Իր «Աղոթքի մասին» աշխատությունում, որը գրել է մոտ* 200-206 *թվականներին, ասում է, որ խաչը նման է սավառնող թռչունին. «Թռչունները նույնպես, երբ արթնանում են, բարձրանում են դեպի երկինք և ձեռքերի փոխարեն բացում են թևերի խաչը (alarum crucem pro manibus expandunt)» (*29, 4*):*

*Այս քրիստոնյա հեղինակների վկայությունները լիովին համապատասխանում են հռոմեացի հեթանոս հեղինակների նկարագրություններին: Պետք է հիշել, որ մեջբերված քրիստոնյա*

*այս հեղինակները Չորրորդ դարից առաջ են, այսինքն՝ ապրել են այն դարաշրջանում, երբ Քրիստոնեությունը փակավին պետական կրոն հռչակված չէր ոչ մի պետությունում: Այս հնագույն հեղինակների օգնությամբ տեսանք, որ քառաթև խաչի դեմ երեկ (հազիվ հարյուր տարի առաջ) ծնված թշվառ եհովականների ուսուցումը ոչնչով չի համապատասխանում իրականությանը:*

*դ) Երբ անելիք այլևս ոչինչ չեն ունենում, քանի որ սատանայական լինելու աստիճան համառ են, եհովականները սկսում են առաջ բերել մի քանի ողորմելի ընդդիմություններ, որոնցից երեքը ներկայացնում եմ այստեղ, որպեսզի մեր քրիստոնյա հավատացյալներն իմանան, թե ի՞նչ պետք է պատասխանեն նրանց:*

*Առաջին ողորմելի ընդդիմությունը հետևյալն է. «Խաչը գործածվել է որպես Թամմուզ (հեթանոսական) աստծո նշան» (Accertatevi, 127): Արդեն պատասխանեցինք այս ընդդիմությանը, բայց ուզում եմ կրկնել, որ մեր համար կարևոր չէ, թե աշխարհիս վրա գոյություն ունեցող առարկաներն ի՞նչ իմաստ են ունեցել հեթանոսական աշխարհում: Մեր՝ քրիստոնյաներիս համար Խաչը մեր փրկության նշանն է, մեր հանդեպ Քրիստոսի աստվածային կատարյալ սիրո նշանը: Պողոս Առաքյալը գրում է. «Ես նույնպես խաչված եմ Քրիստոսի հետ և այլևս ես չէ, որ ապրում եմ, այլ՝ Քրիստոսն Ինքն է ապրում ինձնում: Մարմնի մեջ այս կյանքը ես ապրում եմ Աստծո Որդու հանդեպ հավատքով, որը սիրեց ինձ և իմ համար զոհաբերեց իրեն [=իմ սիրո համար կամովին մահացավ խաչի վրա]» (*Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 2, 20; *հմմտ.* Պողոս Առաքյալի Նամակը Եփեսացիներին 5, 2*): «Խաչի մասին խոսքերն, իրոք, հիմարություն են կորստյան մատնվածների համար, բայց նրանց համար, ովքեր փրկվում են, մե՛ր համար, Աստծո զորությունն են» (*Պողոս Առաքյալի Առաջին Նամակը Կորնթացիներին 1, 18*):*

*Երկրորդ ողորմելի ընդդիմությունը բանավոր կերպով լսեցինք երկու եհովականներից.*

*«Քրիստոսն այժմ այլևս խաչի վրա չէ: Ուրեմն, անիմաստ է խաչի նշանը»: Սրանով եհովականները փաստում են, որ ոչ մի գաղափար չունեն Քրիստոսի կողմից իրականացված տիեզերական, համընդհանուր և հավիտենական փրկության վերաբերյալ: Քրիստոսի կողմից իրականացված փրկագործությունը մի օրվա միայն վերաբերվող իրականություն չէ, որ կատարված լինի Ավագ Ուրբաթ օրը և վերջ: Քրիստոսի պարգևած փրկությունը, Իր չարչարանքների արժանիքները, տարածվում են բոլոր սերունդների վրա:* Հովհաննեսի Հայտնության *գրքում կարդում ենք. «Ապա, չորս կենդանի էակների և*

*երեցների կողմից շրջապատված գահի մեջտեղում տեսա* կանգնած *մի Գառ, ինչպես* մորթված*»* (Հովհաննեսի Հայտնություն 5, 6*): Երկնային իրականությունների տեսիլքում Հովհաննես Առաքյալը Քրիստոսին տեսնում է հարություն առած* («կանգնած»*) չարչարանքների արժանիքների հետ* («ինչպես մորթված»*):*

*Երրորդ և ամենաառողորմելի ընդդիմությունը սա է. «Բնական չէ թանկագին համարել և պատվել այն գործիքը, որով սպանել են մեկին, ում սիրում ենք» (La verità che conduce alla vita eterna, 143): Նախ պետք է ասեմ, որ սա եհովական ամենակեղտոտ կեղծավորությունն է, որովհետև եհովական հերետիկոսներն անգամ մի կաթիլ սեր չունեն մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ. անշուշտ, ինչպե՞ս կարող է ստախոսը սիրել Ճշմարտությունը: Իսկ անցնելով բուն պատասխանին, ասեմ, որ մենք Խաչը չենք պատվում, որովհետև դրանով սպանեցին Քրիստոսին (բացասական իմաստ), այլ՝ որովհետև Խաչի միջոցով Աստված հայտնեց մեր հանդեպ Իր սիրո ամբողջական գերառատությունը և պարգևեց մեր հավիտենական փրկությունը (դրական իմաստ): Կարող ենք նաև մի պահ լսել Պողոս Առաքյալին. «Ինչ վերաբերվում է ինձ,* ուրիշ պարծանք չունեմ, *եթե ոչ միայն՝* խաչը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, *որով աշխարհն իմ համար խաչված է, ինչպես ես՝ աշխարհի» (*Պողոս Առաքյալի Նամակը Գաղատացիներին 6, 14*): Եթե եհովականներն ուզում են իրական քրիստոնյաներ լինել, պետք է վարվեն Պողոս Առաքյալի նման, պետք է պարծենան Քրիստոսի Խաչով և ո՛չ թե արհամարհեն այն:*

ՇԱՏԵՐԸ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄՆԵՐ
ԱՍԵԼ ԵՄ ՁԵԶ ԵՎ ԱՅԺՄ ԷԼ ԼԱԼՈՎ ԵՄ ԱՍՈՒՄ,
ՎԱՐՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ԹՇՆԱՄԻՆԵՐ:
ԱՅԴՊԻՍԻՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ ԿՈՐՈՒՍՏՆ Է:
ՆՐԱՆՑ ԱՍՏՎԱԾԸ ԻՐԵՆՑ ՈՐՈՎԱՅՆՆ Է, ԻՍԿ ԻՐԵՆՑ
ՓԱՌՔՆ՝ ԻՐԵՆՑ ԱՄՈԹՈՒՅՔԸ:
ՆՐԱՆՔ ՄԻԱՅՆ ԵՐԿՐԱՎՈՐ ԲԱՆԵՐ ԵՆ ԽՈՐՀՈՒՄ:

Պողոս Առաքյալի Նամակը
Փիլիպեցիներին, 3, 18-19

# ՀԱՎԵԼՎԱԾ

## Մի քանի վկայություններ

*Այս աշխատության ավարտին, կամենում եմ ներկայացնել մի քանի վկայություններ, որոնցում նախկին Եհովայի Վկաներ պատմում են իրենց փորձառությունը, որ ունեցել են այդ հերետիկոսական աղանդի շարքերում լինելու ժամանակ և հետո: Բավարարվում եմ սակավաթիվ՝ ընդամենը չորս վկայություններով, որովհետև եհովականությունից Քրիստոնեության վերադարձած անձանց վկայություններով՝ արևմտյան աշխարհում ձևացել ու հրատարակվել են բազմաթիվ հատորներ, որոնք ամբողջովին անհնարին է այստեղ մեջբերել: Տարեկան տասնյակ հազարավոր մարդիկ լքում են Եհովայի Վկաների կազմակերպությունը, որովհետև որոշ ժամանակ դրան անդամակցելով, դրա գաղափարներին ավելի մոտիկից ծանոթանալով և շփվելով ավագ անդամների հետ, բոլորն էլ հասկանում են, որ Եհովայի Վկաների Բրուքլինի «Դիտարան» Ընկերությունը կրոնական հաստատություն չէ, այլ՝ բանկիրների ու լրտեսների մի խմբավորում, որը խարդախությամբ զգեստավորվել է կրոնական կերպարանքով, «գառան մորթ հագած գայլ», որ գիտի խաբել միամիտներին և պարզ անուս մարդկանց: Եհովականության շարքերում շարունակում են մնալ միայն հոգեբանական սկար նրկարագրի տեր, սեփական կամք չունեցող և սեփական ընտրությամբ որոշումներ կայացնելուն անընդունակ, ուսումներ չստացած և կրոնական լուրջ գիտելիքներից զուրկ անձինք, կամ էլ նրանք, ովքեր գիտակից են եհովականության ի՛նչ լինելուն, բայց շարունակում են նրանում մնալ, որովհետև ծախել են իրենց հոգին փողին ու ....... :*

*Հուսով եմ, որ այս վկայությունները կծառայեն լրացնելու սույն աշխատության էջերում քննարկված հարցերը, կօգնեն Եհովայի Վկաներին միամտությամբ անդամակցած մեր հայրենակիցներին գտնելու ճշմարտությունը, գտնելու Քրիստոսի իրական հավատքը և առանց երկմտանքների խզելու բոլոր կապերը Եհովայի Վկաների հետ, ինչպես նաև դառնալու վկաները Քրիստոսի ճշմարիտ հավատքի, իրենց ընտանիքներում և շրջապատում: Անհունորեն ուրախ կլինեի, եթե մի օր այս հավելվածում օտարազգի անձանց վկայությունների կողքին՝ կարողանայի ներկայացնել նաև մեր հայրենակիցների կողմից տրված վկայությունները, վկայություններ վերադարձի ու ճշմարտության: Այս հատորի տպագիր առաջին,*

*երկրորդ և երրորդ հրապարակությունները ժողովրդին բաժանելուց հետո մեզ հասան հարյուրավոր ու հարյուրավոր լուրեր ամեն կողմից, որ ազդարարում էին ընթերցողների հեռանալը եհովական հերեփիկոսությունից: Այս թվային հրապարակության առիթով խնդրում եմ, որ եթե այս հատորը որևէ մեկին կծառայի վերագտնելու քրիստոնեական իրական հավատքը, բարությամբ հաճի գրավոր տեղեկացնել մեզ այդ ուրախալի իրականության մասին: Գործածեցեք հետևյալ հասցեները.*

*համացանցային կայք.* www.mashtoz.org *, նամակատար.* info@mashtoz.org *:*

*Կանխավ շնորհակալություն եմ հայտնում:*

## 1. Թողնում եմ ձեզ՝ Քրիստոսին հետևելու համար

*Սիրելի ընկերներ,*

*սկսում եմ գրել այս նամակս սրտի մեծ կսկիծով, բայց գտնում եմ, թե անելիք լավագույն բանն է: Սրանով հայտնում եմ ձեզ կամքս՝ լքելու Եհովայի Վկաների կազմակերպությունը, հատկապես որովհետև այժմ հասել եմ լիակատար համոզմանը, – հակառակ այն ամենին, ինչ մեզ սովորեցնում էին և ինչին որ մենք հավատում էինք, – որ այդ կազմակերպությունն Աստծո ժողովուրդը չէ և իր ուսուցումները հիմնված չեն Աստվածաշնչի վրա: Ես մի տարեց կին եմ և ավելի քան երեսուն տարի համարել եմ Կազմակերպությունը իմ տունն ու իմ ընտանիքը: Ամեն բան արեցի, որպեսզի որդիներս նույնպես հետևեին այն հավատքին, որը համարում էի ճշմարիտ, և նրանցից երեքը դարձան Եհովայի Վկա, իսկ մեկը՝ մինչև իսկ Երեց: Կյանքիս ընթացքում երբեք չունեցա կասկածներ, թե ճշմարտության մեջ էի կամ ո՛չ: Նույնիսկ երբ տեսնում էի, որ իրողությունները չէին ընթանում այնպես, ինչպես պետք է որ ընթանային, վստահ էի, որ Աստված ամեն հարց կլուծեր ի սեր իր ժողովրդի: Բայց ստիպվեցի համոզվել, որ Աստված գործ չունի այդ կազմակերպության հետ (անշուշտ շատ հաշիվներ ունի մաքրելիք այդ կազմակերպության ղեկավարների հետ, կենտրոնական Ղեկավար Մարմնից մինչև տեղական Երեցները): Թերևս եղբայրների ու քույրերի մեծամասնությունը, որն իմ նման պարզ է և շատ ուսումներ չստացած, բարի հավատքով է տրամադրված և հավատում է իր գործերին, բայց ո՛չ անշուշտ մյուսները ... : Քանի որ արդեն տարեց կին եմ, ամբողջովին ապրել եմ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի սարսափները և տակավին կենդանի հիշողությունն ունեմ, թե ինչպես էին այն օրերին խոսում նացիստների և նրանց ահավոր ոստիկանության մասին. Գեստապոն: Սարսափելի է ասելը, բայց այս վերջին ժամանակներում այդ վաղեմի հիշատակներն իրականություն դարձան իմ մաշկի վրա, միայն թե այժմ Գեստապոն չէր, այլ՝ իմ Կազմակերպության ”սիրալիր” հովիվներն էին հագել այդ զգեստները:*

*Քանի որ որդիներիցս մեկը, իր խղճի ձայնին հետևելով, որոշեց այլևս չպատկանել Եհովայի Վկաների Կազմակերպությանը, լիովին շարունակելով ապրել որպես քրիստոնյա, իմ մոտ եկան Երեցները և առջևս դրին այս ընտրանքը. կա՛մ պիտի մերժեի որդուս և խզեի իր հետ կապերս, կա՛մ էլ կհեռացնեին ինձ Կազմակերպությունից և այդպիսով կզրկվեի մայրական ամենամեծ գորովից, մյուս երկու որդիներիցս, որոնք տակավին Վկաներ են: Աղաչեցի «նացիստ գործակալներին», բացատրեցի, որ մոր և որդու միջև սերն Աստծո*

*պարգևն է, որը ոչ մի մարդ չի կարող խեղդել, ինչպես նաև ասացի, որ որդիս շարունակում է ապրել Քրիստոսի հետ: Ոչ մի արժեք չունեցան արցունքներս ու աղաչանքներս, չնպաստեց երեսուն տարվա ծառայությունս Կազմակերպությանը, ո՛չ էլ սպիտակ մազերս: «Բոլորի առաջ պետք է ուրանաս որդուդ, նաև այստեղ՝ մեր առաջ», ասում էին: «Պետք է ասես, որ ուրացող է, ապա թե ոչ՝ թերանում ես Կազմակերպության հանդեպ հավատարմության մեջ», շարունակում էին անտեղիտալի կեցվածքով: Փակ դռների ետևում վրդովեցուցիչ հարցաքննումից հետո միայն, առավել անդորր տոնով ինքս ինձ հարցրեցի, թե արդյոք սա՞ էր այն, ինչ սովորել էի Քրիստոսի մասին, ուսումնասիրելով Աստվածաշունչը: Չեմ կարողանում երևակայել, թե Հիսուսը արգելում է իր աշակերտներին սերտ կապեր պահպանել իրենց ազգականների հետ, սպառնալով դուրս վռնդել կազմակերպությունից: Պաշտպանելու համար Կազմակերպության անմարդկային քաղաքականությունը, ինչ-որ մեկը մեջբերեց Մատթեոս* 10, 35-37 *հատվածի խոսքերը, ուր Հիսուսն ասում է. «Ով իր հորն ու մորը սիրում է ինձնից ավելի, ինձ արժանի չէ» և «եկել եմ բաժանելու, մարդուն իր հոր դեմ հանելու»: Միայն թե այնտեղ Մատթեոսը ցույց է տալիս, որ Հիսուսն Ինքն է բաժանելու և ո՛չ թե ինչ-որ մի կազմակերպություն, իսկ բաժանումը լինելու է արդյունքը Քրիստոսին չսիրելու անհատական որոշման: Բայց ես և իմ որդին սիրում ենք Քրիստոսին մեր ամբողջ սրտով: Միայն թե նախ նա և այժմ ես՝ այլևս չենք կարողանում տեսնել Քրիստոսին Եհովայի Վկաների Կազմակերպության մեջ:*

*Միշտ մտածում էի, թե Եհովայի Վկաներն էին ճշմարիտ քրիստոնյաները, որոնց մասին խոսում է Աստվածաշունչը, որոնց հատկանիշն է խոր սերը, քրիստոնեական մարդասիրությունը և բարեհար արտահայտությունները: Բայց դժվար է հավատալ, թե քանի՜ քանի՜ զըրպարտիչ, չարախոս, ատելությամբ լի արտահայտություններ եմ ստիպված եղել լսելու Կազմակերպության մեջ՝ որդուս և ուրիշ Վկաների ետևից, որոնք որոշում էին լքել Կազմակերպությունը: «Շներ, խոզեր, ճարագործներ, գողեր, պոռնիկներ, անբարոյականներ». սրանք արտահայտություններ են, որ սովորական են ''եղբայրների'' համար: Ո՞ւր է Քրիստոսի հեզությունը, սերը: Ներկա եղա մի մրցույթի, թե ով էր կարողանալու ամենավարկաբեկիչ զրախոսությունը հորինել այն անձանց հասցեին, որոնց միակ մեղքը իրենց նման չմտածելն էր: Չեմ զարմանա, եթե նույնը կրկնվի նաև իմ պարագային:*

*Կուզեի ավելացնել մի ուրիշ բան ևս, և կարող եմ վստահեցնել, որ սա միմիայն իմ կարծիքը չէ, այլ՝ Կազմակերպության շատ անդամներ մտածում են այսպես, միայն թե վախենում են խոսել (այո՛, որովհետև*

*ո՛չ թե սերը, այլ՝ վախն է փիրում Միրակուզայի մասնաճյուղում): Կամենում եմ ասել, ամենայն քաջությամբ, որ Ընկերությունը բաոխ բուն իմաստով ծծում է մեր արյունը ֆինանսական առումով: Երբ ես ծանոթացա Եհովայի Վկաներին, կար միայն մեկ արկղ՝ նվիրատվությունների համար. հիմա դրանք հինգն են և որոշ հատուկ պարագաներում ավելի են բազմանում.* 1) *Նվիրատվություններ Արքայության Սրահի համար.* 2) *Նվիրատվություններ Արքայության նոր Սրահներ կառուցելու համար.* 3) *Նվիրատվություններ ժողովասրահների համար.* 4) *Նվիրատվություններ քարոզիչների համար.* 5) *Նվիրատվություններ Արքայության գործի համար: Շարքային եղբայրները բառիս բուն իմաստով քամված են մինչև ոսկորները և այլևս չեն կարողանում, այնքա՛ն, որ տնտեսական պատճառներով երկու կենտրոններ փակվելու են մեր քաղաքում:*

*Հիշում եմ, որ երբ հաճախում էի Քրիստոնյա Եկեղեցի, մի մարդ անցնում էր փոքրիկ ափսեով և ով կամենում էր, տալիս էր, իսկ ով չէր կամենում, չէր տալիս: Բայց միևնույնն է, տրվում էր շատ քիչ: Եհովայի Վկաների մոտ, սակայն, տարբեր է: Չկա գրեթե ոչ մի հավաք, որի հիմնական նյութը չլինի դրամը, և ով ի վիճակի չէ նվիրատվության, իրեն հանցավոր է զգում, որովհետև կարծում է, թե բավական երախտագիտություն չի ցուցաբերում Աստծո նկատմամբ: Եվ «Դիտարան»ն ուրիշ ոչինչ չի անում, այլ միայն՝ հիշեցնում է մեզ, թե եթե կամենում ենք ստանալ Աստծո օրհնությունը, պարտավոր ենք առատ դրամ տալ կազմակերպությանը (տե՛ս Դիտարան,* 01.07.1988*, էջ* 11*): Չխոսելու համար այն փաստերի շուրջ, որոնց հանդիպում ենք այս վերջին ժամանակներում «Դիտարան»ի ռեկլամների թվի էջերում: Գրեթե թվում է, թե «Կազմակերպությունը», առանց բացահայտ ասելու, ուզում է, որ Սուրբ Ծննդյան նվերներ տանք իրեն: Թող բոլորի համար օրինակ լինի «Դիտարան»ի* 1988*ի դեկտ.* 1*ի թիվը, էջ* 2.931*, ուր, շատ լավ իմանալով, որ ռեկլամները տասներեքերորդ ամսավարձի և Սուրբ Ծննդյան կապակցությամբ հավելյալ վարձատրությունների ամիսն է, դրամ է պահանջում մեզնից ավելի լկտի եղանակով. ուղղակի հրավիրում է մեզ՝ տալու իրեն մեր ամբողջ դրամը, թողնելով, որ ինքը տնօրինի այն: Բավական ժամանակ ընկերությանն անդամակցած եղբայրներ մնացին ապշած: Կարդալուց հետո «Դիտարան»ի դաժան քննադատությունները Մարչինկուս եպիսկոպոսի դեմ, որին անվանում էին «Աստծո բանկիրը», այժմ ճիշտ Ընկերությունն ինքն է, որ դարձել է «Եհովայի բանկիրը», ցանկանալով տնօրինել մեր ունեցվածքները: Շա՜տ տարիներ առաջ պարծենում էինք մեր համեստության համար և դատապարտում էինք եկեղեցիների ճոխությունն ու ագահությունը: Այժմ իրավիճակը ճիշտ հակառակն է: Տեսնում եմ արվարձանների բազմաթիվ եկեղեցիները, որոնք*

*տարիներով մնում են խեղճ ու չզարդարված, կամ էլ խրճիթների մեջ են ու ավտոտնակների, մինչդեռ Եհովայի Վկաների համագումարների սրահներն ու մասնաճյուղերը անսահման շքեղության շինություններ են, իրական դրամակեր մեքենաներ (տե՛ս օրինակի համար Jersey City-ի համագումարների սրահը և Selters-ի գերմանական մասնաճյուղը): Ո՞ւր վերջացավ մեր պարզունակությունը, մեր համեստությունը: Կամաց-կամաց տեսա, թե ինչպես այս ընկերությունը դարձավ արդյունաբերական կազմակերպություն, ուր ով չի արտադրում, հանդիմանվում է: Բոլոր ժողովների նյութը ավելի շատ թվով գրքեր ու թերթեր «տեղավորել»ն է, կարծես թե «տեղավորել» բառը, «վաճառել»ու փոխարեն, փոխում է ինչ-որ մի բան: Շրջանի տեսուչի բոլոր այցելությունների նյութն են միջինները, ժամերը, թերթերը, նոր մարդիկ հրավիրելը անդամակցելու ընկերությանը և նվիրատվությունները:*

*Կարող էի շարունակել, որովհետև մեծ է վիշտս այն ամենի համար, որ ստիպված եղա կրել, բայց կամենում եմ ասել մի վերջին բան ևս. թերևս կկարողանայի կրել այդ բոլորը և կշարունակեի ընդունել Ղեկավար Մարմնի սխալները, ստախոսություններն ու հակասությունները, եթե միայն թե սեր տեսնեի գործի հանդեպ, որովհետև «սերը ծածկում է բազում հանցանքներ»: Բայց «նացիստների» սրտում սեր չկա, և այս իսկ պատճառով է, որ կյանքս ձեր հետ վատնելուց հետո, թողնում եմ ձեզ՝ Քրիստոսին հետևելու համար:*

*Այնուամենայնիվ, ողջունում եմ ձեզ սիրով:*

**Գրացիելլա Ֆիոռե**, *Սիրակուզա*

## 2. Աղոթելու եմ նրանց համար, ովքեր չարիք գործեցին իմ նկատմամբ

*Անունս Վինչենցո Աբբատե է, ծնվել եմ Քանիքատթիում,* 16.08.1952*ին:*

*Մինչև 23 տարեկան հասակս՝ կաթոլիկե քրիստոնյա էի, ինչը որ սովորական է իտալացիներիս մեծամասնության համար, որովհետև այն ժառանգել ենք մեր ծնողներից: Եհովայի Վկաների հետ առաջին շփումս ունեցա եղբորս միջոցով, որը տեղափոխվել և բնակություն էր հաստատել Շվեյցարիայում և այնտեղ ընդունել էր այդ նոր ու խանդավառիչ կրոնն իր կնոջ և երկու փոքրիկ երեխաների հետ միասին: Որոշ ժամանակ անց, եղբայրս վերադարձավ Իտալիա և կրկին բնակություն հաստատեց Փուլիայում, որը կնոջ ծննդավայրն էր և ուր հաճախ գնում էի նրանց այցելելու, և իրենք էլ պարբերաբար առաջնորդում էին ինձ Եհովայի Վկաների ժողովասրահը, որն անվանում էին Արքայության Սրահ: Կարող եք երևակայել. բոլորի ուշադրության կենտրոնում էի, բոլորի աչքին մի մեղավոր էի, որին կարող էին քարոզել և դարձի բերել: Յուրաքանչյուր հարցմանս խկույն տրվում էր մի պատասխան, որը կնճռոտ ոչինչ չէր թողնում: Ասում էին, թե աշխարհի վախճանը մոտ էր, ուղղակի՝ մի քանի ամսից, կամ ինչպես հաստատեց «Դիտարան» Ընկերության ներկայացուցիչներից մեկը Պալերմոյում, հավանաբար այդ նույն տարվա ընթացքում:*

*Եղբայրներից մեկի պնդումներին տեղիք տալով, սկսեցի զբաղվել իրենց աստվածաշընչյան ուսումներով, որոնք անհրաժեշտ էին մոտալա կործանումից ազատվելու և փրկությունը ստանալու համար, որը վերապահված էր միայն Եհովայի Վկաներին: «Դեպի հավիտենական կյանք առաջնորդող ճշմարտությունը» գրքի օգնությամբ՝ ամեն բան ինձ թվում էր համոզիչ, հիանալի, աքանչելի: Փրկության ճանապարհը դա էր, կասկածներ չկային:*

*Արագընթաց առաջխաղացում ունեցա և սկսեցի ուրիշներին նույնպես քարոզել այն, ինչը սովորել էի մեծ եռանդով ու համոզմամբ, այն աստիճան, որ ուսումները սկսելուցս միայն ութ ամիս անց խնդրեցի մկրտվել: Բեմի ետևում կատարվող գործերին անտեղյակ, մկրտվեցի 1976ի մայիսին, իմ իսկ ծննդավայրում, տեղական մի խմբավորման կողմից, որպես Բրուքլինի «Դիտարան» Ընկերության քարոզիչ, առանց որևէ պայմանների:*

## Առաջին կասկածները

*Մի քանի տարի ամեն բան թվում էր անթերի. կազմակերպությունը, ուսուցումները, եղբայրական հասարակությունը: Բայց, երբեմն-երբեմն, կազմակերպչական այդ գրեթե անթերի մեքենան փչանում էր: Ով իր բախտն էր փորձում՝ կատարելու նույնիսկ թեթև կազմակերպչական քննադատություն, որակավորվում էր կործանարար: Երեցները անձեռնմխելի էին. իրենք*

*հսկում էին հոտին, բայց հոտը նույնը չէր կարող կատարել իրենց նկատմամբ, և ով համարձակվում էր կատարել, ապատամբում էր սուրբ հոգու դեմ, որն իրենց նշանակել էր հսկիչներ: Հետևաբար, մենք ենթակա էինք իրենց քմահաճույքին և իրենք կարող էին հրամաններ արձակել մեր նկատմամբ ինչպես հաճելի էր իրենց:*

*Երբ այցելության էին գալիս շրջիկ հսկիչներ, Կազմակերպությունը մի շաբաթ անընդհատ շարժման մեջ էր հայտնվում, չափազանց կեղծ սիրով ու եռանդով, գրկախառնումներով, ժպիտներով, նվերների տուփերով, ծառայականությամբ ... և այդ ամեն ինչը, մի քանի օր հետո, չքանում էր: Կազմակերպության ներկայացուցիչներն արիստոկրատների տեղ էին դնում իրենց, իսկ մենք՝ խեղճ սկսնակներս նրանց առջև մուրացկաններ էինք թվում: Ուրախությունը կամաց-կամաց անհետանում էր և հարցնում էի ինքս ինձ. ո՞ւր է սերը, հավասարությունը և աստվածապետությունը, որ սովորեցրել էին ինձ: Եվ ի՞նչ իրավունքով են քննադատում Քրիստոնեությանը, թե մարդկությունը բաժանել է քահանաների ու աշխարհականների, երբ իրենք իրականում բաժանել են տերերի ու ստրուկների:*

*Կազմակերպության մեջ այն քչերից մեկը եղա, որ քաջությունն ունեցան դիմակազերծելու անարդարությունն ու իշխանության չարաշահումները եւ, որպես բնական հետևանք, երբեք պատասխանատու պաշտոններ չստացա Կազմակերպության գրկում: Բայց դա չխանգարեց ինձ լավագույնս ճանաչելու իրականությունը և հասունանալու:*

*Միայն այժմ եմ հասկանում. Կազմակերպությունը ցանկանում է ռոբոտների վերածել իր անդամներին, կիրառելով ուղեղի մի ամբողջական լվացում. չմտածել, չլսել, չտեսնել, որովհետև սրանք գործեր են, որ վայելում են միմիայն Բրուքլինի Ղեկավար Մարմնի պապիկներին: Ով ամբողջովին հլու հպատակ չի դառնում, նկատվում է որպես խանգարող անձնավորություն. ավելի լավ է ձերբազատվել այդպիսի մեկից: Ուրիշ ավելի միամիտներ, որ ծանր թերություններ են նկատում Երեցների ու հսկիչների վրա, հանդարտեցվում են պարզապես խոստանալով, որ Եհովան մի օր դուրս կնետի անարժաններին: Տասնչորս տարիների ընթացքում, որ անցկացրեցի այդ Կազմակերպության մեջ, տեսա շատ ու շատ պակասություններ, որոնք Կազմակերպությունը չի խոստովանում, թե թույլատրում է, և կարծում եմ, որ երբեք էլ չի ընդունի, քանի դեռ շարունակում է ուսուցանել, թե միմիայն Եհովայի Վկաների Կազմակերպությունում կա հոգևոր, բարոյական և մարմնական մաքրություն, և թե նրանից դուրս կա միմիայն կորուստի ճանապարհը: Չափազանց հեշտ է Աստվածաշնչի պատվիրանների գործադրումն ուրիշներից պահանջելը, բայց երբևէ հարցրե՞լ են իրենք իրենց, թե Եհովայի*

*Վկաներն իրենք ինչպե՛ս են ագահությամբ մրցակցում միմյանց միջև, ինչպե՛ս են վազում բարձր պաշտոնների հասնելու համար, ինչպե՛ս են ուղեղի լվացումով խաբում միամիտ մարդկանց, ինչպե՛ս են գործադրում հոգեբանական բռնություններ (որոնք առավել վնասակար են, քան մարմնականները), ինչպե՛ս են սպառնալիքներով ափիպում մարդկանց կապարելու ղեկավարների կամքը, հրաժարվելու անձնական արժանապատվությունից: Սրանք բաներ են, որ սովորական են Եհովայի Վկաների Կազմակերպությունում:*

## Հեռացումը

*Այնուամենայնիվ, չէի կարողանում լքել Կազմակերպությունը, որովհետև շատ դժվար է դա անել սեփական նախաձեռնությամբ: Քանի՜ անգամներ փորձեցի և քանի՜ անգամներ հրաժարվեցի: Շատ բաներ էին կապում ինձ Կազմակերպությանը. այդքան տարիների հավատքի ընկերներս, ազգականներս, որոնք Եհովայի Վկա էին, և մինչև իսկ ընտանիքիս ամենամտերիմ անդամները: Պայքարեցի մի քանի տարի, օր ու գիշեր տառապելով. վիճաբանություններ կնոջս հետ, որ ծնված օրից Եհովայի Վկա էր, և իր ընտանիքի անդամների հետ, որոնք պատկանում էին այդ հավատքին: Այնքան սարսափելի էր, որ միայն ով ունեցել է իմ միևնույն փորձառությունը, կարող է հասկանալ ինձ:*

*1986ի Օգոստոսին կարողացա առաջին անգամ թողնել կազմակերպությունը և այդ օրից ի վեր հասկացա, որ անդամագրվել էի բոլոր պատիվներով ճոխացած և դուրս էի գալիս անբարոյականներին, կռապաշտներին, կեղեքողներին ու հայհոյողներին հավասար որակավորված, պարզապես որովհետև այլևս չէի ընդունում Բրուքլինի հրահանգներն իմ կյանքից ներս:*

*Հեռացումիս լուրը Կազմակերպությանը հաղորդվելու հաջորդ օրը բոլոր ''եղբայրները'', նաև ամենամտերիմները, որոնք ինձ ընկերացել էին միասին անցկացված ճաշկերույթներում, ընթրիքներում ու երեկույթներում, տեսնելով ինձ՝ փախչում էին, կարծես թե բորոտ լինեի: Եհովայի Վկա եղող ազգականներս խզեցին իմ հետ ունեցած բոլոր կապերը, բարև անգամ չէին տալիս, իսկ մոտակա խմբավորումներին ուղարկվեցին հանձնարարական նամակներ. «Ուշադրություն դավաճանին»: Ենթարկվեցի ամեն տեսակի վարկաբեկման և, վերջում, ամբողջական կղզիացման: Միայն Աստված գիտի, թե որքան տառապեցի: Մխիթարության ոչ մի խոսք, չկար ոչ մեկը, որ մի ձեռք տար ինձ: Նույնիսկ կինս պնդում էր. «Դու ինքդ կամեցար»: Տարիներ շարունակ Կազմակերպությունն էր եղել իմ աշխարհը և, մի վայրկյանում, գտա ինձ միայնակ ու անտեսված:*

*Կղզիացումը Դիփարանի Ընկերության հաղթական զենքն է հեռացողներին հնազանդված ու սպորացած վերադառնալ սփիպելու համար, և հաջողություն ունեցավ նաև իմ պարագային: Հինգ ամիս մնացի դրսում, հուսալով չվերադառնալ այլևս երբեք, բայց փեսնելով, թե ինչպես էին կինս և երկու երեխաներս աշնանային երեկոներին գնում Արքայության Սըրահ, սկսեցի մփածել, որ թերևս սխալվել էի, որ խորքում դա էր Ասփծո Կազմակերպությունը և որ միայն մարդիկ էին խավարեցնում նրա պափկերը:*

*Դիփարանի Ընկերությունը շահագործում է ընփանեկան ամենասրբազան զգացումները: Մեծ խոնարհությամբ վերսկսեցի հաճախել հավաքույթներին, դիմադրելով ''եղբայրների'' կասկածոտ ու ամոթ առաջացնող հայացքներին, ինքս ինձ ասելով. «Ասփծո սիրո համար՝ սա՛ և ավելի՛ն»:*

1987*ի հունիսին ներկայացրեցի կրկին անդամագրվելու նամակս և մի դափական հանձնաժողովի կողմից հարյուրերորդ հարցաքննումից հետո՝ ընդունվեցի: Բայց ինչպես ուրիշ շատ անգամներ, խաբել էի իրենց և ինքս ինձ, Բրուքլինի Դեկավար Մարմնի կամքին ենթարկվելով ու սփրկանալով: Հոգուս խորքում մնում էին կասկածներ ու անհասկացողություններ ո՛չ միայն կազմակերպչական բնույթի, այլ՝ վերջին ժամանակներում հանդիպել էի նաև ուսմունքային և ասփվածաշնչյան փարաձայնությունների: Ամենակարևորները վերաբերվում էին աշխարհի վախճանի թվականին՝* 1914*ից սկսած, Քրիսփոսի վերադարձին, երկնային ու երկրային դասակարգումներին, Դեկավար Մարմնին՝ որպես Ասփծո և մարդկանց միջև հաղորդակցության միակ ուղի, և վերջում՝ ինչո՞ւ էին փառազրկում ու թերագնահափում Հիսուս Քրիսփոսին:*

## Ազատագրումը

1987*ի օգոսփոսին որոշեցի սկսել անձնական խոր ուսումնասիրություն Ասփվածաշնչի շուրջ, մի կողմ թողնելով Կազմակերպության հրափարակությունները, այլ միմիայն համեմափելով Ասփվածաշնչի հինգ թարգմանությունները, Դիփարանի Ընկերության կողմից սփացածս ուսուցումներն ամբողջովին վերափեսնելու նպափակով: Ընկղմվեցի անդադար ուսումնասիրության մեջ, նվիրելով դրան օրեկան մոփ չորս ժամ, ուսումնասիրելով Ասփվածաշունչը փող առ փող, համոզված, որ եթե նրանում կար մի ճշմարփություն, ես պե՛տք է գփնեի այն: Այլևս չէի կարող կասկածների մեջ մնալ:*

*Երկու տարվա ընթացքում ամեն բան սկսեց ավելի հստակ երևալ ինձ: Բացահայտեցի աստվածաշնչյան աղավաղումներ: Ղեկավար Մարմինը ձևափոխում ու կեղծում է Աստվածաշունչն ըստ իր քմահաճույքի, ընդգծելով այն հատվածները, որոնք իբր թե պաշտպանում են իր ուսուցումները, մոռացության մատնելով մյուսները, որոնք փաստում են հակառակը, և ժամանակի ընթացքում արքազան էջերի մեջ փոփոխություններ մտցնելով՝ նոր հասկացողությունների չքմեղանքով:*

*Եհովայի Վկաների շարքերում երբեք չեմ տեսել որևէ մեկին, որ համարձակվեր կասկածի տակ դնել Ղեկավար Մարմնի հեղինակությունը. մեկը վախենալով, մյուսը՝ կույր վստահությամբ: Բայց սա ծայր աստիճանն էր. անօգուտ էր Երեցների մոտ գնալը և բացատրություններ խնդրելը, որովհետև սպառնալի պատասխանը միշտ նույնն էր. «Ուշադիր եղիր, եղբայր: Քայլում ես դեպի ուրացություն»:*

*Կյանքս կրկին հայտնվեց երկընտրանքի առաջ. կա՛մ գլուխ խոնարհել ինչպես առաջ, ընդունելով այդ հոգևոր բռնատիրությունը և ապրելով կատարյալ կեղծավորի կյանք, ինչպես վարվում են շատերը Եհովայի Վկաների մեջ, կա՛մ էլ վերստին ընդունել Եհովայի Վկա մնացած ազգականների ու ընկերների զոհաբերումը, ինչը որ խորքում մեծ կորուստ չէր, եթե համեմատենք խաղի դրված գումարի հետ: Անդամագրվել էի այդ կազմակերպությանը վստահ, որ նրանում էր ճշմարտությունը, բայց երբ անհետացավ այդ վստահությունս, մնալու ոչ մի պատճառ չունեի: Այժմ մնում են ինձ միայն Աստված և Հիսուս Քրիստոսը, Աստվածաշընչի հետ միասին: Նրանցում եմ միայն տեսնում փրկությունը և ո՛չ թե կրոնական ինչ-որ մի աղանդի մեջ:*

*Հուսով եմ, թե կդառնամ մի լավ քրիստոնյա, այլևս առանց հարկադրանքներ ու ստորացումներ կրելու:*

1989*ի նոյեմբերին տեղական Երեցներին ներկայացրեցի վերջնական հեռանալուս նամակը: Իմանալով, թե ինչ է ինձ սպասվում, ճակատագիրս կդիմագրավեմ լիակատար խաղաղությամբ, բայց այժմ հստակապես գիտեմ, որ մի ազատ մարդ եմ, ազատ՝ մտածելու, գործելու և Տեր Հիսուս Քրիստոսին փնտրելու ամբողջական ազատությամբ, առանց հարկադրանքների ու ստորացումների:*

*Շարունակելու եմ աղոթել իմ նախկին եղբայրների, ընկերների ու ազգականների համար, որոնք մնացել են Եհովայի Վկա, և բոլոր նրանց համար, ովքեր չարիք կգործեն իմ նըկատմամբ: «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն այն, ինչ անում են» (Ղուկաս* 23, 33*), կամ՝ ինչ ասում են:*

*Թող այս վկայությունս որպես քաջալերանք ծառայի այն բոլոր հոգիներին, որոնք ունեցել կամ ունենալու են իմ այս նույն փորձառությունը:*

**Վինչենցո Աբբատե**, *Քանիքաթթի*

## 3. Ես այժմ ուզում եմ սիրել բոլորին

*Եհովայի Վկաներին ճանաչեցի պատանեկ պարեկան հասակում, Հռոմում, ուր ես և իմ ընտանիքը տեղափոխվել էինք գործի բերումով: Մի օր բախեցին մեր դուռը. հետաքրքրասեր էի և թույլատրեցի, որ ներս մտնեն: Մի քանի կիրակի ևս եկան, իսկ որոշ ժամանակ անց՝ համոզեցին իրենց հետ գնալ Արքայության Սրահ: Առաջին տպավորությունը, որ ունեցա, այն էր, որ գտնվում էի տարբեր տեսակի մարդկանց մեջ: Իսկույն աչքիս խփեց նրանց հագվածքը: Հատկապես տղամարդիկ ինձ կեղծ էին թվում, բայց ուշադրություն չդարձրեցի: Զարմացա տեսնելով նրանց քաղաքավարությունն ու տրամադրելիությունը: Ուշադրությամբ լսեցի քարոզչի ճառը, որն երբեմն երբեմն մեջբերումներ էր կատարում Աստվածաշնչից: Ինձ ընկերացող աղջկա օգնությամբ կարողացա գտնել այդ տողերն իմ Աստվածաշնչում և դա ինձ երջանկություն էր պատճառում: Երբեք չէի բացել այդ գիրքը: Աստծո մասին խոսքեր լսելն ինձ հիացնում էր, թեև շատ բաներ կային, որ ինձ հաճելի չէին, բայց աշխատում էի կարևորություն տալ միայն էականին:*

*Արքայության Սրահ հաճախեցի ևս երկու անգամ, ապա ինձ ընկերացող աղջկան ասացի, որ այլևս չէի կամենում շարունակել, որովհետև մտածելու կարիք ունեի:*

*Բազմապիսի փորձառություններ ունեցա կյանքիս ընթացքում: Նախ սկսեցի աշխատել սրճարանում որպես զանձող, հետո աշխատանք գտա խանութում, ապա՝ դեղատան մեջ: Դարձա կանացի իրավունքների մոլեռանդ պաշտպան, ապա անցա մի ուրիշ կուսակցության, հետո՝ դարձա կոմունիստ: Վերջում համոզվեցի, որ քաղաքականությունն իմ համար չէ, որովհետև կուսակցություններում տիրում են անազնվությունն ու պաշտոնների մրցարշավը: Միամիտ էի: Կարծում էի, թե աշխարհը կարող էր գեղեցիկ ու արդար դառնալ և պայքարելով կարող էի փոխել ամեն բան: Կուսակցական գործերս լքելով, մի որոշ ժամանակ անցկացրեցի առանց հատուկ փորձառությունների, աշխատանքիցս բացի: Լի էի ամեն ինչի հանդեպ անտարբերությամբ:*

*Մի օր, արձակուրդների ընթացքում, ճանաչեցի նրան, ով այժմ ամուսինս է: Երկու տարի անց ամուսնացանք և վերադարձա բնակվելու Մարքեում, որ ծննդավայրս էր: Չորս երջանիկ տարիներ անցկացրեցի: Ծնվեց մեր աղջիկը և մի վիթխարի, բայց կարճատև ուրախություն եղավ մեր համար: Սկսվեցին մտահոգություններն ու վշտերը, հատկապես աղջկաս պատճառով, որն այդ օրերին քաջառողջ չէր:*

*Միշտ սեղանիս վրա էր Եհովայի Վկաների Աստվածաշունչը, որ տվել էր ինձ Հռոմի այն աղջիկը: Երբեմն երբեմն թերթում էի էջերը, բայց քանի որ միշտ չէ, որ հասկանում էի կարդացածիս իմաստը, կրկին փակում էի մեծ տրտմությամբ: Հիշում եմ, որ մի գիշեր սենյակումս աղոթեցի Աստծուն: Անվանեցի նրան «Եհովա», որովհետև Եհովայի Վկաների հետ Հռոմում ունեցածս փորձառությունից հիշում էի միայն այդ անունը: Խնդրեցի Աստծուց հայտնել ինձ ճշմարտությունը, Իր կամքը: Հաջորդ առավոտյան, կիրակի, Եհովայի Վկաները բախեցին դուռս: Աչքերս փորրեցի: Կարծեցի, թե աղոթքիս պատասխանն էր և անմիջապես ներս հրավիրեցի: Բազում հարցեր տվեցի, որոնց պատասխանեցին իմ համար այն ժամանակ զոհացուցիչ կերպով: Հարցրեցին, թե արդյոք կկամենայի՞ աստվածաշնչյան ուսումներ կատարել: Չէի կարողանում որոշել, որովհետև վախենում էի խաբվել: Բայց հետո մտածեցի. «Եթե սկսեմ և ապա չուզենամ շարունակել, անշուշտ չեն կարող ինձ ստիպել»: Ամուսինս համաձայն էր, հետաքրքրասիրությունս՝ շատ: Եվ այդպես սկսվեցին ''ուսումները'': Ամուսինս մասնակցեց երկու կամ երեք անգամ, ապա՝ թողեց: Որքան ավելի էի առաջ գնում ''ուսումներում'', այնքան ավելի էի համոզվում, թե դա էր ճշմարտությունը: Շարունակ հարցեր ու հարցեր էի տալիս, որովհետև շատ կասկածներ էին ծնվում, բայց նրանք պատրաստի պատասխաններ ունեին բոլոր հարցերի համար: Կամաց-կամաց, իմ կողմից՝ ներքին բախումներից, կասկածներից ու անվստահություններից, իրենց կողմից՝ պնդումներից, համոզումներից ու ստիպումներից հետո, հասա մկրտությանը: Մի մռայլ ու փխուր օր եղավ իմ համար (միայն այժմ կարող եմ ասել սա, որովհետև առաջ մեղք կթվար ինձ): Աբրուցոյում գտնվող Համաժողովների Սրահում գտնվող մի լեսակ ջրավազանի մեջ ընկղմեցին ինձ: Ասացին, որ ջրից դուրս չպետք է մնար և ո՛չ իսկ մատներիցս մեկը, այլապես մկրտությունն անվավեր կլիներ: Երբ փակավին մանուկ էի, ոdքախտ պատահար էի ունեցել ջրի հետ: ''Եղբայրները'' չէին կարողանում ընկղմել ինձ: Երրորդ փորձին՝ կամենում էի փախչել: Վերջապես կարողացա: Երբ դուրս ելա ջրից, երեսիս մաշկը և աչքերս կաս կարմիր էին: Հագնվեցի ու անցա մյուս սրահ, ուր հավաքված էին բոլոր ''եղբայրները'': Շատերը համբուրում էին ինձ ու շնորհավորում: Ասում էին. «Բարի գալուստ մեր մեջ»: Ես,*

*սակայն, երջանիկ չէի, որովհետև սրբտումս ոչինչ չկար: Չէի կարողանում սիրել Աստծուն այնպես, ինչպես զգում էի, ինչպես կամենում էի, և սա ծանրանում էր խղճիս վրա: Ինչպես նաև վստահ չէի, թե ''եղբայրներն'' իսկապես սիրում էին ինձ: Թերևս Եհովայի որոշ Վկաներ իրենք իրենք չեն և, հետևաբար, սերն իրական չէ:*

*Վերադարձա տուն և շարունակեցի կյանքս որպես կին, մայր և Եհովայի Վկա: Երբ գնում էի դռնե դուռ քարոզելու, տնից դուրս գալուց առաջ աղոթում էի. «Տեր, եթե սա ճշմարտությունը չէ, այնպես արա, որ երբ բախում եմ դռները, հանդիպեմ ինչ-որ մեկի, որը հասկացնի ինձ դա»: Ապա դուրս էի գալիս: Բայց երբեք չհանդիպեցի մեկին, որը կարող կլիներ փաստել քարոզածներիս հակառակը և սա ավելի էր ամրապնդում համոզումս, թե ճշմարտության մեջ էի: Այդպիսով, առաջ էի ընթանում վերելքներով ու վայրէջքներով: Քիչ ժամեր էի հատկացնում քարոզչությանը, ժողովներում երբեք գործուն չէի: Ներսումս ինչ-որ մի բան կար, որ ինձ չէր համոզում. չէի զգում լավագույնս գործելու եռանդը, մինչ ուժը: ''Եղբայրներն'' ինձ ասում էին. «Շարունակիր ուսումներդ, ավելի ժամանակ ընծայիր քարոզչությանը: Կտեսնես, թե ինչպես կզորանաս»: Բայց ես չէի կարողանում և շատ էի տառապում այդ պատճառով: Երբ երեկոյան խոսում էի Աստծո հետ, Նրան ասում էի. «Տե՛ս, այս կամ այն քույրը, ինչպե՛ս են Քեզ ծառայում, ինչպե՛ս են Քեզ սիրում: Իսկ ես, Եհովա, ի՞նչ եմ անում Քո համար: Ոչի՛նչ»: Եվ Նրանից խնդրում էի ավելի հավատք, ավելի իմաստություն: Մեկից ավելի անգամներ օգնություն խնդրեցի ''եղբայրներից'': Շարունակ կրկնում էին. «Շարունակիր ուսումներդ, ավելի ժամանակ ընծայիր քարոզչությանը»: Ավելի ու ավելի միայնակ էի զգում ինձ, իսկ նրանք երեսները ցույց էին տալիս միմիայն նույն բաները կրկնելու համար: Միայն մկրտությունից առաջ էին շարունակ այցելում ինձ: Հետո մի անգամ չպատահեց, որ ասեին. «Գնանք մի քիչ զբոսնելու: Խոսենք ինչ-որ մի ուրիշ բանի մասին: Հանգստացի՛ր, հոգնած ես»: Երբե՛ք: Եհովան երբեք չի ուղարկում արձակուրդի: Միայն և միշտ ծառայություն ու ծառայություն, ժողովներ ու ժողովներ: Այնուամենայնիվ կարծում էի, թե դա է իրականը և սեփական աչքերիս առաջ թվում էի մի որդ, անարժան՝ Աստծուն: Բայց այն, ինչը Եհովայի Վկաները պահանջում էին ինձնից, հակառակ էր էությանս: Շատ էի տառապում: Միայն Աստված գիտի, թե որքան եմ աղոթել: Եթե Եհովայի Վկաներն ունեն ճշմարտությունը, ինչո՞ւ ես երբեք չեմ զգում ուրախությունը, խաղաղությունը, հոգու պտուղները, որոնք շատ եմ սիրում:*

*Կասկածներ ունեի նաև Աստվածաշնչի վերաբերյալ: Պատասխանեցին իրենց ձևով, բայց չհամոզվեցի: Այնուամենայնիվ, զգացումներս խեղդում էի ու առաջ գնում:*

Մի օր, հավատակից քույրերից մեկն առաջարկեց իր հետ գնալ մի տարեց կնոջ տանը աստվածաշնչյան ուսումներ կատարելու: Համաձայնվեցի և գնացինք: Տիկինը, որին պետք է ''դարձի բերեինք'', մի շատ քաղցր կին էր և ինձ հիշեցնում էր իմ տատիկին, որը մահացել է: Ինձ ընկերացող ''քույրը'' շատ ինքնավստահ կին էր և ուսումները ղեկավարում էր երկաթյա պնդությամբ: Ինձ թվում էր, թե ձեռքը շատ էր սեղմում, շատ էր պնդում, ինչը որ տհաճ էր իմ համար: Մյուս ''եղբայրները'', սակայն, ասում էին, որ ճիշտ այդպիսի, այսինքն՝ եռանդոտ ու ինքնավստահ ''քույրերն'' ու ''եղբայրներն'' էին ավելի թվով հոգիներ որսում, որովհետև երկչոտությունը, սակավ ինքնավստահությունը արդյունքներ չէին տալիս: Խոսակցությունը առաջ էր գնում, երբ տարեց տիկինը հանկարծ ասաց, որ ունկնդրում էր ձայնասփյուռի «Մարիամ» ալիքը, որն ամեն օր խոսում էր Եհովայի Վկաների մասին: Ես, հետաքրքրված, հարցրեցի, թե ի՞նչ էին ասում: Պատասխանեց, թե շատ բան չէր հասկանում, բայց որ Ավետարանը շատ լավ էին բացատրում: Խոստացա ես նույնպես ունկնդրել, թեև ճշմարտության մեջ լինելու մասին վստահ էի: Քույրը զարմացած նայեց ինձ, որովհետև Կազմակերպությունն արգելում է մեզ ունկնդրել ուրիշ կրոնների պատկանող հաղորդումներ, ասելով, թե դրանք պատկանում են Սատանային և, հետևաբար, վտանգավոր են: Այդպիսով, միացրեցի ձայնասփյուռը և գտա «Մարիամ» ալիքը: Ժամը 12$^{30}$ էր: Խոսում էր մի տղամարդ, մի նախկին Եհովայի Վկա, որը պատմում էր Եհովայի Վկաների շարքերում քսան տարի տևած իր փորձառությունը: Զգացի իր խոր տրտմությունը, հուսախաբությունը: Կարծես իմ սրտի մեջ էի կարդում: Տակավին չգիտեի աղանդից հեռանալու իր պատճառները, սակայն ձայներանգը, դառնությունը, սիրով լի մի քանի խոսքերը, իր տառապանքը, հուզեցին սիրտս:

Անջատեցի ձայնասփյուռը և սկսեցի լալ: Մոլորված էի: Կայծակնային արագությամբ ոտքի ցատկեցի ու վազեցի հեռախոսի մոտ: Հեռաձայնեցի Անքոնայում գտնվող «Սուրբ Պողոս» վանքի մայրապետներին և ասացի, թե կասկածներ ունեցող Եհովայի Վկա էի և օգնություն էի փնտրում: Հեռախոսի մյուս կողմում գտնվող տիկինը պատասխանեց շատ ազնվորեն և խորհուրդ տվեց հեռաձայնել Օզիմոյի քահանա Տեր Պողոսին, որը ճիշտ այս հարցերով էր զբաղվում: Իսկույն հեռաձայնեցի նրան և Տեր Պողոսը եզակի տրամադրելիություն, քաղցրություն ու կարեկցանք ցուցաբերեց իմ նկատմամբ:

Եհովայի Վկաներից սովորել էի քահանաներին դև համարել, դրա համար էլ ինքս ինձ ասացի. «Բայց տե՛ս, թե ի՞նչ ազնիվ է Սատանան»: Տեր Պողոսն իմ համար հանդիպում կազմակերպեց Սան Բենեդետտո Դել Թրոնթոյի «Շալոմ» խմբակի ու մի նախկին Եհովայի Վկայի հետ:

*Այդտեղ ծանոթացա տիկին Լուչիային և պարոն Գաբրիելին, որոնք «Շալոմ» խմբակի անդամներից էին, երկու ազնվագույն անձնավորություններ, տվյալ նյութի շուրջ ծայր աստիճան պատրաստված: Եհովայի Վկաների ուսուցումներին ծանոթ էին ինձնից շատ ավելի լավ: Հարցումներ ներկայացրի և ստացա պատասխաններ: Ինձ տեղեկացրեցին նաև, իմ համար համոզիչ փաստարկներով, որ Եհովայի Վկաների Աստվածաշունչը աղավաղված է ու կեղծ: Ուրիշ շատ բաներ էլ լուսաբանեցին: Դեռևս ամեն բան չէի հասկացել, բայց զգացի, որ սիրտս այլևս ազատ էր: Միայն միտքս էր տակավին շփոթ վիճակում: Աստվածաշնչի տողերը մտքիս մեջ պտտվում էին մեկը մյուսի ետևից: Տարօրինակ է, բայց տունս վերադարձա միաժամանակ տխուր ու երջանիկ: Այսպես թե այնպես, սակայն, հաստատ որոշել էի շարունակել փնտրտուքս:*

*Հեռաձայնեցի տիկին Լուչիային և կրկին տեսակցելու փափագս հայտնեցի, շարունակելու համար փնտրտուքը: Նա մեր տուն եկավ պարոն Գաբրիելի հետ միասին, միշտ բացահայտելով իր քաղցրությունն ու տրամադրելիությունը: Հետո եկավ նաև Տեր Պողոսը: Քանդեցին այն թղթե դղյակը, որի մեջ բնակվում էի և որն անկործանելի էի համարում, բայց որը հողին հավասարվեց մի ակնթարթում և ես ինձ դրսում գտա: Տեսա արևը, որ փայլում էր մի լույսով, որն մինչ այդ երբեք չէի տեսել: Զգում էի ինձ ինչպես մի թռչնակ, որը բնից ներքև է ընկել և չգիտի, թե ո՛ւր պետք է գնա, բայց որին Աստված չի թողնի հեռանալ Իրենից, որովհետև սիրում է նրան:*

*Կաթոլիկե Եկեղեցում ճանաչեցի բազում անձեր բարի ու զգայուն, փափկանկատ, գործուն, կարեկցող: Ես այժմ սիրում եմ բոլորին և այլևս երբեք որևէ մեկից չեմ հարցնի, թե ինչ կրոնի է պատկանում: Ուզում եմ բոլորին հավասար չափով սիրել:*

*Երախտագիտությունս եմ հայտնում Աստծուն, որովհետև այժմ հասկանում եմ, որ այս փորձառությունը հարստացրեց ինձ, նրբացրեց և հատկապես հասկացրեց, որ իրական սերը ոչ ոքի չի դատապարտում: Այժմ, վերջապես, կարող եմ խոսել Հիսուսի հետ. վաղուց էի փափագում խոսել Նրա հետ, բայց Եհովայի Վկաներին արգելված է աղոթել Հիսուսին:*

*«Տուր ինձ, Տեր, Քո բերկրանքն ու խաղաղությունը» (*Հովհաննեսի Ավետարան 14, 27*): «Ձեր տրտմությունը ուրախության է փոխվելու» (*Հովհաննեսի Ավետարան 16, 20*): Ես նույնպես, այժմ կամենում եմ ուրիշներին նվիրել իմ ուրախությունը:*

*Վստահ եմ, որ Աստված գործում է նաև Եհովայի Վկաների մեջ, որովհետև կան բազում անկեղծ ու բարի անձեր, որոնք երբ աղոթում են, աղոթում են ամբողջ սրտով: Միամիտ հավատքի մեջ են և Աստված լսում է նրանց աղոթքները: Բայց նույնքան համոզված եմ, որ ով*

*խիկապես փնտրում է Աստծուն, Եհովայի Վկաների մոտ չի գտնի երբեք, և հետևաբար՝ այսօր կամ վաղը ստիպված կլինի լքել նրանց և շարունակել փնտրել: Կամենում եմ ասել Եհովայի Վկաներին թողած անձանց, որ չվախենան, որովհետև Աստված կհայտնի Իրեն, որովհետև Նա նույնպես փնտրում է մեզ: Մի փորձառություն էր, և եթե Աստված թույլատրել է դա, պետք է վստահ լինենք, որ մեր բարիքի համար էր:*

**Թերեզիտա Մանչինի**, *Մոյե*

4. Հետևյալ վկայությունը տրվել է 1987 թվականին, Հռոմում: Վկայությունը պատկանում է քույր Լաուրա ֆրանչիսկյան մայրապետին, որը Եհովայի Վկաներին թողնելուց հետո որոշեց ամբողջովին նվիրվել Աստծո, Եկեղեցու և ճշմարտության ծառայությանը: Վկայությունը տրվել է բանավոր. այստեղ ներկայացնում ենք ձայնագրությունից քաղված իր խոսքերը:

*Արդյոք ի՞նչ գտա Եկեղեցում: Կեղծիքը մերժելը կարևոր է, բայց եթե հետո մարդ չի քայլում ճշմարտության ճանապարհով, շատ չի առաջադիմում:*

*Նախևառաջ ուզում եմ նշել, որ ես չեմ կարող ասել, թե "վերադարձել եմ" Եկեղեցու գիրկը, քանի որ Եկեղեցի երբեք չէի հաճախել, ոչ մի առիթով: Տառացիորեն, երբեք ոտք չէի դրել Եկեղեցի: Ուրեմն, ի՞նչ գիտեի նրա մասին: Միայն այն, ինչ լսել էի Եհովայի Վկաներից, հետևաբար՝ այնքանը, որքանը որ բավական է այն հավիտյան մերժելու համար: Եկեղեցին նրանք ինձ ներկայացրել էին որպես ոչ մի հիմք չունեցող մի բան և ուր չէր կարող լինել ճշմարտությունը: Այս տեսանկյունից դիտված, կարող եք լավ հասկանալ, թե ինչպես է որոշ Եհովայի Վկաների համար վերադարձը ահավոր դժվար, որովհետև սովորել են համձինս Եկեղեցու տեսնել Բաբելոնը, որը ժողովուրդներին քաշում է դեպի կործանում:*

*Եհովայի Վկաներին անդամակցելուցս հազիվ մի տարի էր անցել, երբ ինքս ինձ թույլատրեցի "սուրբ անխոհեմություն", որը կայանում էր կաթոլիկե վեղարավոր վանականներից մեկի հետ նամակագրական կապ ստեղծելու մեջ: Այսպիսի հարաբերությունները լավ աչքով դիտված չէին, ինձ սակայն չարգելեցին: Կարող եմ ասել, որ կյանքիս ընթացքում հանդիպածս առաջին կաթոլիկե քրիստոնյան էր: Իմ մանկությունն անցել է Ֆրանսիայում, ամբողջովին անհավատ միջավայրում, հետևաբար՝*

*երբեք առիթը չէի ունեցել քրիստոնեական վկայություն ստանալու. երբեք չէր պատահել:*

*Այն, ինչը որ կամաց-կամաց տարավ ինձ դեպի փրկարար ճգնաժամը, եղավ Տիրոջ հանդեպ իր սիրո վկայությունը, որը կասեի՝ որակական հատկանիշներով ամբողջովին տարբեր էր: Նաև որպես Եհովայի Վկա ես ապրում էի ամբողջովին Աստծո համար. նվիրումի ձև էր նաև այն, ըստ իս: Բայց այդ վանականի հոգում զգում էի ամբողջովին տարբեր մի բան, ավելի խիզախ ու հանճարեղ, և հատկապես՝ շատ ավելի անձնական: Գրեթե կուզենայի ասել, որ իմ ունեցած հավատքը, նրա հետ համեմատած, թվում էր «տպագիր թուղթ», որովհետև չափազանց կախումնավոր էր Կազմակերպության գրքերից, քարոզներից: Մինչդեռ այդ վանականի պարազային զգում էի ամբողջովին նվիրված կյանքի վկայությունը, նվիրագործումը: Եվ հետո, թե ինչպես էր ընդունում ինձ որպես քույր. սա շատ կարևոր եղավ: Մինչ ես հստակ կերպով ասում էի, որ իրեն չէի նկատում որպես եղբայր, որովհետև իմ համար եղբայր կարող էր լինել … միմիայն Եհովայի Վկա եղող մեկը: Եվ այստեղ ուզում եմ ասել, որ սերը ուղղափառ քրիստոնյա հավատքի լավագույն պաշտպանությունն է:*

*Եհովայի Վկաների հետ անցկացրեցի չորս տարի: Սկզբնական ոգևորիչ օրերից հետո, կամաց-կամաց մտքումս ձևացել էին խոշոր կասկածներ նրանց ուսմունքի վերաբերյալ: Իրենց ուսուցումներին որպես վկայություն մեջբերված աստվածաշնչյան հատվածները շատ հաճախ թվում էին սխալ հասկացված: Կարող եմ վստահորեն ասել, որ երբեք չկարողացա միմյանց նույնացնել այն, ինչ ընթերցում էի Աստվածաշնչում, և այն, ինչը Եհովայի Վկաները ներկայացնում էին որպես Աստվածաշնչի մեկնաբանություն:*

*Ես Տիրոջից մի մեծ շնորհ եմ ստացել. անզսպելի սեր ճշմարտության նկատմամբ: Եվ ճիշտ սա եղավ պատճառը, որից մղված՝ ստիպված եղա լրջությամբ մոտենալ ունեցածս կասկածներին, քննել, լուսաբանել, մտածել, որ թերևս ամբողջովին սխալ ճանապարհի վրա էի: Սա շատ կարևոր էր իմ համար, որովհետև արդեն պատրաստ էի նվիրվելու որպես Եհովայի Վկաների քարոզչուհի օտար երկրներում, այդ գործին հատկացնելով ամբողջ ժամանակս:*

*Այդպես սկսվեց խսկապես սարսափելի ճգնաժամը, որը տևեց մոտավորապես մեկ տարի: Այնքան էի տառապում, որ հասա նույնիսկ աստվածայինը նախատելուն. այսինքն՝ մտածելու, որ նույնիսկ եթե տառապանքի այդ ճանապարհը տանում էր ինձ դեպի ճշմարտությունը, չարժեր շարունակել, որովհետև ես ինձ լավ էի զգում միայն Եհովայի Վկաների հետ և չէի ուզում մի ա՛յլ ճանապարհ ճանաչել:*

*Եհովայի Վկաների շարքերը թողնելը պարզապես կրոն փոխել չէ: Նրանցից հեռանալը նման է մոլորակ կամ ուղղակի համաստեղություն փոխելուն: Խորագույն ճեղքվածք է առաջանում տվյալ անձի հոգում, որովհետև հոգեբանական-զգացմունքային կախվածությունը չափազանց ուժեղ է: Եվ ճիշտ այդ կախվածությունն է, որ սովորաբար արգելում է Եհովայի Վկաներին կասկածներ ունենալ: Բայց Քրիստոսի սերը մղում է մեզ, հաստատում է Աստվածաշունչը (*Պողոս Առաքյալի Երկրորդ Նամակը Կորնթացիներին 5, 14*), և ինձ նույնպես մղեց անդամակցելու այն Եկեղեցուն, որի մեջ սովորեցրել էին ինձ տեսնել սատանայի իշխանությունը: Անդամակցեցի առանց ճշգրիտ իմանալու, թե ի՛նչ կարող էի գտնել. միակ զգացումն ու համոզումն այն էր, որ ունենալու էի շա՜տ ավելի մեծ և շա՜տ ավելի իրական սեր գտնելու հնարավորությունը: Եհովայի Վկաների Երեցն ինձ ասել էր. «Եկեղեցին քեզ հուսախաբ է թողնելու և դու վերադառնալու ես: Մենք սպասում ենք քեզ»: Բայց ո՛չ, Եկեղեցին և իր Տերը հուսախաբ չթողեցին ինձ, որովհետև Եկեղեցում գտա Աստված-Երրորդությունը: Երրորդության խորհուրդը հատուկ կերպով թշնամանված է Եհովայի Վկաների կողմից և ես նույնպես, սկզբում, մեծ դժվարություններ ունեցա այն հասկանալու և ընդունելու, թեև սիրտն ինքնըստինքյան ձգտում է սիրելու Որդուն այնքան, որքան Հորը, և հարկավոր է հատուկ բռնություն գործադրել ինքներս մեր վրա՝ չերկրպագելու համար Որդուն այնպես, ինչպես Հորը: Հիսուսն ասում է. «Ոչ ոք չի կարող գալ իմ մոտ, եթե Հայրը չի կանչում Նրան» (*Հովհաննեսի Ավետարան 6, 44*): Եվ ես կարող եմ ասել, որ Հայրը գրեթե իմ կամքին հակառակ քաշեց ինձ դեպի Իր Որդին ու Իր Եկեղեցին:*

*Սուրբ Հոգին անանձնական ուժ չէ, ինչպես հաստատում են Եհովայի Վկաները, այլ՝ կենդանի անձ է: Նա է, որ տվեց ինձ ճշմարտության քաջությունը: Սուրբ Հոգու գործն է: Սուրբ Հոգին նաև միության սկզբունքն է: Եհովայի Վկաների մոտ ամեն բան փշրանք է: Սա մի զգացում է, որ բավական ուժեղ կերպով զգացի. Աստվածաշնչի փշրանքներ, սիրո փըշրանքներ, ժողովրդի փշրանքներ, ուսմունքի փշրանքներ. գոյություն չունի միավորող մի տարր: Եկեղեցում էապես միաբանված գտա կյանքի հացը:*

*Այստեղ պարտավոր եմ մի քանի խոսք ասել նաև Պատարագի ու Ամենասուրբ Հաղորդության մասին, որն իմ համար մի սքանչելի գանձի հայտնաբերում եղավ: Ամենասուրբ Հաղորդությունը Հիսուսի ներկայությունն է, որին կարող ենք սիրել ”այժմ”: Սպասման, հըսկման զգացումը տակավին ներկա է, բայց մի իրականության իրականացման սպասումն է, որն* արդեն  ներկա է. *Արքայությունը: Հիսուսը՝ Էմմանուելն է, «Աստված մեր հետ»: Կան քրիստոնեական կյանքի որոշ էական կետեր, որոնք ամբողջովին բացակայում են Եհովայի Վկաների մոտ, ինչպես օրինակ՝ արարողությունները,*

*պաշտամունքն ու երկրպագությունը, հայեցողական աղոթքը: Նրանց մոտ ամեն բան վերածվել է Աստվածաշնչի անընդունակ ուսումնասիրության: Բոլոր ժողովների նյութը սա է և վերջանում է այդ պահին հորինված աղոթքով, որն ավելի ներկաներին է ուղղված, քան Աստծուն: Առաջին անգամ, որ մասնակցեցի Ամենասուրբ Հաղորդության երկրպագությանը, հիացած էի Տիրոջ հետ մեր այդ մնալու ձրիության, պարզության ու գեղեցկության առաջ. Տիրոջ առջև էինք՝ Նրան սիրելու, Նրա հետ խոսելու, Նրա համար օրհնություններ եղանակելու համար: Հիացած էի Տիրոջ հետ «ժամանակ կորցնելու» գիտակցության առաջ, առանց հաշվելու քարոզչության ժամերը, ինչպես սովորական է Եհովայի Վկաների համար: Աղոթքն ու օրհնությունները, այնպես՝ ինչպես դրանք ապրում է Եկեղեցին, ամբողջովին անհայտ են Եհովայի Վկաների աշխարհում:*

*Միակ ծոնը, որ կատարում են, Քրիստոսի մահվան հիշատակումն է: Այդ երեկոյան, ներկաների միջով անցկացնում են բաղարջ հաց և գինի. դրանք համարում են Քրիստոսի մարմնի ու արյան ''խորհրդանշանները'': Դրանցից, սակայն, ոչ ոք չի ճաշակում, այլ միայն*

*նրանք, ովքեր համոզված են, թե մաս են կազմում 144.000 ընտրյալներին (ես երբեք չտեսա այդպիսի մեկին): Շատ դժվար է երևակայել մի ա՛յլ արարողություն, որն այդ աստիճան լցված լինի … դատարկությամբ:*

*Եկեղեցին, մինչդեռ, պարգևեց ինձ Զատիկը, տոնակատարությունների, կյանքի խոր իմաստը. Զատիկը որպես կյանքի գաղափարական: Պարգևեց ինձ նաև այդքան փնտրածս ու սիրածս ճշմարտությունը, որը փնտրել էի տառապանքների միջով: Մի ճշմարտություն, որ չի փոփոխվում, երբ փոխվում են Բրուքլինի «Դիտարան» Ընկերության նախագահները, այլ՝ մի ճշմարտություն, որ մարմնավորված է Տիրոջ ողորմության և Տիրոջ մեջ ապրված երկու հազար տարիների կյանքում: Եհովայի Վկաները չեն սիրում նայել իրենց թիկունքի ետևը, որովհետև իրենց ետևում կա մի վիթխարի ու անբացատրելի անդունդ: Եհովայի Վկաները պատմություն չունեն: Ունեն մի դատարկություն, որն աշխատում են լցնել Եկեղեցու մեղքերով:*

*Բայց իրենց առջևում նույնպես գտնում են միևնույն դատարկությունը, որի համար որոշում են միշտ չիրականացած վախճաններ: Որպես հույս՝ Եհովայի Վկաներն ունեն նյութական բարօրությունը. ո՛չ թե Տերը, այլ՝ այն հարստությունները, որոնք Տերը կարող է տալ իրենց: Եկեղեցու գրկում գտա ազատությունը, յուրաքանչյուր մարդու անձում մի եղբայր տեսնելու ազատությունը, մի ազատություն, որ զերծ է վախից ու եսապաշտությունից (ինչը որ*

*Եհովայի Վկաների գլխավոր զգացումներից մեկն է): Գիտ նաև անկեղծ ու բարեբար քննադատության ազատությունը: Բայց հատկապես, Տիրոջ ճանապարհներում աճելու ազատությունը:*

*Եհովայի Վկաների մոտ անցկացրածս սակավ տարիներից հետո ինձ արդեն կատարյալ էի զգում: Առջևս ճանապարհներ չկային այլևս, չունեի աճելու հնարավորությունը: Եհովայի Վկաների Երեցն ինձ ասում էր. «Մեր կազմակերպության հիմնասյուներից մեկն ես դառնալու, կասկած չունեմ»: Այս խոսքերը նույնպես օգնեցին աչքերս բացելուն. մի՞թե արդեն տեղ էի հասել: Ներաշխարհումս զգում էի անսահմանորեն ավելի մեծ աճման հնարավորությունը, բայց եթե մնայի Եհովայի Վկաների մոտ, այդ աճը կվերածվեր պարզապես քարոզչության ժամերը բազմապատկելուն:*

*Եկեղեցու գրկում գտա Աստվածաշունչը, ո՛չ թե կտրտված նախադասությունների մի փունջ, այլ՝ Խոսքը, մարդու հետ Աստծո ճանապարհորդակցության կենդանի հիշատակը, մի վկայություն, որ աճում է Եկեղեցու հետ: Հատկապես հասկացա, որ Աստվածաշունչը Եկեղեցունն է և Եկեղեցում է միայն, որ Խոսքը մարմնավորվում և դառնում է մեր կյանքը: Եկեղեցու աստվածաշնչյան աստվածաբանության մեջ գտա լուրջ ու խորացված ուսումնասիրություն, որը չի վախենում քննադատություններից, ավելին՝ փնտրում է դրանք, որովհետև անկեղծորեն փնտրում է ճշմարտությունը: Եկեղեցում, ապա, գտա Շնորհը: «Շնորհ» բառն ինքնին գոյություն չունի Եհովայի Վկաների մոտ: Հավատքի աճը թողնված է անձնական կամքին ու ընդունակությանը, սերտ հպատակությամբ Ղեկավար Մարմնին: Նրանց բարոյականությունը ''անմեղանչելի'' է, գեթ ըստ իրենց բարոյականության. աճում են շատ շուտ, բայց աճում են քիչ և վատ:*

*Եկեղեցում գտա* ՄԱՐԴՈՒՆ, *մասնակցությունը նրա ուրախություններին ու հույսերին, նրա վշտին ու մտահոգություններին: Եկեղեցու գրկում վերջապես կարող եմ չուրախանալ մարդկությանը պատահող աղետներով ու դժբախտություններով: Երբ լսում են երկրաշարժերի կամ ինչ-որ մի ուրիշ աղետի մասին, Եհովայի Վկաները ցավ չեն զգում այդ մարդկանց համար, այլ ճիշտ հակառակը՝ ուրախանում են, որովհետև կարծում են, թե մոտ են աշխարհի վախճանին: Իսկ եթե կատարվում է ինչ-որ մի լավ բան, ժողովուրդների միջև բարեկամության ու խաղաղության մի ձեռնարկ, դրա համար վշտանում են, որովհետև չի փաստում ''մոտ'' վախճանը: Այստեղից է բխում նրանց մշտական թշնամությունը մարդկության ուրախությունների հանդեպ, և նրանց մշտական պատրաստակամությունը՝ զվարճանալու մարդկության դժբախտություններով:*

*Եկեղեցում հանդիպեցի Մարիամին, որ Մայրն է Աստծո և Մայրն է Եկեղեցու: Մարիամը սիրված չէ Եհովայի Վկաների կողմից, որովհետև … ուղղափառ Քրիստոնեության զորեղ նշաններից մեկն է: Եվ հետո, Եկեղեցում գտա Եկեղեցուն … , մի դրական ժողովուրդ, որն Աստծո և մարդու համար է:*

*Հերետիկոսությունները ծնվում և գործում են Եկեղեցու դեմ: Եհովայի Վկաների ուսուցումների մեծամասնությունը կայանում է ուղղափառ Քրիստոնեության ուսուցումների մերժման մեջ: Եկեղեցու դեմ խոսել են փալիս նույնիսկ … Սրբերին, հատկապես մեջբերումներ են կատարում Սուրբ Օգոստինոսից, իբր թե դրանով փաստում են իրենց դիրքորոշումները: Բայց երբեք չեն մեջբերում այն շատ գեղեցիկ հատվածը, ուր Օգոստինոսն ասում է. «Չէի հավատա Ավետարանին, եթե Եկեղեցին ինքը չասեր՝ ՀԱՎԱՏԱ՛»: Մեջբերումներ են կատարում ուղղափառ Քրիստոնեության թերթերից, աստվածաբանության հատորներից, բայց միշտ՝ ներկայացված փոքրիկ հատվածներն ու նախադասությունները մեծ խնամքով անջատված են իրենց ամբողջական հատվածներից, ենթատեքստից, որը լուսաբանում է այդ փոքրիկ նախադասությունների իմաստը: Ենթատեքստ, որն ինքը Եկեղեցին է:*

*Բայց կարող եմ նաև ասել, որ Եկեղեցում գտա Եհովայի Վկաներին, բայց գտա նրանց՝ այլևս ճշմարտության մեջ, տեսնելով նրանց կեղծիքը և շա՜տ ու շա՜տ փափաքելով, որ ճանաչեին Եկեղեցին և Եկեղեցու հույսը, որն Աստված Ինքն է:*

*Ես, անձամբ, Տիրոջից խնդրում եմ այս շնորհը, և մեծապես հուսով եմ, որ այն կպարգևի ինձ. այսինքն՝ շնորհը, որ ես ինքս իմ անձում լինեմ Եկեղեցու հավատալի նշաններից մեկը: Եկեղեցին պետք է ճանաչվի, քանի որ լավ ճանաչված չէ և ո՛չ իսկ իր որդիների կողմից: Եվ կարծում եմ, որ սա՛ է մեզ վստահված գործը, բոլորի՛ս վստահված գործը, լինենք աշխարհական հավատացյալներ, թե վանականներ, բայց հատկապես՝ սա՛ է գործը Եկեղեցու հովիվների:*

* * * * * * *

*Սիրելի ընթերցող,*
*հոգու մեծ գոհունակությամբ՝ անվճար տրամադրեցինք այս գիրքը քեզ և մեր բոլոր հոգեւոր ու ընթերցասեր ազգակիցներին:*
*Հուսով ենք այն օգտակար եղավ քեզ:*

*www.mashtoz.org կայքը և նրան զուգահեռ գործող Ընդհանրական Հրատարակչատունը, լավագույն կերպով շարունակելու համար իրենց ծառայությունը, կարիքն ունեն նաև քո գիտակից մասնակցությանը:*

*Ըստ քո կարողության (այս գրքի* 1 *օրինակի գինը* 1.550 *դրամ է), նպաստի՛ր հոգեշահ նոր գրքերի հայացմանն ու տարածմանը: Եթե հնարավորությունների սահմաններում է, վճարի՛ր* 1, 5, 10, 20, 50, 100 *կամ ավելի օրինակների տպագրության համար անհրաժեշտ գումարը և այդպիսով օգնի՛ր հոգեշահ գրքերի հրատարակմանն ու անվճար տարածմանը: Քո այդ նվիրատվության շնորհիվ այս հատորները կհասնեն նաև նրանց, ովքեր դրանք գնելու կամ համացանցում ընթերցելու հնարավորությունն իրոք չունեն:*

*Մեր հաշվեհամարն է.*

*«Կոնվերս Բանկ», հ/հ* 19300 340285 90100 *Ստացող՝ Ընդհանրական ՍՊԸ Նպատակ՝ Հրատարակչություն*

*Փոխանցումներ հնարավոր է կատարել հայաստանյան որևէ դրամատան որևէ մասնաճյուղից:*
*Սփյուռքից փոխանցումներ հնարավոր է կատարել և՛ դրամատների, և՛* PayPal *համակարգի միջոցով: Հարկավոր տվյալները ստանալու համար խնդրում ենք գրել մեզ endhanrakan.hrat@mashtoz.org հասցեով:*
*Շնորհակալություն առ Աստված, և ամենայն բարիք Ձեզ:*

* * * * * * *

www.hycatholic.ru